## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՆԱՋԱՐՅԱՆ ՄԵՐԻ ՏԻԳՐԱՆԻ**

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴՐՈՒՄ 1991-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

**Գիտական ղեկավար՝**

**պատմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր**

**Է.Գ.Մինասյան**

**ԵՐԵՎԱՆ-2019**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ------------------------------------------------------------------------------------------3

**ԳԼՈՒԽ I. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎՐԱ 1991-1998 ԹԹ.**

**1.1** Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը ժամանակի քաղաքական զարգացումների համատեքստում ---------------------------------------------16

**1.2** Հայ-թուրքական հարաբերությունների հաստատման գործընթացը և դրա վրա ազդող գործոնները ---------------------------------------------------------------------------------54

**ԳԼՈՒԽ II. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1998-2008 ԹԹ.**

**2.1** Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որպես ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություն 1998-2004 թթ.---------------------------------90

**2.2** Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն ու դրա շուրջ հայ-թուրքական հասարակական-քաղաքական քննարկումները 2005-2008 թթ.-------120

**ԳԼՈՒԽ III. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՆՈՐ ՓՈՐՁԸ 2009-2016 ԹԹ.**

**3.1** Հայոց ցեղասպանության հիմնահարցի արծարծումները 2009 թվականի ցյուրիխյան

արձանագրությունների համատեքստում ------------------------------------135

3.2 Հայոց ցեղասպանության 100-ամյակն ու ճանաչման հետագա ընթացքը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում ----------------------------------166

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ----------------------------------------------------------------------192

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ------------199

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացը, դրանում շահագրգիռ երկրների հետապնդած բուն նպատակները, ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերն ու անհրաժեշտությունը և դրանց համատեքստում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը՝ որպես ՀՀ առջև ծառացած լրջագույն մարտահրավերներ, եղել և մնում են հայ պատմագիտության հրատապ և կարևոր հիմնախնդիրներից:

1991 թ. սեպտեմբերի 21-ին անցկացված անկախության հանրաքվեի և դրան հաջորդած ամփոփիչ փաստաթղթերի արդյունքում կազմավորված նորանկախ ՀՀ-ն դառնալով միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, ի տարբերություն խորհրդային ժամանակաշրջանի, բացառիկ հնարավորություն էր ստանում միջազգային հարթակներում պայքարելու ինչպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, այնպես էլ դրա հետևանքների հաղթահարման համար: Ինքնին

հասկանալի է, որ նման պայմաններում զգալիորեն բարդանալու էին հայ-թուրքական հարաբերությունները, առավել ևս, որ Թուրքիան որդեգրել էր ընդգծված հակահայկական դիրքորոշում՝ հանդես գալով պատմության ակնհայտ կեղծարարությամբ:

Մեր ատենախոսության արդիականությունը մեծապես պայմանավորված է հենց Թուրքիայի՝ ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում որդեգրած նման դիրքորոշման և դրանից բխող ՀՀ ղեկավարության ձեռնարկած պատասխան քայլերի քննական վերլուծության ու դրանից անհրաժեշտ հետևություններ անելու հրամայականով:

Գաղտնիք չէ, որ հարևան Թուրքիան բոլոր հնարավոր հարթակներում սատար կանգնելով իր «եղբայր» Ադրբեջանին, հանդես է գալիս Ղարաբաղյան հիմնախնդրի բացառապես Ադրբեջանի տարածքային ամբողջականության սահմաններում լուծման ջատագով, լիովին անտեսելով միջազգային իրավունքի մյուս հիմնարար սկզբունքը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը: Միակողմանիորեն փակելով ՀՀ-ի հետ սահմանը և ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում առաջադրելով նախապայմաններ, այդ թվում և Ղարաբաղյան հարցի սեփական պատկերացմամբ «արդարացի լուծման» նախապայմանը՝ Թուրքիան այդ կերպ փորձում է հասնել իր համար ցանկալի արդյունքի: Անշուշտ, այս հանգամանքով էլ է ևս զգալիորեն պայմանավորված նաև մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը:

Բացի այդ, թեման արդիական է այնքանով, որքանով, որ քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի հետ դիվանագիտական

հարաբերություններ հաստատելու ուղղությամբ ՀՀ իշխանությունների ձեռնարկած քայլերի քննական վերլուծությունը հնարավորություն կտա հնարավորինս ճիշտ կողմնորոշվել հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարի հարցում և ռեալ գնահատել հայ-թուրքական հարաբերությունների զարգացման հարցում առկա հնարավոր ռիսկերն ու դրական կողմերը:

Ատենախոսության արդիականությունը զգալի չափով կայանում է նաև նրանում, որ այսօր աշխարհում ընթացող բազմաթիվ գործընթացներ որոշակի աղերսներ ունեն մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած հիմնահարցի հետ:

Եվ, վերջապես, ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ քննական վերլուծության ենթարկելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և այդ համատեքստում ՀՀ ղեկավարության որդեգրած մոտեցումները 1991-2016 թթ.՝ բարենպաստ պայմաններ են ստեղծվում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում հնարավորինս ճիշտ մոտեցումներ ձևավորելու հարցում:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության մեջ նպատակ ենք դրել կոնկրետ փաստական նյութերի հիման վրա ներկայացնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների խնդրում 1991-2016 թթ.:

Ելնելով նշված նպատակից, մեր առջև դրել ենք հետևյալ կոնկրետ խնդիրները.

-Որպես սկիզբ ընդունելով Հայոց ցեղասպանության 50-ամյակը վերլուծել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու

դատապարտման գործընթացը ժամանակի աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում՝ ցույց տալով տարբեր պետությունների հետապնդած նպատակներն այդ հարցում:

-Պարզաբանել ինչպես տնտեսական գործոնի, այնպես էլ արցախյան հիմնախնդրի ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում:

-Կոնկրետ փաստական նյութերի հիման վրա քննական վերլուծության ենթարկել ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի մոտեցումները՝ կապված հայ-թուրքական հարաբերություններում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի առաջնահերթության հետ:

-Վերհանել այն արմատական փոփոխությունները, որոնք կատարվեցին ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնավարման տարիներին Թուրքիայի հանդեպ ունենալիք վերաբերմունքի հարցում:

-Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ ՀՀ ղեկավարությանն ուղղված հայտնի գրության համատեքստում ներկայացնել թուրքական իշխանությունների նոր մոտեցումը Հայոց ցեղասպանության հարցում:

-Վերլուծել ՀՀ երրորդ նախագահ Ս.Սարգսյանի մոտեցումները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում՝ ցույց տալով նախորդների հետ դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

-Քննական-վերլուծական մոտեցմամբ շարադրել 2009 թ. հոկտեմբերի 10-ին ստորագրված ցյուրիխյան արձանագրությունների՝ Հայաստանի համար դրական և բացասական կողմերն ու հնարավոր հետևանքները:

-Վերլուծել Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին թուրքական իշխանությունների որդեգրած նոր մարտավարությունը Հայոց ցեղասպանության ժխտողականության հարցում:

-Կատարել անհրաժեշտ հետևություններ և եզրակացություններ՝ ելնելով Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ ընդունված համահայկական հռչակագրի հայտնի դրույթներից:

-Պարզաբանել հայ-թուրքական հարաբերությունների կնքման ընթացակարգի դադարեցման գործընթացը՝ կատարելով կոնկրետ հետևություններ:

**Հետազոտության գիտական նորույթը**: Մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած հիմնահարցը նշված ժամանակագրական սահմաններում մինչ օրս հայ պատմագիտության մեջ ամբողջական, համակարգված ուսումնասիրության չի ենթարկվել, թեպետ ատենախոսության այս կամ այն չափով առնչվող առանձին հիմնահարցեր, այնուամենայնիվ, պատշաճ մակարդակով ուսումնասիրված են:

Ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվել ընդգծված կերպով վերլուծել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում: Բացի այդ մեր կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել թեմային ուղղակիորեն առնչվող զգալի թվով նոր արխիվային փաստաթղթեր, ինչպես նաև թուրքական ամսագրերում և թերթերում տեղ գտած նյութեր:

Որպես աշխատանքի գիտական նորույթ, ատենախոսության մեջ շեշտվել է այն փաստը, որ քննարկվող ժամանակահատվածում Թուրքիայի հետ

դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը միտված ՀՀ ղեկավարության ձեռնարկած քայլերի համատեքստում, մեր կարծիքով, պատշաճ ուշադրություն չի դարձվել այն կարևոր հանգամանքին, թե որքանով էր Թուրքիան շահագրգիռ ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում, այն պարագայում,երբ Հայաստանը մեր տարածաշրջանում լուրջ դերակատարում չուներ: Ուստի, աշխատանքը շարադրելիս փորձել ենք շեշտը դնել հայ պատմագիտության մեջ բավարար չափով չուսումնասիրված հենց այդ հանգամանքի վրա:

Աշխատանքի վերջում արված առանձին եզրակացություններ ևս գիտական նորույթ են պարունակում:

**Հետազոտության կիրառական նշանակությունը**: Հետազոտությունը գիտականից բացի ունի նաև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության մեջ բերված փաստերը, դրանց հիման վրա կատարված եզրակացությունները կարող են նպաստել արդեն մեր օրերում այնպիսի արտաքին քաղաքական առաջնահերթությունների մշակման հարցում, ինչպիսին, օրինակ, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը միտված քայլերն են:

Ատենախոսության մեջ տեղ գտած եզրակացությունները կարող են օգտակար լինել նաև Արցախյան հարցի լուծման տարբերակների մշակման հարցում,քանզի գաղտնիք չէ,որ Թուրքիան Արցախյան հարցում ունի ընդգծված կողմնակալ վերաբերմունք:

Բացի այդ, ատենախոսությունում բարձրացված հիմնահարցերը կարող են օգտագործվել մասնագիտական կուրսերում տվյալ թեմայով հատուկ դասընթացներ կազմելիս:

Ատենախոսությունում տեղ գտած հիմնադրույթներն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել ոչ միայն պատմաբաններին, քաղաքագետներին, այլև դիվանագիտական կորպուսի աշխատակիցներին:

Եվ, վերջապես, սույն ուսումնասիրությունը կարող է կիրառական կոնկրետ նշանակություն ունենալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում հաջողություններ գրանցելու, ցեղասպանության հետևանքների հաղթահարման, ինչպես նաև թուրքական ժխտողականության դեմ պայքարի հարցերում:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմքը**: Ատենախոսությունը շարադրված է արխիվային փաստաթղթերի, գիտական հոդվածների, մենագրությունների հիման վրա կատարված պատմահամադրական, պատմահամեմատական, պատմաքննական մեթոդների կիրառմամբ:

Պատմահամադրական մեթոդի կիրառմամբ ատենախոսության մեջ կատարվել է գիտական թեմային առնչվող աղբյուրների և տարբեր վերլուծական բնույթի նյութերի համակարգում, քննական վերլուծություն և վերջնական եզրահանգում, ինչն էլ հնարավորություն է տվել ատենախոսության մեջ քննարկված խնդիրները դիտարկել որպես մեկ ամբողջական համակարգ:

Պատմահամեմատական և պատմաքննական մեթոդների կիրառմամբ վերլուծել ենք ՀՀ իշխանությունների մոտեցումների փոփոխությունները ինչպես Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, այնպես էլ այդ համատեքստում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման անհրաժեշտության հարցում:Բացի այդ,լուսաբանվել և համապատասխան

քննական վերլուծության են ենթարկվել հիմնահարցի վերաբերյալ առկա կարծիքները, մոտեցումներն ու դրանց վերլուծությունները:

**Հետազոտության ժամանակագրական հենքը:** Ատենախոսությունը ընդգրկում է գերազանցապես 1991-2016 թթ. ընկած ժամանակահատվածը: ժամանակագրական նման շրջանակի ընտրությունը պատահական չէ, քանզի 1991 թվականին անկախության հռչակումով ՀՀ դառնում է միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ և հնարավորություն ստանում միջազգային ատյաններում բարձրաձայնել ինչպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը, այնպես էլ լիարժեք բանակցություններ վարել թուրքական իշխանությունների հետ՝ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում: Բացի այդ, ընտրված ժամանակագրական շրջանակը հնարավորություն է ընձեռում առավել լայն ընդգրկումով ներկայացնել ինչպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, այնպես էլ այն ազդեցությունը, որը ունենում էր այդ գործընթացը հայ-թուրքական հարաբերությունների խնդրում: Հիմնահարցն առավել ամբողջական և ամփոփ ներկայացնելու նպատակով ատենախոսության առաջին գլխում դուրս ենք եկել նշված ժամանակագրական շրջանակից: Նույն նկատառումով իրադարձությունների շարադրանքը հասցվել է մինչև 2018թվականը:

**Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և գիտական ուսումնասիրվածության աստիճանը:** Ատենախոսության աղբյուրագիտական հենքը բազմազան է: Այն շարադրվել է արխիվային նյութերի,փաստաթղթերի ժողովածուների,հայերեն և օտար լեզուներով մասնագիտական գրականության,

մամուլի և համացանցի տարբեր կայքէջերում տեղ գտած բազմաթիվ նյութերի հիման վրա:

Ատենախոսության մեջ օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ), ՀՀ արտգործնախարարության պատմադիվանագիտական բաժնի և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետև՝ ՀՑԹԻ) գիտական ֆոնդերում պահվող համապատասխան փաստաթղթերն ու նյութերը, որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Մի շարք սկզբնաղբյուրների օգտագործումն էլ անհնարին էր նրանց անհասանելիության պատճառով՝ պայմանավորված համապատասխան արխիվային նյութերի գաղտնիության ժամկետով:

Զգալի ուշադրություն ենք դարձրել քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող Ավագ Հարությունյանի, Լավրենտի Բարսեղյանի, Յուրի Բարսեղովի, Վիգեն Քոչարյանի կազմած փաստաթղթերի և նյութերի ժողովածուներին[1]:

Դրանցում տեղ գտած փաստաթղթերը վերաբերում են Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ կապված իրադարձություններին, ինչպես ԽՍՀՄ, այնպես էլ ՀԽՍՀ կուսակցական-պետական ղեկավարության Հայոց ցեղասպանության հարցում ունեցած դիրքորոշումներին, տարբեր պետությունների

---

[1] Տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազ. և խմբ.՝ Ա. Հարությունյան, Եր., 2005; Ավստրալիայի խորհրդարանական քննարկումները Հայոց ցեղասպանության մասին (1997-1999 թթ.), նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր Լ. Բարսեղյան, Եր., 2001, Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987 թթ.), կազմող և առաջաբանի հեղինակ Լ. Բարսեղյան, Եր., 1999, Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու), կազմող, պատ.խմբ., հեղինակ Լ.Բարսեղյան, Եր., 2005; Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, сост. и отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, т. 1, Москва, 2002, т. 2, ч. 1, Москва, 2003, т. 2, ч. 2, Москва, 2005; Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, կազմող, Վ.Քոչարյան, Եր., 2014:

խորհրդարանների, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների, նահանգային և ինքնակառավարման մարմինների կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և դատապարտման բանաձևերի վերլուծությանը և այլն:

Անշուշտ, մեր կողմից չեն անտեսվել նաև այնպիսի կարևոր սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են միջազգային իրավական փաստաթղթերի ժողովածուները[2], որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել Հայոց ցեղասպանության խնդիրը ճանաչման գործընթացից իրավական դաշտ փոխադրելու հեռանկարների մասին:

Թեմայի ուսումնասիրման համար արժեքավոր են ինչպես Սփյուռքի, այնպես էլ հայաստանյան մամուլի էջերում տեղ գտած համապատասխան նյութերը: Մասնավորապես, թեմային առնչվող ընդարձակ հրապարակումներ են զետեղվել «Դրօշակ» (Աթենք), «Սովետական Հայաստան» (Երևան) ամսագրերում և «Ազատ օր» (Աթենք), «Ազդակ» (Պէյրութ), «Արարատ» (Բեյրութ), «Աշխարհ» (Փարիզ), «Յառաջ» (Փարիզ), «Հորիզոն» (Մոնրեալ), «Ավանգարդ» (Երևան), «Խորհրդային Հայաստան» (Երևան), «Հայրենիքի ձայն» (Երևան), «Հայաստանի Հանրապետություն» (Երևան), «Ազգ» (Երևան), «Երկիր» (Երևան), «Հայոց աշխարհ» (Երևան) թերթերում: Օգտագործել ենք նաև "Аргументы и факты" (Москва), "Независимая Газета" (Москва), "Республика Армения" (Ереван), "Известия" (Москва), "The New York Times" (USA) օտար ալեզու մամուլի էջերից քաղված նյութերը:

[2]Տե՛ս Права человека. Сборник международных договоров, Том 1, Часть 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 2002; The Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events Which Occurred During the Early Twentieth Century, p. 17, https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Turkey-Armenian-Reconciliation-2002-English.pdf

Ինչ վերաբերում է թուրքական մամուլին[3], ապա խնդրո առարկա հիմնահարցին վերաբերող առաջին հոդվածները դրանց էջերում լույս են տեսել հենց 1965 թվականից սկսած: Դրանցում թուրք հեղինակները, հավատարիմ մնալով Թուրքիայի որդեգրած պաշտոնական դիրքորոշմանը, հենվելով պաշտոնական ստի և կեղծիքի վրա, խեղաթյուրելով պատմական փաստերն ու իրադարձությունները, Հայոց ցեղասպանության հարցում ընդգծված ժխտողական կեցվածք են ընդունում:

Ատենախոսությունը շարադրելիս որպես սկզբնաղբյուրներ օգտագործել ենք ժամանակի ՀՀ նախագահների հրապարակումներում[4] և համապատասխան կայքէջերում[5], ՀՀ Արտաքին գործերի նախարարության էլեկտրոնային կայքէջերում[6], ինչպես նաև ժամանակի այլ պետական գործիչների հրապարակումներում տեղ գտած համապատասխան նյութերը[7]:

Սկզբնաղբյուրների առումով մեզ համար զգալի հետաքրքրություն են ներկայացրել նաև թեմայի հետ անմիջականորեն առնչվող Թուրքիայի Հանրապետության պետական, քաղաքական ու կուսակցական գործիչների, ինչպես նաև առանձին թուրք ուսումնասիրողների հայտարարություններն ու տեսակետները, որոնք

---

[3] Տե´ս «Cumhuriyet», Istanbul, 18 Mayis, 1965, 25 Şubat, 1995; «Hürriyet», Istanbul, 15 Kasim, 1991, 13 Nisan, 1991, 26 Eylül, 1992, 31 Ocak, 1993, 14 Şubat, 1998, 6 Eylül, 2008; «Milliyet», Istanbul, 15 Nisan, 2005, 29 Nisan, 2005.

[4] Տե´ս Տեր-Պետրոսյան Լ., Հայոց ցեղասպանությունը. Հայացք պետականության դիտակետից, Եր., 2015, նույնի՝ Ընտրանի: Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, կազ. և խմբ. Ա. Բ. Սարգսյան, Եր., 2006:

[5] Տե´ս ՀՀ նախագահի պաշտոնական վեբ հանգույց, http://m.president.am/hy/, նաև՝ ՀՀ 2-րդ նախագահ Ռ. Քոչարյանի ոչ պաշտոնական վեբ հանգույց, http://2rd.am/hy/Home

[6] Տե´ս ՀՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական վեբ հանգույց, https://www.mfa.am/hy/

[7] Տե´ս Libaridian Gerard J., Modern Armenia: People, Nation, State, Chicago, Transaction Publishers, 2004; Թորոսյան Տ., Թուրքիայի արտաքին քաղաքականության «Նոր ակտիվիզմի» երկրորդ փուլը, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1-2, Եր., 2010, էջ 3-14:

տեղ են գտել ինչպես Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կայքէջում[8], այնպես էլ նշված գործիչների աշխատություններում[9]:

Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման նպատակով իրականացված երկկողմ բանակցությունների, դրանցում առկա հիմնախնդիրների և կողմերի սկզբունքային մոտեցումների, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների վրա ժամանակի քաղաքական զարգացումների համատեքստում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ազդեցությանը վերաբերող հարցերն իրենց արտացոլումն են գտել ինչպես հայ[10], այնպես էլ օտարազգի[11] հեղինակների աշխատություններում:

---

[8] Տե՛ս Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական վեբ հանգույց, http://www.mfa.gov.tr/default.en.mfa

[9] Տե՛ս Davutoğlu A., Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararasi Konumu, Istanbul: Küre Yayinlari, 2001, նույնի՝ Turkey’s Foreign Policy Vision: An Assessment of 2007, // «Insight Turkey», Vol. 10, No. 1, 2008, pp. 77-96, նույնի՝ Turkish-Armenian Relations: Is a “Just Memory” Possible ?, // «Turkish Policy Quarterly», Volume 13, Number 1-Spring 2014/ Historical Legacies in the Region: “What’s Past is Prologue” ?, pp. 21-30; Гоксел Д., Кавказская политика Турции, // «Кавказское соседство: Турция и Южный Кавказ», Редактор Александр Искандарян, Ер., Институт Кавказа, 2008, сс. 15-29; Görgülü A., Turkey-Armenia relations: A Vicious Circle, TESAV Publications, Foreign Policy Analysis Series-8, Istanbul, November, 2008, նույնի՝ Турция и Южный Кавказ в 2010 г., // «КАВКАЗ-2010». Ежегодник Института Кавказа, Редактор Александр Искандарян, Ер., Институт Кавказа, 2012, сс. 140-154; Lütem Ö. E., Karabağ Sorunu, // «Ermeni sorunu temel bilgi ve belgeler», Ermeni Araştirmalari enstitüsü, ASAM, Avrasya bir vakfi Avrasya stratejik Araştirmalar merkezi yayinlari, Ankara, 2007, s. 265-294, նույնի՝ Olaylar ve Yorumlar, // Ermeni Araştirmalaryi Üç Aylik Tarih, Politika ve Uluslararasi ilişkiler Dergisi, Ermeni Araştirmalar enstitüsü, Avrasya bir vakfi Avrasya stratejik Araştirmalar merkezi, Ankara, Kiş 2004-Ilkbahar 2005, Sayi 16-17, s. 7-81.

[10] Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Եր., 1995; Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Եր., 2009; Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում 1991-2004 թթ., Եր., 2006; Հովսեփյան Լ., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Եր., 2014; Եղիազարյան Ա., Արշակյան Գ., Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Եր., 2014; Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Москва, 2002.

[11] Տե՛ս Киреев И., Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XXI века, Москва, 2001; Бзежинский З., Великая шахматная доска, Москва, 1999; Phillips D., Diplomatic History: The Turkey-Armenia Protocols, New York, Institute for the Study of Human Rights, Columbia University, March 2012; Celac S., Emerson M., Tocci N., A Stability Pact for the Caucasus: A Consultative Document of the CEPS Task Force on the Caucasus,

Զգալի ուշադրություն ենք դարձրել նաև հայտնի թուրքագետներ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի, Հակոբ Չաքրյանի, ցեղասպանագետ Հայկ Դեմոյանի ուսումնասիրություններին[12], որոնցում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել նաև հայ-թուրքական հարաբերություններին՝ գերազանցապես ղարաբաղյան հիմնախնդրի համատեքստում:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի լուսաբանման առումով զգալի արժեք է ներկայացնում «Գերմանա-հայկական ընկերության» կողմից հրապարակված գիրքը[13]: Դրանում ներկայացված են «Գերմանա-հայկական ընկերության» պատմությունը, տեղի հայ համայնքի կողմից Բունդեսթագին ներկայացված դիմումներն ու դրանց հաջորդող իրադարձությունները:

Ատենախոսության թեմային առնչվող աշխատություններից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Հակոբ Թարկմանյանի խմբագրությամբ լույս տեսած աշխատությունը[14], որում մասնավորապես ներկայացվում են առանձին քաղաքական գործիչների կողմից ՄԱԿ-ում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ծավալված աշխատանքները:

---

January 2000, Brussels, Centre for European Policy Studies (CEPS) Paperbacks, 2011; Karagueuzian S. H., Auron Y., A Perfect Injustice: Genocide and Theft of Armenian Wealth, New York, Transaction Publishers, 2009; Schrodt N., Modern Turkey and the Armenian Genocide: An Argument about the Meaning of the Past, Springer Cham Heidelberg New York Dordrecht London, Springer International Publishing Switzerland, 2014.

[12] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., «Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև...», Եր., 2003; Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998; Демоян Г., Турция и Карабахский конфликт в конце XX - начала XXI веков: историко-сравнительный анализ, Авторское издание, Ер., 2006.

[13] Տե՛ս Deutsch-Armenische Gesellschaft, 100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft: Erinnern. Gedenken. Gestalten, Hannover, 2014.

[14] Տե՛ս The Truth about the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire (1915-1922), edited by Tarkmanian H., Beirut, 1975.

Լավրենտի Բարսեղյանի աշխատություններում[15] անդրադարձ է կատարվում տարբեր երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացին:

Ատենախոսության հետ սերտորեն առնչվող այնպիսի հարցեր, ինչպիսիք են Թուրքիայի կողմից հետևողականորեն իրականացվող Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության վերլուծությունը, Հայոց ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործության իրավական խնդիրները, համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերություններն իրենց արտացոլումն են գտել Վահագն Դադրյանի, Վլադիմիր Վարդանյանի, Շավարշ Թորիկեանի, Արմեն Մարուքյանի, Զավեն Մսըրլեանի, Բենիամին Պողոսյանի և այլոց աշխատություններում[16]: Դրանցից հարցերին

---

[15]Տե՛ս Բարսեղյան Ա. Լ., «Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը», Եր., 2001, նույնի՝ Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), Եր., 2004, նույնի՝ Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Եր., 2002:

[16]Տե՛ս Դադրյան Վ., Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները. աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, թարգմ. Լ. Թութխալյան, Եր., 2005, նույնի՝ Հայոց ցեղասպանությունը՝ ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, Եր., 2012; Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Եր., 2017; Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976, նույնի՝ Toriguian S., The Armenian Question and International Law. La Verne, Ca: «ULV Press», 1988; Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, նույնի՝ Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Եր., 2015; Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), Պէյրութ, 2010; Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Եր., 2011; Հակոբյան Հ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու

հնարավորինս ամբողջական և բազմակողմանի մոտեցումներով, ինչպես նաև նոր գնահատականներով շահեկանորեն առանձնանում են Ա.Մարուքյանի աշխատությունները:

Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից զգալի հետաքրքրություն է ներկայացնում նաև Աշոտ Մելքոնյանի աշխատությունը[17], որում հեղինակը կոնկրետ փաստական նյութերի հիման վրա կատարել է մի շարք արժեքավոր վերլուծություններ և դրանցից բխող եզրահանգումներ՝ կապված մասնավորապես «հայրենազրկում» հասկացության հետ:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակներում առանձին ուսումնասիրողներ[18] անդրադարձել են հասարակական տարբեր կառույցների մակարդակով տեղի ունեցած հայ-թուրքական շփումներին:

Ինքնին հասկանալի է, որ ատենախոսությունը շարադրելիս չէինք կարող ուշադրություն չդարձնել նաև թուրք հեղինակների ուսումնասիրություններին: Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսի, աշխարհաքաղաքական գերակայությունների փոփոխության, «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականության հետ կապված հարցերը վերլուծելիս անդրադարձել ենք թուրք հետազոտողներ Օմեր Քոջամանի, Բասքըն Օրանի, Ունալ Չևիքյոզի, Քամեր Քասըմի, Միտատ Չելիքպալանի աշխատություններին[19]:

---

պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., 2002; Արաբյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Եր., 1996:

[17] Տե՛ս Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենազրկում. Ճանաչումից՝ հատուցում, (հոդվածներ և հարցազրույցներ), Եր., 2015:

[18] Տե՛ս Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Եր., 2003; Philips D., Unsilencing the Past: Track-Two Diplomacy and Turkish-Armenian Reconciliation, New York and Oxford: Berghahn books, 2005.

[19] Տե՛ս Коджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, Москва, 2004; Oran B., The Turkish Approach to Transcaucasia and Central Asia, in Ole Hoiris and Sefa Martin Yürükel, (ed.),

Օգտագործված սկզբնաղբյուրների հարստությամբ աչքի է ընկնում Մուսա Գասիմլիի[20] ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը գերազանցապես ԽՍՀՄ արտգործնախարարության արխիվում պահվող բազմաթիվ փաստաթղթերի հիման վրա ներկայացնում է ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները 1960-1970-ական թթ.: Այստեղ ցանկանում ենք շեշտել այն հանգամանքը, որ հեղինակի՝ ազգությամբ ադրբեջանցի լինելու հանգամանքը խանգարել է նրան օբյեկտիվ գտնվել ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունների հատկապես այն մասում, որտեղ արծարծվում է Հայոց ցեղասպանության խնդիրը:

Մեր ատենախոսության հետ այս կամ այն չափով առնչվող հարցադրումներ են պարունակվում նաև տարբեր հեղինակավոր ամսագրերում լույս տեսած հայ[21] և օտար[22] հեղինակների գիտական հոդվածներում:

---

Contrasts and solutions in the Caucasus, Aarhus: Aarhus University Press, 1998, pp. 455-467; Çeviköz Ü., Uluslararasi İlişkileri yeni dengel, Ermenistan Özel Sayisi, // «TESEV», Agustos, 2001, s. 10-14; Kasim K., Uluslararasi Ilişkiler Byuntula Ermeni Sorunu: Bilim ve Aklin Aydinliğinda Eğitim Dergisi, // NISAN 2003, YIL, 4, SAYI: 38; Çelikpala M., Turkey as a Regional Power and the Caucasus, // «Insight Turkey», Vol. 9, No. 2, 2007, pp. 25-30, նույնի՝ From a failed state to a weak one ? Georgia and Turkish-Georgian relations, // «Turkish yearbook of international relations», Vol. 36, 2005, pp. 159-199.

[20] Տե՛ս Гасымлы М., СССР-Турция: от нормализации отношений до новой холодной войны (1960-1979 гг.), // АНО ИИЦ, Москва, «Инсан», 2008.

[21] Տե՛ս Արշակյան Գ., Թուրք-հայկական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 1995-2001 թթ., // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 2, Եր., 2016, էջ 12-26, նույնի՝ Թուրք-հայկական հարաբերությունները Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակի պայմաններում, // «Հայագիտության հարցեր», թիվ 2 (8), Եր., 2016, էջ 3-21; Անանյան Ա., Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», թիվ 9, Եր., 2004, էջ 3-27; Չաքրյան Հ., Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը՝ Անդրկովկասում ապակայունության գործոնը, // «Իրան-Նամե», արևելագիտական հանդես, հատոր 35, Եր., 2000, էջ 14-16, նույնի՝ «Թուրքիան Հայաստանի հետ երկխոսություն չի ցանկանում, այլ ցեղասպանության բանաձևերը չեզոքացնելու համար դա շահարկում է», // «Օրեր», թիվ 5-6, Պրահա, 2001, էջ 17-19, նույնի՝ Հայ-թուրքական հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական զարգացումների ենթատեքստում, // «21-րդ դար», թիվ 1, Եր., 2003, էջ 101-114, նույնի՝ «Եթե թուրքերը ցեղասպանությունը ճանաչեն, միևնույն է, հայերը չեն

Նշված հոդվածներից ցանկանում ենք առանձնացնել հատկապես Էդիկ Մինասյանի հոդվածները[23], որոնցում հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա ներկայացնում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման

---

հրաժարվի պահանջատիրությունից», // «Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն ու հայատյացության դրսևորումները», հոդվածների ժողովածու, Պրակ Ա, Եր., 2017, էջ 103-104, նույնի՝ «Խղճի տեր ոչ մի հայ չի կարող ժխտել թուրքերի կրած տառապանքը», // «Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն ու հայատյացության դրսևորումները», հոդվածների ժողովածու, Պրակ Բ, Եր., 2017, էջ 223-225; Մարուքյան Ա., «Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական «հայեցակարգի» հիմնական բաղադրիչները», // «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1, Եր., 2015, էջ 24-35; Հովհաննիսյան Մ., «Հայոց ցեղասպանության ժխտողականության առանցքային կետերը՝ դերակատարների և դրսևորումների ձևափոխման համատեքստում», // «Հայոց ցեղասպանության ժխտողականությունը Նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում», գիտաժողովի նյութեր, Եր., 2016, էջ 88-94; Մանուկյան Տ., Հայոց ցեղասպանության ժխտողականության վերաբերյալ քննարկումները Թուրքիայի խորհրդարանում 2005 թ., // «Ժամանակակից Եվրասիա», Թուրքիա. Արտաքին քաղաքականության հարցեր, Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր V(2), Եր., 2016, էջ 82-91; Մանուկյան Ժ., Հայ-թուրքական հարաբերությունները և Հայոց ցեղասպանության խնդիրները (1991-2002 թթ.), // «Տարեգիրք», Եր., 2005, էջ 64-78; Պապյան Ա., Հայ-թուրքական արձանագրությունների վերլուծություն (ելույթ ՀՀ Ազգային ժողովի լսումների ժամանակ), // «Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր», հոդվածների ժողովածու, Եր., 2012, Մաս 2, էջ 198-203; Մսըրլեան Զ., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությիւնը եւ Հայկական հարցը (1900-1976 թթ.), // «Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. Զ, Պէյրութ, 1977, էջ 71-104; Մարության Հ., Թանգարան և հուշարձան (Հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն), // «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 3, Եր., 2014, էջ 58-79:

[22] Տե՛ս Куртов А. А., Халмухамедов А. М., Армения-Турция: Противостояние или Сотрудничество ? “Армения: Проблемы независимого развития”, Москва, 1998; Grigoriadis I., The Davutoğlu Doctrine and Turkish Foreign Policy, // «ELIAMER», Working Paper, No. 8. 04. 2010, pp. 1-12; Murinson A., Turkish Foreign Policy in the Twenty-First Century, The Begin-Sadat Center for Strategic Studies Bar-Ilan University, // «Mideast Security and Policy Studies», No. 97, September 2012, pp. 1-31.

[23] Տե՛ս Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը վերջին չորս տասնամյակում, // «Մեծ եղեռն-90», Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 73-88, նույնի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, // «Հայոց Մեծ եղեռն-90», Հոդվածների ժողովածու, խմբ. Սիմոնյան Ա., Հովհաննիսյան Հ., Սաֆարյան Ա., Եր., 2005, էջ 286-300, նույնի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդի փուլի առանձնահատկությունները. Դատապարտում և հատուցում, // «Հայոց ցեղասպանություն-100 ճանաչումից՝ հատուցում», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2016, էջ 37-61:

գործընթացը և դրան առնչվող իրադարձությունները:

# ԳԼՈՒԽ I.
# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎՐԱ 1991-1998 ԹԹ.

## 1.1 Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը ժամանակի քաղաքական զարգացումների համատեքստում

Նախքան բուն նյութի շարադրանքին անցնելը, մի փոքր շեղվելով ատենախոսության ժամանակագրական շրջանակներից հարկ ենք համարել հնարավորինս սեղմ ներկայացնել այն «ժառանգությունը», որը ստացել էր նորանկախ ՀՀ-ն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, այդ հարցի նկատմամբ թուրքական իշխանությունների որդեգրած մոտեցումների և ՀԽՍՀ պետական-կուսակցական ղեկավարության Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը պետականորեն հարգելու ուղղությամբ ձեռնարկած քայլերի առումով, քանզի, մեր խորին համոզմամբ, միայն նման «ժառանգության» օբյեկտիվ և բազմակողմանի վերլուծությունը հնարավորություն կընձեռի ճիշտ ներկայացնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի և այլ գործոնների ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների վրա:

Գաղտնիք չէ, որ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն ընդհուպ մինչև 1965 թվականը Հայոց ցեղասպանության փաստն անգամ սեփական երկրում չէր բարձրաձայնում, իսկ այն անձինք, ովքեր փորձում էին դա անել, ենթարկվում էին

հալածանքների: Այդ հարցում այլ էր սփյուռքահայերի վերաբերմունքը, որոնք անհամեմատ ավելի ազատ էին Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում իրենց կամքն ու ցանկություններն արտահայտելու գործում: Ուստի, կարծում ենք սխալված չենք լինի, եթե նշենք, որ հենց նրանց ջանքերով էլ «եվրոպական մի շարք երկրներում, հատկապես Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և այլուր գործող մարդու իրավապաշտպան կազմակերպությունները» սկսել էին ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա «Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը ճանաչելու» պահանջով[24]:

1965 թվականը ՀԽՍՀ-ում շրջադարձային է դառնում այն առումով, որ անտեսելով «խորհրդա-թուրքական բարեկամության» հրամայականով պայմանավորված ցեղասպանության մասին խոսելու ու գրելու արգելքը՝ առաջին անգամ պետական մակարդակով հնարավոր է դառնում Հայոց ցեղասպանության ճանաչման համար «համախմբել աշխարհի առաջավոր ուժերը»[25]:

Մեր տրամադրության տակ եղած փաստերը վկայում են, որ Խորհրդային Հայաստանի առանձին ղեկավարներ որոշակի դրական դերակատարություն են ունեցել Հայոց ցեղասպանության 50-ամյակը պետական մակարդակով նշելու հարցում[26]:

Այսպես, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակով (Հակոբ) Զարոբյանը ՀԿԿ Կենտկոմի անունից 1964 թ. դեկտեմբերի 13-ին դիմում է Մոսկվա՝ Հայոց ցեղասպանության 50-ամյակը պետականորեն նշելու թույլտվություն ստանալու համար այն

---

[24] Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Եր., 1995, էջ 59:
[25] Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Եր., 1998, էջ 5:
[26] Տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմ. և խմբ. Ա. Հարությունյան, Եր., 2005, էջ 8:

պատճառաբանությամբ, թե սփյուռքահայ հետադեմ ուժերն այդ տարեթիվը շահադիտական և սադրիչ նպատակներով են ձգտում նշել և, որ «ազգայնական «Դաշնակցություն»կուսակցությունը պնդում է, որ իբր թե մեր երկրում … անմեղ զոհված մեր հարյուր հազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերում» և, որ «իբր դրանով իսկ մեզ մոտ ցեղասպանության քաղաքականությունը առարկայաբար արդարացվում է»[27]:

Նախքան Յ. Զարոբյանի ՀԿԿ Կենտկոմի անունից Մոսկվա դիմելը, 1964 թ. հուլիսի 16-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծ. Աղայանը, ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Ինճիկյանը և ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջ. Կիրակոսյանը նամակ են հղում ՀԿԿ Կենտկոմին՝ ներկայացնելով «Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի միջոցառումների անցկացման մասին» 11 կետերից բաղկացած գիտաքարոզչական, մշակութային-զանգվածային միջոցառումների կազմակերպման, այդ թվում՝ «բնակչության միջոցների հաշվին» հուշարձանի կառուցման առաջարկություններ[28]: Ահահենց այս նամակի բովանդակությունն էլ ընկած էր Յ.Զարոբյանի վերը նշված դիմումի հիմքում[29]:

Ցանկանում ենք շեշտել, որ ժամանակի ՀԽՍՀ պետական-կուսակցական ղեկավարությունից զգալի ջանքեր են պահանջվել Մոսկվայից համապատասխան թույլտվություն ստանալու համար: Անդրադառնալով դրան՝ Յ. Զարոբյանը մասնավորապես գրում է. «Կենտկոմի նախագահությանը պետք էր կամքի մեծ ուժ ունենալ,

27 ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թ. 170-174:
28 Տե՛ս նույն տեղում, թ. 66-73:
29 Տե՛ս նույն տեղում, թ. 170-174:

որպեսզի բարձրացներ այդ հարցը»[30]: Իսկ ինչ վերաբերում է ՀԽՍՀ ղեկավարության վերը նշված քայլի բուն նպատակին, ապա ըստ նույն Զարոբյանի «Մենք մեր կուսակցական պարտքը համարեցինք նշել այդ տարեթիվը, **որպեսզի Կենտկոմի շուրջ համախմբենք մեր ժողովրդին** (ընդգծումը մերն է- Մ.Ն.)»[31]:

Անկեղծ ասած դժվար է միանշանակ պնդել, թե Զարոբյանը մեր ժողովուրդ ասելով նկատի ուներ միայն ՀԽՍՀ-ում բնակվող հայերին, թե նաև սփյուռքահայությանը: Անկախ ամեն ինչից, ժամանակի ՀԽՍՀ ղեկավարության նման քայլն, անշուշտ,ողջունելի էր:

Ի վերջո, երկարատև քննարկումներից հետո ԽՄԿԿ Կենտկոմը թույլատրում է նշել Հայոց ցեղասպանության 50-ամյակը[32], մի բան, որն, անկասկած, զգալի ձեռքբերում էր:

1965 թ. մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատում է «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների» 15 կետից բաղկացած գործնական կոնկրետ աշխատանքների ծրագիր, որը մեծ մասամբ կյանքի է կոչվում[33]:

Հարկ է նկատել, որ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի կոթողի կառուցմանը վերաբերող որոշումը ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը ընդունել է 1965 թ. մարտի 16-ին՝ այսինքն նախքան ապրիլի 24-ը: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ նշված որոշման ընդունման օրը փաստացի համընկնում է Մոսկվայում ստորագրված հայտնի քեմալա-բոլշևիկյան պայմանագրի ստորագրման

[30] Նույն տեղում, ց. 45, գ. 1, թ. 2-4; գ. 2, թ. 31-63, 71; գ. 4, թ. 34-49, 61-64:
[31] Նույն տեղում:
[32] Տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, էջ 7:
[33] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 1-2, 4-5, 8-10:

օրվա հետ: Իսկ ինչ վերաբերում է հուշակոթողի բացմանը, ապա հարկ է նշել, որ այն տեղի է ունեցել 1967 թ. նոյեմբերի 29-ին, այն դեպքում, երբ վերը նշված որոշման մեջ որպես կոթողի կառուցման ավարտ նշվում էր 1965 թվականը[34]:

Ի վերջո, 1965 թ. ապրիլի 24-ին խորհրդահայ իրականության մեջ առաջին անգամ Հայոց ցեղասպանության 50-ամյակը նշվում է պետական մակարդակով: Այդ օրը Երևանում տեղի են ունենում բազմամարդ երթեր և հանրահավաքներ: Ընդ որում՝ Վ. Ի. Լենինի անունը կրող հրապարակում առավոտյան սկսված ցույցի ժամանակ ելույթ են ունենում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանը, ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար Բ. Մուրադյանը, Գրողների միության նախագահ Էդ. Թոփչյանը, գրող Ս. Խանզադյանը: Ցուցարարները ՀԽՍՀ ղեկավարությանն են փոխանցում ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Նախարարների խորհրդին և Գերագույն խորհրդի նախագահությանը հասցեագրված նամակ՝ հետևյալ խնդրանքներով. *1.* հայկական ԽՍՀ-ին հանձնել Ղարաբաղը, Նախիջևանը և ԽՍՀՄ տարածքում հայերով բնակեցված պատմականորեն հայկական հողերը, *2.* հայրենադարձ հայերին բնակեցնել Նախիջևանում, *3.* ազատել յոթ հայրենասերներին (քաղբանտարկյալներին - Մ.Ն.), *4.* արագացնել արտասահմանից հայերի հայրենադարձությունը[35]:

Նույն օրը Օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենում «1915 թվականի Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Երևան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էին ՀԽՍՀ

---

34 Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 171; տե՛ս նաև՝ ֆ. 113, ց. 96, գ. 88, թ. 2; տե՛ս նաև՝ Մարության Հ., Թանգարան և հուշարձան (Հայոց և հրեաների փորձառության համեմատական վերլուծություն), // «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 3, Եր., 2014, էջ 64:

35 ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 165, թ. 2-10, տե՛ս Մկրտիչ Արմենի նամակը ՀԿԿ Կենտկոմին 1965 թ. ապրիլի 24-ի ցույցի մասին:

ղեկավարությունը, Վազգեն Ա կաթողիկոսը: Բացման խոսքում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանը շեշտում է այն փաստը, որ «հայ ժողովուրդն այսօր առաջին անգամ արժանավայել նշում է Մեծ եղեռնի տարելիցը, նրա բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը»: Այնուհետև անդրադառնալով «գենոցիդի մարդակեր քաղաքականությանը»՝ զեկուցողը նշում է, որ «...մենք դատապարտում ենք ոչ թե աշխատավոր ժողովրդին, այլ բռնակալ դահիճներին, այդ քաղաքականությունը ստեղծողներին և նրա գործադրողներին»[36]:

ՀԽՍՀ ղեկավարությունը որքան էլ որ ջանքեր էր գործադրել ցեղասպանության 50-ամյակը պետականորեն նշելու ուղղությամբ, այնուամենայնիվ, հավատարիմ էր մնում երկրում իշխող վարչահրամայական մեթոդներին: Դրա ամենավառ վկայությունը թերևս այն է, որ 1965 թ. ապրիլի 24-ից ընդամենը 4 օր անց՝ ապրիլի 28-ին, ՀԿԿ Կենտկոմի նախագահությունն ընդունում է որոշում «Երևան քաղաքում 1965 թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին»: Որոշման մեջ հրահանգվում էր «լուրջ բարելավել գաղափարախոսական աշխատանքը, հատուկ ուշադրություն դարձնել ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակության, խիստ պատասխանատվության ենթարկել ուսումնական հաստատությունների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին, պարտավորեցնել ստեղծագործական կազմակերպությունների ղեկավարներին կատարելու համապատասխան հետևություններ»:

---

[36] Տե՛ս «Սովետական Հայաստան», Եր., 1965, թ. 97, 25 ապրիլի; տե՛ս նաև՝ «Коммунист», Ереван, 1965, No. 97, 25 апреля.

Բացի այդ՝ հանձնարարվում էր ՀԿԿ Երևանի քաղկոմին և քաղշրջկոմներին «քննել տեղի ունեցած անկարգությունների փաստերը՝ քննարկելով ցույցերին մասնակից կոմունիստների անհատական հարցերը՝ նրանց նկատմամբ պատժի խիստ միջոցների կիրառմամբ»[37]:

Չնայած այս ամենին՝ խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը պետական մակարդակով հարգելու գործընթացը շարունակվել է նաև 1970-80-ական թթ.:

Այսպես, 1975 թ. ապրիլի 14-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ընդունում է «1915 թվականի հայերի ցեղասպանության 60-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին» համալիր ծրագիր[38]: Ի դեպ, Հայոց ցեղասպանության 60-ամյակի հետ կապված սգո միջոցառումները տարբերվում էին նախորդներից նրանով, որ խորհրդահայ իրականության մեջ առաջին անգամ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը հանդես է գալիս հեռուստաելույթով, իսկ ՀԽՍՀ պետական-կուսակցական ղեկավարությունը ծաղկեպսակներ դնում անմար կրակի մոտ[39]: Նմանատիպ մի համալիր ծրագիր էլ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հաստատում է 1985 թ. ապրիլի 16-ին[40]:

Այստեղ ուզում ենք շեշտել նաև այն փաստը, որ դեռևս 1985 թ. հունվարի 25-ին Կ. Դեմիրճյանը պաշտոնապես դիմել էր ԽՄԿԿ Կենտկոմին՝ ապրիլի 24-ը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հռչակելու խնդրանքով[41]: Երկրորդ անգամ՝ արդեն 1987 թ. մարտի 27-ին, Կ. Դեմիրճյանը նույն խնդրանքով դիմում է ԽՄԿԿ Կենտկոմին՝ այս անգամ

---

[37] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թ. 28-35; գ. 1, թ. 2-4; գ. 2, թ. 31-63, 71; գ. 4, թ. 34-49, 61-64:
[38] Տե՛ս նույն տեղում, ց. 55, գ. 32, թ. 2-3:
[39] Տե՛ս Դալլաքյան Կ., Հուշապատում. (Դեմքեր, իրողություններ, մտորումներ), Եր., 1998, էջ 191:
[40] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 77, գ. 89, թ. 70-71:
[41] Տե՛ս նույն տեղում, ց. 127, գ. 418, թ. 2-հակ:

արդեն հարցը վաղորոք համաձայնեցնելով ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ[42]: Ցավոք, երկու դեպքերում էլ Կ. Դեմիրճյանի խնդրանքները մերժվում են:

Ի վերջո, 1988 թ. նոյեմբերի 22-ին, Արցախյան շարժման զարթոնքի պայմաններում, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունում է օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» և ապրիլի 24-ը հայտարարում է «հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»[43]: Բացի այդ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացվում է առաջարկ 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու վերաբերյալ: Ինչպես և պետք էր սպասել, առաջարկը մերժվում է[44]:

Արդեն խորհրդային իշխանության մայրամուտին՝ 1990 թ. հունվարի 8-ին, ՀԿԿ Կենտկոմի բյուրոն վերջին անգամ հաստատում է Հայոց ցեղասպանության 75-ամյակի միջոցառումների ծրագիրը[45]:

Ի կատարումն նշված ծրագրի Երևանի մարզահամերգային համալիրում կազմակերպվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված սգո երեկո, որին մասնակցում էին հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, ինչպես նաև Սփյուռքի հայկական համայնքների պատվիրակներ: Երեկոն բացում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Վ. Մովսիսյանը, ով իր ելույթում կարևորում է Երևանում Գիտությունների ակադեմիայի համակարգում Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գիտական հետազոտությունների ինստիտուտի ստեղծման

[42] Տե՛ս նույն տեղում, թ. 3:
[43] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1989, թիվ 2, էջ 5:
[44] Տե՛ս նույն տեղում:
[45] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 40, թ. 2-9:

գաղափարը, որը պետք է ընդգրկեր առկա հարուստ փաստական նյութը և դրանց հիման վրա զբաղվեր Հայոց ցեղասպանության հիմնահարցերի ուսումնասիրությամբ[46]:

Անդրադառնալով հենց ԽՍՀՄ ղեկավարության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին, նշենք, որ ԽՍՀՄ ղեկավարությունը ոչ միայն չի ճանաչել ու դատապարտել 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը, այլև խորհրդա-թուրքական բարեկամության կարգախոսով կամա թե ակամա խոչընդոտել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Այս հանգամանքն ամենայն հավանականությամբ կարելի է բացատրել նրանով, որ մասնավորապես 1960-ական թթ. 2-րդ կեսին Խորհրդային Միությունում մտավախություն կար, թե Թուրքիան կարող է Արևմուտքի ձեռքում գործիք դառնալ հակախորհրդային «խաղերում»: Որպես ասվածի ապացույց նշենք այն փաստը, որ 1965 թ. նոյեմբերի 15-ին Թուրքիայում ԽՍՀՄ դեսպանն իր ելույթում նշում է, որ ԽՍՀՄ-ը «չէր ցանկանա տեսնել Թուրքիային որպես ԽՍՀՄ-ի դեմ գործիք»[47]:

Կարծում ենք, որ ԽՍՀՄ-ում Թուրքիայի վերաբերյալ եղած նման «մտավախությունների» պատասխանը կարելի է գտնել 1966 թ. հունվարին «Ժեն աֆրիկ» պարբերականին տված Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի հարցազրույցից վերցված հետևյալ մտքից. «Մենք Սովետական Միության հետ վարում ենք բարիդրացիական և տնտեսական սերտ համագործակցության քաղաքականություն և այսուհետ ևս վարելու ենք այդպիսի

[46] Տե՛ս «Հայրենիքի ձայն», Եր., 1990, թ. 17, 26 ապրիլի:
[47] Տե՛ս Гасымлы М., СССР-Турция: от нормализации отношений до новой холодной войны (1960-1979 гг.), // АНО ИИЦ, Москва, «Инсан», 2008, стр. 173.

քաղաքականություն այնքան ժամանակ, քանի դեռ այն բխում է Թուրքիայի շահերից»[48]:

1965 թ. հունվարի 4-ին Անկարա է այցելում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Պոտգոռնին, որն ըստ Սփյուռքում լույս տեսնող «Աշխարհ» թերթի հայտարարում է, թե «...Սովետական Միությունը ոչ մեկ պահանջք ունի Թուրքիայէն...»: Նույն թերթի կարծիքով այս ժամանակահատվածում նկատվող խորհրդա-թուրքական մերձեցումը շատ ավելի քննադատելի էր, քան Պոտգոռնու հայտարարությունը, քանզի այդ մերձեցումը, պարբերականի կարծիքով, «վնասակար էր» «...մեր կենսական շահերուն եւ, ի մասնաւորի, մեր Դատին»[49]:

Հարկ ենք համարում շեշտել նաև, որ նույն Պոտգոռնին իր ելույթում մեկ անգամ ևս հաստատում է, որ «խորհրդա-թուրքական սահմանը կոչված է դառնալու բարեկամության ամրապնդման խորհրդանիշ»[50], այլ կերպ ասած Պոտգոռնին հերթական անգամ հասկացնում էր Թուրքիային, որ խորհրդա-թուրքական սահմանները փոփոխման ենթակա չեն: Նշված հայտարարությանը հետևում են նաև կոնկրետ գործնական քայլեր, որի արդյունքում արդեն 1967 թ. փետրվարի 27-ին Անկարայում Թուրքիայի պահանջով ստորագրվում է խորհրդա-թուրքական արձանագրություն, որը հաստատում էր խորհրդա-թուրքական պետական սահմանը[51]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԽՍՀՄ արտգործնախարար Գրոմիկոն 1965 թ. մայիսի 17-ին Անկարա կատարած իր հնգօրյա այցի շրջանակներում

---

48 Տե՛ս նույն տեղում, էջ 179:
49 Տե՛ս «Աշխարհ», Փարիզ, 1965, թ. 237, 3 ապրիլի, թ. 238, 10 ապրիլի:
50 Տե՛ս Մելքոնյան Ք., Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1960-ական թթ., // «Հայոց ցեղասպանություն-100 ճանաչումից՝ հատուցում», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2016, էջ 244:
51 Տե՛ս նույն տեղում, էջ 250:

մամուլի ներկայացուցիչներին տված հարցազրույցում մեկ անգամ ևս ընդգծելով, որ Սովետական Միության և Թուրքիայի միջև աստիճանաբար հաստատվում են բարիդրացիական հարաբերություններ, այնուամենայնիվ նշում էր, որ «հարեւան երկու երկիրները՝ Խորհրդային Միութիւն եւ Թուրքիա, քննելիք մասնաւոր խնդիրներ ունին»[52]: Գրոմիկոյի հարցազրույցի այս հատվածը տեղ է գտել նաև թուրքական «Ջումհուրիյեթ» թերթի 1965 թ. մայիսի 18-ի համարի խմբագրականում[53]:

Անշուշտ դժվար է կռահել, թե Գրոմիկոն «մասնավոր խնդիրներ» ասելով կոնկրետ ինչ նկատի ուներ, սակայն ակնհայտ է այն հանգամանքը, որ որքան էլ ԽՍՀՄ-ը և Թուրքիան իրենց պաշտոնական հայտարարություններում անընդհատ շեշտում էին երկու երկրների միջև ընդլայնվող բարեկամության մասին, այնուամենայնիվ, կողմերի միջև առկա էին որոշակի տարաձայնություններ: Անդրադառնալով նման տարաձայնություններից մեկին՝ Գրոմիկոյին ուղղված պատասխան խոսքում Թուրքիայի արտգործնախարար Հասան Իշիկը, մասնավորապես, ասում է, որ «Հայաստանում իշխող հակաթուրքական միտումները չի կարելի անուշադրության մատնել», որին ի պատասխան Գրոմիկոն շեշտում է, որ «նման ակնարկները չեն կարող խանգարել երկու երկրների միջև բարեկամության զարգացմանը»[54]:

Ստացվում է, որ ԽՍՀՄ ղեկավարությունը մի կողմից չէր ճանաչում Հայոց ցեղասպանությունը՝ ցանկանալով ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային ներքաշել իր սեփական ազդեցության ոլորտը, մյուս կողմից՝

---

52 Տե՛ս «Ազատօր», Աթենք, 1965, թ. 6150, 18 մայիսի:
53 Տե՛ս «Cumhuriyet», Istanbul, 1965, 18 mayis.
54 Տե՛ս Гасымлы М., նշվ. աշխ., էջ 576:

հայերին և հատկապես սփյուռքահայերին սիրաշահելու և ի դեմս նրանց ԱՄՆ-ում, Եվրոպայում և Մերձավոր Արևելքում հուսալի հենարան ունենալու ակնկալիքով, թույլատրում է ՀԽՍՀ-ին պետականորեն հարգել ցեղասպանության զոհերի հիշատակը:

Ինչպես արդեն նշել ենք, սփյուռքահայությունը, ապրելով արտերկրում, զերծ էր գաղափարական կապանքներից և կարող էր ազատորեն արտահայտել իր իղձերն ու ցանկությունները, ինչպես նաև քայլեր ձեռնարկել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ կապված հենց սփյուռքահայության ջանքերով բազմաթիվ սգահանդեսներ են կազմակերպվում Կիպրոսում, Պարսկաստանում, Աթենքում, Եգիպտոսում, Ֆրանսիայում, Նյու Յորքում, Լոնդոնում, Իտալիայում և այլուր[55]: Ցանկանում ենք շեշտել նաև, որ Սփյուռքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված սգո արարողությունները շարունակվել են նաև հետագայում:

Այսպես, օրինակ «Արարատ» թերթի համարներում մանրամասն հաղորդագրություններ կան ԱՄՆ-ում, Կիպրոսում, Անգլիայում, Երուսաղեմում, Կանադայում Հայոց ցեղասպանության 60-ամյակի հետ կապված տարբեր բնույթի սգո արարողությունների ընթացքի վերաբերյալ[56]:

ՀԽՍՀ-ում լույս տեսնող առանձին պարբերականներ ևս այս կամ այն չափով անդրադարձել են Հայոց ցեղասպանության 60-ամյակի

---

[55] «Ազատ օր», Աթենք, 1965, թ. 6135, 27 ապրիլի, թ. 6144, 11 մայիսի, թ. 6157, 25 մայիսի; տե՛ս նաև՝ «Յառաջ», Փարիզ, 1965, թ. 10.285, 16 ապրիլի, թ. 10.298, 4 մայիսի, թ. 10.300, 6 մայիսի:

[56] «Արարատ», Բեյրութ, 1975, թ. 10.081, 3 մայիսի:

հետ կապված աշխարհի շատ երկրներում կազմակերպված սգո արարողություններին:

Օրինակ, «Խորհրդային Հայաստան» թերթի տվյալներով Հայոց ցեղասպանության 75-ամյակի հետ կապված երթ է տեղի ունեցել Երուսաղեմում, որին մասնակցել են շուրջ 300 հայեր: Երթը գլխավորել է Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը: Ցուցարարներն իրենց ձեռքերում ունեցել են Հայոց ցեղասպանությունը դատապարտող և համայն հայության պահանջներն արտահայտող պաստառներ[57]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար մղված պայքարում սփյուռքահայությունը, բացի սգո արարողությունները, հանդես է եկել նաև հուշագրերով՝ ուղղված ինչպես Մերձավոր Արևելքի, այնպես էլ Եվրոպայի և ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակներին: Նման մի հուշագրի մասին հիշատակություն կա «Արարատ» թերթում: Դրանից տեղեկանում ենք, որ Մեծ եղեռնի 60-ամյակի հետ կապված Լիբանանի Համազգային մարմինը հուշագրով դիմել է Լիբանանի վարչապետ Ռաշիդ Սոլհիին: Դրանում նշվում էր, որ Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն, մինչև օրս պատշաճ գնահատականի չի արժանացել և չի դատապարտվել[58]:

Քննարկվող ժամանակահատվածում սփյուռքահայության անունից հղվել են նաև բաց նամակներ թուրք պաշտոնյաներին և, մասնավորապես, թուրք դեսպան Օսման Օլչային: Նամակներից մեկում 1915 թվականի ցեղասպանությունը վերապրած հայերի ներկայացուցիչները քննադատում են թուրքերի

---

[57] «Խորհրդային Հայաստան», Եր., 1990, թ. 97, 28 ապրիլի:
[58] Տե՛ս «Արարատ», Բեյրութ, 1975, թ. 10.078, 29 ապրիլի:

կողմից հանրությանը հրամցվող Հայոց ցեղասպանության «պատճառները»՝ վերջում կոչ անելով դեսպանին և նրա համախոհներին, որ «արիւնով գրուած պատմութիւնը միայն արդար լուծումով կրնայ սրբուիլ»[59]:

Բաց նամակ է հղվել նաև ՄԱԿ-ում Միացյալ Նահանգների դեսպան Ն. Վ. Հոֆմանին՝ բողոքելով այն փաստի դեմ, որ վերջինս ՄԱԿ-ի Մարդկային իրավունքի հանձնախմբի 1974 թ. մարտի 6-ի կայացած նիստում պաշտպանել է Թուրքիայի առաջարկը, որով կոչ էր արվում ընդունված բանաձևից հանել 30-րդ համարը «ուր կը յիշուէր Հայ ցեղասպանութիւնը»[60]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ պետությունների կառավարող շրջանակներին ուղղված բաց նամակներ են հղվել նաև Խորհրդային Հայաստանից: Նման մի նամակ՝ ուղղված ԱՄՆ նախագահ Ռ. Ռեյգանին, տեղ է գտել «Սովետական Հայաստան» ամսագրի 1988 թվականի թիվ 8-9 համարներում, որտեղ աշխարհասփյուռ հայության անունից ԱՄՆ նախագահին կոչ էր արվում պաշտոնապես ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը[61]:

Նշենք, որ ինչպես նախորդ, այնպես էլ Հայոց ցեղասպանության 60-ամյակի հետ կապված արարողությունները, որքան էլ որ պատշաճ ուշադրության չեն արժանանում խոշոր տերությունների կողմից, այնուամենայնիվ, դրանք անհետևանք չեն անցնում և «մեծապես» նպաստում են «հայ երիտասարդության և առաջին հերթին հայ

---

[59] Տե՛ս նույն տեղում, 1974, թ. 9773, 20 ապրիլի:
[60] Տե՛ս նույն տեղում, թ. 9793, 16 մայիսի:
[61] Տե՛ս Բարսեղյան Գ., Հանուն ճշմարտության միջազգային հարաբերություններում: Բաց նամակ ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռ. Ռեյգանին, «Սովետական Հայաստան», Եր., 1988, թիվ 8, էջ 12-13, 16-17, թիվ 9, էջ 20-23, 32:

ուսանողության մոտ ազգային ինքնագիտակցության աննախընթաց վերելքին»[62]:

Սփյուռքահայության վերը նշված գործողությունները, որոնց նպատակը Հայոց ցեղասպանության փաստի վրա համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրելն էր, Թուրքիայում անհանգստություն էին առաջացնում: Այդ մասին են վկայում հետևյալ փաստերը:

Այսպես, «Աշխարհ» թերթի տվյալներով «թուրքերը դիմած են Լիբանանի իշխանութեանց, որպէսզի չթոյլատրեն հրապարակային սգահանդէս Պէյրութի մէջ»[63]: Բանն այն էր, որ Բեյրութում լույս տեսնող «Լ'Օրիան» թերթը մեկ շաբաթից ավել ծանուցում էր, որ «Ապրիլ 24-ին, Լիբանանի եւ Սուրիոյ հայերը բողոքի մեծ միթինկ մը պիտի գումարեն Թուրքիոյ դէմ, Ապրիլ 24-ը տարեդարձն է հայերու տեղահանութեան եւ ջարդերուն, որոնք տեղի ունեցեր են յիսուն տարի առաջ: Այս բողոքի ցոյցերուն պիտի մասնակցին հայ քաղաքական կուսակցութիւնները եւ համայնքի վարիչները: Դեռ յայտնի չէ, թէ Սուրիոյ եւ Լիբանանի իշխանութիւնները արտօնութիւն պիտի տան հայոց այս բողոքի միթինկներուն: Կը տեղեկանանք, թէ հայերը այժմէն պատրաստութիւններ տեսած են, եւ հայ երեսփոխաններն ալ որոշած են խորհրդարան բերել 1915-ի դէպքերը եւ Թուրքիայէն հատուցում պահանջել»[64]:

Թերթում նմանատիպ տեղեկություններ կան նաև հայերի՝ Հունաստանում կազմակերպված սգահանդեսների վերաբերյալ, ինչպես նաև նշվում էր, որ թե «արդարեւ յոյներն ու հելլէնները դրդած

---

[62] Տե՛ս «Արարատ», Բեյրութ, 1974, թ. 9786, 8 մայիսի:
[63] Տե՛ս «Աշխարհ», Փարիզ, 1965, թ. 237, 3 ապրիլի:
[64] Տե՛ս նույն տեղում:

և գրգռած են հայերը Ապրիլի 24-ին այսպիսի միթինկներ գումարելու համար»[65]:

Նշված ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման հարցը դարձել էր նաև ամենատարբեր միջազգային կազմակերպությունների քննարկման առարկա:

Այսպես, 1965 թ. հուլիսի 15-ին Հելսինկիում կայացած «Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի» երկրորդ ենթահանձնաժողովը, ապա վեհաժողովի եզրափակիչ նիստը միաձայն բանաձև ընդունեցին, որով ճանաչում և դատապարտում էին Հայոց ցեղասպանությունը: Բանաձևում մասնավորապես նշվում էր. «Այս տարի լրանում է հայկական կոտորածների 50-ամյա տարելիցը, կոտորածներ, որոնք կազմակերպվել էին Օսմանյան Թուրքիայի կողմից ազգային հարցը մի ամբողջ ժողովրդի բնաջնջման ուղիով լուծելու նպատակով: Այդ ցեղասպանությունը խլեց ավելի քան մեկուկես միլիոն ազատասեր հայերի, այսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդի կյանքը»[66]:

Խնդրո առարկա հիմնահարցի լուսաբանման տեսանկյունից կարևորել ենք այն հանգամանքը, որ 1973 թ. սեպտեմբերի 16-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնախմբի 26-րդ նստաշրջանի համար Ռուանդայի պատվիրակը պատրաստում է «Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին» վերնագրով տեղեկագիր, որտեղ ընդգրկված էր նաև

---

[65] Տե՛ս նույն տեղում:

[66] Տե՛ս Փափազյան Ա., Ժամանակագրություն: Հայկական հարցը և Մեծ եղեռնը (1876-2000 թթ.), Եր., 2000, էջ 18; տե՛ս նաև՝ Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ., Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Եր., 1995, էջ 43:

Թուրքիայի կողմից հայերի դեմ գործադրված ցեղասպանությունը հիշատակող 30-րդ պարբերությունը: Դրանում Հայոց ցեղասպանությունը ներկայացվում է «որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն» և հանձնարարվում Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովին ուսումնասիրել հայերի 1915 թվականի ջարդերը և այն որակել որպես ցեղասպանություն[67]:

1973 թ. սեպտեմբերի 13-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխարգելման ենթահանձնաժողովը վավերացնում է այս նոր տեղեկագիրը: 1974 թ. մարտի 6-ին զեկույցը ներկայացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանի քննարկմանը, որտեղ Թուրքիայի ներկայացուցիչ Օսման Օլչայը 30-րդ պարբերությունը որակում է որպես «միֆ» և «պատմության աղավաղում»[68]:

Թուրքիան սկսում է լուրջ ճիգեր գործադրել նշված պարբերության վերացման ուղղությամբ: Ցանկանում ենք նշել, որ քաղաքական նկատառումներից ելնելով՝ Թուրքիային այս հարցում աջակցություն են ցուցաբերում հանձնաժողովի 27 պետությունների ներկայացուցիչներից 12-ը, այդ թվում՝ ԱՄՆ ներկայացուցիչ Ֆիլիպ Ի. Հոֆմանը: Վերջինս իր նման մոտեցումը պատճառաբանում էր նրանով, թե

---

[67] Տե՛ս Մսըրլեան Զ., ՄԱԿ-ի 30-րդ պարբերութեան ծննդոցը, // «Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԺԱ, Պէյրութ, 1991, էջ 23; տե՛ս նաև՝ Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, сост. и отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю. Г. Барсегов, т. 1, Москва, 2002, стр. 766:

[68] Տե՛ս The Truth about the Massacres and Deportations of the Armenian Population of the Ottoman Empire (1915-1922), edited by Tarkmanian H., Beirut, 1975, p. 18.

իբր այդ պարբերության հիշատակված աղբյուրներից երեքը ոչ այլ ինչ են եթե ոչ հարցի վերաբերյալ հայկական տեսակետները ներկայացնող փաստաթուղթ[69]:

1978 թվականին ՄԱԿ-ի ենթահանձնախումբը, նորից անդրադառնալով դեռևս 1973 թվականի 30-րդ նստաշրջանին ներկայացված բանաձևի նախագծին, ամբողջությամբ զեկուցումից հանում է ցեղասպանության մասին արձանագրված պատմական մասը, որտեղ հիշատակվում էր նաև հայերի ցեղասպանությունը: Ի ուրախություն մեզ՝ 1979 թվականին նույն բանաձևը ներկայացվում է ՄԱԿ-ի հանձնաժողովի 35-րդ նստաշրջանի քննարկմանը, որտեղ մասնակիցները ձայների մեծամասնությամբ որոշում են վերականգնել 30-րդ ենթակետը[70]:

Փաստենք նաև, որ ՄԱԿ-ը վեց տարի անց՝ 1985 թ. հուլիսի 2-ին, 38-րդ նստաշրջանում ընդունած բանաձևի 24-րդ ենթակետում «1915-1916 թթ. հայերի օսմանյան ջարդը» որակում է որպես ցեղասպանության օրինակ[71]:

Ինչպես հայրենիքում, այնպես էլ հատկապես Սփյուռքում քննարկվող ժամանակաշրջանում նկատվող համընդհանուր ազգային զարթոնքը չէր կարող անհետևանք մնալ, ուստի կարելի է ասել, որ նման պայմաններում, սկսած 1965 թվականից, տարբեր պետությունների մակարդակով սկիզբ է դրվում Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացին:

Առաջին երկիրը, որը պետական մակարդակով ապրիլի 24-ը հայտարարում է «հայ նահատակների յիշատակումի օր» և հայկական ծագում ունեցող

69 Տե՛ս Մսըրլեան Զ., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-1976 թթ.), // «Հայկազեան հայագիտական հանդէս», հատ.Զ, Պէյրութ, 1977, էջ 97-98:
70 Տե՛ս Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, էջ 6:
71 Տե՛ս նույն տեղում:

քաղաքացիներին, որոնք հանդիսանում են պետական ծառայողներ, արտոնում «որ բացակայէին իրենց գործէն», դա Ուրուգվայն է[72]: Ցավոք բանաձևի տեքստում «ցեղասպանություն» եզրույթը օգտագործված չէ և նշված է 1915 թվականի հայ ազգության ներկայացուցիչների կոտորածներ:

Ուրուգվայից հետո երկրորդ երկիրը, որը բանաձև ընդունեց ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր հռչակելու մասին՝ Կիպրոսի Հանրապետությունն էր: Որոշումն ընդունվել է Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի կողմից 1975 թ. ապրիլի 24-ին: Արդեն 1982 թ. ապրիլի 29-ին Ներկայացուցիչների պալատը Հայոց ցեղասպանության տարելիցի առթիվ ընդունում է որոշում, որտեղ ասվում էր, որ Կիպրոսի Հանրապետությունը «...սարսափով ընդունում և դատապարտում է հայ ժողովրդի հանդեպ կատարված ոճիրը, որը բնորոշվում է որպես ցեղասպանություն և որն արմատախիլ արեց հայերին իրենց նախնիների հողերից»[73]:

Նկատենք, որ Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի ընդունած սույն որոշման մեջ խոսք էր գնում ոչ միայն Հայոց ցեղասպանության մասին, այլև շեշտվում էր «հայերի իրենց նախնիների հողերից» վտարված լինելու հանգամանքը: Սա, ինչ խոսք, նոր մակարդակի էր բարձրացնում Հայոց ցեղասպանության ու հայերի պահանջատիրության խնդիրը:

Կիպրոսի խորհրդարանի պատգամավոր Թաքիս Հաճիտիմիթրիուն միջխորհրդարանական 78-րդ համագումարում հնչեցրած իր ելույթում ևս հաստատում էր, որ «հայերը սփռված են աշխարհի

[72] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 35, թպ. 8, ֆ. հ. 15, էջ 1; տե՛ս նաև՝ «Յառաջ», Փարիզ, 2004, թ. 20.931, 23 ապրիլի:
[73] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 15, ֆ. հ. 39, էջ 10; տե՛ս նաև՝ «Արարատ», Բեյրութ, 1982, թ. 11.976, 19 մայիսի:

զանազան երկիրները իբրեւ հետեւանք Ցեղասպանութեան, որուն զոհ գացին իրենց երկրին մէջ»[74]:

1990 թ. ապրիլի 19-ին Կիպրոսի խորհրդարանը ընդունում է ևս մեկ բանաձև Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին: Չորս կետից բաղկացած բանաձևում Կիպրոսի խորհրդարանը անվերապահորեն դատապարտում է «հայ ազգի ցեղասպանությունը», որի պատճառով էլ հայ ժողովուրդը «արմատախիլ արվեց իր պապենական հողերից»: Բացի այդ, բանաձևում Կիպրոսի խորհրդարանը պաշտպանում էր հայերի «անքակտելի իրավունքների վերականգնումը»[75]:

Հաջորդ երկիրը, որը պաշտոնապես ընդունել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը, Արգենտինան է, որի Ազգային կոնգրեսը 1985 թ. ապրիլի 23-ին միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին: Հանձնարարվեց Արգենտինայի արտաքին գործերի նախարարությանը վարել հայերի ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանը նպաստող քաղաքականություն: Նույն ժամանակահատվածում հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում ընդունեց նաև Ուրուգվայի Ազգային համագումարը[76]:

1980 թ. մարտի 27-ին արդեն Կանադայի Օնտարիո նահանգի օրենսդրական ժողովը միաձայն որոշում է ընդունում խնդրել Կանադայի կառավարության պաշտոնապես ճանաչել և դատապարտել այն

---

[74] Տե՛ս Լսելի դառնալ՝ ամէն ճակատի վրայ, «Դրօշակ», Աթենք, ԺԸ տարի, թիվ 16, 25 նոյեմբեր 1987, էջ 23:
[75] Տե՛ս Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, (նյութերի ժողովածու), կազմող, պատ. խմբ., հեղինակ Լ. Բարսեղյան, Եր., 2005, էջ 222:
[76] Տե՛ս ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 35, թպ. 1, ֆ.հ. 1; տե՛ս նաև՝ ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ 320, էջ 24-28:

գազանությունները, որոնք Թուրքիայի կառավարությունն իրականացրել է հայ ժողովրդի նկատմամբ: Միաժամանակ առաջարկվում էր Կանադայի կառավարությանը յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը ամբողջ Կանադայում հայտարարել Հիշատակի օր՝ հայ համայնքի համար[77]:

Ապրիլի 10-ին Կանադայի մեկ այլ Քվեբեկ նահանգի Ազգային ասամբլեան հայտարարություն ընդունեց Թուրքիայում հայերի ցեղասպանության դատապարտման մասին: Սակայն այս հայտարարությունն անհրաժեշտ աջակցություն չստացավ[78]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում անմասն չէր նաև այնպիսի հայտնի միջազգային կազմակերպություն, ինչպիսին Եվրախորհրդարանն էր: Այսպես, դեռևս 1983 թվականին Եվրախորհրդի քաղաքական հանձնաժողովը որոշում է ընդունում Հայկական հարցի քաղաքական լուծման մասին և այն ներկայացնում Եվրախորհրդի քննարկմանը: Միայն չորս տարի անց՝ 1987 թ. հունիսի 18-ին, Եվրախորհրդարանը, կրկին անդրադառնալով այդ հարցին, ընդունում է «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձև[79]: Դրանում մասնավորապես նշվում է, որ «մինչև այժմ պատմականորեն ապացուցված հայկական ցեղասպանությունը չի ենթարկվել քաղաքական դատապարտման և չի արժանացել համապատասխան փոխհատուցման»[80]: Դրա հետ միասին, նույն փաստաթղթում շեշտվում էր, որ թեև «Օսմանյան

---

[77] Տե՛ս «Հորիզոն», Մոնրեալ, 1985, թ. 50, 6 մայիսի:

[78] Տե՛ս Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), Եր., 2004, էջ 43:

[79] Տե՛ս Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987 թթ.), կազմող և առաջաբանի հեղինակ Լ. Ա. Բարսեղյան, Եր., 1999, էջ 9:

[80] Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 1, Москва, 2003, стр. 701; նաև՝ European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc, A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf.

կայսրության տարածքում հայերի նկատմամբ 1915-1917 թթ. տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները ցեղասպանություն են՝ համաձայն 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի, այնուամենայնիվ, ըստ բանաձևի՝ «ներկայիս Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար», և «պատմական այդ իրադարձությունների ճանաչումը՝ որպես ցեղասպանություն, առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի՝ ներկայիս Թուրքիայի նկատմամբ»[81]:

Անդրադառնալով բանաձևի նման ձևակերպմանը Եվրախորհրդարանում Ֆրանսիայի կոմկուսի ներկայացուցիչ Ռենե Էմիլ Փիքեն իր ելույթում միանգամայն իրավացիորեն նշում էր. «Եթե Թուրքիայի ներկայիս կառավարությունը պատասխանատու չէ 1915 թվականի ցեղասպանության համար, ապա պատասխանատու է դրա գոյությունն ընդունելու կամ մերժելու հարցում»[82]:

Իսկ ինչ վերաբերում է բանաձևում առկա «ներկայիս Թուրքիայի նկատմամբ» քաղաքական, իրավական կամ նյութական պահանջի հարցին, ցանկանում ենք նշել, որ նման խնդիրները պետք է լուծվեն ՄԱԿ-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» 1968 թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիայի այն հայտնի դրույթի հիման վրա, ըստ որի՝ գենոցիդի

---

[81] Նույն տեղում:

[82] Տե՛ս Հակոբյան Հ., Այս է ճշմարտությունը, «Սովետական Հայաստան», Եր., 1988, թիվ 6, էջ 12:

հանցագործությունը «վաղեմություն չի ճանաչում»[83]: Ուստի, նման ահավոր ոճիրի դիմաց պետք է փոխհատուցում լինի, «եթե դա պահանջում է տուժած ժողովրդի ճնշող մեծամասնությունը»[84]: Նկատենք նաև, որ եթե հրեաների դեպքում խոսք կարող էր գնալ միայն նյութական փոխհատուցման մասին, ապա մեր դեպքում դրվում էր նաև «մեր կորուսյալ հայրենիքի վերադարձի հարցը»[85]:

«Դրօշակը», իր 1987 թ. հունիսի 24-ի համարում անդրադառնալով Ստրասբուրգում ընդունված բանաձևին, համարում էր այն «եռակի հաջողություն»: Նախ այն առումով, որ «...Հայ Դատը իր տեղը կը գտնէր լուծումի սպասող միջազգային կարեւոր խնդիրներու շարքին, քաղաքական վարկ վայելող Եւրոխորհրդարանի օրակարգին վրայ»: Բացի այդ, պարբերականի կարծիքով, բանաձևի ընդունումով Եվրախորհրդարանը «կոչ կ'ուղղէր եւրոպական թէ միջազգային պատկան բոլոր շրջանակներուն, որ իրենց պատասխանատուութիւնը ստանձնեն՝ Հայկական հարցին քաղաքական արդար լուծում մը գտնելու ուղղութեամբ» և, վերջապես, «որդեգրուած բանաձեւը, հակառակ մեր վերապահութեան առարկայ իր որոշ կէտերուն, Փետրուար 1987-ին Եւրոխորհրդարանի Քաղաքական Յանձնախումբին մէջ աղաւաղուելէ ու իմաստազրկուելէ ետք, խնդրոյ առարկայ բանաձեւը Յունիս 1987-ին փաստօրէն կ'որդեգրուէր այն

[83] Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 2002, стр. 728; տե՛ս նաև՝ Դադրյան Վ., Հայոց ցեղասպանությունը՝ ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, Եր., 2012, էջ 27:

[84] Արաքյան Ի., Ցեղասպանությունը և դրա պատժելիությունը, Եր., 1996, էջ 43; տե՛ս նաև՝ Ստեփանյան Ս., Հայոց ցեղասպանության ճանաչումից ու դատապարտումից մինչև Հայկական հարցի արդարացի լուծում, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1, Եր., 2012, էջ 29:

[85] Նույն տեղում:

բարեփոխումներով, որոնք առաջադրուած էին Հայ Դատին զօրավիգ կանգնող շրջանակներու կողմէ»[86]:

Անկեղծ ասած, պարբերականի կողմից բերված փաստարկները բավականին համոզիչ են և դժվար է դրանց հետ չհամաձայնվելը: Դրա հետ միասին ցանկանում ենք նշել նաև, որ ավելին սպասել Եվրախորհրդարանից՝ առնվազն միամտություն կլիներ, քանզի բանաձևը որքան էլ որ հայանպաստ էր, այնուամենայնիվ մեծ հաշվով քաղաքական փաստաթուղթ էր Եվրոպայի ձեռքին՝ Թուրքիայի նկատմամբ անհրաժեշտ ճնշում գործադրելու համար:

Թուրքական կողմը, անդրադառնալով նշված բանաձևին, սկսում է մեղադրել Եվրախորհրդարանին՝ «ցեղասպանություն» եզրույթն օգտագործելու համար՝ նշելով, թե ցեղասպանությունը «կանխամտածուած արարք մը» է, մինչդեռ թուրքական կողմի գործողությունների մեջ ոչ մի կանխամտածվածություն չկար, այլ ընդամենը պատերազմական պայմաններում հայտնված հայության տեղափոխության ընթացքում «շատ մը հայեր մահացան»[87]: Բացի այդ, թուրքական կողմը վրդովմունք էր հայտնում այն փաստի առթիվ, որ, ի տարբերություն քրիստոնյա հայերի, Եվրախորհրդարանը «...1980-ական թուականներուն, Պուլկարիոյ մէջ բիրտ ճնշումի տակ տառապող երկու միլիոն թուրքերու մասին» ընդամենը «շրթունքի ծայրով կը խօսի»: Նույն թուրքերի կարծիքով, Հայկական հարցը ոչ թե քաղաքական, այլ պատմական հարց է, այն էլ՝ «էապէս վիճելի»: Ուստի, ըստ թուրքերի, Եվրախորհրդարանն իրավունք չունի «անխիղճ եւ մակերեսային կերպով յանգիլ

86 Եռա՛կի յաջողութիին Սթրազպուրկի մէջ, «Դրօշակ», Աթենք, ԺԸ տարի, թիվ 5, 24 հունիսի 1987, էջ 3:

87 Տե՛ս Պատգամ՝ Եւրոպական խորհրդարանի այն անդամներուն, որոնք ուղղակի թէ անուղղակի կերպով զօրավիգ կանգնեցան «Հայկական բանաձեւին», «Դրօշակ», Աթենք, ԺԸ տարի, թիվ 12, 30 սեպտեմբեր 1987, էջ 17:

եզրակացութեան մը, որ մեծ անարդարութիւն է թուրք ազգին համար»: Բացի այդ, Թուրքիան վրդովմունք էր հայտնում նաև այն փաստի հետ կապված, որ Եվրախորհրդարանը եվրոպական համայնքին Թուրքիայի անդամակցությունը կապում էր Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստի հետ: Այդ իմաստով թուրքերը կոչ էին անում եվրոպացիներին «թուրքերը նկատել իրենց համահաւասար»[88]:

Այս առիթով 1987 թ. հունիսի 27-ին Թուրքիայի նախագահ Ք. Էվրենը Սվազում տեղի ունեցած իր ելույթում մերժում է Օսմանյան կայսրության պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության համար և տարակուսանք հայտնում, որ «տարօրինակորեն ՆԱՏՕ-ի անդամ պետությունները Թուրքիային մեղադրում են շատ ավելի հաճախ, քան Վարշավյան պակտի մասնակից երկրները»[89]: Վրդովվելով դրանից, նախագահը հայտարարում է, որ Թուրքիան պատրաստ է անգամ դուրս գալ ՆԱՏՕ-ից[90]:

Հետաքրքիր է նկատել, որ ԱՄՆ Կոնգրեսում առանձին կոնգրեսականներ չէին հավատում Թուրքիայի նախագահի այդ հայտարարությանը՝ դիտելով այն որպես ընդամենը դիվանագիտական քայլ ՆԱՏՕ-ի անդամ երկրների և հատկապես ԱՄՆ-ի վրա ճնշում գործադրելու և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը տապալելու նպատակով:

Այսպես, ԱՄՆ կոնգրեսական Սոլարզն, անդրադառնալով Թուրքիայի նախագահի ՆԱՏՕ-ի կազմից դուրս գալու «սպառնալիքին», նշում էր. «...չեմ հաւատար, որ թուրքերը պիտի լքեն ՆԱԹՕ-ն»[91]:

---

[88] Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:
[89] ՀԱԱ, ֆ. 326, ց. 7, գ. 89, թ. 3, 5:
[90] Նույն տեղում, թ. 8:
[91] Տե՛ս Ամերիկեան Քոնկրէսը ի՞նչ առարկութիւններով մերժեց քննել ու վաւերացնել հայկական բանաձեւը, «Դրօշակ», Աթենք, ԺԸ տարի, թիվ 9-10, 2 սեպտեմբեր 1987, էջ 27:

Թուրքիան, հաշվի չնստելով Եվրոպական խորհրդարանի նշված բանաձևի հետ, հրաժարվում է անգամ բանաձևի գոյության փաստն ընդունելուց[92]:

Հայերի ցեղասպանության հարցը քննարկվել է նաև 1984 թ. ապրիլի 13-16-ին Փարիզում տեղի ունեցած ժողովուրդների մշտական ատյանի հատուկ նստաշրջանում: Վերջինիս աշխատանքները կարևորել ենք այն հանգամանքով, որ այստեղ ելույթ ունեցած եվրոպական տարբեր երկրներից և ԱՄՆ-ից ժամանած հատուկ մասնագետ-փորձագետների և ցեղասպանությունը վերապրած չորս ականատեսների վկայությունների հիման վրա, մշտական դատարանը վճիռ է կայացնում, որում մասնավորապես ասվում էր. «Երիտթուրքերի կառավարությունը պատասխանատվություն է կրում Հայոց ցեղասպանության՝ 1915-1917 թթ. կատարած գործողությունների համար»[93]: Բացի այդ, ընդունվում է Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշում՝ բնութագրելով այն որպես «միջազգային ոճիր», որի «պատասխանատվությունը պարտավոր է ստանձնել թուրքական պետությունը… և պաշտոնապես ճանաչել այս ցեղասպանության իրողությունը, դրանով իսկ՝ նաև հայ ժողովրդի կրած վնասները»[94]:

Ատյանի ընդունած որոշումներից մեզ հետաքրքրող հիմնահարցի շրջանակներում ուշադրության են արժանի հատկապես երկրորդ և չորրորդ կետերը: Այսպես, որոշման երկրորդ կետում նշվում է, որ «հայ ազգաբնակչության խմբերի բնաջնջումը՝ կոտորածների և ջարդերի

---

[92] Տե՛ս Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները, և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջ 352-353:

[93] Տե՛ս Արման Գասպար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչությունը, հատ. Ա, Լոս Անճելըս, 1989, էջ 147:

[94] Տե՛ս նույն տեղում:

ճանապարհով, սահմանվում է ցեղասպանության հանցագործություն...»: Չորրորդ կետի համաձայն՝ Հայոց ցեղասպանությունը նաև «միջազգային ոճիր է», որի համար պետք է պատասխանատվություն կրի թուրքական պետությունը՝ առանց պատրվակելու այն հանգամանքը, թե նախկին ու ներկա պետությունների միջև հաջորդականություն չկա՝ պատասխանատվությունից խուսափելու համար[95]:

Նկատենք, որ թուրքական կողմի այն պնդումները, թե իբր իրենք Օսմանյան Թուրքիայի իրավահաջորդները չեն, չի դիմանում քննադատության, քանզի միջազգային իրավունքը ամրագրում է, որ «եթէ վերապրող պետութիւնը կը պահպանէ, ընդհանուր առմամբ, հին պետութեան գլխաւոր յատկանիշերը՝ պատմական կապի, բնակչութեան, ցեղային ծագումի, լեզուի, կառավարութեան եւ այլ տեսանկիւններէ, այդ պարագային շատ հաւանական է, որ ինքնութեան եւ անձնաւորութեան շարունակականութիւն մը գոյութիւն ունի հին եւ նոր պետութիւններուն միջեւ»[96]:

Թուրքիայի Հանրապետության Օսմանյան կայսրության իրավահաջորդը լինելու հանգամանքը հաստատել է նաև թուրքական դիվանագիտական ծառայության վետերան, պատմաբան Քամուրան Գյուրունը՝ նշելով, որ «Թուրքիայի Հանրապետությունը հանդիսանում է Օսմանյան կայսրության իրավահաջորդը...»[97]: Թուրք գիտնական Ահմեդ Ինսելն էլ իր հերթին հայտարարել է, որ թուրքական պետության «իրավահաջորդությունը

---

[95] Տե՛ս «Ավանգարդ», Եր., 1989, թ. 121, 20 հոկտեմբերի:
[96] Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976, էջ 193, նույնի՝ The Armenian Question and International Law. La Verne, Ca: «ULV Press», 1988, p. 109.
[97] Տե՛ս Дадрян В., Геноцид армян как проблема международного уголовного права, // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», թիվ 13, Եր., 2006, էջ 8:

օրինականացվել է Լոզանի պայմանագրով՝ հատկապես կայսրության արտաքին պարտքի առնչությամբ»[98]։

Ուստի միանգամայն իրավացի է այն պնդումը, որ «…ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունն այդ կայսրության (Օսմանյան-Մ.Ն.) իրավահաջորդն է ոչ միայն իրավական առումով, այլ և փաստացի», և Հայոց ցեղասպանության «պատասխանատվությունը մնում է այն պետության վրա, որը ներկայացնում է Թուրքիան միջազգային ասպարեզում»[99]։

Քննարկվող ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացում եվրոպական երկրների շարքում զգալի ավանդ ունի Ֆրանսիան, ընդ որում՝ ամենատարբեր մակարդակներում։

Այսպես, 1965 թ. ապրիլին Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավորների ձախ թևի ներկայացուցիչները դիմում են կառավարությանը՝ պահանջելով միջազգային չափանիշներով դատապարտել 1915 թվականի ցեղասպանությունը՝ այն որակելով որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, և փոխհատուցում տալ հայերին[100]։

Ֆրանսուա Միտերանն արդեն նախագահական ընտրությունների նախօրյակին հայտարարում է, որ «Հայկական հարցն ուղղակիորեն վերաբերում է ֆրանսիական պետությանը և կշտամբում կառավարությանը՝ հայերի ցեղասպանությունը և Հայկական հարցը չճանաչելու համար»։ Բացի այդ, 1981

---

[98] Տե՛ս նույն տեղում։

[99] Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, // «Հայոց Մեծ եղեռն-90», Հոդվածների ժողովածու, Եր., 2005, էջ 288-289; տե՛ս նաև՝ Վարդանյան Վ., Կիրակոսյան Ե., Գևորգյան Լ., Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը, Իրավական ուղեցույց, Եր., 2014, էջ 21-22։

[100] Տե՛ս Բարսեղյան Լ., Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Եր., 2002, էջ 9։

թ. ապրիլին Միտերանը Մարսելի «Ապրիլի 24» կոթողի մոտ հայտարարում է.«Մենք՝ սոցիալիստներս, պետք է պահանջենք, որպեսզի Ֆրանսիան ճանաչի 1915 թվականի հայերի ցեղասպանությունը, և հանդես գանք Հայկական հարցի արդարացի լուծման համար»[101]։

1981 թ. ապրիլի 24-ին Լիոնում Ֆրանսիայի պաշտպանության նախարար Շարլ Էռնյուն հայտարարում է, որ «Հայոց գենոցիդի ճանաչումը անհետաձգելի պարտականություն է, մի քայլ դեպի խաղաղությունը, արդարության ակտ աշխարհում ապրող 7միլիոն հայերի համար»[102]։

1985 թ. դեկտեմբերին Ֆրանսիայի Ազգային ժողովի փոխնախագահ Գի Դյուկոլոնեն 35 պատգամավորների անունից հանդես է գալիս գրավոր առաջարկով՝ ընդունել օրենք և ճանաչել «ցեղասպանությունը, որի զոհը դարձավ հայ ժողովուրդը 1915 թվականին»[103]։ Կազմվում է օրինագիծ և ուղարկվում Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրական, օրենսդիր ու վարչական օրենքների հանձնաժողով։ Ցավոք, հարցին այդպես էլ համապատասխան ընթացք չի տրվում։

Ի դեպ, 1986 թ. ապրիլի 23-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում կրկին բարձրացվում է այդ հարցը՝ պահանջելով ընդունել օրենք հետևյալ ձևակերպմամբ. «Ֆրանսիական Հանրապետությունը, ճանաչելով ցեղասպանությունը, որին 1915 թվականին Օսմանյան կառավարության կողմից զոհ դարձավ հայ ժողովուրդը, հանձն է առնում ապահովել այդ տարեթվի ամենամյա նշումը ազգային չափանիշով և աշխատել միջազգային հասարակությանը ճանաչել տալ մարդկության դեմ ուղղված այս

[101] Տե՛ս նույն տեղում։
[102] Տե՛ս Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք երկրորդ, Եր., 1983, էջ 382։
[103] Տե՛ս Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Եր., 1990, էջ 165։

հանցագործությունը»[104]: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Բեռնար Ռեմոնը հանդես է գալիս հարցադրման դեմ, որի արդյունքում էլ հարցը փակվում է:

Քննարկվող ժամանակահատվածում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ Թուրքիայի պաշտոնական դիրքորոշման մեջ նկատվում է նոր մոտեցում՝ պայմանավորված վերը նշված գործընթացներով: Փաստ, ինչը ի դեպ չեն ժխտում իրենք՝ թուրքերը:

Այսպես, եթե նախկինում թուրքերը հայտարարում էին, թե 1915 թվականի «իրադարձությունները» ցեղասպանություն չեն, և եթե հայերը կորուստներ են ունեցել, ապա իրենց իսկ մեղքով, կամ «հայ-թուրքական դարավոր բարեկամությունը խաթարելու համար» մեղադրում էին այս կամ այն պետությանը կամ գործչին, ապա քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը արդեն պաշտոնապես հայտարարում էր, որ իրենք Հայկական հարցը դիտում են «իբրեւ անցեալին վերջ գտած հարց մը, որուն պատասխանատուներն այսօր փնտրելը անիմաստ է»: Ավելին, նույն Օզալը պնդում էր, որ «ոչ ոքի իրաւունքն է Թուրքիայէն պահանջելու, որ ան խոնարհի կեղծիքի վրայ հիմնուած այդ պահանջին առջեւ», և որ «անհեթեթ է փնտրել որեւէ պատասխանատու իրադարձութիւններու համար, որոնք տեղի ունեցած են քանի մը տասնամեակներ առաջ, եւ որոնց պատասխանատուները թաղուած են պատմութեան էջերուն մէջ»[105]:

Հայոց ցեղասպանության փաստերի կեղծարարությունը Թուրքիայում մեծ թափով է դրսևորվում հատկապես 1980-ական թթ.՝ կապված

---

104 Տե՛ս նույն տեղում, էջ 167:
105 Տե՛ս Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում, Եր., 1988, էջ 334:

Թուրքիայում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցած իրադարձությունների և զարգացումների հետ: Ձևավորվում է Հայոց ցեղասպանության ժխտման նորացված հայեցակարգ, որը դրվում է պետական գաղափարախոսություն մշակող բոլոր հաստատությունների աշխատանքների հիմքում: Որպես այդ ամենի հետևանք՝ թուրքական մամուլի հրապարակումներում սկսում է գերակշռել հայատյացությունը:

Դրանից բացի, 1970-80-ական թթ. գրաշուկան հեղեղվում է թուրք հեղինակների հակահայ բովանդակությամբ եվրոպական տարբեր լեզուներով գրված գրքերով, որոնք և նպատակ էին հետապնդում շեղել հասարակական կարծիքը՝ հօգուտ իրենց: Չբավարարվելով դրանով՝ թուրքական իշխանությունները ձեռնամուխ են լինում Թուրքիայի արտաքին գործերի նախարարության առընթեր հատուկ ինստիտուտների ստեղծմանը: Դրանց մի մասը գործում է մինչ օրս, և, ինչպես վկայում են թուրքական թերթերը, նշված ինստիտուտները տարեկան շուրջ 50 մլն. դոլարի ֆինանսավորում են ստանում[106]:

1980-ական թթ. թուրքական կեղծարարության արշավի առանձնակի թափը մեծապես պայմանավորված էր նաև նրանով, որ այդ թվականներին շատ երկրների խորհրդարաններ պաշտոնապես ճանաչում են Հայոց ցեղասպանությունը: Ուստի, ամենևին էլ պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ

---

106 Տե՛ս Յովհաննէսեան Ր., Հայկական ցեղասպանութիւնը: (Ապրիլ 24 ուրացման եղանակներ), «Դրօշակ», Աթենք, Ի տարի, թիվ 1-2, 10 մայիս 1989, էջ 4-6; տե՛ս նաև՝ Հովհաննիսյան Մ., Հայոց ցեղասպանության ժխտողականության առանցքային կետերը՝ դերակատարների և դրսևորումների ձևափոխման համատեքստում, // «Հայոց ցեղասպանության ժխտողականությունը Նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում», գիտաժողովի նյութեր, Եր., 2016, էջ 89:

անհանգստացած այդ իրողությունից և «գիտակցելով այդ հանցագործության համար իր հնարավոր միջազգային պատասխանատվության ենթարկվելը»՝ թուրք բարձրաստիճան պաշտոնյաները առիթը բաց չէին թողնում պայքարելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ[107]: Բերենք կոնկրետ փաստեր:

Այսպես, 1981 թ. նոյեմբերի 14-ին Ստրասբուրգում Եվրոպական խորհրդի 21 երկրների մինիստրների ժողովի ժամանակ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իլթեր Թուրքմէնը հայտարարում էր, որ «Հայկական ցեղասպանութեան մասին զրոյցները պատմութեան աղաւաղումն ու խեղաթիւրումն են»: Ավելին, նա փորձում էր համոզել ներկաներին, թե իբր 1915 թվականին «հայկական ջարդեր» տեղի չեն ունեցել, այլ «հայերի նկատմամբ կիրառուել են լոկ պաշտպանական միջոցներ՝ նրանց տեղահանելով եւ աքսորելով Սուրիա ու Լիբանան»[108]:

Բացի այդ, նույն 1981 թ. հունիսի 10-ին թուրքական հեռուստամեկնաբաններից մեկը եթերից ստիպված էր խոստովանել, որ «Ցեղասպանության ընդունումը շատ կարևոր խնդիր է: Դրա համար մենք այստեղ ու ամենուրեք ջանում ենք ապացուցել, որ ցեղասպանություն չի եղել»: Այնուհետև զարգացնելով այս միտքը թուրք մեկնաբանը ցինիկաբար հայտարարում էր, թե նման ճանապարհով հայերը ցանկանում են «… հասնել մեկ այլ նպատակի» այն է, որ հայերը «կրկին» վերադառնան և «այստեղ հիմնեն նոր Հայաստան»[109]:

---

107 Մարության Ա., «Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական «հայեցակարգի» հիմնական բաղադրիչները», // «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1, Եր., 2015, էջ 27:

108 Տե՛ս «Արարատ», Բեյրութ, 1982, թ. 11.983, 27 մայիսի:

109 Տե՛ս Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Թուրքերը թուրքերի մասին, Եր., 2000, էջ 3-4:

Այս ժամանակաշրջանում՝ աշխարհում իշխող սառը պատերազմի պայմաններում, Թուրքիային հաջողվում է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը հնարավորինս կասեցնելու գործում ակտիվորեն շահարկել ՆԱՏՕ-ի և ԽՍՀՄ-ի միջև առկա լարված հարաբերությունները:Ուրեմն ամենևին էլ պատահական չէր, որ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ ուղղված քարոզարշավը Թուրքիայի կողմից իրականացվում էր առաջին հերթին հենց ԱՄՆ-ում՝ որպես ՆԱՏՕ-ի ամենահզոր անդամ:

Որպես ասվածի ապացույց՝ բերենք այն փաստը,որ 1985 թ. հունիսի 3-ին ԱՄՆ թուրքամետ կոնգրեսականները նամակով դիմում են իրենց գործընկերներին՝ խնդրելով կասեցնել 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունը դատապարտող թիվ 192 բանաձևի ընդունումն այն մտահոգությամբ,թե իբր այդ բանաձևի ընդունումը «կվտանգի ներկա լավ հարաբերությունները Թուրքիայի Հանրապետության հետ» և «հայերին ոչինչ չի տա»[110]: Չբավարարվելով դրանով՝ թուրքական իշխանություններն իրենց կողմից ֆինանսավորվող ամերիկյան մի քանի գիտնականների հորդորում են բաց նամակով դիմել կոնգրեսին:Նման մի հայտնի նամակ,որը ստացել է «69 գիտնականների նամակը» անվանումը, հրատարակվել է «Նյու Յորք Թայմս»թերթում[111]:

Այս առիթով, կիսելով խորհրդահայ պատմագիտության մեջ ընդունված այն տեսակետը, որ ԱՄՆ-ում հայանպաստ բանաձևերի զգալի մասի տապալման պատճառը ՆԱՏՕ-ի կազմից Թուրքիայի իբր դուրս գալու սպառնալիքն էր, միևնույն ժամանակ

---

110 Armenian Allegations: Myth and reality, A handbook of facts and Documents: Compiled & edited by the Assembly of Turkish American Assosiations, Washington DC 1987, ATAA, p. 39.

111 Տե՛ս Դադրյան Վ., Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները. աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն,Եր.,2005,էջ 14:

ցանկանում ենք ընդգծել այն հանգամանքը, որ այստեղ հաշվի չի առնվում մեկ այլ շատ կարևոր գործոն՝ ԽՍՀՄ-ի գործոնը, որի կազմում էր գտնվում նաև ՀԽՍՀ-ն: Գաղտնիք չէ, որ 60-ական թվականներից սկսած և նախքան այդ էլ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հարաբերությունները, մեղմ ասած, բարեկամական չէին՝ պայմանավորված ինչպես սառը պատերազմով, այնպես էլ Կարիբյան ճգնաժամով: Կարծում ենք, որ նման պայմաններում ԱՄՆ-ի բարձրագույն օրենսդիր մարմինը հաշվի չնստել այս փաստի հետ ուղղակի չէր կարող: Ուստի, ՀԽՍՀ-ի Խորհրդային Միության կազմում գտնվելն էր նաև պատճառներից մեկը, որ ԱՄՆ-ը հաճախակի անբարյացակամ վերաբերմունք էր ցուցաբերում հայանպաստ բանաձևերի նկատմամբ: Ծեշտենք նաև, որ 1987 թ. հունիսի 18-ի Եվրախորհրդարանի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի 11-րդ կետում Եվրախորհրդարանը դատապարտում էր Սովետական Միությունում հայ ազգաբնակչության նկատմամբ տեղ գտած անհատական ազատությունների խախտումները[112]:

Խնդրո առարկահիմնահարցն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով հարկ ենք համարում ԱՄՆ-Թուրքիա դաշնակցային հարաբերությունների համատեքստում ընդհանուր գծերով անդրադառնալ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում ԱՄՆ պաշտոնական դիրքորոշմանը:

Այսպես, դեռևս 1965 թ. մարտի 15-ին ամերիկյան սենատի հայտնի պատգամավոր Թոմաս Քուշելը նամակով դիմել է Հայոց ցեղասպանության 50-ամյակի Կենտրոնական հանձնախմբին և իր ցավակցությունը հայտնել՝ նշելով, որ «...պատշաճ է, որ այս առթիվ արժանի յարգանք ընծայուի

[112] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 3, ֆ.հ. 12; թպ. 6, ֆ.հ. 15; թպ. 12, ֆ.հ. 31:

նահատակներուն եւ առիթ հանդիսանայ արտահայտելու մեր խոր ցաւը՝ ի յուշ գործուած սպանդին, որ մարդկային իտէալներու եւ արժանապատուութեան զգացումին դէմ քայլ մըն է»[113]: Բացի դրանից, Ամերիկյան Կոնգրեսի «Գոնկրեշընըլ Ռեքըրտ» պաշտոնաթերթի ապրիլի 23-ի համարում նշվում է, որ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ կապված չորս կոնգրեսականներ, իրենց ելույթներում ներկայացնելով Թուրքիայի կողմից հայերի «ջարդերը», քվեարկության են դրել հատուկ բանաձև, որում դատապարտվում էին դրանք[114]:

1965 թ. Կալիֆորնիա նահանգի Օրենսդիր ժողովն ընդունում է Ասամբլեայի թիվ 274 բավականին ծավալուն բանաձևը, որը կրում էր «Հայերի զոհերի հիշատակի օրվա մասին» խորագիրը[115]:

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու գործում Կալիֆորնիայի օրինակին են հետևում Նյու Ջերսին և Նյու Յորքը: Այսպես, 1975 թ. ապրիլի 1-ին Նյու Ջերսիի Գլխավոր ասամբլեան ընդունում է բանաձև, որում նշվում էր. «1975 թ. ապրիլի 24-ին նշվում է 1915-1918 թթ. պարբերաբար իրականացված ցեղասպանության 60-րդ տարելիցը, որի հետևանքով բնաջնջվել են Թուրքիայում բնակվող 1.5-2 միլիոն հայեր»[116]: Նույն թվականի ապրիլի 24-ին Նյու Յորքի Օրենսդիր ժողովն ընդունում է Սենատի և Ասամբլեայի համատեղ բանաձև, որում դատապարտվում էր «թուրքական իշխանությունների հայկական ռասսան բնաջնջելու փորձը»[117]:

---

113 Տե՛ս «Ազատօր», Աթենք, 1965, թ. 6121, 12 ապրիլի:

114 Տե՛ս նույն տեղում, թ. 6147, 14 մայիսի:

115 Տե՛ս ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թպ. 41, ֆ. հ. 1; նաև՝ Armenian Martyrs Day-April 24, 1965, in Commemoration of the Massacres of the Armenian people 50 Years Ago-1915-1918, New York, 1965, p. 7.

116 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 102, ֆ. հ. 224:

117 State of New York. The Legislature. Senate and Assembly Joint Resolution April 24, 1975, Armenian National Institute, Washington, http://www.armenian-genocide.org/Affirmation.119/current_category.40/affirmation_detail.html

Արդեն 1975 թ. ապրիլի 9-ին, երբ ողջ հայությունը պատրաստվում էր նշել Մեծ եղեռնի վաթսունամյակը, ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատը ընդունում է թիվ 148 բանաձևը, որում նշված էր. «1975 թ. ապրիլի 24-ը հաստատել որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր», իսկ ԱՄՆ-ի նախագահը լիազորվում և նրանից պահանջվում էր հրապարակել հայտարարություն, որով ԱՄՆ-ի ժողովրդին պետք է կոչ արվեր այդ օրը հիշել բոլոր ցեղասպանությունների զոհերին և հատկապես հայերին, որոնք ցեղասպանության են ենթարկվել 1915 թվականին, որի պատճառով այդ օրը ոգեկոչվում է ողջ աշխարհի հայերի և նրանց բարեկամների կողմից»[118]:

1978 թ. մայիսի 16-ին ԱՄՆ-ի նախագահ Ջիմի Քարտերը հայտարարում է, որ «...ընդհանուր առմամբ աշխարհում չգիտեն, որ 1916 թվականին նախորդած տարիներին ստույգ քայլեր կատարվեցին ողջ հայ ժողովրդին ոչնչացնելու համար, որը, հավանաբար, որևէ խմբի հետ երբևէ կատարված ամենամեծ ողբերգություններից մեկն էր»[119]:

1981 թ. ապրիլի 22-ին, ամերիկահայերին ուղղված թիվ 4838 ուղերձում ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանը հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ, մասնավորապես, նշում էր. «Ինչպես վաղորոք կատարված հայկական ցեղասպանությունը, ապա դրան հետևած Կամբոջայի ցեղասպանությունը և բազմաթիվ այլ ժողովուրդների կոտորածները, Հոլոքոստի դասերը երբեք չպետք է մոռացվեն»[120]: Այսպիսով, Ռ. Ռեյգանի հայտարարությունը, ըստ

---

[118] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 15, ֆ.հ. 38, էջ 9:
[119] Նույն տեղում, ֆ.հ. 51, էջ 37:
[120] Statement of US President R. Reagan’s April 22, 1981, Armenian National Institute, Washington, http://www.armenian-genocide.org/Affirmation.63/current_category.4/affirmation_detail.html

էության, ամբողջացնում է Կոնգրեսի փաստաթղթի պահանջը:

Հարկ է նշել, որ այս հայտարարությանը հետևած թուրքական կառավարության ակտիվ միջամտության արդյունքում ոչ միայն կասեցվում է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը Կոնգրեսում, այլև ընդառաջելով Թուրքիային՝ ԱՄՆ-ը նույնիսկ կոնկրետ հակահայկական քայլերի է դիմում: Այսպես, 1982 թ. ԱՄՆ-ի պետքարտուղարությունը հրապարակում է մի փաստաթուղթ, որտեղ հայտարարվում էր, որ «...1915 թվականի պատմական փաստերը Փոքր Ասիայում հայ ժողովրդի դեմ կատարված Մեծ ոճիրի կապակցությամբ որոշակի չեն, և ԱՄՆ-ի պետքարտուղարությունը չի վավերացնի կարծեցյալ փաստերը»[121]:

Ամերիկահայությունը, զայրույթով ընդունելով ԱՄՆ-ի պետքարտուղարության նման անպատասխանատու հայտարարությունը, ոտքի է կանգնում իր իրավունքների պաշտպանության համար: Արդյունքում ԱՄՆ-ի պետքարտուղարությունը ստիպված է լինում հանդես գալ հայտարարությամբ՝ նշելով, որ «փաստաթղթում ներկայացված տեսակետները վերջնական չեն և կարող են վերանայվել»[122]:

Արդեն 1984 թ. սեպտեմբերի 12-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատը, քննարկելով թիվ 247 բանաձևը, (այն հիմնականում կրկնում էր 1975 թվականի փաստաթուղթը-Մ.Ն.) պահանջում է կառավարությունից 1985 թ. ապրիլի 24-ը հայտարարել

---

[121] Տե՛ս Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Եր., 2001, էջ 8:

[122] Տե՛ս նույն տեղում:

«Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»[123]:

1987 թվականին ԱՄՆ-ի Սենատ է ներկայացվում թիվ 241 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից արտաքին քաղաքականության մեջ հաշվի առնել «Հայոց եղեռնի» իրողությունը, սակայն ձայների մեծամասնությամբ բանաձևը մերժվում է[124]: Այստեղ հերթական անգամ ուզում ենք շեշտել այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը հիմնականում ձեռնպահ էր մնում հայանպաստ բանաձևերի ընդունումից՝ ելնելով այն նկատառումից, որ ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև դաշնակցային հարաբերությունները կարող են ապակայունանալ:

1987 թ. օգոստոսի 7-ին Վաշինգտոնում 189 կողմ և 201 դեմ քվեներով ամերիկյան Կոնգրեսը մերժում է Ներկայացուցիչների պալատի Հայոց ցեղասպանության վերաբերյալ թիվ 132 բանաձևը՝ հերթական անգամ ապացուցելով այն պարզ ճշմարտությունը, որ ԱՄՆ-ը, առաջնորդվելով իր սեփական շահերով, ամենևին էլ չէր ցանկանում տվյալ պահին հակասությունների մեջ մտնել իր դաշնակից Թուրքիայի հետ և «Դրօշակ» ամսագրի բառերով ասած՝ առաջնային էր համարում «ամերիկեան պետական պատեհապաշտութիւնը»: Ավելին, պարբերականը հույս էր հայտնում, որ ի հեճուկս թուրքերի՝ «Ամերիկեան Քոնկրէսի այս մերժումով չի փակուիր շարքը Հայասպանութեան ճանաչման ի սպաս առաջադրուած բանաձեւերուն…», և որ «…պահանջատէր հայութիւնը պիտի շարունակէ լսելի դարձնել իր ձայնը, որովհետեւ իրաւունքի եւ արդարութեան այդ ձայնը հետզհետէ աւելի ու աւելի ունկնդիր կը գտնէ՝ մերկացնելու համար

[123] ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 15, ֆ.հ. 40, էջ 11:
[124] Տե՛ս Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, էջ 9:

րեկըններու թէ՛ պատեհապաշտութիւնը եւ թէ մեղսակցութիւնը»[125]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս բանաձևին դեմ արտահայտված ԱՄՆ-ի կոնգրեսականներն իրենք էլ չէին թաքցնում այն հանգամանքը, որ բանաձևի ընդունումը կարող է դիտվել «անհարգալից վերաբերմունք թուրք ժողովրդի և Թուրքիայի կառավարության հանդեպ», «դաշնակցային հարաբերությունների լարում Թուրքիայի հանրապետության հետ», «ոչ թե քաղաքագետների, այլ պատմության առջև ծառացած խնդիր» և այլն[126]:

Արդեն 1990 թ. ապրիլի 20-ին, նախագահ Ջորջ Բուշ Ավագը հանդես է գալիս պաշտոնական ուղերձով, որում մասնավորապես նշվում էր. «...կոտորածների այս 75-րդ տարեդարձին ցանկանում եմ միանալ հայերին և բոլոր ժողովուրդներին, նշելով 1990 թ. ապրիլի 24-ը որպես հիշատակի օր մեկ միլիոնից ավելի հայ զոհերի համար: Ես կոչ եմ անում բոլոր ժողովուրդներին ջանալ կանխել ապագա ոճրագործությունները մարդկության դեմ...»[127]:

Կարծում ենք դժվար չէ նկատել, որ նախագահ Բուշը, գիտակցելով հանդերձ, որ ցեղասպանությունը ոչ միայն մեկ կոնկրետ ժողովրդի, այլ և ամբողջ մարդկության դեմ ուղղված հանցագործություն է, այնուամենայնիվ խուսափում էր իրերը կոչել իրենց անուններով և օգտագործել «ցեղասպանություն» բառը, ինչպես դա արել է Ջ. Քարտերը 1978 թվականին: Ավելին, փաստերը վկայում են, որ հենց Բուշի վարչակազմի գործուն միջամտության արդյունքում էլ տապալվել են մի

---

[125] Մեղսակցութեան փաստը (հայկական բանաձեւի խափանումին առիթով), «Դրօշակ», Աթենք, ԺԸ տարի, թիվ 9-10, 2 սեպտեմբեր 1987, էջ 3:

[126] Տե՛ս նույնի՝ Ամերիկեան Քոնկրէսը ի՞նչ առաջարկութիւններով մերժեց քննել ու վաւերացնել հայկական բանաձեւը, էջ 24:

[127] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», Եր., 1990, թ. 95, 25 ապրիլի; նաև՝ Bobelian M., Children of Armenia: A Forgotten Genocide and the Century-Long Struggle for Justice, New York, 2009, p. 206.

քանի հայանպաստ բանաձևեր ԱՄՆ-ի օրենսդիր մարմնում:

Քննարկվող ժամանակահատվածում ԱՄՆ-ի նախագահներից միակը Ռ. Ռեյգանն էր, ով իր պաշտոնավարության ընթացքում հիշատակել է «ցեղասպանություն» բառը թիվ 4838 ուղերձում[128]:

Ինքնին հասկանալի է, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի հետագա զարգացումները և դրա հետ սերտորեն առնչվող հայ-թուրքական հարաբերությունների հաստատման խնդիրը ՀՀ անկախության հռչակումից հետո դառնալու էին ՀՀ նորանկախ հանրապետության արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը:

Նշենք նաև, որ արդեն 1990-ական թթ. սկզբներին՝ պայմանավորված ԽՍՀՄ փլուզմամբ և ՀՀ անկախության հռչակմամբ, ի տարբերություն նախորդ շրջանի ՀՀ-ն հնարավորություն էր ստանում գործուն մասնակցություն ունենալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, գործընթաց, որն իր տրամաբանական շարունակությունն էր ստանում նաև ՀՀ անկախության հռչակումից հետո:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը մեր տարածաշրջանում սեփական շահերը հետապնդող ամենաազդեցիկ երկրներից էր, նպատակահարմար ենք գտնում առաջին հերթին անդրադառնալ Հայոց ցեղասպանության հարցում ԱՄՆ-ի կառավարական շրջանների դիրքորոշմանն արդեն ՀՀ անկախության հռչակումից հետո ընկած ժամանակահատվածում:

Այսպես, արդեն 1994 թ. ապրիլի 24-ին ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը Ամերիկայի Հայ ազգային հանձնախմբին (այսուհետ ԱՀԱՀ) Հայոց

---

128 Տե՛ս Գալստյան Գ., ԱՄՆ դիրքորոշումը Հայոց ցեղասպանության առնչությամբ, // «Հայագիտության հարցեր», թիվ 1(7), Եր., 2016, էջ 21:

ցեղասպանության հիշատակի օրվա առիթով դիմում է ուղերձով, որտեղ նշում էր, որ ինքը միանում է «համայն աշխարհի հայերի հետ՝ հարգելու Օսմանյան կայսրությունում 1915 թվականին կազմակերպված հայկական ջարդերի զոհերի հիշատակը»: Դրանից հետո Քլինթոնը հավաստիացնում էր, որ ներկայումս ԱՄՆ-ը պատրաստ է «նպաստելու մեծապես բարգավաճ և տևապես խաղաղ Հայաստանի կառուցմանը»[129]:

Ի պատասխան ԱՄՆ-ի նախագահի վերոհիշյալ ուղերձի՝ ԱՀԱՀ-ի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը հայ ժողովրդի անունից երախտագիտություն է հայտնում նրան՝ միևնույն ժամանակ հիշեցնելով, որ ԱՄՆ նախագահն իր ուղերձում «նահանջել է 1992 թ. օգոստոսի 13-ի ընտրարշավի օրերին որդեգրած դիրքորոշումից, երբ նա հստակորեն որպես ցեղասպանություն էր բնութագրում հայ ժողովրդի հանդեպ Թուրքիայի կառավարության կողմից գործադրված կանոնավոր և կանխամտածված ջարդերը»[130]:

1996 թ. մայիսի 15-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնախմբի նախաձեռնությամբ Կոնգրեսում տեղի են ունենում Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության պատմական փաստի ճանաչման հետ կապված լսումներ: Արդյունքում ներկայացվում է մի բանաձև, որը Թուրքիային կոչ էր անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Անկասկած այդ խնդրի քննարկումը կարևոր իրադարձություն էր ոչ միայն ցեղասպանության ճանաչման, այլև Հայաստան և Թուրքիա հետագա հարաբերությունների զարգացման առումով: Հարկ է ընդգծել, որ թեև

---

[129] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 15, ֆ.հ. 55, էջ 41:
[130] Տե՛ս «Ազգ», Եր., 1994, թ. 76, 26 ապրիլի:

քննարկումների ընթացքում հայկական կողմի փաստարկները ավելի հիմնավոր էին, այդու հանդերձ թուրքական կողմը գտել էր մի շատ ազդեցիկ հակամիջոց՝ «ռուսական գործոնը», ըստ որի՝ երկկողմ դաժանությունների պատճառը հանդիսացել է ռուսական բանակի ներխուժումը Թուրքիա, որի ընթացքում էլ ռուսները և հայերը կոտորել են թուրքական բնակչությանը: Որպես պատեհ առիթ ակնարկվում է ներկայիս ռուս-հայկական զինակցությունն ու Հայաստանի «նվաճողական նկրտումները» Ադրբեջանի նկատմամբ: Անշուշտ, նման անվանարկությունները արձագանք չէին կարող գտնել գիտական լուրջ շրջանակներում, սակայն արժեքավոր գաղափար էին հանդիսանում անբարեխիղճ խաղարկումների համար: Ուստի ԱՄՆ պետքարտուղարությունն էլ, որը, ցավոք, ուներ ընդգծված թուրքամետ դիրքորոշում ի դեմս խոսնակ Նիքըլըս Բըրնսի, պարզաբանելով խնդրի վերաբերյալ պաշտոնական դիրքորոշումը, հայտարարել է, որ հաշվի առնելով ՆԱՏՕ-ի դաշնակից Թուրքիայի հետ ԱՄՆ-ի համագործակցության առանձին հարցեր՝ հավանություն չի տալիս բանաձևին՝ գտնելով, որ այն տեղին և նպատակահարմար չէ, ավելին, կխանգարի հայ-թուրքական հարաբերությունների դրական զարգացմանը[131]:

Մի փոքր ավելի ուշ՝ 1996 թ. հունիսի 11-ին, ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հանդես է գալիս Թուրքիային ցույց տրվող տնտեսական օգնության չափերը սահմանափակելու վերաբերյալ երկրի վարչակազմին ուղղված կոչով, քանի դեռ Թուրքիան չի ընդունել հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ. իրականացված գազանությունները և չի ձեռնարկել

131 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ 243, էջ 4-5:

համապատասխան քայլեր հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար[132]:

Արդեն 1997 թ. ապրիլի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ «անթիվ հայերի սպանդը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ.» համարում է «20-րդ դարի պատմության ամենասև էջերից» մեկը և հույս հայտնում, որ «այդպիսի ողբերգությունը երբևէ չի կրկնվի»[133]: Նկատենք, որ այստեղ ևս տեղ չի գտել «ցեղասպանություն» եզրույթը, ուստի կրկին ակնհայտ է այն միտումը, որ ԱՄՆ-ը իշխանությունները շարունակում էին հավատարիմ մնալ ԱՄՆ-Թուրքիա միջպետական հարաբերություններում վերջինիս հնարավորինս չվնասելու իրենց իսկ որդեգրած քաղաքականությանը:

Անշուշտ, քննարկվող ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի լուսաբանման համատեքստում խիստ կարևորվում է նաև Ռուսաստանի Դաշնության պաշտոնական դիրքորոշման վերլուծությունը, քանզի Ռուսաստանի Դաշնությունը ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ աշխարհում ամենաազդեցիկ դերակատարներից մեկն էր:

Խոսենք փաստերի լեզվով: Այսպես, 1994 թ. ապրիլի 12-ից սկսած դումայում անցկացվում են համապատասխան լսումներ՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հետ, ընդ որում դումայում ներկայացված տարբեր խմբակցությունները պատրաստել էին համապատասխան հայտարարության նախագծեր:

---

132 Տե՛ս Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), Պէյրութ, 2010, էջ 107:

133 Տե՛ս Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, էջ 14-15:

Ինչպես վկայում են ժամանակի լրատվամիջոցները լսումներն ընթանում էին Ռուսաստանում Թուրքիայի դեսպանի, ինչպես նաև պաշտոնական այցով Մոսկվայում գտնվող Թուրքիայի պաշտպանության նախարարի անմիջական ճնշումների ներքո[134]: Չնայած դրան՝ Ռուսաստանի Պետական դուման 1994 թ. ապրիլի 22-ին քննարկում է Հայոց ցեղասպանությունը դատապարտելու հարցը: Պետդումայի լիբերալ-դեմոկրատական խմբակցության նախագահ Դորովսկիխը ներկայացնում է Հայոց ցեղասպանությունը դատապարտող հայտարարության նախագիծը, որը վաղօրոք նախապատրաստել էր Մոսկվայի «Ռուս-հայկական համագործակցության հիմնադրամ» կազմակերպությունը: Նախագահողի առաջարկությամբ դուման ընդունում է հայտարարություն, որտեղ, մասնավորապես, նշվում էր. «Ցեղասպանության հայտնության առաջին վկայությունը հայերի զանգվածային կոտորածներն ու բռնի տեղահանություններն էին Օսմանյան կայսրությունում 1915-16 թթ.: Արդյունքում զոհվեց ավելի քան մեկ միլիոն մարդ, և հասցվեց ահռելի մեծ վնաս աշխարհի ժողովուրդների ընտանիքին»: Բացի այդ նշվում էր նաև, որ «ՌԴ Ֆեդերալ ժողովի Պետական դուման այդ ողբերգության 79-րդ տարվա հիշատակի նախաշեմին դատապարտում է հայերի ցեղասպանությունը և արտահայտում է իր խոր ցավակցությունը հայ ժողովրդին՝ վշտակցելով եղեռնի զոհերի բոլոր հետնորդներին, ովքեր բնակվում են Ռուսաստանում և ամբողջ աշխարհում»[135]:

Իսկ արդեն 1995 թ. ապրիլի 14-ին ՌԴ Պետական դումայի կողմից միաձայն ընդունվում է

[134] Տե՛ս «Երկիր», Եր., 1994, թ. 76, 26 ապրիլի, թ. 77, 27 ապրիլի:
[135] Տե՛ս նույն տեղում:

փաստաթուղթ, որտեղ «անհերքելի պատմական փաստերի վրա» պաշտոնապես դատապարտվում էր «Արևմտահայաստանի տարածքում 1915-1922 թթ.» Թուրքիայի կողմից իրագործված հայերի ցեղասպանությունը, և կոչ էր արվում «ապրիլի 24-ը հռչակել որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր»: Պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ փաստաթղթում շեշտվում էր հետևյալը.«**Իր պատմական հայրենիքում** (ընդգծումը մերն է -Մ.Ն.) եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով»[136]:

Հարկ է արձանագրել, որ, ՌԴ Պետդումայի կողմից ընդունված փաստաթղթերում շեշտվում է հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման հանգամանքը իր պատմական հայրենիքում: Մինչդեռ, ինչպես կտեսնենք ստորև, այլ երկրների կողմից ընդունված Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող որոշումներում հայ ժողովրդի սեփական հայրենիքում բնաջնջված լինելու փաստը տեղ չի գտել, հանգամանք, որը, մեր կարծիքով, կարող է հնարավորություն տալ Թուրքիային խուսափելու հատուցման պարտավորությունից և առաջին հերթին՝ տարածքների վերադարձի պահանջից:

Ամփոփելով Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Ռուսաստանի Դաշնության պաշտոնական դիրքորոշումը ցանկանում ենք նշել, որ Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող հայտարարության, իսկ հետո՝ նաև համապատասխան փաստաթղթի ընդունումը զգալի առաջընթաց էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում: Հանգամանք, որն,

[136] Տե՛ս Собрание законодательства Российской Федерации, No. 17, Москва, 1995, стр. 1497; տե՛ս նաև՝ Ведомости Федерального Собрания, Российской Федерации, No. 14, Москва, 1995, стр. 1024.

անշուշտ, իր հետքն էր թողնելու հայ-թուրքական հարաբերություններում:

1993 թ. մայիսի 5-ին Արգենտինայի Սենատը, իսկ 1995 թ. ապրիլին նաև Ազգային Կոնգրեսը միաձայն ընդունում են բանաձև, որով ոչ միայն դատապարտվում էր Հայոց ցեղասպանությունը, այլև «համերաշխություն էր հայտնվում Արգենտինայի հայկական համայնքի հետ, որը հանդիսանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհը»[137]:

1994 թ. ապրիլի 27-ին Իսրայելի խորհրդարանի 209-րդ նիստի արձանագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Իսրայելի խորհրդարանում քննարկման առարկա է դարձել Իսրայելում Թուրքիայի դեսպանի այն հայտարարությունը, թե «հայերի ջարդի նկատմամբ Իսրայելի կողմից ցույց տրված հետաքրքրությունը կարող է վնասել երկու պետությունների (Թուրքիայի և Իսրայելի-Մ.Ն.) շահերին»: Ընդ որում՝ նշված խնդիրը թիվ 305 հարցապնդման ձևով Իսրայելի խորհրդարան է մտցրել «Աշխատավորական» կուսակցության ներկայացուցիչ Էմանուել Զյուսմանը: Ի պատասխան այդ հարցապնդմանը՝ Իսրայելի փոխարտգործնախարար Յոսսի Բեյլին Քնեսեթում մերժել է Հայոց ցեղասպանությունը իբրև «քաղաքացիական պատերազմ» որակելու թուրքական վարկածը՝ ընդգծելով, որ դա եղել է «կոտորած և ցեղասպանություն»[138]:

Այնուամենայնիվ, թեև փոխարտգործնախարարն ընդունում է, որ «հրեա ժողովրդի պատմական ճակատագրի հետևանքով» իրենք չեն կարող «ըմբռնումով չմոտենալ հայ ժողովրդի պատմական դաժան ճակատագրին», սակայն դրա հետ միասին

---

[137] Number of Resolution: 1554/92, S-92-1554: Mario A. Losada, http://www.genocide-museum.am/rus/Argentina_Senate_Resolution_1993.php

[138] Տե՛ս Dadrian V., The History of the Armenian genocide: ethnic conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, Oxford: Berghahn Books, 1995, p. 21.

Իսրայելի փոխարտգործնախարարի պնդմամբ «Հայկական հարցը» չի կարող «Իսրայելի և Թուրքիայի միջև պառակտման պատճառ դառնալ», քանզի «այս է մեր քաղաքականությունը»[139]:

Վերը նշվածը մեզ բավարար հիմք էր տալիս պնդելու, որ ողջակիզման արհավիրքով անցած Իսրայել պետության համար հայ ժողովրդի նկատմամբ նմանատիպ ոճիր գործած պետության՝ Թուրքիայի հետ լավ հարաբերությունների պահպանումը շատ ավելի գերադասելի էր, քան պատմական ճշմարտության ընդունումն ու հայերի հանդեպ գործած ոճիրի դատապարտումը:

Արդեն 1996թ. ապրիլի 23-ին Կանադայի համայնքների պալատը միաձայն ընդունում է բանաձև, որտեղ մասնավորապես նշվում էր. «Հայկական ողբերգության 81-րդ տարելիցի կապակցությամբ, որը տեղի էր ունեցել 1915 թ. ապրիլի 24-ին և տարավ 1,5 միլիոն կյանքեր, ճանաչում է մարդկության դեմ կատարված այդ հանցագործությունը և յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-24-ը հայտարարում է մարդկանց մեկը մյուսի նկատմամբ կատարած դաժանության հիշողության շաբաթ»[140]:

Դեռևս 1994թ. նոյեմբերի 22-ից սկսած Հունաստանի խորհրդարանի ներքին հարցերի մշտական հանձնաժողովն իր նիստերի ընթացքում քննարկել է այդ երկրի «Քաղաքական գարուն» կուսակցության ներկայացրած օրենքի նախագիծը՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման հետ: Ի դեպ, նախագծին կողմ են քվեարկել Հունաստանի բոլոր կուսակցությունները՝ բացառությամբ «Համայնավար» կուսակցության ներկայացուցչի: Վերջինս մտահոգություն էր հայտնում, որ նման

---

139 Տե՛ս «Երկիր», Եր., 1994, թ. 98, 27 մայիսի:

140 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 15, Ֆ. հ. 44, էջ 18:

բանաձևի ընդունումը կարող է վտանգել Աթենքի և Անկարայի միջև հարաբերությունները[141]:

Ի վերջո, միայն 1996 թ. ապրիլի 26-ին Հունաստանի խորհրդարանն ընդունում է օրենք «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին», որի առաջին հոդվածով ապրիլի 24-ը սահմանվում էր որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր: Երկրորդ հոդվածով այդ օրվա հետ կապված հիշատակի միջոցառումների բովանդակությունն ու պատասխանատվությունը որոշվելու էին նախագահական հրամանագրով: Նշենք նաև, որ արդեն հուլիսի 10-ին Հունաստանի պրեզիդենտ Կ. Ստեֆանոպուլոսը ստորագրում է օրենք՝ յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին[142]:

Նմանատիպ մի որոշում էլ արդեն 1997 թ. ապրիլի 17-ին ընդունում է Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի խորհրդարանի օրենսդիր համագումարը, ըստ որի «ապրիլի 24-ը սահմանվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր և առաջարկություններ ներկայացվում Ավստրալիայի դաշնային կառավարությանն ընդունել նույնանման որոշում»[143]:

1997 թ. մայիսի 3-ին Մերձավոր Արևելքի հայաշատ պետություններից մեկի՝ Լիբանանի Պատգամավորների պալատը ևս բանաձև է ընդունում «ապրիլի 24-ը հայության հետ միասնականության օր

---

141 Տե՛ս «Երկիր», Եր., 1994, թ. 228, 25 նոյեմբերի:

142 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 15, ֆ. հ. 45, էջ 19; տե՛ս նաև՝ «Հունաստանի խորհրդարանը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը», թարգմ. Ս. Կրկյաշարյանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Եր., 1997, էջ 14:

143 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 69, ֆ. հ. 168; տե՛ս նաև՝ Ավստրալիայի խորհրդարանական քննարկումները Հայոց ցեղասպանության մասին (1997-1999 թթ.), նյութերի ժողովածու, կազմ. և խմբ. Լ. Բարսեղյան, Եր., 2001, էջ 7:

հռչակելու մասին»[144]: Մի փոքր առաջ անցնելով՝ ցանկանում ենք նշել նաև, որ արդեն 2000 թ. մայիսի 11-ին Լիբանանի խորհրդարանը իր ընդունած բանաձևում «դատապարտում է հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանությունը և, դրանից բացի, գտնում, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը հանդիսանում է անհրաժեշտ պայման նմանօրինակ հանցագործությունները կանխելու համար, որոնք կարող են ձեռնարկվել ապագայում»[145]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի համատեքստում հարկ ենք համարել անդրադառնալ նաև առաջին հայացքից անհավանական թվացող փաստերի: Այսպես, 1995 թ. հունիսի 27-29-ը Ստամբուլի Էսենյուրթի շրջանի քաղաքապետ Գյուրբուզ Չափանի պատվիրակության՝ Երևան կատարած այցի ընթացքում թուրքական պատվիրակության անդամներն այցելում են Ծիծեռնակաբերդ և հարգանքի տուրք մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին[146]:

Այստեղ հարկ ենք համարում շեշտել այն հանգամանքը, որ թուրքական պատվիրակության այս այցը Ծիծեռնակաբերդ առաջին և միակ դեպքն է, երբ Թուրքիան ներկայացնող պաշտոնատար անձն այցելում է Ծիծեռնակաբերդ և հարգանքի տուրք մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Անշուշտ, նման փաստի արձանագրությունը մեզ թույլ չի տալիս հեռուն գնացող եզրակացություններ անել խնդրո առարկա հիմնահարցի տեսանկյունից:

Ամփոփելով այս ենթագլխում բարձրացված հարցադրումները՝ ցանկանում ենք նշել, որ

---

144 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 24, թպ. 3, ֆ. հ. 3:

145 Տե՛ս Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 1, Москва, 2003, стр. 736, 807.

146 Տե՛ս Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998, էջ 34:

1. Նախքան ՀՀ անկախության հռչակումը, ՀԽՍՀ-ն գտնվելով ԽՍՀՄ կազմում և չհանդիսանալով միջազգային իրավունքի սուբյեկտ անգամ մեծ ցանկության դեպքում ի զորու չէր պետական մակարդակով ոչ միայն պայքարել, այլև նույնիսկ սատարել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Ուստի, ամենևին էլ պատահական չէր, որ ստեղծված պայմաններում հենց սփյուռքահայությունն էր իր ուսերին կրում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար մղվող պայքարի ամբողջ ծանրությունը:

2. ԽՍՀՄ ղեկավարությունը պաշտոնապես չճանաչելով Հայոց ցեղասպանությունը և հայտարարելով, որ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջներ չունի Թուրքիայի նկատմամբ և միևնույն ժամանակ թույլատրելով ՀԽՍՀ-ին պետականորեն նշել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, ժամանակի քաղաքական զարգացումների համատեքստում նպատակ էր հետապնդում մի կողմից ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային ներքաշել իր ազդեցության ոլորտը, մյուս կողմից սիրաշահելով աշխարհասփյուռ հայությանը՝ ամենայն հավանականությամբ ի դեմս նրանց հուսալ ի հենարան ունենալ ինչպես ԱՄՆ-ում ու Եվրոպայում, այնպես էլ Մերձավոր Արևելքում:

3. Քննարկվող ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը ստիպում էր Թուրքիային որոշակի պատասխան քայլերի դիմել՝ դրանց հիմքում ունենալով ժխտողականությունն ու պատմական փաստերի խեղաթյուրումը:

4. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը որպես հայ-թուրքական հարաբերությունների վրա ազդող կարևոր գործոն մեծապես պայմանավորված էր ժամանակի քաղաքական զարգացումներով, որտեղ յուրաքանչյուր

պետություն բնականաբար առաջնորդվելու էր իր սեփական շահերով:

5. Ժամանակի աշխարհաքաղաքական զարգացումների և դրանցով պայմանավորված պետությունների արտաքին քաղաքական շահերի համատեքստում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացը կրելով գերազանցապես դեկլարատիվ բնույթ բանաձևերից ու հայտարարություններից այն կողմ չէր անցնում:

6. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, որքան էլ որ չնչին բացառություններով հանդրձ կրում էր գերազանցապես դեկլարատիվ բնույթ, այնուամենայնիվ, ստիպում էր Թուրքիային դիմելու պատասխան քայլերի, հանգամանք, որն, անշուշտ, չէր կարող իր ազդեցությունը չթողնել ՀՀ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունները կարգավորելուն միտված երկկողմ բանակցություններում:

## 1.2 Հայ-թուրքական հարաբերությունների հաստատման գործընթացը և դրա վրա ազդող գործոնները

Անկախության հռչակումից հետո, ՀՀ ղեկավարությունը Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը դիտարկում է որպես ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը:

խնդիրը բավականին բարդ էր, քանզի մեծապես պայմանավորված էր ինչպես «ՀՀ անկախության մասին» հռչակագրի 11-րդ կետում տեղ գտած 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին սատար կանգնելու պահանջով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացով, այնպես էլ տարբեր տնտեսական գործոններով ու արցախյան հիմնահարցով:

Հաշվի առնելով այս ամենը, ՀՀ ղեկավարությունը սկզբնական շրջանում նախընտրում է Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների հաստատման հարցում քաղաքական առաջնահերթություն չհամարել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը՝ վերապահելով այն Սփյուռքին: Այլ կերպ ասած, ՀՀ ղեկավարությունը սկզբնական շրջանում փորձում է շրջանցել Անկախության հռչակագրի նշված դրույթը՝ շեշտելով, որ «մեր ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխիքներ»-ի օղակներից մեկն էլ «Հայաստանի և Թուրքիայի» միջև «հարաբերությունների կարգավորումն» է[147]:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա դեռևս ՀՀ անկախության հռչակման նախաշեմին, այս երկրում արդեն սկսում են մտահոգվել, որ ԽՍՀՄ-ի փլուզման դեպքում ՀՀ անկախության պարագայում անխուսափելի են դառնալու Թուրքիայի նկատմամբ հայերի հնարավոր տարածքային պահանջները, և հենց այդ համատեքստում էլ Թուրքիան սկսում է վերանայել իր արտաքին քաղաքական առաջնահերթությունները տարածաշրջանում: Ուստի, ամենևին էլ պատահական չէր, որ այս

[147] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Հայոց ցեղասպանությունը. Հայացք պետականության դիտակետից, Եր., 2015, էջ 13:

ժամանակաշրջանում Թուրքիան՝ արտգործնախարար Մեսութ Յըլմազի շուրթերով, մտահոգություն էր հայտնում Խորհրդային Միության հնարավոր փլուզման փաստի առթիվ՝ նշելով թե «Աստված մի արասցե՝ Խորհրդային Միությունը քայքայվի», քանզի Թուրքիայի համար առավել նախընտրելի է «...Թուրքիայի հարևանությամբ ունենալ գերհզոր պետություն՝ քաղաքական կայուն կարգավիճակով, քան անկախ, բայց անկայուն մի քանի հանրապետություններ»[148]:

Արդեն 1991 թվականի վերջերին թուրքական մամուլում հրապարակված մի շարք հոդվածներում նշվում էին այն օգուտները, որ կարող է ստանալ Թուրքիան՝ բարելավելով հարաբերությունները Հայաստանի հետ: Ընդ որում, հոդվածագիրներն իրենց պնդումները հիմնավորում էին գերազանցապես այն փաստարկներով, որ Հայաստանի հետ նորմալ, բարիդրացիական հարաբերությունների հաստատումը հնարավորինս զերծ կպահեր վերջինիս տարածաշրջանում հակաթուրքական տրամադրություններ ունեցող երկրներին հարելուց: Բացի այդ, հոդվածագիրների կարծիքով, Հայաստանի հետ լավ հարաբերությունների հաստատումը զգալիորեն կարող էր թուլացնել միջազգային կազմակերպություններում Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը, ինչպես նաև այդ համատեքստում Եվրոպական երկրների և ԱՄՆ-ի կողմից հնարավոր ճնշումները[149]:

Նման պայմաններում, 1991 թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան պաշտոնապես ճանաչում է ՀՀ-ի

148 Տե՛ս Զաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, էջ 11:
149 Տե՛ս Մանուկյան Ժ., Հայ-թուրքական հարաբերությունները և Հայոց ցեղասպանության խնդիրները (1991-2002 թթ.), // «Տարեգիրք», Եր., 2005, էջ 64:

անկախությունը: Այդ առիթով Թուրքիայի վարչապետ Ս.Դեմիրելը ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանին հղած ուղերձում կոչ էր անում երկու հարևան երկրների հարաբերություններում «...հավատարիմ մնալ միջազգային իրավունքի հիմնարար՝ ...տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին...»[150]:

Թուրքիան, առաջիններից մեկը ճանաչելով ՀՀ անկախությունը, այնուամենայնիվ, վերջինիս հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ձգձգում էր առաջադրելով որոշակի նախապայմաններ, որոնց բովանդակությունը հանգում էր հետևյալին. 1. չհիշատակել 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը և պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, 2. ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը[151]: Բացի այդ, Թուրքիան Հայաստանից երաշխիքներ էր պահանջում, որ «Հայաստանը զերծ կմնա Թուրքիայի շահերին հակասող գործողություններից և **ամեն կերպ կչեզոքացնի հայկական լոբբիի «հակաթուրքական» գործունեությունը Սփյուռքում»** (ընդգծումը մերն է-Մ.Ն.)[152]: Այլ կերպ ասած, թուրքական կողմը որպես ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու նախապայման է դիտարկում նաև ՀՀ իշխանությունների կողմից Սփյուռքի ջանքերի կասեցումը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում:

---

[150] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 192, թ. 1-3:
[151] Տե՛ս Հովհաննիսյան Ն., «Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը», // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», թիվ 16, Եր., 1996, էջ 14:
[152] Տե՛ս Զաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, էջ 15:

Նշված նախապայմանների համատեքստում թուրքական կողմն առաջին հերթին ակնարկում էր 1990 թ. օգոստոսի 23-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված ՀՀ անկախության հռչակագրի այն հայտնի դրույթը, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է լինելու 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»[153]: Այլ կերպ ասած, թուրքական կողմը ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը մեծապես պայմանավորում էր հենց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ՀՀ ծավալելիք գործունեությամբ:

Հետաքրքիր է նկատել, որ որոշ ուսումնասիրողներ, անդրադառնալով հռչակագրի նշված կետին, այն կարծիքն են հայտնում, թե իբր հենց այդ կետն էլ «...փաստորեն չեղյալ հայտարարեց Թուրքիայի հետ խորհրդային իշխանությունների հաստատած սահմանը, ինչը կարող էր դիտվել որպես տարածքային պահանջ Կարսի և Արդահանի շրջանների նկատմամբ»[154]:

Ցանկանում ենք նշել, որ նման գնահատականները ծայրահեղ են և ոչ իրատեսական ու ամենևին էլ չեն բխում հռչակագրի 11-րդ կետից, քանզի այնտեղ խոսք անգամ չկա Թուրքիային ներկայացվելիք ինչ-ինչ տարածքային պահանջների վերաբերյալ: Այլ բան է, որ Թուրքիան, ինչպես իրավացիորեն նկատել է թուրք լրագրող Սեդաթ Էրգինը «Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ

---

[153] Տե՛ս Kasim K., Uluslararasi Ilişkiler Byuntula Ermeni Sorunu: Bilim ve Aklin Aydinliğinda Eğitim Dergisi, // NISAN 2003, YIL, 4, SAYI: 38; տե՛ս նաև՝ Çeviköz Ü., Uluslararasi İlişkileri yeni dengel, Ermenistan Özel Sayisi, // «TESEV», (Agustos, 2001), s. 11.

[154] Куртов А. А., Халмухамедов А. М., Армения-Турция: Противостояние или Сотрудничество ? “Армения: Проблемы независимого развития”, Москва, 1998, стр. 450.

հաստատելու կարիքը»[155] չուներ: Ուստի, լիովին ընդունելի է Հ. Չաքրյանի այն տեսակետը, որ Թուրքիան Հայաստանին առաջադրված նախապայմաններով «փորձում էր Հայաստանը դարձնել կամակատար, և նրա միջոցով իր կամքը թելադրել Ղարաբաղի հայության ու հայկական Սփյուռքին»[156]:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան, հաշվի նստելով արդեն կատարված փաստի հետ, փորձում է իր ազդեցությունը հաստատել Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի թուրքալեզու հանրապետություններում, քանզի այդ դեպքում, ըստ թուրք վերլուծաբանների, զգալիորեն կբարձրանար Թուրքիայի դերը տարածաշրջանում, մանավանդ այն պարագայում, երբ եվրոպական համայնքի կողմից Թուրքիայի անդամակցության դիմումը մերժվել էր[157]: Բացի այդ, Թուրքիայի նման քայլերը որոշակի աջակցություն էին ստանում ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ ԱՄՆ-ի կողմից, որոնք նպատակ ունեին հնարավորինս հակազդել Ռուսաստանի և Իրանի ազդեցությանը տարածաշրջանում:

Ցավոք, նշված հանգամանքներին ՀՀ իշխանությունները պատշաճ ուշադրություն չեն դարձնում և տեղի տալով ԱՄՆ-ի տրամադրություններին, ակամա նպաստում են տարածաշրջանում նրա ռազմավարական դաշնակից Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու նշանակության գերագնահատմանը: Ավելին, որոշ հայ գործիչներ հանդես են գալիս անգամ

[155] «Hürriyet», Istanbul, 1991, 15 Kasim.
[156] Չաքրյան Հ., Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը՝ Անդրկովկասում ապակայունության գործոնը, // «Իրան-Նամե», արևելագիտական հանդես, հատոր 35, Եր., 2000, էջ 14:
[157] Տե՛ս Oran B., The Turkish Approach to Transcaucasia and Central Asia, in Ole Hoiris and Sefa Martin Yürükel, (ed.), Contrasts and Solutions in the Caucasus, Aarhus: Aarhus University Press, 1998, p. 463.

«Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ վերանայելու և գլխավորապես դեպի Թուրքիա կողմնորոշվելու »առաջարկով[158]:

Առանձին ուսումնասիրողներ պնդում են, թե տարածաշրջանի թուրքալեզու պետությունների հետ հարաբերությունների ջերմացումը հնարավորություն էր տալու Թուրքիային դուրս գալ մի կողմից Եվրոպայի,մյուս կողմից արաբական արևելքի մեկուսացումից: Ասվածի ապացույցը, թերևս,թուրք գիտնական Օմեր Քոջամանի այն միտքն է, որ «հետխորհրդային աշխարհակարգը Թուրքիայի համար նոր աշխարհ բացեց, իսկ դրա հետ մեկտեղ՝ հնարավորություն՝ դուրս գալու երկակի մեկուսացումից.մի կողմից՝ Եվրոպայից,որն իրեն մերժել էր, մյուս կողմից՝ արաբական Արևելքից, որն իրեն չէր ընդունում»[159]:

Մեր կարծիքով, նման պնդումը թերի է, քանզի, ինչպես կտեսնենք ստորև, հաշվի չի առնվում նաև այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիայի ջանքերը թուրքալեզու հանրապետություններում իր ազդեցությունն ամրապնդելու ուղղությամբ վերջին հաշվով նպատակ էին հետապնդում նաև տնտեսական օգնություն ցուցաբերելու ճանապարհով դուրս բերել նշված պետություններին Ռուսաստանի ազդեցության ոլորտից՝ ներքաշելով Թուրքիայի ազդեցության ոլորտ: Բացի այդ, Թուրքիան չէր հրաժարվել կյանքի կոչել նաև իր պանթուրքիստական նկրտումները:

Հարկ է նկատել, որ անկախության ուղին բռնած թուրքալեզու հանրապետությունների

158 Տե՛ս Չաքրյան Հ., Հայ-թուրքական հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական զարգացումների ենթատեքստում, // «21-րդ դար»,թիվ 1,Եր.,2003,էջ 102:

159 Коджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, Москва, 2004, стр. 85.

ղեկավարները ևս հետաքրքրություն էին հանդես բերում դեպի Թուրքիան[160]:

Ամենայն հավանականությամբ հենց նշված հանգամանքն էլ նկատի ուներ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը, երբ Ուզբեկստան կատարած այցի ընթացքում ոգևորությամբ հայտարարում էր, որ «թուրք ազգի բախտն այսուհետև կբերի, և Թուրքիայի կառավարությունը գիտակցում է իր պարտականությունը»[161]:

Թուրքալեզու աշխարհում իր ազդեցությունը հնարավորինս մեծացնելու Թուրքիայի գործադրած ջանքերի արդյունքում կրկին աշխուժանում է պանթուրքիստական գաղափարախոսությունը, որից Թուրքիան երևի թե երբեք էլ չէր հրաժարվել: Ի դեպ, իրենք թուրքերը ևս չէին էլ թաքցնում այդ հանգամանքը:

Որպես ասվածի ապացույց բերենք Ս. Դեմիրելի հետևյալ արտահայտությունը. «Ոչ ոք չի կարող ժխտել, որ գոյություն ունի մի թուրքական աշխարհ, որը տարածվում է Ադրիատիկ ծովից մինչև Չինական պատը»[162]: Անհրաժեշտ է շեշտել նաև, որ թուրքերը, ամենևին էլ չհրաժարվելով պանթուրքիստական գաղափարախոսությունից, այնուամենայնիվ, փորձում էին բավականին զգուշորեն կյանքի կոչել դրադրույթները:

Այսպես, Թուրքիայի արտգործնախարարության բարձրաստիճան պաշտոնյա Բիլալ Սամջրը, արտահայտելով իր տեսակետը պանթուրքիզմի գաղափարների վերածննդի վերաբերյալ, նշում էր, որ այն կարող է հանգեցնել ընդամենն այս կամ այն երկրում առկա կազմակերպությունների միության, ընդ որում՝ այդ կազմակերպությունների

---

160 Տե՛ս Cornell E. S., The Nagorno-Karabakh Conflict, Uppsala, Uppsala University, Department of East European Studies, 1999, p. 64.

161 Տե՛ս «Երկիր», Եր., 1994, թ. 148, 4 հոկտեմբերի:

162 Տե՛ս նույն տեղում, թ. 145, 30 հուլիսի:

միության ստեղծման գործում առաջատար դերը պատկանելու էր Թուրքիային: Այս միտքը հեղինակը հիմնավորում էր նրանով, որ «եթե սկանդինավները, արաբները և մյուս ժողովուրդները ունեն նման միություն, ապա թյուրք ժողովուրդներին ևս դա կարելի է»[163]: Ավելին, իր պանթուրքիստական գաղափարներով հայտնի Յուսուֆ Աքչուրան Հայաստանը դիտում էր որպես մի «թումբ», որը «դաշնակիցները կանգնեցրել էին երկու եղբայր ժողովուրդների՝ Անատոլիայի և Կովկասի թրքության միջև», ուստի, հեղինակի կարծիքով, այդ թումբը «պետք էր ոչնչացնել»[164]:

Բերված փաստերը մեզ բավարար հիմքեր են տալիս եզրակացնելու, որ Թուրքիան իր ռազմատենչ պանթուրքիստական ծրագրերը փորձում էր մատուցել նուրբ երանգներով և առավել քողարկված ձևերով՝ վերջին հաշվով նպատակ ունենալով «...մոլորության մեջ գցել հանուր մարդկությանը»[165]:

Այստեղ հարկ ենք համարում շեշտել այն հանգամանքը, որ ՀՀ ղեկավարությունը, փաստորեն անտեսելով Թուրքիայում տիրող նման տրամադրությունները, հայտարարում էր, թե «...պանթուրքիզմը, որպես գաղափարախոսություն ապրելով իր ծաղկումը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, ներկայումս կորցրել է քաղաքական գործոնի իր բովանդակությունը, որպես վտանգ հայ ժողովրդի համար դադարել է գոյություն ունենալուց, փոխվել են թուրքալեզու ժողովուրդները, դեմոկրատացել են և բռնել ազգային զարգացման ուղին»: Ավելին, նույն Լ. Տեր-Պետրոսյանի արտահայտությամբ. «Պանթուրքիզմը պատկանում է անցյալին» և պետք է «հրաժարվել Հայկական հարցից», «մոռանալ անցյալի

---

[163] Տե՛ս Коджаман О., նշվ. աշխ., էջ 87:
[164] Տե՛ս Զարեվանդ, Միացյալ անկախ Թուրանիա, Եր., 1993, էջ 119:
[165] «Երկիր», Եր., 1994, թ. 145, 30 հուլիսի:

թշնամությունը», «Մոռանալ եղեռնը և կարգավորել հարաբերությունը Թուրքիայի հետ»[166], և դա այն դեպքում, երբ «պանթուրքական կազմակերպություններից «Ազգային շարժում» կուսակցությունը, 1995 թվականի ընտրություններին հավաքելով ձայների 9 %-ը, ներկայացված էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովում (այսուհետև ԹԱՄԺ)»[167]:

Բացի այդ, Թուրքիայում հայտնի պանթուրքական կուսակցության ոչ պաշտոնական թևի՝ «Գորշ գայլեր» ազգայնական խմբավորման ներկայացուցիչները շատ հաճախ քրդերին՝ «հայ ստրուկներ», իսկ Քրդական բանվորական կուսակցությանը «հայկական կազմակերպություն» են անվանում, իսկ նշված կուսակցության առաջնորդ Աբդուլլահ Օջալանին՝ հայ[168]:

Կարծում ենք բերվածը բավարար հիմք է տալիս մեզ պնդելու, որ ՀՀ առաջին նախագահը չարաչար սխալվում էր իր վերը նշված արտահայտություններում:

1991 թ. սեպտեմբերի 8-ին, Մոսկվա ուղևորվելու ճանապարհին, մի քանի ժամով Երևանում է գտնվում մոտ 40 մարդուց բաղկացած ԱՄՆ Կոնգրեսի պատվիրակությունը: Այդ ընթացքում հյուրերը հանդիպումներ են ունենում ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և այլ պաշտոնատար անձանց հետ: Հանդիպման ընթացքում Լ. Տեր-Պետրոսյանը կրկին շեշտում է ՀՀ-ի պատրաստակամությունը նորմալացնելու միջպետական հարաբերությունները Հայաստանի և Թուրքիայի միջև՝ չնայած այն հանգամանքին, որ

166 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Եր., 1990, թ. 30, 27 նոյեմբերի:
167 Տե՛ս Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Москва, 2002, стр. 225.
168 Տե՛ս «Ազգ», Եր., 1993, թ. 209, 30 հոկտեմբերի:

«Հայաստանի և Թուրքիայի միջև կան լուրջ պատմական հակասություններ», և որ «հայ ժողովուրդը չի կարող մոռանալ 1915 թվականին իր նկատմամբ կատարած ցեղասպանությունը, և նրա պահանջը ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ միանգամայն արդարացի և օրինական է»[169]:

Քննարկվող ժամանակաշրջանում հայ-թուրքական հարաբերությունների հարցում ՀՀ ղեկավարության դիրքորոշման վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ ենք համարում համառոտակի անդրադառնալ նաև Լ.Տեր-Պետրոսյանի՝ 1991թ.մայիսի 11-ին «Аргументы и факты» օրաթերթում հրատարակված հարցազրույցին և դրան հաջորդած Թուրքիայի պաշտոնական արձագանքին:

Այսպես, նշված հարցազրույցում, անդրադառնալով 1920-ական թթ. սկզբին Անդրկովկասում ծավալված պատմական իրադարձություններին, Լ.Տեր-Պետրոսյանը նշում էր, որ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի հայտնի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը, ձգտելով ստանալ Թուրքիայի համակրանքը, անդամահատել է Հայաստանը՝ Կարսի մարզը զիջելով Թուրքիային, իսկ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը՝ Ադրբեջանին[170]:

Լ.Տեր-Պետրոսյանի այս միտքը, որն ընդամենը օբյեկտիվ համառոտ պատմական ակնարկ էր 1920-ական թթ. սկզբին Անդրկովկասում ծավալված իրադարձությունների վերաբերյալ, այն աստիճան լուրջ դժգոհության առիթ էտալ իս Թուրքիային,որ շատ չանցած՝ Մոսկվայում Թուրքիայի դեսպան

---

[169] Տե՛ս նույն տեղում, 1991, թ. 60, 11 սեպտեմբերի:
[170] Տե՛ս «Аргументы и факты», Москва, 1991, No. 551, 18 мая; տե՛ս նաև՝ Киреев И., Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XXI века, Москва, 2001, стр. 366.

Վուրալը հանդես է գալիս պաշտոնական բողոքի նոտայով՝ կոչ անելով Հայաստանի հարևան բոլոր երկրներին «ոչ մի կտոր հող չտալ ՀՀ-ին»՝ պատճառաբանելով, թե իբր Լ. Տեր-Պետրոսյանը «բողոքարկում է պատմական փաստերը» և «խեղաթյուրում»դրանք[171]:

Ստացվում էր, որ թուրքական կողմը մեղադրում էր Լ.Տեր-Պետրոսյանին փաստերը խեղաթյուրելու և աղավաղելու մեջ՝ մոռանալով այն պարզ ճշմարտությունը, որ նշված հարցազրույցի տվյալ հատվածում ոչ մի խոսք, անգամ ակնարկ չկար ինչպես հարևան երկրներին, այնպես էլ Թուրքիային ներկայացվելիք որևէ տարածքային պահանջի վերաբերյալ:

Արդեն 1992 թ. մարտին որպես ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը «Զումհուրիյեթ» թերթին տված հարցազրույցում պատասխանելով այն հարցին, թե արդյոք ՀՀ անկախության հռչակագրում տեղ գտած «Արևմտյան Հայաստան» արտահայտությունը Թուրքիայի նկատմամբ պահանջատիրության խնդիր չի առաջացնում, պատասխանում է, որ «հռչակագիրն ընդունվել է նախքան ԽՍՀՄ-ի կազմալուծումը, և Հայաստանը այն ժամանակ դեռ չէր անդամակցել ո՛չ ԵԱՀԽ-ին, ո՛չ էլ ՄԱԿ-ին: ... ԵԱՀԽ-ի սկզբունքներով, որոնք մենք հարգում ենք, այդ արտահայտությունն ինքնին օրակարգից դուրս է հանվում»: Ավելին, ՀՀ նախագահը սույն հարցազրույցում շեշտում է նաև, որ «Հայաստանը հարևաններից հողային պահանջ չունի և դա վերաբերում է թե՛ Թուրքիային և թե՛ Վրաստանին ու Ադրբեջանին»[172]:

Այստեղ ցանկանում ենք մատնանշել այն հանգամանքը, որ նման հայտարարությունները, իրենց հիմքում քաղաքական կարճատեսություն

---

[171] Տե՛ս «Независимая Газета», Москва, 1991, No. 54, 14 мая.
[172] Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 79-80:

լինելով հանդերձ, միևնույն ժամանակ նշանակում էին նաև նահանջ հայ ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից: Հիշենք, որ հետագայում Լ. Տեր-Պետրոսյանի կողմից «կեղծ քաղաքական կատեգորիա» անվանված ազգային գաղափարախոսության հենքի վրա էլ նույն ինքը Լ. Տեր-Պետրոսյանն ու իր համախոհները եկան իշխանության: Չմոռանանք նաև, որ Լ. Տեր-Պետրոսյանի նման հայտարարությունները, ի վերջո, զուտ դատողություններ չէին և ընկած էին ժամանակի ՀՀ ղեկավարության կողմից մշակված արտաքին քաղաքականության հայեցակարգում:

Հետաքրքիր է նկատել, որ առանձին ուսումնասիրողներ, փորձելով արդարացնել ՀՀ արտաքին քաղաքականության այն դրույթը, թե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը պետք էր դուրս թողնել հայ-թուրքական հարաբերություններից, պնդում էին, թե իբր այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել նաև ՀՀ անվտանգությունը, պատճառաբանելով, թե «չկար Խորհրդային Միությունը՝ որպես անվտանգության համակարգ, ձևավորված չէին նոր անվտանգության համակարգեր», կազմավորված չէր «հայկական բանակը», «առկա էր Ղարաբաղյան խնդիրը» և «...տեղի էին ունենում աշխարհաքաղաքական, տարածաշրջանային վերադասավորումներ...»[173]:

Արամ Անանյանը, պատասխանելով նման անհիմն պնդումներին, միանգամայն իրավացիորեն գրում է, որ «Հայոց ցեղասպանության խնդիրը չարծարծելը չէր ամրապնդում Հայաստանի անվտանգությունը», քանի որ «արցախյան հակամարտության ընթացքում Թուրքիան Հայաստանի նկատմամբ դրսևորեց բացահայտ թշնամանքի բոլոր հնարավոր

[173] Տե՛ս ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 32, թպ. 26, ֆ. հ. 88, էջ 1:

տարբերակները՝ բացառությամբ ՀՀ-ի վրա զինված հարձակում գործելուց»[174]:

Ստացվում էր, որ անգամ այն դեպքում, երբ ՀՀ ղեկավարությունը պատրաստակամություն էր հայտնել երկկողմ հարաբերություններում Հայոց ցեղասպանության խնդիրը չարծարծել, Թուրքիան, խախտելով միջազգային իրավունքի բոլոր հիմնարար սկզբունքները, այնքան էլ դեմ չէր հենց ռազմական ճանապարհով հարթել Հայաստանի հետ բոլոր խնդիրները: Եվ չնայած Հայաստանի կողմից Թուրքիային ուղղված հստակ ազդանշաններին՝ վերջինս հենց սկզբից էլ ներգրավվեց ղարաբաղյան հակամարտության մեջ՝ Ադրբեջանին ցուցաբերելով քաղաքական, ռազմաֆինանսական և դիվանագիտական աջակցություն: Ուստի մեկ անգամ ևս ուզում ենք շեշտել, որ քննադատության չեն դիմանում ՀՀ ղեկավարության այն պնդումները, թե իբր «պանթուրքիզմը անցյալում է», և որ «Թուրքիան բռնել է զարգացման ժողովրդավարական ուղին», և որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգից հանելը բավարար է Հայաստանի անվտանգությունն ապահովելու համար:

Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի հետ հարաբերությունների հարցում ՀՀ ղեկավարության մոտեցումները երբեմն հակասական էին ու իրարամերժ:

Այսպես, եթե սկզբում Լ.Տեր-Պետրոսյանը պնդում էր, որ «պանթուրքիզմը պատկանում է անցյալին», ապա արդեն 1992 թ. հունիսի 2-ին թուրքական

---

174 Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում 1991-2004 թթ., Եր., 2006, էջ 30; տե՛ս նաև՝ Զաքրյան Հ., «Թուրքիան Հայաստանի հետ երկխոսություն չի ցանկանում, այլ ցեղասպանության բանաձևերը չեզոքացնելու համար դա շահարկում է», // «Օրեր», թիվ 5-6, Պրահա, 2001, էջ 17-19:

«Զումհուրիյեթ» թերթին տված և Թուրքիայում մեծ աղմուկ բարձրացրած հարցազրույցում նա նշում էր, որ «եթե Թուրքիան չհետապնդեր գաղափարախոսական նպատակներ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում, այլ փոխարենը առաջ մղեր իր քաղաքականությունը մշակութային, գիտական և տնտեսական զարգացման վրա հենվելով, մենք ջերմորեն կողջունենք դա»[175]: Այնուհետև, ավելի կոնկրետացնելով իր միտքը, Լ. Տեր-Պետրոսյանը նշում է, որ գաղափարախոսական նպատակներ ասելով՝ ինքը նկատի ունի «պանթուրքիզմը և տարածաշրջանում առաջացած քաղաքական վակուումը լցնելու նպատակը»[176]: Վերջում այն կարծիքն էր հայտնվում, թե «Հայաստանում և Սփյուռքում սերունդները մեծացել են հակաթուրքական զգացումներով», և որ դրան «նպաստում էր նախկին ԽՍՀՄ կառավարությունը», որը, ըստ նրա, «ցանկանում էր մեկուսացնել Հայաստանը Թուրքիայից՝ նպատակ ունենալով ավելի ուժեղացնել խորհրդային իշխանությունը Հայաստանում»[177]:

Չնայած առկա քաղաքական որոշակի լարվածությանը, ՀՀ ղեկավարությունն, այնուամենայնիվ, շարունակում է ջանքեր գործադրել Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ՝ օգտագործելով բոլոր հնարավոր հարթակներն ու միջոցները:

Այսպես, 1992 թ. հունիսի 5-7-ը հայկական պատվիրակությունը ՀՀ փոխվարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ մեկնում է Իզմիր՝ մասնակցելու թուրքական տնտեսության զարգացման 3-րդ կոնգրեսի աշխատանքներին: Նույն

---

[175] Տե՛ս «Ազգ», Եր., 1992, թ. 42, 4 հունիսի:
[176] Նույն տեղում:
[177] Նույն տեղում:

որը տեղի է ունենում Բագրատյանի հանդիպումը Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի հետ: Հանդիպման ընթացքում Բագրատյանը Դեմիրելին է փոխանցում ՀՀ նախագահի նամակը, որտեղ կրկին առաջարկվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել կողմերի միջև՝ մեկ անգամ ևս շեշտելով, որ «ՀՀ-ն տարածքային պահանջներ չունի ոչ միայն Թուրքիայի, այլև Ադրբեջանի կազմում ինքնավար հանրապետության կարգավիճակով գտնվող Նախիջևանի նկատմամբ և պատրաստ է համաձայնագիր կնքել նրա հետ»[178]: Բացի այդ, Բագրատյանը ՀՀ նախագահի անունից Ս. Դեմիրելին հրավիրում է այցելել Հայաստան[179]:

Չնայած Թուրքիան անպատասխան է թողնում ՀՀ նախագահի նամակը, բայց դա չի խանգարում, որ արդեն 1992 թ. հունիսի 23-ին հայկական պատվիրակությունը հրավիրվի Թուրքիա՝ մասնակցելու հունիսի 23-26-ը Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության աշխատանքներին: Հենց այդ ընթացքում էլ կայանում է ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի հանդիպումը: Հանդիպման ընթացքում ի թիվս այլ հարցերի քննարկման առարկա է դառնում նաև ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում Թուրքիայի կողմից առաջադրվող նախապայմանների հարցը: Այսպես, ՀՀ նախագահն այն մտահոգությունն է հայտնում, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները չպետք է կախված լինեն հայ-ադրբեջանական հարաբերություններից: Դեմիրելը, կիսելով Լ. Տեր-Պետրոսյանի մտահոգությունը, այնուամենայնիվ, այն համոզմունքն է հայտնում, որ «...երկու երկրների միջև (Հայաստան-Թուրքիա-Մ.Ն.)

178 ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, թ. 2, 6:
179 Տե՛ս «Ազգ», Եր., 1992, թ. 45, 11 հունիսի:

դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող միակ հանգամանքը շարունակվող զինված ընդհարումներն են»[180]: Դժվար չէ նկատել, որ այստեղ Դեմիրելը ի պատասխան Լ.Տեր-Պետրոսյանի նշված մտահոգությանը շարունակում է պնդել, որ ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում ղարաբաղյան գործոնը շարունակում է մնալ որպես Թուրքիայի կողմից առաջադրվող կարևոր նախապայման: Բացի այդ, Ս.Դեմիրելն առաջարկում է երկկողմ հանդիպում կազմակերպել Ադրբեջանի և Հայաստանի նախագահների միջև, սակայն Ադրբեջանի ղեկավար Ա. Էլչիբեյը, ով դեռևս հույս ուներ ղարաբաղյան հակամարտությունը լուծել ռազմական ճանապարհով, հրաժարվում է հանդիպումից[181]:

Նշված քայլով Ս.Դեմիրելը, փաստորեն, փորձում էր հանդես գալ որպես միջնորդ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում՝ անտեսելով Թուրքիայի կողմնակալ դիրքորոշումն այս հարցում: Նշենք նաև, որ Դեմիրելի կողմից ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում որպես միջնորդ հանդես գալու առաջարկ էր արվել նաև դեռ 1992 թ. հունվարին, երբ Թուրքիայի վարչապետը «32-րդ օր» հեռուստահաղորդման ժամանակ շեշտել էր, որ «Թուրքիան մեծապես կնպաստի հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանը, միայն թե ՀՀ-ն ու Ադրբեջանը շարունակեն վստահել նրան»[182]:

Քանի որ վերևում խոսք գնաց հայ-թուրքական հարաբերություններում ղարաբաղյան գործոնի մասին, ուստի, խնդիրն առավել ամբողջական

---

[180] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, թ. 11:
[181] Տե՛ս Куртов А. А., Халмухамедов А. М., նշվ. աշխ., էջ 450-451:
[182] Տե՛ս «Ազգ», Եր., 1992, թ. 10, 12 փետրվարի:

ներկայացնելու նպատակով, ցանկանում ենք անդրադարձ կատարել նաև հետևյալ փաստերին:

Այսպես, 1992թ. սեպտեմբերի վերջին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Թուրքիայի ԱԳ նախարար Հ. Չեթինի ԱՄՆ-ում կայացած հանդիպման ընթացքում, կրկին առաջնահերթ է եղել Ադրբեջանի գործոնը: Թուրքական կողմը, մասնավորապես, պահանջել է հայերից զինված ուժերը դուրս բերել Ադրբեջանի տարածքից, իսկ Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը քննարկել Մինսկի հանդիպման ժամանակ[183]:

Հարկ է նշել, որ Թուրքիայի մոտեցումները ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում մեծապես պայմանավորված էին նաև ԼՂ-ում հայկական զինված ուժերի ձեռքբերումներից, քանզի փաստերը ցույց են տալիս, որ որքան ավելի ակնառու էին դրանք, այնքան ավելի էր կոշտանում Թուրքիայի դիրքորոշումը ՀՀ նկատմամբ: Որպես ասվածի ապացույց, ցանկանում ենք նշել հենց թեկուզ այն փաստը, որ 1993թ. մայիսին արձագանքելով դեռևս ապրիլ ամսին հայկական զինված ուժերի կողմից Քարվաճառի ազատագրմանը, Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը ցինիկաբար հայտարարում էր, թե «հայերը չեն սովորել Անատոլիայի փորձառության իրենց դասը և այն պատիժը, որ ստացել են»[184]: Ավելին, չբավարարվելով զուտ հայտարարությամբ, Թուրքիան դիմում է նաև գործնական քայլերի՝ արգելում «իր օդային տարածքով դեպի ՀՀ գնացող օդանավերի թռիչքները, փակում Գյումրի-Կարս երկաթգիծը, ինչպես նաև արգելում իր տարածքով մարդասիրական օգնության

---

[183] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 44, թ. 11-12; նաև՝ «Hürriyet», Istanbul, 1992, 26 Eylül.

[184] Տե՛ս Հովհաննիսյան Ն., «Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը», // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», թիվ 16, էջ 16:

առաքումը ՀՀ»[185] և որպես երկկողմ հարաբերությունների բարելավման նախապայման ավելացնում «նաև Հայաստանի կողմից ազատագրված տարածքների հանձնումը Ադրբեջանին»[186]:

Այն, որ թուրքական իշխանությունները ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավումը մեծապես պայմանավորում էին նաև ղարաբաղյան հիմնախնդրով ակնառու է դառնում նաև հետագայում: Այսպես, արդեն 1995 թ. փետրվարի 21-ին «Անվտանգությունը, կայունությունը, բարգավաճումը և անկախությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում» միջազգային գիտական կոնֆերանսին մասնակցելու նպատակով Անկարայում գտնվող Հայաստանի նախագահի գլխավոր խորհրդական, հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Ժ. Լիպարիտյանի գլխավորությամբ հայկական պատվիրակության անդամների և Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի հետ կայացած հանդիպման ընթացքում վերջինս կրկին անգամ որպես հայ-թուրքական հարաբերությունների բարելավման նախապայման առաջ է քաշում «գրավված ադրբեջանական տարածքներից և Շուշի քաղաքից հայերի հետքաշման խնդիրը»[187]:

Նույն նախապայմանը Ս.Դեմիրելն առաջ է քաշում նաև 1995 թ. մարտին՝ Կոպենհագենում ՄԱԿ-ի կողմից կազմակերպված «Սոցիալական զարգացումների և հիմնախնդիրների» գագաթնաժողովի շրջանակում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ հանդիպման ժամանակ, նշելով, որ «ի՞նչ վատ կլինի, եթե

---

185 Տե՛ս Հայաստան-Թուրքիա. Բաց երկխոսություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, Եր., 2005, էջ 109:

186 Տե՛ս Արցախյան հակամարտությունը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, 19. 03. 2015, http://times.am/?p=118109&l=am/arcaxyan+hakamartutyuny+hay-turqakan+haraberutyuneri+hamateqstum

187 Տե՛ս Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ., Եր., 2009, էջ 77:

նավթամուղն անցնի ձեր երկրով: Լուծեք ձեր խնդիրներն Ադրբեջանի հետ: Դրանք վնաս են հասցնում մեզ»[188]:

Ելնելով վերը նշվածից կարծում ենք սխալված չենք լինի, եթե նշենք, որ սկսած 1992 թվականի սկզբներից Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը նախապես համաձայնեցված լինելով Ադրբեջանի հետ, Թուրքիայի կողմից սկսում է դիտարկվել որպես կարևոր քաղաքական գործոն և նախապայման ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորման հարցում: Ուստի, կարծում ենք միանգամայն իրավացի է հայտնի պատմաբան-դիվանագետ Արսեն Ավագյանի այն պնդումը, որ «... այս պայմաններում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը ՀՀ-ի համար ունի նաև ազգային անվտանգության տարր»[189]:

ՀՀ հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցը քննարկման առարկա է դառնում 1992 թ. օգոստոսի 23-25-ը պաշտոնական այցով Երևանում գտնվող Թուրքիայի պատվիրակության հետ՝ փոխարտգործնախարարի տեղակալ Բիլգին Ունանի գլխավորությամբ[190]: Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին, որը ինչպես արդեն նշել ենք Թուրքիայի կողմից ՀՀ ներկայացվող կարևոր նախապայմաններից մեկն էր երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում, ապա ըստ ՀՀ առաջին նախագահի արտաքին հարաբերությունների գծով խորհրդական Ժ. Լիպարիտյանի, կայացած երկկողմ հանդիպումների ընթացքում «Հայոց ցեղասպանության խնդիրը չի

---

188 Տե՛ս նույն տեղում:

189 Ավագյան Ա., «Ժխտողականության «խելացի» քաղաքականությունը», // ելույթ «Հայոց ցեղասպանության ճանաչում և հատուցում. պատմական արդարության վերականգնման ուղին» համաժողովին, 08.12.2014, https://mediamax.am/am/news/armeniaturkey/12517/?fbclid=IwAR2NMmNgtDPUDQL_cU9uw0tE5Ne9hrhuapbrn-_W5VH1Q48RlYifyy5M4a8

190 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, թ. 19-21:

քննարկվել», քանի որ այդ հարցը բարձրացվել է «տարբեր առիթներով», սակայն ոչ «պաշտոնական ձևով»[191]: Դրա փոխարեն, երկկողմ հանդիպումների ընթացքում, ի պատասխան հայկական կողմի հայտարարության, որ ՀՀ-ն պատրաստ է «դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագիր ստորագրել Թուրքիայի հետ», Ունանը առաջ է քաշում այն նախապայմանը, որ «մինչ այդ ՀՀ-ն պետք է ճանաչի ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»[192]: Հարկ է շեշտել նաև այն փաստը, որ գոյություն ունեցող սահմանների ճանաչման հարցի ձևակերպման շուրջ կողմերը համաձայնության չեն գալիս և պայմանավորվում են այդ հարցի շուրջ շարունակել բանակցությունները և «ավարտին հասցնել 1993 թվականի ձմռանը»[193]:

Այսպիսով, վերը նշված բանակցությունները, չնայած հայկական կողմի ջանքերին, ի զորու չեղան առաջընթաց արձանագրել երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում: Մեր կարծիքով, պատճառն այն էր, որ Թուրքիան, մի կողմից հավատարիմ իր գործելաոճին, շարունակում էր ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում առաջադրել նախապայմաններ, իսկ մյուս կողմից շարունակելով բանակցությունները հայկական կողմի հետ՝ պատրանք ստեղծել, թե իբր ինքը դեմ չէ ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորմանը՝ նպատակ ունենալով այդ կերպ հնարավորինս կասեցնել ՀՀ

---

191 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 32, թպ. 26, ֆ. հ. 90, էջ 4:
192 Տե՛ս Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., էջ 63:
193 Տե՛ս Libaridian Gerard J., Modern Armenia: people, nation, state, Chicago, Transaction Publishers, 2004, p. 269-270.

անկախությունից ի վեր լայն հնչեղություն ստացած Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

Ամենայն հավանականությամբ, գիտակցելով այս ամենը, ՀՀ ԱԳ նախարար Ռ. Հովհաննիսյանը 1992 թ. սեպտեմբերի 10-ին Եվրոպայի խորհրդի ստամբուլյան հանդիպման ժամանակ իր ելույթում սեփական նախաձեռնությամբ հանդես է գալիս Թուրքիային ուղղված բավական կոշտ հայտարարություններով՝ մեղադրելով վերջինիս ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատելու, հայ-թուրքական սահմանը փակելու և ԼՂ-ի խնդրում կողմնակալ վերաբերմունք ունենալու համար[194]:

Մեր տրամադրության տակ եղած փաստերը վկայում են, որ Ռ.Հովհաննիսյանի ելույթը բողոքի ալիք է բարձրացրել Թուրքիայում, ընդ որում՝ պետական մակարդակով: Այսպես, Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը, անդրադառնալով այդ ելույթին, նշում է, որ «Եվրախորհրդի ստամբուլյան ժողովն այն տեղը չէր, որտեղ պիտի օգտագործվեին նման անհիմն պնդումները»[195]: Բացի այդ Եվրախորհրդում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ արտակարգ և լիազոր դեսպան Սյոնմեզ Քյոքսալը հայտարարում է, որ Ռ. Հովհաննիսյանի՝ «զրպարտանքներով, ստերով և իրականությանը չհամապատասխանող» արտահայտություններով հագեցած ելույթը «զարմանք և վիշտ է առաջացրել թուրքական կողմի մոտ», և որ այդ «հրահրիչ ու ագրեսիվ ելույթը... չի կարող Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների ձգտող մի երկրի քաղաքական կամքի արտահայտությունը լինել»[196]:

194 Տե՛ս «Ազգ», Եր., 1992, թ. 112, 20 հոկտեմբերի:
195 ՀԱԱ, Ֆ. 326, ց. 9, գ. 44, թ. 6:
196 Նույն տեղում, թ. 6-7:

Նման պարագայում, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե նշենք, որ հարգարժան Գ. Արշակյանի այն պնդումը, թե Ռ. Հովհաննիսյանի վերը նշված ելույթը «չվնասեց» «Հայաստան-Թուրքիա հարաբերություններում նկատվող դրական տեղաշարժի միտմանը»[197], առնվազն միակողմանի է:

Նշենք նաև, որ անգամ ՀՀ ղեկավարության կողմից Ռ. Հովհաննիսյանի ելույթը ոչ միանշանակ է ընդունվում՝ հանգեցնելով վերջինիս հարկադրված հրաժարականին:

1992 թ. հունվար-մարտ ամիսներին ՄԱԿ-ում, Եվրոպայի խորհրդում (այսուհետև ԵԽ), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունում (այսուհետև ԵԱՀԿ, հետագայում ԵԱՀԽ) քննարկվում են Հայաստանի և Ադրբեջանի անդամակցության դիմումները: Քննարկումների ընթացքում Թուրքիան փորձում է խոչընդոտել ՀՀ անդամակցությանը, պատճառաբանելով, թե իբր ՀՀ-ն Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ ունի[198]:

ԵԱՀԿ-ում կայացած այս հանդիպման մասնակից ՀՀ ԱԳՆ Եվրոպայի բաժնի տնօրեն Քրիստիան Տեր-Ստեփանյանը հետագայում «Ազգ» թերթին տված հարցազրույցում ներկայացրել է թուրքական պատվիրակության հետ կուլիսներում ընթացող բանակցությունների մանրամասները: Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թուրքական կողմը Հայաստանից պահանջում էր առաջին հերթին հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից և վավերացնել Կարսի ու Մոսկվայի պայմանագրերը, հակառակ դեպքում՝ սպառնալով Հայաստանի նկատմամբ կիրառել վետոյի իրավունքը: Ի դեպ ԱՄՆ ներկայացուցիչը

[197] Տե՛ս օրինակ Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ., էջ 63:
[198] Տե՛ս «Ազգ», Եր., 2002, թ. 99, 30 մայիսի:

պարտավորվել էր հարթել կողմերի միջև կոնֆլիկտը, որպես միջնորդ[199]:

Ատենախոսության մեջ բազմիցս նշել ենք, որ նման փաստարկները միանգամայն անհիմն են, քանի որ ՀՀ ղեկավարությունը ոչ միայն տարածքային պահանջներ չէր ներկայացնում Թուրքիային և Ադրբեջանին, այլև պատրաստ էր անգամ համաձայնագիր ստորագրել Նախիջևանի հետ, այն դեպքում, երբ Նախիջևանը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր և գտնվում էր Ադրբեջանի կազմում՝ ինքնավար հանրապետության կարգավիճակով[200]:

Կարծում ենք, խնդրո առարկա հիմնահարցի տեսանկյունից անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքի հստակ գիտակցումը, որ ՀՀ անկախության հռչակումից ի վեր Հայաստան-Թուրքիա հարաբերությունները զուտ երկու երկրների միջև հարաբերություններ լինելուց զատ, ներքաշվել էին նաև տարածաշրջանում խոշոր տերությունների քաղաքական հետաքրքրությունների ոլորտ: Ուստի, ամենևին էլ պատահական չէր, որ գիտակցելով այդ հանգամանքը՝ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը հայտարարում էր, թե «Հայաստանն ինքնին մեծ խնդիր չէ, բայց մեծ քաղաքականության խնդիր է: Պարտավոր ենք Հայաստանի հետ գտնվել այնպիսի հեռավորության վրա, որ չսպառվեն երկխոսության հնարավորությունները»[201]:

Մեր կարծիքով, հենց այստեղ էլ պետք է որոնել այն հարցի պատասխանը, թե ինչո՞ւ Թուրքիան ճանաչելով ՀՀ անկախությունը, այնուամենայնիվ,

---

[199] Նույն տեղում, 1992, թ. 10, 12 փետրվարի; տե՛ս նաև՝ ԵԱՀԽ/ԵԱՀԿ նիստում Թուրքիայի ԱԳ նախարար Հիքմեթ Չեթինի ելույթից ՀՀ ԱԳ նախարար Րաֆֆի Հովհաննիսյանի հիշողությունները Ջորջթաունի համալսարանում ունեցած նրա ելույթում, https://www.armenianow.com/hy/commentary/21927/diaspora_armenia_genocde_hovannisian_georgetown_university.

[200] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 70, թ. 6:

[201] «Hürriyet», Istanbul, 1993, 31 Ocak.

ամեն կերպ հրաժարվում էր վերջինիս հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց՝ միևնույն ժամանակ չսպառելով երկխոսության հնարավորությունները:

Չնայած հայկական կողմի գործադրած բոլոր ջանքերին կարելի է փաստել, որ թուրքական կողմը երբեք էլ չէր հրաժարվել հայ-թուրքական հարաբերություններում իր կողմից առաջադրված նախապայմաններից, որոնց վրա կրկին ուշադրություն է հրավիրել Մոսկվայում Թուրքիայի դեսպան Քամիլը, ով 1993 թ. հոկտեմբերի 18-ին Հայաստանի նախագահի հետ հանդիպումից հետո նշել է, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար «Հայաստանը պիտի հրաժարվի 1915 թվականի իրադարձությունների խնդրին անդրադառնալուց»[202]:

Մեր կարծիքով, Թուրքիայի դեսպանի նման հայտարարությունն առնվազն տարօրինակ է, քանզի, ինչպես բազմիցս նշել ենք, Լ. Տեր-Պետրոսյանը Հայաստան-Թուրքիա հարաբերություններում հանդես էր գալիս Հայոց ցեղասպանության թեման չարծարծելու և պահանջատիրությունից հրաժարվելու գաղափարներով: Ուստի առավել քան համոզված ենք, որ թուրքական կողմն ամեն անգամ նման հայտարարություններ անելիս նպատակ էր հետապնդում հասկացնել հայկական կողմին, որ վերջինս քայլեր ձեռնարկի՝ համոզելու Սփյուռքին «այս հարցում հետևել իրեն»[203]:

Նման պնդման օգտին է խոսում նաև այն փաստը, որ դեռևս 1992 թ. հունիսի 14-ին Ռիո դե Ժանեյրոյում կայացած Տեր-Պետրոսյան-Դեմիրել հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետ Դեմիրելը խրատական տոնով ՀՀ նախագահին ասել էր հետևյալը.

[202] Տե՛ս Куртов А. А., Халмухамедов А. М., նշվ. աշխ., էջ 455:
[203] Տե՛ս ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 32, թպ. 26, ֆ. հ. 90, էջ 4:

«...**Մի թույլ տվեք, որ ամերիկահայերը կառավարեն ձեզ և ձեր գործերը**»(ընդգծումը մերն է -Մ.Ն.)[204]:

Մեծ հաշվով ստացվում էր հետևյալը. այն դեպքում, երբ Թուրքիան հսկայական միջոցներ էր ծախսում ամբողջ աշխարհում հայկական հարցի վերաբերյալ սեփական հայեցակարգը քարոզելու նպատակով, ՀՀ ղեկավարությունը, ըստ թուրքական կողմի, պետք է կոչ աներ համայն հայությանը դադարեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար մղվող պայքարը:

Այն, որ քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ ղեկավարությունն իրոք ամեն գնով պատրաստ էր հասնել Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը ապացուցվում է հենց թեկուզ այն հանգամանքով, որ ՀՀ ղեկավարությունը ոչ պաշտոնական, գաղտնի հանդիպումներ է ունեցել թուրքական «Ազգայնական ճակատ» կուսակցության առաջնորդ Ալփասլան Թյուրքեշի հետ:

Նման առաջին հանդիպումը Լ.Տեր-Պետրոսյանի և Թյուրքեշի միջև տեղի է ունեցել 1993թ. մարտի 12-ին՝ Փարիզի Կոնկորդ հրապարակի մոտ գտնվող «Քրիլլոն» հյուրանոցում: Հանդիպման մասին թուրքական «Միլլիյեթ» թերթը հրապարակել է երեք մասից բաղկացած հոդվածների շարք, որին թարգմանաբար անդրադարձել է «Երկիր» թերթն իր 2005 թ. ապրիլի 29-ի համարում: «Միլլիյեթը», վկայակոչելով այդ ժամանակ Լ.Տեր-Պետրոսյանի հետ համագործակցած, Թուրքիայում ծնված հայազգի Սամսոն Էոզարարատին, պարզաբանումներ է ներկայացրել այս հանդիպումների վերաբերյալ: Թերթից տեղեկանում ենք, որ հանդիպման նպատակը եղել է երկու երկրների միջև բնականոն

---

[204] Տե՛ս «Ազգ», Եր., 1992, թ. 48, 18 հունիսի:

հարաբերությունների հաստատումը: Նման ձևաչափով հանդիպումը թերթը բացատրում էր նրանով, որ երկու երկրների միջև հարաբերությունները շատ դանդաղ էին զարգանում, և երկու կողմերն էլ իրենց երկրներում քննադատության էին արժանանում:

Անհրաժեշտ է նկատել, որ նշված հանդիպման ընթացքում թուրքական կողմը առաջ է քաշել որոշակի նախապայմաններ՝ կապված ԼՂ-ից հայկական զորքերի դուրսբերման հետ: Դրան ի պատասխան՝ ՀՀ նախագահը հայտարարել է, որ չի ցանկանում Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա խնդիրների լուծումը կապել հայ-թուրքական հարաբերությունների հետ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն հանդիպմանը թուրքական կողմից մասնակցել են նաև Թուրքիայի դեսպան Բլեդան, Թյուրքեշի որդի Թուղրուլը, դեսպանատան քարտուղար Մենթեր Շահինլերը, իսկ հայկական կողմից՝ արտգործնախարար Վահան Փափազյանը և Ժիրայր Լիպարիտյանը[205]:

Դատելով վերը նշված փաստերից, կարելի է պնդել, որ թուրքական անգամ ոչ պաշտոնական շրջանակները ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավումը կրկին կապում էին ԼՂ-ից հայկական զորքերի դուրսբերման հետ: Ուստի դժվար չէ կռահել, որ ղարաբաղյան գործոնը հայ-թուրքական հարաբերություններում գերիշխող էր ոչ միայն թուրքական պաշտոնական շրջանակներում, այլև ոչ պաշտոնական՝ տվյալ դեպքում կուսակցական մակարդակով:

Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց է տալիս, որ հայ-թուրքական գաղտնի շփումները չեն սահմանափակվել վերը նշվածով: Այսպես, 1994 թ. ապրիլին Ֆրանկֆուրտի թուրքական

[205] Տե՛ս «Երկիր», Եր., 2005, թ. 16, 29 ապրիլի:

հյուպատոսությունում հյուրընկալվել է Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանը Գերմանիայում Թուրքիայի դեսպան Օնուր Էոյմենի ընկերակցությամբ: Այստեղ Արմեն Սարգսյանը սպասել է Թյուրքեշի հետ հանդիպմանը, որի ընթացքում որոշակի պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել[206]:

Անկեղծ ասած, մեզ համար առնվազն անհասկանալի է, թե ինչ ակնկալիքներ կարելի էր ունենալ «Ազգայնական ճակատ» կուսակցության առաջնորդների հետ հանդիպումներից, երբ կուսակցության երիտասարդական թևը 1994 թվականի վերջերին ի լուր աշխարհի Ստամբուլի հայկական համայնքին հասցեագրված թռուցիկում հայտարարում էր, թե «դուք՝ պարազիտներդ, որ ձեզ այս երկրի քաղաքացի եք կարծում, դուք և մնացած բոլոր հայերդ դարեր շարունակ մեր երկիրը շահագործել եք»՝ կոչ անելով «վրեժխնդիր լինել հայերից»[207]:

Անտեսելով այդ փաստը՝ 1995 թ. փետրվարի 23-ին ՀՀ նախագահի արտաքին հարցերով խորհրդական Ժիրայր Լիպարիտյանն Անկարայի «Հիլթոն» հյուրանոցում հանդիպում է Թուղրուլ Թյուրքեշին, որին ուղեկցել է նաև գործարար Ջեմի Քամհին: «Գորշ գայլերի» հետ հանդիպումները շարունակվել են ընդհուպ մինչև Թյուրքեշի մահը՝ 1997 թվականը[208]:

Ամենայն հավանականությամբ նպատակ ունենալով նախապես արդարացնել վերը նշված քայլերը, 1995 թվականին Երևանում կայացած Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային խոշոր գիտաժողովի ամբիոնից հնչեցրած իր ելույթում անդրադառնալով 1990-ական թթ. 2-րդ կեսի

---
206 Տե՛ս նույն տեղում:
207 Տե՛ս Բրամ Ս., Ուլգեր Մ., Գորշ գայլեր: Հետազոտություն թուրք ծայրահեղ աջակողմյանների մասին, Եր., 2003, էջ 112-113:
208 Տե՛ս «Երկիր», Եր., 2005, թ. 16, 29 ապրիլի:

հայ-թուրքական հարաբերություններին՝ Լ. Տեր-Պետրոսյանը նշում էր, որ երկու երկրները պարտավոր են հաստատել փոխշահավետ առևտրատնտեսական կապեր, աստիճանաբար հաղթահարել «պատմական հակասությունները և վերականգնել հայ և թուրք ժողովուրդների միջև փոխադարձ վստահությունը»[209]: Նկատենք, որ իր ելույթում ՀՀ նախագահը Թուրքիայից այդպես էլ չի պահանջում պաշտոնապես ճանաչել ցեղասպանությունը՝ հույս հայտնելով, որ «Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերություններում պետք է հաստատվի առողջ բանականության և բարձր բարոյականության մթնոլորտ»[210]:

Հարկ է նշել, որ 1990-ական թթ. վերջերին արդեն ակնհայտ էր դառնում, որ հայ-թուրքական հարաբերություններն աստիճանաբար մտնում էին փակուղի: Ուստի դժվար չէ եզրակացնել, որ ՀՀ ղեկավարության գործադրած ջանքերը՝ միտված թուրքական կողմի հետ հարաբերությունների բարելավմանն ու դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, ցանկալի արդյունք չեն տալիս: Այդ փաստն արձանագրել է նաև ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանն, անկախ Հայաստանի արտաքին քաղաքականության հնգամյակին նվիրված ծրագրային հոդվածում՝ նշելով, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ոլորտում «իրական տեղաշարժեր չեն արձանագրվել»[211]:

Հարկ է նկատել, որ չնայած այդ հանգամանքին՝ Թուրքիայում, այնուամենայնիվ, շահագրգռված էին

209 Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի: Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, կազմ. և խմբ. Ա.Բ. Սարգսյան, Եր., 2006, էջ 477-480:
210 Տե՛ս «Республика Армения», Ереван, 1995, No.74, 22 апреля.
211 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Եր., 1996, թ. 160, 15 սեպտեմբերի:

ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետագա պաշտոնավարմամբ: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ նրա «հրաժարականը որոշակի անորոշության մեջ գցեց Թուրքիային»[212]:

Ասվածի մասին է խոսում նաև այն փաստը, որ Թուրքիայի պետնախարար Աhաթ Անդիջանը Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականը որակել է որպես «Բաքու-Ջեյհան խողովակաշարի կառուցման թշնամիների ձեռքի գործ, ինչը վտանգելու էր կայունությունը Կովկասում»[213]:

Թուրքական «Հուրիյեթ» օրաթերթի գործադիր տնօրեն Էրթուղրուլ Օզքյոքը նշված հարցի հետ կապված իր եզրակացություններում ավելի հեռուն է գնում՝ թերթի 1998 թ. փետրվարի 14-ի համարում Տեր-Պետրոսյանի հրաժարականը վերջին տարիների թուրքական արտաքին քաղաքականության ձախողումը համարելով: Այնուհետև նա այն կարծիքն էր հայտնում, որ Թուրքիան պետք է աջակցեր Լ. Տեր-Պետրոսյանի նման չափավոր նախագահին, այլ ոչ թե նրան իր ճակատագրին դեմ հանդիման թողներ[214]:

Անկեղծ ասած, նման պնդումն առնվազն տարօրինակ է, քանզի մեղմ ասած այնքան էլ պարզ չէր, թե ինչպես պետք է Թուրքիան աջակցեր Լ. Տեր-Պետրոսյանին իր պաշտոնում մնալու հարցում:

Թուրք ուսումնասիրողներից մեկի՝ Բ. Օրանի կարծիքով Լ. Տեր-Պետրոսյանն «արեց հնարավորը Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու համար», այդ թվում և «փորձեց ազդել Սփյուռքի վրա»՝ նպատակ ունենալով լռեցնել «ցեղասպանության հիմնախնդիրը»: Դրա հետ միասին

[212] Արշակյան Գ., Թուրք-հայկական հարաբերությունները Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 1995-2001 թթ., // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 2, Եր., 2016, էջ 17:

[213] «Turkish Daily News», Istanbul, 1998, 15 February.

[214] «Hürriyet», Istanbul, 1998, 14 Şubat.

Օրանը քննադատում է թուրքական իշխանություններին այն բանի համար, որ «Հայաստանի դեմ պայքարելով՝ Անկարան ոչ միայն չհասավ իր նպատակներին», այլև «վերջինիս (նկատի ունի Հայաստանը -Մ.Ն.) հրեց դեպի Ռուսաստան»[215]:

Անկեղծ ասած, Օրանի նշված հարցադրումների մի մասը, բավականին ճիշտ են արտացոլում քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ ղեկավարության մոտեցումները հայ-թուրքական հարաբերությունների հարցում և դրանց հետ դժվար է չհամաձայնվել:

Քննարկվող ժամանակահատվածում հայ-թուրքական հարաբերությունների ու դրանց վրա ազդող գործոնների պատկերն անշուշտ ամբողջական չի կարող լինել, եթե մենք թեկուզ համառոտ անդրադարձ չկատարենք մեկ այլ կարևոր՝ տնտեսական գործոնին, որը բխում էր երկու երկրների շահերից հավասարապես:

Կարևորելով Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը, Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարում էր, որ «Հայաստանը մտադիր է Թուրքիայի հետ զարգացնել քաղաքակիրթ երկրներին վայել հարաբերություններ»[216]: Կարծում ենք, որ Լ. Տեր-Պետրոսյանի այս արտահայտությունը վերաբերում էր Թուրքիայի հետ բոլոր բնագավառներում այդ թվում և տնտեսական բնագավառում բնականոն հարաբերությունների հաստատմանը:

Մինչդեռ, Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը արձագանքելով Լ. Տեր-Պետրոսյանի նշված հայտարարությանը, 1991 թ. հունվարի 7-ին հանդես է գալիս Հայաստանի հետ զուտ տնտեսական

215 «Agos», Istanbul, 2002, 28 Haziran.
216 Տե՛ս Զաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, էջ 11:

հարաբերություններ հաստատելու ծրագրով, քանզի, ըստ նրա, Հայաստան-Թուրքիա ներկայիս հարաբերություններում շատ բան է փոխվել, որի ընթացքում «...հայերն ալ տեսան որ իրենց շահը կը պահանջէ մեզի հետ կապ հաստատել» և, որ «Հայաստանի համար աւելի շահաւոր է թուրքերու հետ լաւ յարաբերութիւններ հաստատել»: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի նկատմամբ Թուրքիայի «դռները բանալուն», ապա ըստ Օզալի՝ «Մենք (նկատի ունի Թուրքիան-Մ.Ն.) աւելի առաջ «Ադրբեջանի հետ մեր միջեւ դռներ պիտի բանանք: Օրինակի համար Նախիջեւանի դուռը: Յետոյ Վրաստանի հետ պիտի բանանք մեր դռները» և միայն դրանից հետո «...Հայաստանի հետ ալ կրնանք բանալ մեր դռները»[217]:

Այն, որ թուրքական կողմը Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման համատեքստում շեշտը դնում էր հենց տնտեսական գործոնի վրա, ամենևին էլ պատահական չէր, քանզի ՀՀ-ի հետ տնտեսական հարաբերությունների զարգացումը անխուսափելի ձեռնտու էր նաև Թուրքիային, այնքանով, որքանով Թուրքիան ձեռք էր բերելու նոր արտաքին շուկա: Բացի այդ, կարելի էր ենթադրել նաև, որ Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացումը եթե ոչ դրական, ապա գոնե բացասական հետևանքներ չէր ունենալու Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերություններում, քանզի Հայաստանը Ռուսաստանի կողմից դիտարկվում էր որպես տարածաշրջանում ռազմավարական դաշնակից:

Փաստերը վկայում են, որ Թուրքիայի նախագահի վերը նշված հայտարարությանը հետևել են կոնկրետ գործնական քայլեր:

Այսպես, 1991 թ. ապրիլին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալը, պաշտոնական այցով

---
217 Տե՛ս «Ազգ», Եր., 1991, թ. 21, 27 ապրիլի:

ժամանելով Հայաստան, քննարկում է երկու երկրների միջև սեղմ ժամկետում սահմանային անցակետբացելու խնդիրը[218]:

Թուրք դիվանագետի Հայաստան այցի կապակցությամբ Լ. Տեր-Պետրոսյանը կրկին շեշտում է այն հանգամանքը, որ «... այս նոր աշխարհում պետք է նոր մտածողությամբ հարևան երկրներ լինենք: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխշահավետ համագործակցության: Հայաստանը ճանաչում է **Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և հողային որևէ պահանջ չունի Թուրքիայից**» (ընդգծումը մերն է-Մ.Ն.)[219]: Դժվար չէ նկատել, որ այստեղ Լ. Տեր-Պետրոսյանը հերթական անգամ փաստորեն բավարարում է Թուրքիայի կողմից ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված նախապայմաններից մեկը, հանգամանք, որը ուղղակիորեն նշանակելու էր նաև ՀՀ-ի կողմից 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի ճանաչում:

Թուրքիայի դեսպանն իր հերթին 1991թ. ապրիլի 13-ին «Հուրիյեթ» թերթում հրատարակված «Ջերմ հարաբերություն Հայաստանի հետ» խորագիրը կրող հոդվածում անդրադարձել է Հայաստան կատարած իր այցին՝ անվանելով այն երկու երկրների միջև «բարի կամքի դրսևորման գագաթնակետ»: Բացի այդ, Վուրալը նշում էր, որ «հանդիպումները Հայաստանի ղեկավարության հետ խիստ կարևոր նշանակություն ունեն» և, որ իրենք չէին «...կարող չնկատել այն ձեռքը, որ, հակառակ շփումների առնչությամբ մեր գրաված տատանողական դիրքին, հաշտությամբ մեզ էին մեկնել»[220]: Մի փոքր ավելի ուշ՝ արդեն 1991թ. նոյեմբերի 27-ին, ռուսական «Իզվեստիա» թերթին

---

[218] Տե՛ս Fuller G., Lesser I. O., ″Turkey's New Geopolitics: From the Balkans to Western China″, Westview Press, Boulder, Colorado: USA, 1993, p. 77.

[219] Տե՛ս «Ազգ», Եր., 2002, թ. 99, 30 մայիսի:

[220] «Hürriyet», Istanbul, 1991, 13 Nisan; տե՛ս նաև՝ «Ազգ», Եր., 1991, թ. 20, 24 ապրիլի:

տված հարցազրույցում նույն Վուրալը հայտարարում է, որ «Թուրքիան պատրաստվում է հյուպատոսություն բացել Երևանում»[221]:

Փաստերը վկայում են, որ այս ժամանակաշրջանում Թուրքիան փորձում էր հենց տնտեսական լծակներով ազդել ՀՀ արտաքին քաղաքականության վրա:

Այսպես, Թուրքիայում հայտնի գործարար «Ալարկո հոլդինգ» բաժնետիրական ընկերության խորհրդի նախագահ Իցհակ Ալաթոնը թուրքական կառավարությանն է ներկայացնում տնտեսական ծրագիր, որով նախատեսվում էր Կենտրոնական Ասիայի գազը և նավթը Հայաստանի տարածքով տեղափոխել դեպի Տրապիզոն: 1991 թ. հունիսին հավանություն տալով Ալաթոնի ծրագրին՝ թուրքական կառավարությունը պատրաստակամություն է հայտնում Տրապիզոնի նավահանգիստը որպես ազատ առևտրի գոտի ՀՀ-ի տրամադրության տակ դնելու հարցում: Ծրագրով նախատեսվում էր նաև Էրզրում-Տրապիզոն երկաթգծի շինարարությունը[222]:

Ծրագրի կենսագործման նպատակով 1992 թ. փետրվարի 13-ին Իցհակ Ալաթոնի հրավերով հայկական պատվիրակությունը այցելում է Թուրքիա՝ ծանոթանալու Հայաստանին տրամադրվող ազատ գոտու պայմաններին[223]:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս ծրագիրը Հայաստանի համար լուրջ ձեռքբերում էր, քանի որ ծրագրի իրագործման դեպքում Տրապիզոնի նավահանգիստը ՀՀ-ի համար կարող էր դառնալ ազատ

221 Տե՛ս «Ազգ», Եր., 1991, թ. 82, 27 նոյեմբերի:

222 Տե՛ս Mkrtchyan T., The Role of NGOs in Turkey-Armenia Rapprochement, // «Non-Traditional Security Threats and Regional Cooperation in the Southern Caucasus», in M. Aydin (ed.), IOS press, Amsterdam-Berlin-Tokyo, Washington, DC 2011, p. 154.

223 Տե՛ս Շիրանի Աֆսանեհ, Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների զարգացումը (1991-2013 թթ.), // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1, Եր., 2014, էջ 121:

առևտրի հատուկ գոտի, որի շնորհիվ էլ Հայաստանը կարող էր ճեղքել առկա շրջափակումը և վերածվել Միջին Ասիան Արևմուտքին կապող միջազգային առևտրատնտեսական տարանցիկ կետի: Իրականում դա այնքան էլ այդպես չէր, քանզի ծրագրում առկա էր պահանջ, ըստ որի՝ Հայաստան փոխադրվող բեռները պետք է անցնեին Ադրբեջանի տարածքով[224]: Ի դեպ, հենց այս պահանջն էր ստիպում Ալաթոնին գնալ երկակի խաղերի և հանդես գալ կեղծ հայտարարություններով այն մասին, թե իբր Հայաստանը պատրաստ է Սփյուռքի մակարդակով հրաժարվել ցեղասպանության ճանաչման պահանջից: Այս հանգամանքն արդեն վկայում է այն մասին, որ ծրագիրն իրականում զսպաշապիկ պետք է դառնար Հայաստանի համար Ադրբեջանի հետ հարաբերություններում, քանզի Ադրբեջանի մերժման դեպքում ծրագիրը փաստացի ձախողվելու էր: Այլ կերպ ասած, Ալաթոնի ծրագրի քաղաքական ենթատեքստն ամենևին էլ ձեռնտու չէր Հայաստանին և նպատակ էր հետապնդում ստիպելու Հայաստանին հրաժարվել արցախյան հարցից: Դժվար չէ նկատել, որ այս պարագայում հայ-թուրքական հարաբերությունների վրա ազդեցություն ունեցող տնտեսական գործոնը և ղարաբաղյան հիմնահարցը հանդես են գալիս մեկտեղված:

Նման պնդման օգտին է խոսում հենց թեկուզ այն փաստը, որ որոշ ժամանակ անց ԼՂՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների պատճառաբանությամբ Թուրքիան, փաստորեն, հրաժարվում է Ալաթոնի ծրագրից[225]:

Հետագայում ամերիկյան «Նյու Յորք Թայմս» պարբերականը, անդրադառնալով Ալաթոնի ծրագրի

---

224 Տե՛ս Զաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, էջ 38:

225 Տե՛ս «Ազգ», Եր., 1991, թ. 81, 23 նոյեմբերի, թ. 85, 7 դեկտեմբերի; 1992, թ. 7, 1 փետրվարի:

տապալմանը, նշում էր, թե նախագիծը տապալվեց, երբ «նախաձեռնության մասին թուրքական մամուլում արտահոսք եղավ, և երբ Ալաթոնը խիստ քննադատության էր ենթարկվում Հայաստանին օգնելու նպատակով Թուրքիայի ավանդական ախոյանների՝ Ամերիկայի հայկական լոբբիի հետ համագործակցելու համար»[226]:

Ճիշտ է, արդեն 1993 թ. սկզբին Թուրքիայի ղեկավարությունը, ի պատասխան ՀՀ կողմից իրեն ուղղված դիմումի[227], թույլատրում է իր տարածքով փոխադրել արտասահմանից ՀՀ առաքվող մարդասիրական օգնությունը, սակայն անգամ այս պարագայում Թուրքիայի ղեկավարության նման «մարդասիրական» քայլը չի կարելի բացատրել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ինչ-ինչ դրական տեղաշարժով, քանի որ այս պարագայում անգամ Թուրքիան առաջնորդվում էր Եվրոպայի աչքին մարդասեր երևալու բուռն ձգտումով:

Հարկ է նշել, որ 1990-ական թթ. երկրորդ կեսին թուրքական իշխանությունները հանդես են գալիս Հայաստանի հետ փոխշահավետ տնտեսական համագործակցություն պարունակող հայտարարություններով և առաջարկներով, որոնք հարևան Ադրբեջանում ոչ միանշանակ են ընդունվում:

Այսպես, 1995 թ. փետրվարի 18-ին Թուրքիայի ԱԳ նախարար Մուրադ Քարայալչընի այն հայտարարությունը, թե Թուրքիան դեմ չէր ՀՀ տարածքով կասպիական նավթամուղի անցկացման հնարավորությանը[228] և ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռիչարդ Հոլբրուքի ՀՀ-ի հետ հարաբերությունների բարելավման համար

---

226 «New York Times», USA, 7 March 1992.

227 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ 291, էջ 19:

228 Տե՛ս Демоян Г., Турция и Карабахский конфликт в конце XX - начала XXI веков, Ер., 2006, стр. 78; տե՛ս նաև՝ «Независимая Газета», Москва, 1995, No. 28, 16 февраля.

Թուրքիային ուղղված կոչը, հարևան Ադրբեջանում դժգոհության ալիք է բարձրացնում: Բանը հասնում է այնտեղ, որ 1995 թ. փետրվարի 27-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի խորհրդական Վաֆա Գուլիզադեն մեղադրում է Թուրքիային «ադրբեջանցիների նկատմամբ դավաճանության մեջ»[229]:

Ադրբեջանի նախագահի խորհրդականի նշված հայտարարությանը հետևում է թուրքական իշխանությունների բավականին կոշտ արձագանքը, որտեղ, մասնավորապես, նշվում էր. «Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ այլ պետության քմահաճույքով չի առաջնորդվում»[230]:

Մեր կարծիքով, այս փաստը վկայում է այն մասին, որ Թուրքիան իրոք իր արտաքին քաղաքականության մեջ չէր առաջնորդվում մեկ այլ պետության, այդ թվում՝ Ադրբեջանի շահերով, այնքանով, որքանով դա չէր վնասում իր սեփական շահերին: Ուստի, առնվազն միակողմանի են որոշ ուսումնասիրողների այն պնդումները, թե իբր հայ-թուրքական հարաբերություններում Թուրքիան զգալի տեղ էր հատկացնում Ադրբեջանի շահերին ու, եթե ընդունենք անգամ, որ դա իրոք այդպես էր, ուստի միայն այն դեպքերում, երբ Ադրբեջանի շահը տվյալ իրադրության մեջ լիովին համընկնում էր Թուրքիայի շահերին:

Քննարկվող հարցի տեսանկյունից, անկասկած, ուշադրության է արժանի թուրք գործարար շրջանակների մոտեցումը: Վերջիններս, հասկանալի պատճառներով, խուսափում են Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված խոսակցություններից և արտահայտվում առանց

229 «Cumhuriyet», Istanbul, 1995, 25 Şubat; տե՛ս նաև՝ Զաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, էջ 38:

230 Նույն տեղում:

նախապայմանների Հայաստանի հետ լայն առևտրատնտեսական համագործակցություն հաստատելու օգտին: Ընդ որում՝ թուրք գործարարներին անհանգստացնում էր նաև ղարաբաղյան հակամարտության ձգձգումը, իհարկե, ոչ այնքան մարդասիրական, որքան շահադիտական նկատառումներով, քանզի տարածաշրջանում խաղաղության հաստատումը մեծապես բխում էր ինչպես թուրք, այնպես էլ հայ գործարարների շահերից:

Հայ գործարար շրջանակները բնականաբար ևս շահագրգռված էին Թուրքիայի հետ երկկողմ լայն առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու հարցում: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ արդյունքը երկար սպասեցնել չի տալիս:

Այսպես, 1996 թ. հուլիսի 28-ին Թուրքիա է մեկնում հայ գործարարների պատվիրակությունը ՀՀ ԱԺ պատգամավոր Թելման Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ: Վերջինս հանդիպումներ է ունենում թուրք գործարար և քաղաքական շրջանակների հետ:Հաջորդ օրը՝ հուլիսի 29-ին,տեղի է ունենում հանդիպում Թուրքիայի «Ազգայնական շարժում» կուսակցության նախագահ Թուղրուլ Թյուրքեշի հետ,ով հայտարարում է,որ «...Թուրքիան և Հայաստանը տարածաշրջանում կարևոր հարևան երկրներ են», և նրանց ղեկավարների կողմից իրականացվող ցանկացած երկխոսություն «նպաստելու է տարածաշրջանի խաղաղությանը և համագործակցությանը»: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական համագործակցությանը, ապա, ըստ Թյուրքեշի, «այն կարող է ներառել հսկայական ծրագրեր՝ սկսած արդյունաբերական ներդրումներից, վերջացրած առօրյա մանր

առևտրով»[231]: Արդեն 1997 թվականին Թ. Տեր-Պետրոսյանի ջանքերով ստեղծվում է «Հայ-թուրքական տնտեսական խորհուրդ», որը բավականին ակտիվ գործունեություն է ծավալում: Դրա մասին են վկայում կողմերի բազմաթիվ փոխադարձ այցելություններ[232]:

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում հայ-թուրքական երկկողմ շփումները իրականացվում էին հասարակական կառույցների մակարդակով: Հենց սկզբից ցանկանում ենք նշել, որ հայ-թուրքական առնչությունները հասարակական կառույցների մակարդակով միշտ չէ, որ արդյունավետ են եղել և հաճախ տապալվել են: Սակայն, անկախ արդյունքից, կարևորն այն էր, որ այդ մակարդակով հայ-թուրքական շփումների անհրաժեշտությունը գիտակցում էին ոչ միայն Հայաստանում, այլև Թուրքիայում՝ հատկապես գործարար շրջանակների մակարդակով:

Նման կառույցներից առանձնացրել ենք երկուսը՝ 1997 թ. մայիսի 3-ին ստեղծված Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն (ԹՀԳԶԿ), որի համանախագահներն էին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը և թուրք գործարար Քայան Սոյակը[233]: Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն որոշակի ջանքեր է գործադրել երկու երկրների գործարար շրջանակների համագործակցության ձևավորման ու զարգացման ուղղությամբ[234]: Նշենք նաև, որ կազմակերպության

---

231 Տե՛ս «Ազգ», Եր., 1996, թ. 141, 31 հուլիսի:
232 Տե՛ս «Երկիր», Եր., 2005, թ. 16, 29 ապրիլի:
233 Կազմակերպության մասին ավելի հանգամանալից տե՛ս, http://www.tabdc.org
234 Տե՛ս Հայաստան-Թուրքիա. Բաց խոսակցություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, էջ 110-111:

ծրագրերում առկա էին այնպիսի փոխշահավետ հեռանկարային նախագծեր, ինչպիսիք էին «Մերսին-Երևան-Բաքու երկաթգծի գործարկումը, ազատ առևտրի գոտու ստեղծումը, օդային հաղորդակցության զարգացումն ու տարածաշրջանային արդյունաբերական ճյուղային համագործակցությունը»[235]: Այդ առնչությամբ կարևոր է հատկապես 1997 թ. հոկտեմբերի 23-ին Թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովի նախագահ Քայան Սոյակի և փոխնախագահ Տիգրան Ալթունի հանդիպումը ՀՀ Երկաթգծի դեպարտամենտի տնօրեն, ՀՀ Տրանսպորտի նախարարի տեղակալ Հրանտ Բեգլարյանի հետ[236]:

Կազմակերպության հնգամյա հաշվետու զեկույցի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թուրք-հայկական շփումների մոտ 70%-ը իրականացվել է այդ կազմակերպության նախաձեռնությունների արդյունքում: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ կոմիտեն, որն իրեն անվանում է «միակ կապը հայ-թուրքական պետական և մասնավոր հատվածների միջև» և միակ «հայ-թուրքական համատեղ հայեցակարգը աշխարհում», կարծում է, որ միայն նման շփումների արդյունքում, ի վերջո, կարելի էր հասնել հայ և թուրք ժողովուրդների միջև առողջ գործակցային մթնոլորտի ձևավորմանը, որն էլ ավելի իրատեսական կդարձներ նրանց միջև «քաղաքական հաշտեցման հնարավորությունները»[237]:

1997 թ. օգոստոսի 1-ին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության

---

235 Տե՛ս Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Եր., 2003, էջ 17:

236 Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 8, գործ 100, էջ 4-8:

237 Տե՛ս Goshgarian R., Breaking the Stalemate: Turkish-Armenian Relations in the 21 st Century, // «Turkish Policy Quarterly», Vol. 4, No. 4, (Winter 2005), p. 6-7.

կազմում հիմնված Թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովի հրավերով Ստամբուլից Երևան է ժամանում ինը հոգուց բաղկացած թուրք գործարարների պատվիրակությունը[238]: Ամփոփելով կայացած հանդիպումների արդյունքները՝ ՀՀ արդյունաբերողների և գործարարների միության (այսուհետև ՀԱԳՄ) նախագահ Ա.Վարդանյանը հույս է հայտնում, որ «Թուրք-հայկական բիզնես հանձնախմբի համատեղ աշխատանքները հիմնված կլինեն փոխշահավետության վրա»[239]: Անդրադառնալով նույն հարցին, Թուրք-հայկական բիզնես հանձնախմբի նախագահներ Քայան Սոյակը և Արսեն Ղազարյանը երկուստեք համագործակցությունը շարունակելու հույս են հայտնում և նշում, «որ թուրքական և հայկական կողմերը մեծ շահագրգռվածություն ունեն սահմանների բացման հարցում»[240]:

Թուրք գործարարների Հայաստան կատարած այցից հետո՝ 1997 թ. օգոստոսի 20-ին, Քայան Սոյակը շնորհակալական ուղերձ է ուղարկում Հայաստան, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ «...իրենք շնորհակալ են համագործակցության համար և կցանկանային ամենավաղ հարմարության պայմաններում հայ գործարարներին փոխադարձ հյուրընկալել Թուրքիայում», քանզի «հայկական կողմի դիրքորոշումը շատ մեծ նշանակություն ունի թուրքերի համար» և վերջիններս «ուրախ կլինեին լսել հայ գործարարների խորհրդատվությունները ու մեկնաբանությունները»[241]:

---

[238] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 2, գործ 173, էջ 96:
[239] Նույն տեղում, ցուցակ 8, գործ 100, էջ 30:
[240] Նույն տեղում:
[241] Նույն տեղում, ցուցակ 2, գործ 173, էջ 113:

1997թ. նոյեմբերի 21-ին պատասխան այցով Ստամբուլ է մեկնում հայկական պատվիրակությունը՝ ՀԱԳՄ նախագահ Արամ Վարդանյանի գլխավորությամբ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այցի ընթացքում հայ գործարարներին ջերմորեն ընդունում են Թուրքիայի պետական նախարարներ Էյուպ Աշըքը և Յալըմ Էրեզը: Վերջինս ողջունելով հանձնաժողովի ստեղծումն ու գործունեությունը դժգոհում է այն փաստից, որ հանձնաժողովի աշխատանքները դանդաղում են, միևնույն ժամանակ շեշտելով այն միտքը, որ ինքն անձամբ Հայաստանի հետ սահմանի բացման կողմնակից է, քանի որ սահմանի փակ լինելու արդյունքում «ժամանակ ենք կորցնում և կրում վնասներ»[242]: Այն, որ թուրք նախարարը այստեղ հստակ գիտակցում է, որ Թուրքիայի կողմից Հայաստանի հետ սահմանի միակողմանի փակումը վնասում է հայ-թուրքական տնտեսական կապերին՝ ողջունելի է, սակայն առնվազն տարօրինակ է, որ թուրք նախարարը գիտակցելով դա և հայտարարելով, որ ինքը անձամբ կողմնակից է Հայաստանի հետ սահմանի բացմանը, այնուամենայնիվ իր «զայրույթը» չի ուղղում ճիշտ հասցեատիրոջը՝ թուրքական իշխանություններին:

Մինչդեռ, ըստ Էրեզի, 20 միլիոնանոց ադրբեջանական բնակչություն ունեցող Իրանը «դիվանագիտական և առևտրատնտեսական կապեր է հաստատել Հայաստանի հետ, իսկ Թուրքիան հապաղում է»: Անդրադառնալով հարցի քաղաքական կողմին՝ թուրք նախարարը նշում է. «Համագործակցության եզրեր կան բոլոր բնագավառներում, ուղղակի հարաբերությունների բարելավման համար անհրաժեշտ է **հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորումը «կողմերի համար ընդունելի լուծման տարբերակով»**

---

242 Նույն տեղում, ցուցակ 8, գործ 100, էջ 34-35:

(ընդգծումը մերն է-Մ.Ն.)[243]: Մեր կարծիքով, նման պնդումը ուշագրավ է երկու առումով. նախ, ինչպես դժվար չէ նկատել, թուրք նախարարը չի բացառում երկկողմ փոխշահավետ համագործակցության հնարավորությունը և երկրորդ այդ համագործակցության հեռանկարը շաղկապելով արցախյան հիմնախնդրի լուծման հետ, միևնույն ժամանակ նշում է, որ այդ լուծումը պետք է լինի երկու կողմի համար ընդունելի տարբերակով: Տեսակետ, որը, փաստորեն, էապես տարբերվում է թուրքական իշխանությունների այդ հարցում որդեգրած պաշտոնական դիրքորոշումից, ըստ որի արցախյան հարցը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում, բացառելով մյուս հիմնարար սկզբունքը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը:

Իր հերթին թուրք նախարար Աշըքը, անդրադառնալով հայ-թուրքական երկկողմ առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը, նշում է. «Անդրկովկասում հակամարտությունների և անկայունության վերացման անհրաժեշտ պայմանը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումն է»[244]:

Հայ գործարարների Ստամբուլ կատարած այցի առումով կարևորում ենք այն հանգամանքը, որ երկու երկրների գործարարների միջև շփումներն, ի վերջո, կարող էին նոր մակարդակի բարձրացնել Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական կապերը՝ վերջին հաշվով նպաստելով երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորմանը:

Ստամբուլում կայացած երկկողմ հանդիպումների արդյունքում նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվում 1998

[243] Նույն տեղում:
[244] Նույն տեղում, էջ 35:

թվականին Երևանում Հայ-թուրքական բիզնես ֆորում կազմակերպելու և թուրքական ապրանքների ցուցահանդես անցկացնելու առնչությամբ[245]: Չնայած ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականին ու դրա հետևանքով երկրում ստեղծված նոր քաղաքական իրադրությանը, այնուամենայնիվ, հավատարիմ մնալով ձեռք բերված պայմանավորվածությանը, 1998 թ. փետրվարի 3-6-ը ՀԱԳՄ հրավերով թուրքական 25 հոգուց բաղկացած պատվիրակությունը այցելում է ՀՀ: Պատվիրակությանն ընդունում են ՀՀ վարչապետ և նախագահի պաշտոնակատար Ռ. Քոչարյանը, ԱԳ նախարարի պաշտոնակատար Վ. Օսկանյանը, առևտրի և արդյունաբերության նախարար Գ. Նանագուլյանը: Այցն ավարտվում է համաձայնագրի ստորագրմամբ, որի համաձայն ապրիլի 15-17-ը ՀՀ-ում նախատեսվում էր կազմակերպել Հայ-թուրքական բիզնես ֆորում, թուրքական ապրանքների ցուցահանդես[246]:

Ցավոք, քաղաքական բնագավառում երկու երկրների միջև առկա զգուշավորությունը չէր կարող իր արտացոլումը չգտնել նաև առևտրատնտեսական բնագավառում, ուստի ամենևին էլ պատահական չէր, որ մեծապես պայմանավորված նաև թուրքական իշխանությունների որդեգրած սպասողական քաղաքականությամբ՝ նախ որոշ ժամկետով, ապա անորոշ ժամանակով հետաձգվում է ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացումը: Չնայած այդ հանգամանքին՝ շփումները հանձնաժողովների միջև, այնուամենայնիվ, շարունակվում էին նաև հետագայում, և կողմերը, հնարավորության սահմաններում, փորձում էին աջակցել գործարար կապերի հաստատմանը:

[245] Տե՛ս նույն տեղում, ցուցակ 2, գործ 173, էջ 130; ցուցակ 8, գործ 100, էջ 17:
[246] Նույն տեղում, ցուցակ 8, գործ 100, էջ 40:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում կազմակերպությունը գործունեություն էր ծավալում ոչ միայն տնտեսական, այլև մշակութային, պատմագիտական և այլ ոլորտներում: Սակայն պետք է նկատել, որ պատմագիտության ոլորտում ԹՀԳԶԿ-ի ոչ բոլոր նախաձեռնություններն էին ողջունելի, հատկապես այն, որ կառույցը առաջարկում էր ստեղծել թուրք և հայ պատմաբանների ֆորում՝ «ազգամիջյան պատմության խնդրահարույց հարցերը ճշտելու համար»՝ դրանով իսկ, փաստորեն, կասկածի տակ դնելով Հայոց ցեղասպանության փաստը[247]: Շեշտենք նաև այն փաստը, որ ինքը՝ Սոյակը, 1999 թ. դեկտեմբերին ևս հայտարարում էր, թե երկու երկրների միջև միակ խոչընդոտը Հայոց ցեղասպանության բաց վերքն է[248]:

Ցավոք, քննարկվող ժամանակաշրջանում նկատված հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների աշխուժացումը երկար կյանք չի ունենում: Եվ չնայած թուրքական կողմը հայ-թուրքական նկատելի դարձող տնտեսական փոխհամագործակցության հեռանկարով փորձում էր գայթակղել և երկխոսության հույսեր ներշնչել ՀՀ ղեկավարությանը, այնուամենայնիվ, դեպքերի զարգացումը հուշում էր, որ Թուրքիան չէր պատրաստվում դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը նախապայմանների հետ կապելու Թուրքիայի ջանքերն իրականությունն աղավաղելու և Թուրքիայի կողմից Ադրբեջանին

[247] Տե՛ս Անանյան Ա., Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), էջ 17:

[248] Տե՛ս Նույնի՝ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում 1991-2004թթ., էջ 78:

ցուցաբերվող աջակցությունն ընդգծելու նպատակ էին հետապնդում:

Դրա ապացույցը 1997 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի ելույթն էր Կարսում, որտեղ վերջինս, անդրադառնալով հայ-թուրքական տնտեսական հարաբերություններին, նշում էր, որ «երեք ղուրուշ առևտրի համար մենք ազերիներին դժվար կացության մեջ չենք դնելու»[249]: Այլ կերպ ասած, Թուրքիայի նախագահը հայտարարում էր, որ հանուն Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման, որոնք Թուրքիայի համար «երեք ղուրուշի» արժեք ունեին, իրենք չեն դավաճանելու Ադրբեջանի շահերին: Բացի այդ, մեր խորին համոզմամբ, Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի վերը նշված արտահայտության մեջ էլ հենց պետք է որոնել Թուրքիայի կողմից ՀՀ նկատմամբ հարաբերությունների կառուցման առանցքը, քանզի Դեմիրելն այստեղ հստակ հասկացնել է տալիս, որ իրենք ազերիներին չեն դավաճանի, հանուն Թուրքիայի համար «երեք ղուրուշի արժեք ունեցող Հայաստանի հետ առևտրի»: Ուստի, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ դեռևս 1995 թվականին, ինչպես արդեն նշել ենք վերևում, Թուրքիան, նկատի ունենալով Ադրբեջանի հետ իր հարաբերությունները, պաշտոնապես հայտարարել է, որ Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ այլ պետության քմահաճույքով չի առաջնորդվում, դժվար չէ եզրակացնել, որ անկախ ՀՀ գործադրած ջանքերից, Հայաստան-Թուրքիա հարաբերություններում առաջընթաց կգրանցվեր միայն այն դեպքում, երբ Հայաստանը դադարեր Թուրքիայի կողմից դիտվել որպես «երեք ղուրուշանոց առևտրի» երկիր, և միայն տնտեսապես

[249] Տե՛ս «Ազգ», Եր., 1997, թ. 210, 1 նոյեմբերի:

հզոր ու կայացած հայոց պետականությունն ի զորու կլիներ ստիպել Թուրքիային վերանայելու իր հարաբերությունները ՀՀ-ի հետ: Կարծում ենք, որ միայն այս դեպքում Թուրքիան իր արտաքին քաղաքականության մեջ իրոք չէր առաջնորդվի ուրիշ պետության քմահաճույքներով:

Բերված կարծիքի օգտին է խոսում նաև այն փաստը, որ «Հուրիյեթ» թերթի քաղաքական մեկնաբան Սեդաթ Էրգինը դեռևս 1991թ. նոյեմբերի 15-ին նույն թերթում հրապարակված հոդվածում կոչ էր անում թուրքական իշխանություններին հնարավորինս շուտ քայլեր ձեռնարկել Թուրքիայի կողմից Հայաստանին առաջադրված նախապայմանները կյանքի կոչելու ուղղությամբ, քանզի ըստ հեղինակի դրանց իրագործումը «**վաղը, երբ Հայաստանը ոտքի կանգնի, բոլորովին անհնարին է լինելու**» (ընդգծումը մերն է -Մ.Ն.)[250]:

Ուզում ենք նշել նաև, որ հայ պատմագիտության մեջ առկա այն պնդումը, թե հայ-թուրքական հարաբերությունները լուսաբանված են «բոլոր հնարավոր տեսանկյուններից, և կարծես թե ոչ մի տեսակետ քննարկումներից դուրս չի մնացել»[251], այնուամենայնիվ, մեր կողմից բերված այս տեսակետը, կարծում ենք, պատշաճ ուշադրության չի արժանացել ուսումնասիրողների կողմից:

Ամփոփելով այս ենթագլխում բերված փաստերն ու դրանց հիման վրա կատարված եզրահանգումները՝ կարող ենք նշել, որ

1. Քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ ղեկավարությունը բազում զոհողությունների (հրաժարում Թուրքիայի կողմից Հայոց

---

[250] «Hürriyet», Istanbul, 1991, 15 Kasim.
[251] Տեր-Մաթևոսյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունները մեթոդաբանական վերանայման ու աշխարհաքաղաքական անտարբերության խաչմերուկում, 29.06.2017, http://repairfuture.net/index.php/hy/geopolitics-standpoint-of-armenia-ar/armenian-turkish-relations-at-the-crossroads-of-methodological-revision-and-geopolitical-negligence-armenian

ցեղասպանության միջազգային ճանաչումից, նախանջ ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից, գաղտնի հանդիպումներ պանթուրքիստական ուղղվածության կազմակերպությունների ղեկավարների հետ և այլն) գնով, ամեն կերպ փորձում էր հասնել Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը:

2. Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հաստատման համատեքստում ՀՀ ղեկավարությունն առաջնորդվում էր այն թյուր ընկալմամբ, թե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պահանջից հրաժարումը կարող է երաշխիք ստեղծել ՀՀ անվտանգության համար:

3. Ժամանակի ՀՀ ղեկավարությունը գերագնահատում էր Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու խնդիրը՝ ստորադասելով դրան ազգային գաղափարախոսության հիմնադրույթները:

4. Քանի որ Թուրքիան քննարկվող ժամանակահատվածում բազմիցս ակնարկել էր, որ Հայաստանն իր տնտեսական զարգացվածության մակարդակով իր համար լուրջ հետաքրքրություն չի ներկայացնում, ուստի հայ-թուրքական տնտեսական շփումներում նկատվող որոշակի աշխուժացումը մեզ բավարար հիմք չի տալիս բնութագրել այն որպես լուրջ բեկում Հայաստան-Թուրքիա հարաբերություններում:

5. Տնտեսական գործոնից զատ, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վրա զգալի ազդեցություն էր թողնում նաև ղարաբաղյան հիմնախնդիրը, այնքանով, որքանով Թուրքիան որպես ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախապայման հանդես էր գալիս Ադրբեջանի տարածքային

ամբողջականությունը հարգելու պահանջով, որը հակասում էր արցախահայության ազատ ինքնորոշման իրավունքին: Ուստի, ամենևին էլ պատահական չէր, որ Լեռնային Ղարաբաղում հայկական զինված ուժերի հաջողություններին զուգահեռ ավելի էր կոշտանում Թուրքիայի դիրքորոշումը ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում:

6. ՀՀ անկախության հռչակումից ի վեր Հայաստան-Թուրքիա հարաբերությունները փաստորեն դադարում էին զուտ երկու երկրների միջև հարաբերություններ լինելուց և կամա թե ակամա ներքաշվում նաև մեր տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող ԱՄՆ-ի, Ռուսաստանի և եվրոպական երկրների հետաքրքրությունների ոլորտը, իրողություն, որն, անկասկած, իր ազդեցությունն էր ունենում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի և այդ համատեքստում հայ-թուրքական տարբեր մակարդակներով շփումների վրա:

# ԳԼՈՒԽ II.
# ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1998-2008 ԹԹ.

## 2.1 Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որպես ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություն 1998-2004թթ.

1998 թվականին Հայաստանում տեղի ունեցած արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում ՀՀ նախագահ է հռչակվում Ռոբերտ Քոչարյանը: Վերջինս, ի տարբերություն ՀՀ առաջին նախագահի, որպես ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություն առաջ է քաշում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը: Հենց այդ հանգամանքը թուրք քաղաքագետները ժամանակին դիտարկել են որպես Թուրքիայի նկատմամբ ՀՀ քաղաքականության կոշտացում[252]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ դեռևս 1997 թվականին՝ նախքան նախագահ հռչակվելը, Լ. Տեր-Պետրոսյանն այն ժամանակ վարչապետ Ռ. Քոչարյանին առաջարկում է գլխավորել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համակարգման պետական խորհուրդը, սակայն վերջինս հրաժարվում է առաջարկից զուտ այն պատճառով, որ նշված խորհրդի ծրագրում բացակայում է ցեղասպանության ճանաչման վերաբերյալ դրույթը[253]:

Կարևոր է նկատել, որ Թուրքիայում հասարակական կարծիքի մակարդակով ՀՀ նոր իշխանությունների կողմից ՀՀ արտաքին քաղաքականության մեջ նման մոտեցումը ընկալվում էր որպես նախկին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի կառավարման շրջանում Հայաստան-Թուրքիա հարաբերությունները կարգավորելու

252 Տե՛ս Çeviköz Ü., նշվ. աշխ., էջ 13:
253 Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Հայոց ցեղասպանությունը. Հայացք պետականության դիտակետից, էջ 51:

չօգտագործված հնարավորություն[254]: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակները, բավականին ցավագին ընդունելով Ռ.Քոչարյանի ՀՀ նախագահ ընտրվելու հանգամանքը, այնուամենայնիվ, փորձում են համագործակցության եզրեր գտնել ՀՀ-ի նոր ղեկավարության հետ՝ երկկողմ տնտեսական ու քաղաքական շփումները շարունակելու ճանապարհով: Այդ ուղղությամբ առաջին կոնկրետ քայլը 1998 թ. ապրիլի 10-ին Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի շնորհավորական ուղերձն էր ՀՀ նոր նախագահ Ռ.Քոչարյանին[255]:

Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ՀՀ ղեկավարության որդեգրած նոր մոտեցումներն ընդհանուր գծերով իրենց արտացոլումն են գտել 1998 թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի ամբիոնից ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ելույթում: Այստեղ անդրադառնալով Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին՝ ՀՀ նախագահը նշում էր, որ «1915 թվականի ցեղասպանությունը իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտվեց համաշխարհային հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր հանցագործություններ կատարել ...»: Ելույթում շեշտվում էր նաև այն հանգամանքը, որ «Հայոց ցեղասպանությունը» ընդունվել և դատապարտվել է «միշարք երկրների խորհրդարանների կողմից»[256]:

Այն, որ ՀՀ նոր ղեկավարությունը, առաջնահերթություն համարելով Հայոց

[254] Տե՛ս Սաֆարյան Դ., Ոսկանյան Վ., Մելիքյան Գ., Սաֆարյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Եր., 2017, էջ 37:

[255] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 3, գործ 159, էջ 68:

[256] Տե՛ս Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 53-րդ նստաշրջանում, 25. 09. 1998, http://2rd.am/hy/Kocharyani-eluyty-MAKi-glkhavor-asambleayi-53-rd-nstashrjanum

ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը, այնուամենայնիվ, չէր դիտարկում այն որպես նախապայման հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում, զգացվում է դեռևս 1998թ. հունիսի 5-ին Յալթայում՝ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության գագաթնաժողովի շրջանակներում կայացած նախագահներ Ռ. Քոչարյանի և Ս. Դեմիրելի հանդիպման արդյունքներից: Այստեղ ՀՀ նախագահն առաջարկում է աշխատանքային խումբ կազմել Հայաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող խնդիրները քննարկելու նպատակով՝ միևնույն ժամանակ ընդգծելով, որ «հայ-թուրքական հարաբերությունները չպետք է ազդեցություն կրեն այլ հարցերի և այլ երկրների հետ ունեցած խնդիրների պատճառով»[257]:

Նույն միտումը նկատելի էր նաև 1999թ. նոյեմբերի 18-19-ի ԵԱՀԿ ստամբուլյան գագաթնաժողովում նախագահ Ռ.Քոչարյանի ելույթում, որտեղ վերջինս, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների զարգացման հնարավորություններին ու հեռանկարներին, մասնավորապես նշում էր, որ մենք՝ հայերս, չենք կարող մոռանալ ցեղասպանության խորը ցավը, բայց «մենք չենք ցանկանում մեր հարաբերությունների էվոլյուցիան և մեր ընդհանուր ապագան կախվածության մեջ դնել մեկնաբանությունների հակասություններից»[258]:

---

257 Տե՛ս Պատկերավոր պատմություն. «Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը»,- Եվրոպական կայունության նախաձեռնություն (ESI) օգոստոս 2009, էջ 28:

258 Տե՛ս Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը վերջին չորս տասնամյակում, // «Մեծ Եղեռն-90», Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 77:

Այդուհանդերձ, չնայած հայկական կողմի նման դիրքորոշմանը՝ թուրքական կողմը հայ-թուրքական հարաբերությունների հետագա ընթացքը շարունակում էր կապել որոշակի նախապայմանների հետ: Այսպես ՀՀ արտաքին գործերի նախարարության մամլո քարտուղար Արսեն Գասպարյանի պնդմամբ Թուրքիայի պետական նախարար Հիկմեթ Սամի Թյուրքը հանդես էր եկել հայտարարությամբ, ըստ որի՝ «թուրքական իշխանությունները երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորումը և հայ-թուրքական սահմանի բացումը կապում են 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի հետ»[259]: Դրան ի պատասխան՝ հայկական կողմը մեկ անգամ ևս հաստատում է, որ «ցեղասպանության խնդիրը, հայ-թուրքական քաղաքական երկխոսության օրակարգի մեջ դրվելով, չի հանդիսանում երկու պետությունների միջև հարաբերությունների կարգավորման նախապայման և նպատակ չունի ատելություն սերմանել հայ և թուրք ժողովուրդների միջև»[260]:

Արդեն 2001 թ. փետրվարի 1-ին «Սի-Էն-Էն Թուրք» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ՀՀ նախագահն առաջ է քաշում մեկ այլ նոր մոտեցում Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերություններում, ըստ որի՝ Թուրքիայի համար Հայոց ցեղասպանության ճանաչումն անպայմանորեն չի հանգեցնելու իրավական հետևանքների: Այսպես, նշված հարցազրույցում ՀՀ նախագահը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման խնդրին, նշում է, որ ճիշտ է «...ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը աշխարհասփյուռ հայության օրինական պահանջն է»,

259 Տե՛ս Պատկերավոր պատմություն. «Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը», էջ 28:
260 Տե՛ս նույն տեղում, էջ 29:

այդուհանդերձ, «երկու երկրների միջև հարաբերությունները որևէ նոր իրավական հետևանքների չեն հանգեցնի ցեղասպանության ճանաչումից հետո»՝ հակառակ Թուրքիայում իշխող այն կարծիքի, թե «...երբ ցեղասպանությունը ճանաչվի, այնուհետև Հայաստանն անպայմանորեն Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջ է ներկայացնելու»[261]:

Այն, որ Թուրքիայում հասարակական կարծիքի մակարդակով մտավախություն կար, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ՀՀ գործադրած ջանքերը կարող են սպառնալ Թուրքիայի տարածքային ամբողջականությանը, վկայում է Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, նախկին դեսպան Օմեր Էնգին Լյութեմը՝ նշելով, որ «Հայաստանի հետ Թուրքիայի ունեցած խնդիրներում առաջնայինը ... այն է, որ Հայաստանը չի ճանաչում Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ջանքեր է գործադրում»[262]: Կրկին անդրադառնալով հարցազրույցին՝ նշենք, որ ՀՀ նախագահը վերջում այն եզրակացությանն էր հանգում, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի քննարկումը «...առավել քան քաղաքականացված է», ուստի թուրքերը պետք է «առավել քան հանգիստ» նայեն «այդ խնդրին»[263]:

---

[261] Տե՛ս նույն տեղում, էջ 85, 101; տե՛ս նաև՝ Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում 1991-2004թթ., էջ 41-42:

[262] Lütem Ö. E., Karabağ Sorunu, // «Ermeni sorunu temel bilgi ve belgeler», Ermeni Araştirmalari enstitüsü, ASAM, Avrasya bir vakfi Avrasya stratejik Araştirmalar merkezi yayinlari, Ankara, 2007, s. 294.

[263] Տե՛ս Պատկերավոր պատմություն. «Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը», էջ 85, 101; տե՛ս նաև՝ Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում 1991-2004թթ., էջ 41-42:

Չխորանալով հարցի իրավական նրբությունների մեջ՝ ավելորդ չենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ այս հարցազրույցում Հայոց ցեղասպանության ճանաչման համատեքստում Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների զարգացման Ռ. Քոչարյանի տեսլականն առնվազն տարօրինակ է, քանզի ՀՀ նախագահն այդպես էլ չի հստակեցնում, որ եթե Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի դիտարկվելու որպես նախապայման հայ-թուրքական հարաբերություններում, ավելին՝ չի հանգեցնելու իրավական հետևանքների, ապա այդ դեպքում ինչ նպատակ են հետապնդում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ՀՀ գործադրած ջանքերը:

Որպես այս հարցի պատասխան Ժիրայր Լիպարիտյանն այն տեսակետն է հայտնում, որ ՀՀ նախագահի նման քայլը հետապնդում էր մարտավարական նպատակ, այն է՝ հայկական Սփյուռքը «կբազմապատկի երկրում ներդրումները՝ այս կերպ լուծելով Հայաստանի տնտեսության դժվարությունները»[264]:

Նույնը վկայում է նաև ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը՝ նշելով, որ Քոչարյանն իրեն բառացիորեն ասել է հետևյալը. «Ես չգիտեմ, թե ինչ բան է ցեղասպանությունը, բայց հաստատ գիտեմ, որ դա պետք է Սփյուռքին: Եթե մենք մտցնենք այս կետը, ապա Սփյուռքը կոգևորվի և **ավելի մեծ նյութական օժանդակություն կցուցաբերի Հայաստանին**»[265] (ընդգծումը մերն է -Մ.Ն.):

Եթե դա իրոք այդպես էր, և Ժ. Լիպարիտյանի ու Լ. Տեր-Պետրոսյանի տեղեկությունները հավաստի են, ուստի մեր կողմից ցանկանում ենք ավելացնել

[264] Libaridian Gerard J., նշվ. աշխ., էջ 265:
[265] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Հայոց ցեղասպանությունը. Հայացք պետականության դիտակետից, էջ 51:

ընդամենը, որ դա բավարար չէր կարող լինել համոզելու Սփյուռքին ՀՀ-ում ներդրումներ կատարելու գործում: Մեր խորին համոզմամբ, դրա համար անհրաժեշտ էր զարկ տալ երկրի տնտեսական զարգացմանը, բարելավել ՀՀ ներդրումային դաշտը՝ գրավիչ դարձնելով այն հնարավոր ներդրումների համար: Ցավոք, այս ուղղությամբ ՀՀ ժամանակի ղեկավարությունը որևէ լուրջ քայլ այդպես էլ չի ձեռնարկում:

Բավականին ուշագրավ են նաև ՀՀ իշխանությունների մոտեցումները Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցում Սփյուռքի դերի հետ կապված: Այդ տեսանկյունից ուշադրության է արժանի 2001 թ. փետրվարի 12-ին ֆրանսիական «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում ՀՀ նախագահի այն պնդումը, որ «ցեղասպանության ճանաչումը միայն Սփյուռքի հարցը» չէ, և որ «...Հայաստանը՝ որպես պետություն, ուղղակի պարտավոր է այդ հարցի վերաբերյալ իր տեսակետը հստակ ձևակերպել ...»[266]: Նման մոտեցումը ևս նորություն էր և փաստացի բացակայում էր Լ. Տեր-Պետրոսյանի Թուրքիայի նկատմամբ արտաքին քաղաքական հայեցակարգից:

Անշուշտ, ՀՀ ղեկավար շրջանակներում ճիշտ էր ընկալվում, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը լուրջ կռվան է Թուրքիայի դեմ զանազան միջազգային ատյաններում Հայաստանի խնդիրներին ցանկալի լուծումներ տալու համար, և ամենևին էլ պատահական չէր, որ ելնելով ՀՀ արտաքին քաղաքական հայեցակարգում տեղ գտած վերը նշված նոր մոտեցումներից՝ հայ դիվանագետներն ամենատարբեր ատյաններում սկսում են

[266] Տե՛ս Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003թթ.), էջ 103:

բարձրաձայնել և հիմնավորել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման իրավական անհրաժեշտությունը:

Այսպես, 1998թ. ապրիլի 16-ին Ժնևում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի նիստում, ՀՀ-ն ներկայացնող Կարեն Նազարյանն իր ելույթում հանդես է գալիս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական չափանիշներով ճանաչելու պահանջով[267]:

Ինքնին հասկանալի է, որ ՀՀ արտաքին քաղաքականության մեջ տեղ գտած նման փոփոխությունը չէր կարող իր դրական ազդեցությունը չունենալ ինչպես տարբեր հեղինակավոր կազմակերպություններում, այնպես էլ աշխարհի շատ երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում[268]: Մի բան, ինչը, ցավոք, չենք կարող ասել Լ. Տեր-Պետրոսյանի նախագահության տարիների մասին:

Այսպես, 1998 թվականին Հայաստանը, Կիպրոսը, Բուրունդին, Ուրուգվայը և Ռուանդան ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանում հանդես են գալիս համատեղ նախաձեռնությամբ, որով առաջարկվում էր նշել «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի 50-ամյակը: Արդյունքում ընդունվում է բանաձև, որի համահեղինակ են դառնում 86 երկիր, այդ թվում Թուրքիան և Ադրբեջանը: Բանաձևը վերահաստատում է 1948 թվականի կոնվենցիայի կարևորությունը՝ որպես ցեղասպանության դեմ պայքարի արդյունավետ միջազգային գործիք, կոչ է անում բոլոր երկրներին ավելի ինտենսիվ դարձնել կոնվենցիայի դրույթների իրագործմանն ուղղված

---

267 Տե՛ս նույն տեղում, էջ 69:

268 Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 18, գործ 203, էջ 79:

ջանքերը և բացահայտել վերջինիս խոչընդոտող հանգամանքները[269]:

Այստեղ ցանկանում ենք շեշտել այն հանգամանքը, որ ՀՀ-ն ՄԱԿ-ի անդամ դառնալուց հետո իր պատմության մեջ առաջին անգամ էր հանդես գալիս կոնկրետ նախագծով և առաջարկում օրակարգը համալրել նոր հարցով, փաստ, որը անշուշտ մեծ նշանակություն ուներ ՀՀ միջազգային վարկանիշի բարձրացման առումով:

Իսկ արդեն 2001 թ. ապրիլի 25-ին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 57-րդ նստաշրջանը ընդունում է Հայաստանի նախաձեռնությամբ ներկայացված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի բանաձևը, որի համաձայն հանձնաժողովը, հաշվի առնելով այն տառապանքները, որ արդեն ցեղասպանությունը պատճառել է մարդկությանը և այն, որ դեռևս առկա է ցեղասպանության կրկնության վտանգը, շեշտում է կոնվենցիայի մնայուն նշանակությունը և որոշում հարցի քննարկմանը անդրադառնալ 2003 թվականին կայանալիք 59-րդ նստաշրջանի ընթացքում[270]:

Խնդրո առարկա հիմնահարցի տեսանկյունից կարևորել ենք նաև Բելգիայի, Շվեդիայի, Իտալիայի և Ֆրանսիայի խորհրդարանների ընդունած որոշումները Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում:

Առկա փաստերը վկայում են, որ 1998 թ. մարտի 26-ին Բելգիայի Սենատը ընդունում է որոշում, որում «Թուրքիային կոչ էր արվում ճանաչել

---

269 Նույն տեղում, էջ 79-80; տե՛ս նաև՝ «Հայաստանի Հանրապետություն», Եր., 1998, թ. 160, 15 օգոստոսի:

270 Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 233:

ցեղասպանության փաստը», իսկ Եվրամիության (ԵՄ) անդամ պետություններին՝ «նպաստել հայ և թուրք ժողովուրդների միջև երկխոսություն ծավալելու և հաշտեցման գործընթացին»[271]:

2000 թ. մարտի 29-ին Շվեդիայի խորհրդարանը (Ռիգստագը) արտաքին հարաբերությունների խորհրդարանական հանձնաժողովի կողմից ներկայացված նախագծի հիման վրա ընդունում է որոշում, որով ճանաչում է Հայոց ցեղասպանությունը[272]: Մի փոքր առաջ անցնելով՝ ցանկանում ենք նշել նաև, որ արդեն 2010 թվականին Շվեդիայի Թագավորության Ռիգստագի կողմից ընդունվում է բանաձև, որում դատապարտվում էր Օսմանյան կայսրությունում «հայերի, ասորիների և Պոնտոսի հույների ցեղասպանությունը»[273]: Ցավոք, ի պատասխան այս բանաձևի, Շվեդիայի այդ ժամանակվա վարչապետ Ֆրեդրիկ Ռեյնֆելդտն իր թուրք գործընկերոջ հետ հեռախոսային զրույցում նշել է, որ «իրեն վշտացրել է, որ խորհրդարանն ընդունել է այդ բանաձևը: Նա վստահեցրել է թուրք վարչապետին, որ բանաձևը Շվեդիայի կառավարությանը չի պարտավորեցնում և օրենքի ուժ չունի»[274]:

Ելնելով բերված փաստերից՝ կարող ենք եզրակացնել, որ առանձին դեպքերում այս կամ այն երկրի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից ընդունված Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերը, ցավոք, օրենքի ուժ

---

[271] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 54, ֆ. հ. 132; տե՛ս նաև՝ Հակոբյան Հ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., 2002, էջ 376:

[272] Տե՛ս Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջ 11:

[273] Տե՛ս Zeldin W., Sweden: Parliament Approves Resolution on Armenian Genocide, 16. 03. 2010, http://www.loc.gov/law/foreign-news/article/sweden-parliament-approves-resolution-on-armenian-genocide/

[274] Տե՛ս Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Եր., 2017, էջ 19:

չունեին, և այդ երկրների գործադիր իշխանության մարմինները չէին դիտարկում դրանք որպես պարտադիր պայման իրենց գործունեության մեջ:

Նշենք նաև, որ դեռևս 2000 թ. նոյեմբերի 16-ին Իտալիայի Պատգամավորների պալատը որոշում է ընդունում, որտեղ հորդորում էր կառավարությանը՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը[275]:

Արդեն 2002 թ. հունիսի 13-ին Կանադայի Սենատն ընդունում է բանաձև Հայոց ցեղասպանության վերաբերյալ, որով դատապարտում և կառավարությունից պահանջում էր ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն», և «ապրիլի 24-ը բոլոր տարիների համար Կանադայի ողջ տարածքում հռչակել «1.5 մլն հայ զոհերի հիշատակի օր»»[276]: Իսկ 2004 թ. ապրիլի 21-ին Կանադայի համայնքների պալատը ճանաչում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը և դատապարտում այն որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն[277]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման տեսանկյունից բավականին ուշագրավ է 2000 թ. նոյեմբերի 10-ին Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Բ-ի Հայաստան կատարած այցը, որի ընթացքում վերջինս և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն հանդես են գալիս համատեղ հայտարարությամբ, որտեղ Վատիկանի պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում է «ցեղասպանություն» բառը[278]:

275 Իտալիայի խորհրդարանի Փոքր Պալատում Հայոց ցեղասպանության ճանաչման նախագծի 2000 թ. ապրիլի 3-ի քննարկումները, առաջաբանի հեղինակ և խմբագիր Լ. Բարսեղյան, Եր., 2001, էջ 3:

276 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 71, ֆ. հ. 170; տե՛ս նաև՝ «Ազգ», Եր., 2002, թ. 112, 18 հունիսի:

277 Տե՛ս Քոչարյան Վ., Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, Եր., 2014, էջ 35:

278 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 9, գործ 273, էջ 81-82:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում զգալի ավանդ ունի Ֆրանսիան: Հիշենք, որ դեռևս 1998 թ. մայիսի 29-ին, Ֆրանսիայի Ազգային ժողովը պաշտոնապես ընդունում է Դիդիե Միգոյի օրինագիծը՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: 2000 թ. նոյեմբերի 7-ին Ֆրանսիայի Սենատը քննարկումներից հետո ընդունում է Սենատի անդամներ Ժակ Պելլետիեի, Ռոբեր Բրեի, Ժան-Կլոդ Գոդենի, Բեռնար Պիրայի, Միշել Մերսիեի և Ժակ Օդենի կողմից ներկայացված «Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ փաստաթուղթ», որը Սենատ էր ներկայացվել դեռևս հոկտեմբերի 28-ին: Արդեն 2001 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը, հիմք ընդունելով Ֆրանսուա Ռոշբլուանի զեկույցը, առաջին ընթերցմամբ ընդունում է 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրինագիծ, որով «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը»: Փաստաթղթի տակ առկա է Սենատի նախագահի Ռայմոն Ֆորնիի ստորագրությունը[279]: Արդեն 2001 թ. հունվարի 29-ին Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակը ստորագրում է օրենքը[280]: Այսպիսով, Ֆրանսիան դառնում է աշխարհում առաջին երկիրը, որը օրենսդրորեն ճանաչել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը:

Թուրքիան, բնականաբար, չէր կարող չարձագանքել ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ մյուս երկրներում Հայոց ցեղասպանության

[279] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 22, թպ. 9, ֆ. հ. 65, էջ 1; թպ. 25, ֆ. հ. 64, էջ 2-22; նաև՝ Loi n°2001-70 du 29 janvier 2001 relative à la reconnaissance du génocide arménien de 1915 (J.O. du 30 janvier 2001) [sur le site de Légifrance], http://www.assemblee-nationale.fr/11/dossiers/genocide.asp.

[280] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 22, թպ. 17 (1), ֆ. հ. 81, 83, տե՛ս նաև՝ Karagueuzian S. H., Auron Y., A Perfect Injustice: Genocide and Theft of Armenian Wealth, New York, Transaction Publishers, 2009, p. 14; տե՛ս նաև՝ Schrodt N., Modern Turkey and the Armenian Genocide: An Argument about the Meaning of the Past, Springer Cham Heidelberg New York Dordrecht London, Springer International Publishing Switzerland, 2014, p. 17.

օրինագծերի վավերացման փաստին: Այսպես, Թուրքիայի ԱԳ նախարարությունը դեռևս 2000 թ. նոյեմբերի 7-ի Ֆրանսիայի Սենատի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը որակում է որպես պատմական իրականությանը ամբողջությամբ հակասող: Այնուհետև անդրադառնալով ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի վարչակազմի կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված քաղաքականությանը և այդ ուղղությամբ հսկայական ֆինանսական միջոցներ ունեցող սփյուռքահայերի հետ համագործակցությանը՝ նշում է, որ այն ոչ միայն չի նպաստելու այդքան բաղձալի խաղաղության և կայունության հաստատմանը, այլ և խորացնելու է տարածաշրջանում Հայաստանի մեկուսացումը և իսկական վնաս է հասցնելու հայ ժողովրդին, որը գտնվում է ծանր կացության մեջ[281]: Թուրքիայի նախագահ Սեզերն իր հերթին, արձագանքելով Ֆրանսիայում հայանպաստ օրինագծերի ընդունմանը, այն կարծիքն է հայտնում, որ դա կարող է «վնասակար ազդեցություն» ունենալ «թուրք-ֆրանսիական հարաբերությունների վրա»[282]:

Բացի այդ, նույն Սեզերի հովանավորությամբ ապրիլի 20-21-ը Անկարայում տեղի է ունենում հայկական ուսումնասիրությունների կոնգրես, որի ընդունած հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր, թե իբր «այսպես կոչված Հայոց ցեղասպանության պնդումները կրում են քաղաքական նպատակ», քանի որ «գիտական ուսումնասիրությունները չեն հաստատում Հայոց ցեղասպանության պնդումները»: Հայտարարության մեջ նաև խիստ քննադատություններ հնչում աշխարհի

---

281 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 9, գործ 274, էջ 46:

282 Տե՛ս Араз Б., Каракаш-Келеш Х., Армяно-турецкие отношения: критический анализ, Центральная Азия и Кавказ, журнал социально-политических исследований, No. 4 (22), Швеция, 2002, https://www.ca-c.org/journal/2002/journal_rus/cac-04/13.bulru.shtml

տարբեր պետությունների խորհրդարանների հասցեին՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր ընդունելու կապակցությամբ: Հայտարարության վերջում կոչ էր արվում «Թուրքիային և Հայաստանին ձեռնամուխ լինել երկխոսության և համագործակցության»[283]:

Խնդրո առարկա հիմնահարցի լուսաբանումն ամբողջական չի լինի, եթե մենք, թեկուզև ընդհանուր գծերով, չանդրադառնանք քննարկվող ժամանակահատվածում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում ԱՄՆ-ի դիրքորոշմանը: Նշենք նաև,որ այդ հարցում զգալի ներդրում ունեն ինչպես ԱՄՆ-ի հայկական լոբբիստական խմբերը, այնպես էլ աշխարհասփյուռ հայությունը: Դրահետ միասին, անշուշտ, չի կարելի անտեսել նաև ՀՀ արտաքին գերատեսչության ջանքերն այդ ուղղությամբ:

2000 թ. հոկտեմբերի 3-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնաժողովի օրակարգում քննարկման առարկա էր դառնալու Հայոց ցեղասպանությունը դատապարտող H.RES. 596 բանաձևը, որտեղ ոչ միայն «հստակ փաստեր էին ներկայացվում Հայոց ցեղասպանության վերաբերյալ,այլև կոչ էր արվում ԱՄՆ-ի նախագահին Հայոց ցեղասպանության հիշատակմանը նվիրված իր ամենամյա ուղերձներում 1.5 մլն. հայերի կանխամտածված ոչնչացումն անվանել ցեղասպանություն»[284]: Բանաձևի ընդունման հավանականությունը մեծանում էր ԱՄՆ-ում ընթացող նախագահական ընտրարշավի պատճառով:

---

283 Տե՛ս Անանյան Ա., «Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին),էջ 102:

284 Տե՛ս Պողոսյան Բ.,Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007թթ.,Եր.,2011,էջ 22:

Քանի որ Ջորջ Բուշ Կրտսերի և գործող փոխնախագահ Ալբերտ Գորի միջև ձայների տարբերությունն աննշան էր, ուստի հարյուր հազարի հասնող հայ ընտրողների ձայները կարող էին վճռորոշ նշանակություն ունենալ 2000 թ. նոյեմբերին նախատեսված նախագահական ընտրությունների արդյունքների վրա:

Նշված փաստը, բնականաբար, գիտակցում էր նաև Թուրքիան, և պատահական չէ, որ հոկտեմբերի 1-ին ԹԱՄԺ-ը Կոնգրեսին կոչ է անում հրաժարվել Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև համապարփակ համագործակցության վնաս հասցնող վարվելակերպից և դատապարտել թուրք-ամերիկյան բազմաթիվ տարիների բարեկամությունը տապալելու նախաձեռնությունը: Ավելին, ԹԱՄԺ-ի կողմից ԱՄՆ խորհրդարանականների հետ բանակցություններ վարելու նպատակով գործուղվել է պատգամավորների 5 հոգանոց պատվիրակություն, որոնց մինչև մեկնելը նյութեր է տրամադրել ԱԳՆ-ը[285]: Իսկ հոկտեմբերի 3-ին՝ Արտաքին հարաբերությունների կոմիտեի կողմից արդեն բանաձևի ընդունումից անմիջապես հետո, Թուրքիայի նախագահն ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի հետ կայացած հեռախոսազրույցում իր դժգոհությունն է հայտնում բանաձևի ընդունման կապակցությամբ[286]:

Արդյունքում ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը 2000 թ. հոկտեմբերի 19-ին հատուկ ուղերձով դիմում է ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթին՝ վերջինիս ուշադրությունը հրավիրելով ԱՄՆ-ի արտաքին քաղաքական առաջնահերթությունների և գերակա շահերի վրա: Ուղերձում, հակառակ Հայոց ցեղասպանությունը

[285] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 63, էջ 60:
[286] Տե՛ս Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 25:

ճանաչելու իր իսկ նախընտրական խոստմանը, ԱՄՆ-ի նախագահին այն կարծիքն էր հայտնում, թե տվյալ ժամանակաշրջանում նման օրինագծի քննարկումը կարող է «բացասաբար» անդրադառնալ ԱՄՆ-ի «շահերի վրա» և ճախողել Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների «բարելավմանն ուղղված» այլ օրինագծերի քննարկումն ու ընդունումը: Նման մոտեցումը Քլինթոնը հիմնավորում էր նաև նրանով, որ Հայաստանն ու Թուրքիան այս խնդիրը բավականին ցավոտ և սուր են ընկալում: Վերջում Քլինթոնն այն կարծիքն էր հայտնում, որ հայերի ու թուրքերի համար ցեղասպանության ցավոտ խնդիրը կարող է լուծվել «միայն այն դեպքում, երբ երկու կողմերը միասին քննեն իրենց անցյալը»[287]:

Փորձելով բացատրել ԱՄՆ-ի նման քաղաքականության պատճառները՝ ցանկանում ենք նշել, որ մենք լիովին կիսում ենք այդ հարցում Ազգային անվտանգության հարցերով ԱՄՆ նախագահի խորհրդական Զ. Բժեզինսկու այն տեսակետը, ըստ որի՝ ԱՄՆ-ի նպատակը Կովկաս-Կենտրոնասիական տարածաշրջանում «...այնպիսի իրավիճակ ստեղծելն է, որ համաշխարհային ուժի կենտրոններից և ոչ մեկը չունենա այստեղ գերակշռություն»[288]:

Այստեղ չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ ցեղասպանություն վերապրած հայ ժողովրդի անհուն ցավը ԱՄՆ-ի ղեկավար շրջանների կողմից օգտագործվում էր սեփական շահերի տեսանկյունից՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով:

Ասվածի ամենավառ ապացույցը թերևս ԱՄՆ նախագահ Բուշ Կրտսերի քաղաքականությունն էր այդ հարցում: Այսպես, վերջինս, արհամարհելով ԱՄՆ 162 կոնգրեսականների կողմից 1915 թվականի

---

[287] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 63, էջ 65:
[288] Бзежинский З., Великая шахматная доска, Москва, 1999, стр. 149-155.

իրադարձությունները ցեղասպանություն որակելու իրեն ուղղված դիմումը, ինչպես նաև նախագահի ընտրվելու դեպքում ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր հռչակելու 2000 թվականի իր նախընտրական խոստումը, փաստորեն երկրորդ անգամ է դրժում այն՝ հայ ժողովրդին ընդամենը կոչ անելով իր ապագան կառուցել «խաղաղության և համերաշխության» հիմքով[289]: Արդյունքում ներկայացված բանաձևը այդպես էլ տեղ չի գտնում ԱՄՆ Կոնգրեսի ստորին պալատի օրակարգում[290]:

ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը, 2000 թ. նոյեմբերի 2-ին հանդես գալով ազգային հեռուստատեսությամբ և անդրադառնալով ԱՄՆ-ի Կոնգրեսի ստորին պալատի օրակարգից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի հանմանը, նշում էր, որ դա «չի կարող պարտություն համարվել, ընդհակառակը, այն մեծ նվաճում էր այն առումով, որ նման մակարդակով նախկինում Հայոց ցեղասպանության հարցը չի քննարկվել ԱՄՆ-ում»[291]:

Այստեղ, մեր կարծիքով Ռ. Քոչարյանը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում որոշակիորեն նահանջում էր նախկինում նույն հարցի վերաբերյալ իր իսկ որդեգրած նոր մոտեցումներից, քանի որ, ինչպես հստակ երևում է նրա խոսքերից, ՀՀ նախագահին արդեն սկսել էր ձեռքբերում համարել հարցի զուտ քննարկումը ԱՄՆ օրենսդիր մարմնում, անկախ այն բանից, որ ԱՄՆ

---

289 Տե՛ս Մսըրլեան Զ., Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական հարցը (1900-2009), էջ 127-128:
290 Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Եր., 2015, էջ 129:
291 Տե՛ս Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), էջ 98:

օրենսդիր մարմինը մերժել էր անգամ քննարկել այն:

Նման պայմաններում Թուրքիան կրկին փորձում է ճնշում գործադրել ԱՄՆ-ի վրա՝ քաջ գիտակցելով, որ Թուրքիայի և ԱՄՆ-ի արտաքին քաղաքական շահերը Կովկասյան տարածաշրջանում հիմնականում համընկնում էին և նպատակ էին հետապնդում հնարավորինս թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը:

Բացի այդ, նշված մարտահրավերները Թուրքիային ստիպում են Հայոց ցեղասպանության առնչությամբ նոր մոտեցումներ ձևավորել, քանզի թուրքերն իրենց բնորոշ ճկուն դիվանագիտությամբ ենթադրում էին, որ առկա հիմնախնդիրը հայերի կողմից վաղ թե ուշ պատմական հարթությունից կարող է տեղափոխվել միջազգային-իրավական դաշտ: Նման պարագայում Թուրքիան, հետագա զարգացումներին պատրաստ լինելու համար, շտապում էր իրավաքաղաքական հարթության վրա առաջ անցնել Հայաստանից, ձևավորել միջազգային-իրավական մի այնպիսի հայեցակարգ, որով հնարավոր կլիներ չեզոքացնել Թուրքիային սպառնացող հնարավոր վտանգները:

Այդ համատեքստում 2000 թ. աշնանը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստում ընդունվում է երկու կարևոր որոշում. առաջին՝ Հայոց ցեղասպանության հարցը համարվում է Թուրքիայի ազգային անվտանգությանն առնչվող խնդիր, և երկրորդ՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը հանձնարարվում է ամեն կերպ խոչընդոտել ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված քննարկումներին[292]: Ավելին, 2001 թ. մայիսին

[292] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., «Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև...», Եր., 2003, էջ 41:

Թուրքիայում ստեղծվում է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի դեմ պայքարը ղեկավարող մարմին՝ «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդ», որի նախագահությունը 2006 թվականից ի պաշտոնե ստանձնեց այն ժամանակ Թուրքիայի արտաքին գործերի նախարար և փոխվարչապետ Աբդուլլա Գյուլը[293]:

Դատելով վերը նշված փաստերից՝ դժվար չէ եզրակացնել, որ անկախ այն հանգամանքից, թե թուրքական հասարակության մեջ ինչ տրամադրվածություններ կային Հայոց ցեղասպանության ճանաչման, սեփական պատմության հետ առերեսվելու հարցում, մեկ բան ակնհայտ է՝ «թուրքական իշխանությունները հաջորդում էին միմյանց, սակայն անփոփոխ էր մնում վերջիններիս վերաբերմունքը Հայոց ցեղասպանության հարցում»[294]: Ավելին, այն շարունակում էր մնալ անզիջում, իսկ առանձին դեպքերում՝ նաև թշնամական:

Ասվածի վառ ապացույցներից մեկն էլ այն է, որ արդեն 2002 թ. փետրվարի 2-ին արտգործնախարարներ Վ. Օսկանյանի և Ի. Ջեմի Նյու Յորքում կայացած հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվում Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի արտգործնախարարների մակարդակով կանոնավոր հանդիպումներ անցկացնել:

Այս հանգամանքը, սակայն, ամենևին էլ չի խանգարում, որ արդեն փետրվարի 7-ին թուրք

---

293 Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ ներկա փուլում. նոր միտում, // «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», (գիտահետազոտական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Եր., 2009, էջ 153-154:

294 Տե՛ս Միրզոյան Է., Հայոց ցեղասպանության թեմայի զարգացման միտումները «Ակօս» շաբաթաթերթի էջերում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007), // «Ցեղասպանագիտական հանդես», թիվ 4 (1), Եր., 2016, էջ 96:

պաշտոնյա Օմեր Իզգինին Բաքու կատարած այցի ընթացքում հանդես գա հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու կոնկրետ նախապայմանով՝ նշելով թե մինչև Հայաստանը «...հետ չքաշվի Ադրբեջանից զավթած հողերից, մինչև որ փախստականները չվերադառնան իրենց հայրենիք, թողոչ ոք հայ-թուրքական հարաբերություններում մեղմացում չսպասի»[295]:

Ելնելով վերը նշվածից՝ լիովին հիմնավորված պետք է համարել 2002 թ. մայիսի 3-ին Արգենտինայի միջազգային հարաբերությունների խորհրդում ՀՀ նախագահի հնչեցրած քննադատությունը Թուրքիայի հասցեին՝ կապված վերջինիս ՀՀ հետ հարաբերություններում «անզիջողական ադրբեջանամետ» կեցվածքի հետ: Ելնելով դրանից՝ ՀՀ նախագահը, միանգամայն իրավացիորեն, կոչ էր անում Թուրքիային «Հայաստանի հետ հարաբերություններ սկսել առանց նախապայմանների»[296]:

Չնայած դրան՝ արդեն 2002 թ. մայիսի 14-15-ը Ռեյկյավիկում տեղի ունեցած Օսկանյան-Ջեմ-Գուլիև եռակողմ հանդիպման ժամանակ թուրքական կողմը հնչեցնում է հայտարարություններ, որոնցում կրկին խոսք էր գնում հայկական կողմին ներկայացվող նախապայմանների մասին[297]: Հետաքրքիր է նկատել, որ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը հանդիպումից մի քանի օր անց՝ մայիսի 20-ին կայացած մամլո ասուլիսում, փաստորեն, հերքում է նշված հանդիպման ընթացքում Թուրքիայի կողմից նախապայմանների առաջադրման լուրը՝ միևնույն ժամանակ շեշտելով, որ

---

[295] Տե՛ս «Ազգ», Եր., 2002, թ. 67, 11 ապրիլի:

[296] Տե՛ս Ռոբերտ Քոչարյանի ելույթը Արգենտինայի միջազգային հարաբերությունների խորհրդում, 03. 05. 2002, http://2rd.am/hy/03-05-2002-R-Kocharyani-eluyty-Argentinayi-mijazgayin-haraberutyunneri-khorhrdum.

[297] Տե՛ս «Ազգ», Եր., 2002, թ. 92, 21 մայիսի:

հանդիպումն անցել է «կառուցողական» մթնոլորտում, և որտեղ «...շատ բաց տեքստով քննարկվել են երեք երկրներին հետաքրքրող խնդիրներ»[298]:

ՀՀ արտգործնախարար Վ.Օսկանյանը, ամփոփելով քննարկվող ժամանակահատվածում նման բոլոր հանդիպումները, այն կարծիքն է հայտնում, որ Թուրքիան ամենևին էլ ցանկություն չուներ «Հայաստանի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել կամ բացել սահմանը», քանզի «...Թուրքիան այդ ամենը» կապում էր «...միայն ու միայն Ղարաբաղի հարցի հետ»[299]:

Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում առաջին պլան են մղվում հայ-թուրքական շփումները հասարակական կառույցների մակարդակով: Դրանցից մեկն էլ 2001 թ. հուլիսի 9-ին ստեղծված Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովն էր[300] (այսուհետև՝ ԹՀՀՀ): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հանձնաժողովի գործունեությունը բավականաչափ ուսումնասիրված է[301], նպատակահարմար ենք գտել մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում անդրադառնալ այս հանձնաժողովի գործունեության նկատմամբ շահագրգիռ կողմերի դիրքորոշմանը՝ ցույց տալով դրանցում ընդունել և մերժել կողմերը:

---

[298] Տե՛ս նույն տեղում:

[299] Օսկանյան Վ., Անտեսված դասեր, 02. 04. 2012, http://www.mediamax.am/am/column/12231/

[300] Կազմակերպության պաշտոնական համացանցային կայքի բացման մասին հայտարարվել է 2004 թ. հունվարի 12-14-ին ԹՀՀՀ-ի Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ, որը, ցավոք, փակվել է վերջերս: Տե՛ս http://www.tarc.info

[301] Տե՛ս օրինակ Անանյան Ա., «Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին)», Եր., 2003; Philips D., Unsilencing the Past: Track-Two Diplomacy and Turkish-Armenian Reconciliation, New York and Oxford: Berghahn books, 2005; Görgülü A., Turkey-Armenia relations: A Vicious Circle, TESAV Publications, Foreign Policy Analysis Series-8, Istanbul, November, 2008.

Հանձնաժողովի ստեղծման գործում զգալի ավանդ ունի ԱՄՆ-ն, որի ղեկավարությունը, պատասխանատվություն ստանձնելով երկու երկրների հաշտեցման գործում, նպատակ էր հետապնդում դրանով իսկ միջազգային ասպարեզում զգալիորեն բարձրացնել իր հեղինակությունը: Բացի այդ, մեր կարծիքով, ԱՄՆ-ն այդ կերպ փորձում էր ՀՀ-ն այդ հարցում դուրս բերել Ռուսաստանի ազդեցության գոտուց՝ ներքաշելով իր ազդեցության ոլորտը[302]:

Մյուս կարևոր եզրակացությունը, որը բխում է հանձնաժողովի ստեղծման բուն նպատակի և դրա գործունեության արդյունքների վերլուծությունից, այն է, որ Թուրքիան ևս շահագրգռված էր, գուցե բոլորից առավել, այդ հանձնաժողովի ստեղծմամբ, հենց թեկուզ այն պատճառով, որ տպավորություն ստեղծեր, թե խնդրահարույց թեմայով ընթանում են հայ-թուրքական քննարկումներ, ուստի կողմերի հաշտեցման գործընթացը չվիժեցնելու նպատակով գոնե ժամանակավորապես միջազգային ասպարեզում դադար կտրվեր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացին, մի հանգամանք, որին ուշադրություն էր դարձրել ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը՝ գրելով, որ «հանձնաժողովի գոյությունը լծակ կարող է դառնալ Թուրքիայի ձեռքում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու համար»[303]:

---

[302] Տե՛ս Անանյան Ա., Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», թիվ 9, Եր., 2004, էջ 17:

[303] Տե՛ս նույնի՝ «Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ» (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին)», էջ 51:

Ի դեպ, նման պնդման համար ունենք բավարար ապացույց: Այսպես, թեև ԹՀՀՀ-ի դիմումի համաձայն Անցումային շրջանի արդարադատության միջազգային կենտրոնի իրավական գնահատականը (2003 թ. փետրվարի 10) հանգել էր եզրակացության, որ եղելությունները համահունչ են ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի բոլոր կետերին[304], այնուամենայնիվ 2001 թվականի կեսից մինչև 2003 թվականի աշուն ԹՀՀՀ-ի աշխատանքների ավարտին սպասելու պատճառաբանությամբ մի շարք երկրների խորհրդարաններ (Գերմանիան, Ավստրիան, Կանադան) իրենց օրակարգերից հանում են Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերը, իսկ 2001 թ. հոկտեմբերի 25-ին Եվրախորհրդարանը հրաժարվում է Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի կողմից ճանաչելը դիտել որպես նախապայման այդ երկրի ԵՄ-ը անդամակցելու հարցում՝ պատճառաբանելով, որ դրանով կարող է խափանվել ԹՀՀՀ-ի գործունեությունը[305]: Ի դեպ, այս հանգամանքը թուրքական կողմը համարեց «պաշտոնական Անկարայի լուրջ ձեռքբերում»[306]: Իրականում դա այնքան էլ այդպես չէր, քանի որ ԵՄ-ի դեպքում պատմությունը ցույց տվեց, որ վերջինիս քաղաքականությունը «Թուրքիայի նկատմամբ չէր փոխվում, փոխվում էին միայն նախապայմանները»: Ավելին, «եվրոպական երկրներն էլ թուրքերին նախապայմաններ առաջադրելիս ելնում են ոչ թե այս կամ այն հարցի լուծման անհրաժեշտությունից, այլ Թուրքիային Եվրոպայից չօտարելու պայմանով ԵՄ-ին նրա անդամակցության խոչընդոտելու առաջադրանքից»:

---

[304] The Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events Which Occurred During the Early Twentieth Century, p. 17, https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Turkey-Armenian-Reconciliation-2002-English.pdf

[305] Տե՛ս Նոյյան Տապան, 25.10.2001, http://www.nt.am/am/news/105503/

[306] Տե՛ս «Ազգ», Եր., 2001, թ. 196, 27 հոկտեմբերի:

Ահա հենց դա էր «պատճառը, որ նախապայմանները տարբեր պատրվակներով հերթով փոխվում էին, իսկ խոչընդոտները մնում էին անփոփոխ»[307]:

Այստեղ պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ հանձնաժողովի ստեղծմամբ Թուրքիան հույս ուներ հասնել նրան, որ Հայոց ցեղասպանության հարցը քաղաքական հարթությունից տեղափոխվեր գիտական և հասարակական քննարկումների ոլորտ և ներկայացվեր որպես վիճելի հարց: Ինքնին հասկանալի է, որ նման պարագայում հանձնաժողովի հայ անդամների տեսակետները ցեղասպանության փաստի վերաբերյալ տրամագծորեն հակադիր էին: Եվ միանգամայն իրավացի էր հանձնաժողովի թուրք անդամ Գյունդուզ Աքթանը, երբ հայտարարում էր, որ «հանձնաժողովի թուրք անդամներից ոչ մեկը 1915-1916 թթ. իրադարձությունները ցեղասպանություն չի համարում: ... Նմանապես մյուս կողմն ամբողջությամբ հավատացած է, որ իրադարձությունները իսկապես ցեղասպանություն էին»[308]:

Ինչ վերաբերում է ՀՀ ղեկավարության պաշտոնական դիրքորոշմանը ԹՀՀՀ-ի հարցում, ապա այն միանշանակ չէր ու երբեմն տպավորություն էր ստեղծվում, թե ՀՀ ղեկավարությունն անգամ տեղյակ չէր այս հանձնաժողովի ստեղծման փաստից:

Ի վերջո, 2001 թ. հուլիսի 24-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում կայացած հանդիպման ընթացքում ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանը, հասարակական կարծիքի ճնշման տակ, ստիպված էր ներկայացնել ՀՀ պաշտոնական դիրքորոշումն այդ հարցում: Ըստ Վ. Օսկանյանի՝ ինչպես «իր կողմից ղեկավարած գերատեսչությունը», այնպես էլ «ՀՀ կառավարությունը» և «առհասարակ մեր

---

[307] Տե՛ս նույն տեղում:

[308] «Turkish Daily News», Istanbul, 2001, 11 July.

պետությունը, որևէ մասնակցություն չունեն հանձնաժողովի կազմակերպմանը»: Դրա հետ միասին Օսկանյանը այն կարծիքն է հայտնում, որ ամեն դեպքում «երկխոսության խնդիրը մեզ համար ողջունելի է»: Հանդիպման ընթացքում արտգործնախարարը հաստատում է, որ իրենք, այնուամենայնիվ, «տեղյակ են եղել հանձնաժողովի ստեղծման աշխատանքների մասին», և եթե անգամ ՀՀ ղեկավարությունը փորձեր խոչընդոտել դրան, «վերջինս միևնույն է կայանալու էր»[309]:

Մեր կարծիքով, քննարկվող ժամանակաշրջանում հանձնաժողովի նկատմամբ վերաբերմունքի հարցում ՀՀ ղեկավարությունն անհրաժեշտ վերլուծություններ չէր կատարել՝ պատշաճ մակարդակով պարզելու, թե հանձնաժողովի ստեղծումն ու հետագա գործունեությունն ինչ դրական ու բացասական հետևանքներ կարող էր ունենալ ինչպես Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների զարգացման, այնպես էլ Սփյուռքում ՀՀ հեղինակության հարցում:

Ինչ վերաբերում է հայ ավանդական կուսակցությունների և, մասնավորապես, ՀՅԴ դիրքորոշմանը հանձնաժողովի ստեղծման ու գործունեության հարցում, ապա այն միանշանակ ժխտողական էր: Դրա ամենավառ ապացույցը թերևս այն էր, որ ՀՅԴ բյուրոն հանդես է եկել հայտարարությամբ, որով միանշանակ մերժում էր ԹՀՀՀ-ի ստեղծումն ու առաքելությունը, ընդ որում՝ «...թե՛ ըստ էության, թե՛ ըստ ձևի»: Բացի այդ, ՀՅԴ-ի համար «սկզբունքորեն անընդունելի է հանձնաժողովի օրակարգը», քանզի ՀՅԴ-ն դրանում տեսնում է «...Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հրամայականի

---

309 Տե՛ս «Ազգ», Եր., 2001, թ. 138, 25 հուլիսի:

շրջանցում կամ էլ նրա կարևորության թերագնահատում»[310]:

Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ ՀՅԴ-ն ամենևին էլ չէր սխալվում ԹՀՀՀ-ի ստեղծման ու գործունեության հետ կապված իր գնահատականներում, քանզի արդեն «2003 թվականի աշնանը հայկական կողմը վերջապես հասկացավ, որ հայտնվել է ծուղակի մեջ, ուստի միակողմանիորեն դուրս եկավ հանձնաժողովից»[311]:

Միայն դրանից հետո կրկին նկատվում է Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ համաշխարհային հանրության հետաքրքրության աճ, և վերսկսվում են դրա ճանաչման և դատապարտման գործընթացները:

Այսպես, 2003 թ. դեկտեմբերի 16-ին Շվեյցարիայի Ազգային խորհուրդը ճանաչում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը և խնդրում Դաշնային խորհրդին՝ Շվեյցարիայի կառավարությանը, դիվանագիտական խողովակներով տեղյակ պահել մյուս պետություններին[312]:

2004 թ. նոյեմբերի 30-ին Սլովակիայի[313], իսկ դեկտեմբերի 21-ին Նիդեռլանդների խորհրդարանները ևս ճանաչում են Հայոց ցեղասպանությունը[314]:

2002 թվականի աշնանը Թուրքիայում անցկացվում են արտահերթ խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում 2002 թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայում իշխանության է գալիս «Արդարություն և զարգացում» (AKP) կուսակցությունը: Թուրքիայում ձևավորված

---

310 Տե՛ս «Հայոց Աշխարհ», Եր., 2001, թ. 143, 27 հուլիսի:
311 Տե՛ս Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենազրկում. ճանաչումից՝ հատուցում, (հոդվածներ և հարցազրույցներ), Եր., 2015, էջ 81:
312 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 65, ֆ.հ. 162, 163:
313 Տե՛ս նույն տեղում, թպ. 87, ֆ.հ. 199:
314 Տե՛ս Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 2, Москва, 2005, стр. 61-62.

միակուսակցական կառավարության նախընտրական ծրագրային խոստումներից էին երկիրը խոր տնտեսական ճգնաժամից դուրս բերելը և ԵՄ-ին անդամակցելը:

AKP-ն, լինելով նոր քաղաքական ուժ Թուրքիայում, հայտնի թուրք հետազոտող Դիբա Նիգյար Գյոքսելի դիտարկմամբ, «...քիչ փորձ ուներ արտաքին քաղաքականության ասպարեզում, և դժվարությամբ էին ձևավորվում հարաբերությունները պետական կառույցների, այդ թվում՝ ԱԳՆ-ի և ռազմական գերատեսչության հետ, որոնք բավական հոռետեսորեն էին տրամադրված նոր կուսակցության հանդեպ»[315]:

AKP-ն իշխանության գալուց հետո Թուրքիայում սկսվում է քննարկվել նոր արտաքին քաղաքականություն մշակելու անհրաժեշտության հարցը, որը նպատակաուղղված էր տարածաշրջանային առաջատարի կամ տերության կարգավիճակի հասնելուն[316]:

Թուրքիայի միակուսակցական կառավարության արտաքին քաղաքական նոր հայեցակարգի մշակման գործում զգալի ավանդ ունի ժամանակի Թուրքիայի արտգործնախարար, իսկ հետո՝ նաև վարչապետ Ահմեդ Դավութօղլուն: Վերջինս, նախքան իրենց իշխանության գալը, արտաքին քաղաքականության մեջ Թուրքիային ներկայացնում էր որպես «ֆիզիկապես ուժեղ, սակայն միջակ ինտելեկտուալ կարողություններով օժտված, ինքնավստահության պակասով տառապող միջազգային խաղացողի»[317]:

---

[315] Гоксел Д., Кавказская политика Турции, // «Кавказское соседство: Турция и Южный Кавказ», Редактор Александр Искандарян, Ер., Институт Кавказа, 2008, стр. 15.

[316] Տե՛ս Murinson A., Turkish Foreign Policy in the Twenty-First Century, The Begin-Sadat Center for Strategic Studies Bar-Ilan University, // «Mideast Security and Policy Studies», No. 97, September 2012, p. 14; տե՛ս նաև՝ Çelikpala M., Turkey as a Regional Power and the Caucasus, // « Insight Turkey», Vol. 9, No. 2, 2007, p. 26.

[317] Տե՛ս Seker N., A Shift in Turkish Foreign Policy: Turkey's Strategic Depth, Qantara, 07. 08. 09, http://en.qantara.de/content/a-shift-in-turkish-foreign-policy-turkeys-strategic-depth

Արդեն իշխանության գալուց հետո Ա. Դավութօղլուն «Turkey Insight» ամսագրում տպագրված հոդվածում հանդես էր գալիս Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ այնպիսի նոր նախաձեռնությամբ, ինչպիսին էր «հարևանների հետ «զրո խնդիր»»՝ հընթացս որդեգրելով նեոօսմանիզմի գաղափարներ և «աշխարհի ուժային բևեռների հետ հարաբերություններում փոխլրացման քաղաքականության կիրառումը»[318]: Դավութօղլուն շեշտելով այն հանգամանքը, որ տարածաշրջանում Թուրքիայի տնտեսական և քաղաքական վերելքը հնարավոր է ապահովել բացառապես կայունության ու խաղաղության պայմաններում՝ փորձում էր իր անմիջական հարևանների հետ հարաբերությունների կառուցումը դնել բարիդրացիական հիմքերի վրա՝ դիտելով դա որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության առանցքային բաղադրիչ: Ավելին, Ա. Դավութօղլուն քննադատում էր Թուրքիայի նախկին իշխանություններին՝ նշելով, որ «վերջին տասնամյակում իզուր հսկայական ջանքեր և ժամանակ են վատնել հարևանների հետ հակամարտությունների պատճառով»: Ուստի Թուրքիան, ըստ Դավութօղլուի, տարածաշրջանային առաջնորդ դառնալու համար «պետք է ջերմ հարաբերություններ հաստատի իր հարևանների հետ»[319]:

Հարկ է նկատել, որ այս նախաձեռնությունն իր էությամբ հիշեցնում էր Թուրքիայի նախկին նախագահ Ս. Դեմիրելի նախաձեռնությունը, ով դեռևս 2000 թ. հունվարի 15-ին Վրաստան կատարած այցի ժամանակ հանդես էր եկել «Կայունության պակտ

---

318 Davutoğlu A., Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, // «Insight Turkey», Vol. 10, No. 1, 2008, p. 79-80, նույնի՝ Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararasi Konumu, Istanbul: Küre Yayinlari, 2001, p. 118.

319 Տե՛ս Grigoriadis I., The Davutoğlu Doctrine and Turkish Foreign Policy, // «ELIAMER», Working Paper, No. 8. 04. 2010, p. 5.

Կովկասի համար» նախաձեռնությամբ, որը պետք է առաջնորդվեր ԵԱՀԿ սկզբունքներով[320]: Ավելին, Դեմիրելի կարծիքով «տարածաշրջանի կայունության ուղղված պակտի ստեղծման ծրագիրը ԵԱՀԿ-ի անդամ բոլոր երկրների խնդիրն է»: Ուստի, ըստ Դեմիրելի, անհրաժեշտ էր «ճնշում գործադրել քաղաքակիրթ երկրների վրա, որպեսզի վերջիններս ավելի ուշադրություն դարձնեն Կովկասյան տարածաշրջանին»[321]:

Դեմիրելի նշված առաջարկն ոգևորությամբ է ընդունվում Վրաստանի և Ադրբեջանի նախագահների կողմից: Իսկ ՀՀ նախագահը, ում դեռևս հունվարի 21-ին նամակ էր հղել Ս.Դեմիրելը, նշելով, որ «...Կովկասում առկա որոշ հիմնահարցերի, մասնավորապես՝ ԼՂ հիմնահարցի կարգավորված չլինելը, խոչընդոտում են ոչ միայն տարածաշրջանում կայունության հաստատմանը, այլև ի չիք են դարձնում համագործակցելու հնարավորությունները»[322], փետրվարի 29-ի իր պատասխան նամակում «դրական համարելով տարածաշրջանում անվտանգության կարգավորման որոշակի ձևեր ստեղծելու գաղափարը և ընդգծելով խաղաղության և կայունության համար առկա տարածաշրջանային գործընթացների կառուցողական չլինելը, առաջարկում է 3+3+2 կարգավորման բանաձևը, որը կներառեր կովկասյան երեք երկրների ներկայացուցիչներին, երեք հարևան երկրներին, ինչպես նաև Եվրամիությանը և ԱՄՆ-ին»[323]:

Թուրքիայի նախագահն էլ իր հերթին 2000թ. մայիսի 4-ին, բարձր գնահատելով Ռ. Քոչարյանի

---

320 Տե՛ս Celac S., Emerson M., Tocci N., A Stability Pact for the Caucasus: A Consultative Document of the CEPS Task Force on the Caucasus, January 2000, Brussels, Centre for European Policy Studies (CEPS) Paperbacks, 2011, p. 1; տե՛ս նաև՝ Çelikpala M., From a failed state to a weak one ? Georgia and Turkish-Georgian relations, // «Turkish yearbook of international relations», Vol. 36, 2005, p. 190.

321 Տե՛ս Mkrtchyan T. and Petrosyan V., Integration of Transcaucasia: Continued failure and hope, // «Turkish Policy Quarterly», Volume 8, Number 1, (Spring 2009), p. 62.

322 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 63, էջ 9-10:

323 Նույն տեղում, գործ 64, էջ 6-7:

աջակցությունը տարածաշրջանում խաղաղություն և կայունություն հաստատելու և ամրապնդելու գաղափարին, վստահություն է հայտնում, որ Կովկասում խաղաղության և կայունության նախադրյալը գոյություն ունեցող հակամարտությունների և մասնավորապես ԼՂ հակամարտության կարգավորումն է[324]:

Այն, որ ԼՂ հակամարտության կարգավորված չլինելն իրոք չէր նպաստում կայունության հաստատմանը, անվիճելի է, սակայն խնդիրն այն է, թե կարգավորում ասելով ինչ նկատի ունեին Թուրքիան և Ադրբեջանը, քանզի նրանց պատկերացմամբ կարգավորումը ենթադրում էր անկախություն հռչակած ԼՂ հանրապետության վերադարձը Ադրբեջանի կազմ: Ինքնին հասկանալի է, որ այս գնով խոսել Կովկասում կայունություն հաստատելու մասին ՀՀ-ն ուղղակի չէր կարող:

Ուստի, թեև Էրդողանն էլ իր հերթին պաշտպանում էր «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքը և հանդես էր գալիս հարավկովկասյան անվտանգության համակարգ ձևավորելու նախաձեռնությամբ, այնուամենայնիվ հարկ է ընդգծել, որ Թուրքիան բոլոր ժամանակներում նախապատվությունը տալիս էր գերազանցապես Ադրբեջանի և քննարկվող ժամանակաշրջանում Վրաստանի հետ հարաբերությունների զարգացմանը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Էրդողանը ՀՀ հետ հարաբերությունների կարգավորումը շարունակում էր կապել ղարաբաղյան խնդրի կարգավորման հետ:

Կոնկրետ Հայաստանի դեպքում Թուրքիայի մոտեցումներին անդրադարձել է AKP փոխնախագահ Աբդուլլահ Թիվշիրենը՝ նշելով, որ «Հայաստանն ու Թուրքիան հարևան երկրներ են, և մենք ունենք

324 Նույն տեղում, էջ 16-17, 20-21:

պատմական ու մշակութային կապեր հայերի հետ…»: Իսկ դա, ըստ հեղինակի, նշանակում է, որ Թուրքիայի «…արտաքին քաղաքականությունը չպետք է հենված լինի թշնամանքի վրա: Բնականոն հարաբերությունները պետք է շարունակվեն, սակայն ամեն մի պետություն պետք է հետևի այնպիսի քաղաքականության, որը ծառայում է իր ազգային նպատակներին»: Այնուհետև Աբդուլլահ Թիվշիրենը այն կարծիքն էր հայտնում, որ իրենք փորձում են պահպանել «լավ հարաբերություններ Հայաստանի և այլ երկրների հետ», սակայն դրա հետ միասին «Թուրքիան չի ցանկանում վտանգի տակ դնել հարաբերությունները Ադրբեջանի և միջինասիական երկրների հետ»[325]:

Անդրադառնալով նույն խնդրին՝ AKP-ի հայտնի գործիչ, հետագայում Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը մասնավորապես հայտարարում էր, որ «AKP-ն պետք է փորձի Հայաստանի հետ հարաբերությունների հիմքում դնել **ոչ թե քաղաքական, այլ տնտեսական խնդիրները, տնտեսական շահը**»[326] (ընդգծումը մերն է -Մ.Ն.):

Այստեղ ուզում ենք շեշտել այն հանգամանքը, որ ժամանակի ՀՀ ղեկավարությունը ինչպես և նախորդը, քննարկվող ժամանակաշրջանում ևս պատշաճ ուշադրություն չէր դարձնում թուրք իշխանավորների այն պնդումներին, ըստ որոնց՝ Թուրքիայի համար Հայաստանի հետ հարաբերություններում առաջնահերթ էին դիտարկվում ոչ թե քաղաքական, այլ հենց տնտեսական գործոնները: Ուստի մեկ անգամ ևս ուզում ենք շեշտել այն հանգամանքը, որ հայ-

---

325 Տե՛ս «Ազգ», Եր., 2002, թ. 206, 12 նոյեմբերի:

326 Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ (զեկուցում), Խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., ՀՀ Ազգային ժողով, Եր., 2011, էջ 64:

թուրքական հարաբերություններում զգալի առաջընթաց կարելի էր ակնկալել միայն այն դեպքում, երբ Հայաստանը տարածաշրջանում դառնար լուրջ տնտեսական «խաղացող»: Մի փոքր առաջ անցնելով՝ նշենք նաև, որ հետագա իրադարձությունները ևս խոսում են մեր այս կարծիքի օգտին:

Թուրքիայի նոր ղեկավարության նշված հայտարարությունների հիմքում պետք է տեսնել նաև այլ լուրջ ենթատեքստ: Այսպես, քննարկվող ժամանակաշրջանում տեղի էր ունենալու ԵՄ Կոպենհագենյան գագաթնաժողովը, որտեղ քննարկվելու էր նաև ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցը: Ուստի չի կարելի բացառել, որ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի նման չափավոր դիրքորոշումը պայմանավորված էր նաև դրանով, քանզի այդ դեպքում Թուրքիան ԵՄ-ի աչքում կերևար որպես ՀՀ նկատմամբ կառուցողական դիրքորոշում ունեցող պետություն:

Ասվածն առավել համոզիչ դարձնելու համար բերենք մեկ այլ փաստ: 2002 թ. դեկտեմբերին՝ Եվրահանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիի՝ Անկարա կատարած պաշտոնական այցին առնչվող մամլո ասուլիսի ժամանակ, Թուրքիայի վարչապետ Էրդողանը, փորձելով համարժեք արձագանքել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացին, հայտարարում է հետևյալը. «Նախ և առաջ մենք պետք է պատասխանենք այն հարցին, թե եղել է արդյոք ցեղասպանություն, թե ոչ: Այս խնդիրը (նկատի ունի Հայոց ցեղասպանության ճանաչումը -Մ.Ն.) հնարավոր չէր լուծել առանց հարցի պատասխանը գտնելու»[327]:

[327] Տե´ս Սաֆարյան Դ., Թուրքիայի հասարակական-քաղաքական կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմնախնդրի մասին (2001-2007 թթ.), // «21-րդ դար», թիվ 1 (59), Եր., 2015, էջ 123:

Էրդողանի նշված հայտարարությունն առաջին հայացքից կարող էր տպավորություն ստեղծել, թե վերջինս կարծես լիովին չի հերքում Հայոց ցեղասպանության փաստը: Իրականում դա այդպես չէր, և մեկ անգամ ևս ցանկանում ենք նշել, որ նման հայտարարությամբ Էրդողանը նպատակ էր հետապնդում նախ՝ հնարավորինս կասեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և երկրորդ՝ ինչպես արդեն նշել ենք վերևում, Թուրքիան ԵՄ-ի աչքում ցանկանում էր հնարավորինս կառուցողական երևալ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում զգալի աջակցություն էր ցուցաբերում նաև Պոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը, ով մեկնում է Եվրոպա և իր ուժերի ներածին չափով փորձում աջակցել Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու հարցերին: Փարիզում Հայոց պատրիարքը հանդիպումներ է ունենում Ֆրանսիայի Ազգային ժողովի ֆրանս-թուրքական բարեկամության խմբի նախագահ, նախկին արտգործնախարար Հերվե դը Շարետինի, ապա Ազգային ժողովի ԵՄ-ի խմբի նախագահի հետ: Բացի այդ, Մութաֆյանը զրույցներ է ունենում նաև «Ֆիգարո», «Կրուա» թերթերի խմբագիրների և «Ֆրանսպրես» գործակալության ներկայացուցիչների հետ: Այս ամենը, համաձայնեցված լինելով թուրքական դեսպանության հետ, նպատակ էր հետապնդում «լոբբիստական բուռն գործունեություն» ծավալել «ի նպաստ Թուրքիայի»[328]:

Ավելին, կոպենհագենյան գագաթնաժողովում Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու հարցում նոր զարգացում չարձանագրվելուց հետո Պոլսի Հայոց պատրիարքը «Մարմարա» թերթի հոկտեմբերի 17-ի

[328] Տե՛ս «Ազգ», Եր., 2002, թ. 220, 30 նոյեմբերի:

համարում հանդես է գալիս հատուկ հաղորդագրությամբ, որում, փաստորեն, քննադատում էր ԵՄ-ին անդամակցելու հարցում Թուրքիային նախապայմաններ առաջադրելը՝ կապված Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունների նկատմամբ գործադրվող ճնշումների հետ: Ըստ Մութաֆյանի՝ «թուրքահայությունը պախարակում է նաև այն շրջանակներին, **որոնք կանխամտածված և անհիմն տվյալներով պնդում են, որ մեր համայնքը իբր ենթարկվում է ճնշման, հոռի վերաբերմունքի, ծուլման քաղաքականության** (ընդգծումը մերն է- Մ.Ն.), նույնիսկ բռնության, և իրենց պնդումներով ուզում են մեր երկիրը նեղ կացության մատնել միջազգային հանրության կարծիքի առջև»[329]:

Անշուշտ, Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին որոշ դրական նշանակություն կարող էր ունենալ Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ նաև հայերի համար: Ի դեպ, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության օգտին մի փոքր ավելի ուշ կողմ է արտահայտվել նաև ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը:Ինչ վերաբերում է Պոլսի Հայոց պատրիարքի վերը նշված արտահայտություններին,ապա դրանք տարակուսանք են հարուցում և անհարիր են Հայոց պատրիարքին:

Թուրքական նոր իշխանությունների Հայաստանի նկատմամբ որդեգրած մոտեցումների դինամիկան առավել ճիշտ ըմբռնելու համար, մեր կարծիքով, խիստ կարևոր է նաև այն փաստը, որ կոպենհագենյան գագաթնաժողովում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում նոր զարգացումներ չարձանագրվելուց հետո՝ 2002 թ. դեկտեմբերի 27-ին, Թուրքիայի արտգործնախարար Յաշար Յաքըշը հանդես է գալիս հայտարարությամբ, թե «Հայաստանի

---
329 Տե՛ս նույն տեղում, 2003, թ. 2, 9 հունվարի:

հետ հարաբերություններ հաստատել իս մենք հաշվի կառնենք Ադրբեջանի մտահոգությունը», սակայն եթե Թուրքիայի «...տնտեսական շահերը պահանջեն, Հայաստանի հետ հարաբերություններ» կստեղծենք[330]:

Ինչպես հստակ երևում է հայտարարության տեքստից, թուրքական իշխանությունները կրկին շեշտում էին այն հանգամանքը, որ եթե Թուրքիայի տնտեսական շահը պահանջի, ապա իրենք պատրաստ են Հայաստանի հետ հարաբերություններ հաստատել՝ անկախ Ադրբեջանի հնարավոր դժգոհություններից: Ասվածի օգտին է խոսում նաև 2003 թ. հունվարի 7-ին Ռեջեփ Թայիփ Էրդողանի Ադրբեջան կատարած երկօրյա այցի շրջանակներում վերջինիս այն հայտարարությունը, որ «թուրքերն ու ադրբեջանցիները եղբայրներ են, բայց ռազմավարական շահերը ամենինչից վեր են»[331]:

Թուրք բարձրաստիճան պաշտոնյաների նման հայտարարություններն Ադրբեջանում տարակարծությունների տեղիք են տալիս և ամենևին էլ պատահական չէր, որ այցից ընդամենը մեկ օր անց ադրբեջանական «525» թերթին տրված հարցազրույցում Թուրքիայի արտգործնախարար Յաշար Յաքըշը փորձում էր հավատացնել Բաքվին, որ «Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ չի փոխվի», և որ Թուրքիան, ցանկանալով բարեկամական հարաբերություններ հաստատել իր հարևանների հետ, այնուամենայնիվ «...չի պատրաստվում ընդլայնել իր հարաբերությունները Հայաստանի հետ»: Ավելին, ըստ Յաքըշի՝ «Թուրքիան Հայաստանի

330 Տե՛ս Հայաստան-Թուրքիա. Բաց խոսակցություն, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոն, էջ 114:

331 Տե՛ս նույն տեղում, էջ 115:

հետ իր սահմանը չի բացի առանց Ադրբեջանի համաձայնության»[332]:

Կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե պնդենք,որ Թուրքիայի «զրո խնդիր հարևանների հետ» արտաքին քաղաքական կարգախոսը կոնկրետ Հայաստանի դեպքում,մեղմ ասած,այնքան էլ անկեղծ չէր, քանզի Թուրքիան, իրոք կողմնակից լինելով տարածաշրջանում կայունության ու խաղաղության հաստատմանը, այնուամենայնիվ, Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը շարունակում էր կապել Արցախյան խնդրի կարգավորման իր սեփական տեսլականի հետ:

Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ անդրադառնալով Թուրքիայի «զրո խնդիր հարևանների հետ» արտաքին քաղաքական կարգախոսին՝ ՀՀ արտգործնախարար Է.Նալբանդյանը նկատում էր, որ թուրքական նոր իշխանությունների այն հայտարարությունը, թե «իրենք ոչ այնքան լավ հարաբերություններ ունեն երեք հարևան երկրների հետ», այնքան էլ իրատեսական չէ, քանզի ըստ Նալբանդյանի՝ «Թուրքիան իրականում ոչ թե երեք,այլ առնվազն վեցից երկրների հետ ունի ոչ այնքան լավ հարաբերություններ», ընդ որում՝ այդ «վեցից երկուսի հետ ընդհանրապես չունեն» հարաբերություններ[333]:

Հետևաբար Թուրքիայի այն պնդումները,թե իբր ինքը իր նոր քաղաքականության շրջանակներում շարունակելու էր մնալ ԵՄ-ին հավատարիմ պետություն և շարունակելու է այդ ուղղությամբ իր ստանձնած պարտականությունների

[332] Տե՛ս նույն տեղում:

[333] ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի խոսքը և պատասխանները հարցերին Ուրուգվայի արտգործնախարար Լուիս Ալմագրոյի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, 04. 05. 2012, https://www.mfa.am/hy/press-conference/2012/05/04/nalbandian-almagro/2930

իրականացումը, անկեղծ չէին և, բնականաբար, համոզիչ չէին ԵՄ անդամ երկրների համար:

Նշվածի օգտին է խոսում հենց թեկուզ այն փաստը, որ դեռևս 2001 թ. փետրվարի 1-ին Բունդեսթագի խմբակցության փոխնախագահ, անվտանգության հարցերով կուսակցության խոսնակ Գերնոտ Էրլերը, անդրադառնալով Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու հարցին, առանձնացնում է մի քանի խնդրահարույց կետեր, որոնց թվում ցանկանում ենք առանձնացնել «Վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ» խորագրով կետը, որտեղ մասնավորապես նշվում էր, որ «... միայն թուրքական պատմաբանների կողմից վիճարկվող և սակայն աշխարհով մեկ որպես պատմական իրողություն ճանաչված փաստ է, որ Օսմանյան կայսրությունը 20-րդ դարասկզբին հայերի նկատմամբ գործադրած հալածանքների ընթացքում ժամանակակից չափանիշներով իրեն ցեղասպանություն կատարած լինելու մեղքի տակ է դրել: Դա հաստատվել է նաև Ֆրանսիայի Ազգային ժողովի օրենսդրական նախագծով»: Բացի այդ, հեղինակի կարծիքով, Ֆրանսիայի նկատմամբ Թուրքիայի վերաբերմունքը՝ կապված Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից հայտնի օրենսդրական նախագծի ընդունման հետ, «վայել չէ ոչ միայն ՆԱՏՕ-ի գործընկերոջը, այլև ԵՄ անդամակցության թեկնածուին»: Վերջում հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ «եթե Թուրքիան ուզում է ներկայանալ որպես եվրոպական մշակութային արժեքների կրող, նա գոնե պետք է իր անցյալի քննադատական հաղթահարմանը ընդունակ լինի»[334]:

Ուստի հարկ է ընդգծել, որ չնայած Թուրքիան մեծ ջանքեր էր գործադրում ԵՄ-ին անդամակցելու ուղղությամբ, այդուհանդերձ, քննարկվող ժամանակաշրջանում Ֆրանսիան շարունակում էր իր

[334] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 9, գործ 274, էջ 55:

ջանքերը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում որպես նախապայման առաջ քաշել վերջինիս կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը:

Այսպես, Էրդողանի Փարիզ կատարած այցի ընթացքում Ֆրանսիայի քաղաքական վերնախավն անուղղակիորեն հասկացնում է Էրդողանին, որ ԵՄ-Թուրքիա հարաբերությունների ապագան մեծապես կախված է լինելու Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման հետ: Դրան ի պատասխան, Էրդողանը հայտարարում է, թե «Թուրքիան իր հարևանների նկատմամբ հարաբերություններում հիմնվում է փոխադարձ շահերը հաշվի առնելու քաղաքականության վրա», իսկ ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության հարցին, ապա Էրդողանը կոչ է անում այն «թողնել պատմաբանների հայեցողությանը»: Բացի այդ, Էրդողանը պաշտոնապես հայտարարում է, որ «Թուրքիան պատրաստ է ՀՀ-ի հետ բնականոն հարաբերություններ հաստատել պայմանով, որ հայկական Սփյուռքը դադարեցնի իր ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում»[335]:

Թուրքիայի հանրապետաժողովրդականների նախագահ Դենիզ Բայքալը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում Հայոց ցեղասպանության ճանաչումը Ֆրանսիայի կողմից որպես նախապայման դիտելը համարում է «վերին աստիճանի անհիմն և անհաջող քայլ»: Բացի այդ, ըստ Բայքալի՝ Ֆրանսիայի սոցիալիստները, աջակցելով «այսպես կոչված Հայոց ցեղասպանության պնդումներին», ոչ միայն կեղծում են պատմության իրողությունները, այլև հետապնդելով զուտ

---

[335] Տե՛ս Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004թթ.), էջ 64-65:

քաղաքական նպատակներ՝ «Լուրջ վնաս են հասցնում թուրք-ֆրանսիական հարաբերություններին»[336]:

Քննարկվող ժամանակահատվածում լայն քննարկման առարկա դարձած Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու հարցը, փաստորեն, նոր հնարավորություններ էր ստեղծում հայ-թուրքական երկխոսության հետագա ծավալման համար: Այս առիթով հայտնի թուրք վերլուծաբան Սեդաթ Լաչիները մասնավորապես գրում էր, որ «...ինչպես և Թուրքիան, Հայաստանը նույնպես ձգտում է դառնալ ԵՄ անդամ: Այդ նպատակների նույնությունը կարող է թուլացնել երկու երկրների միջև լարվածությունը»: Ավելին, Սեդաթ Լաչիների պնդմամբ՝ «նույն կազմակերպությանն անդամակցության դեպքում երկուսի համար էլ (նկատի ունի Հայաստանն ու Թուրքիան-Մ.Ն.) անխուսափելի կլինի հասնել փոխըմբռնման և դադարել միմյանց որպես վտանգ ընկալել»[337]: Դրա հետ միասին, թուրք վերլուծաբանի կարծիքով, Հայաստան-Թուրքիա հարաբերություններում «...չնայած բոլոր ջանքերին՝ առաջընթացը խիստ սահմանափակ է»[338]:

Ու թեև հայաստանյան իշխանությունները որոշակի առումով կողմ էին Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցությանը, այնուամենայնիվ, ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը 2004թ. հունիսի 23-ի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ունեցած ելույթի ժամանակ այն համոզմունքն է հայտնում, որ «...ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ճանապարհը վերջինիս կողմից բոլոր հարևանների, մասնավորապես ՀՀ հետ առանց նախապայմանների բարիդրացիական հարաբերությունների

---

336 Տե՛ս «Երկիր», Եր., 2004, թ. 22, 11 հունիսի:
337 Տե՛ս Սաֆարյան Դ., Ոսկանյան Վ., Մելիքյան Գ., Սաֆարյան Ա., նշվ. աշխ., էջ 76-77:
338 Նույն տեղում, էջ 77:

հաստատում է»: Եվ քանի դեռ «այդ հարաբերությունները ծանրաբեռնված են անցյալի ժառանգությամբ՝ եղեռնով», և «անցյալի մութ կողմերը ճանաչելու անհրաժեշտություն կա», ավելին, «հայ-թուրքական հարաբերությունները պայմանավորվում են երրորդ երկրների առաջ քաշած նախապայմաններով» (նկատի ունի Ադրբեջանը-Մ.Ն.), Հայաստան-Թուրքիա հարաբերություններում առկա դժվարությունները շարունակելու են գերակայել[339]:

ՀՀ-ում ոգևորությամբ է ընդունվում այն փաստը, որ 2004 թ. դեկտեմբերի 15-ին Եվրոպական պառլամենտը ընդունում է հերթական բանաձևը, որով Բրյուսելը Թուրքիային կոչ էր անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը և հնարավորինս շուտ բացել Հայաստանի հետ սահմանը: Իսկ արդեն 2005 թ. սեպտեմբերի 28-ի «Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու վերաբերյալ բանաձևի» հինգերորդ կետով ԵՄ-ին անդամակցության համար Թուրքիայի առաջ հերթական անգամ նախապայման է դրվում Հայոց ցեղասպանության ճանաչումը[340]:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստան-Թուրքիա երկկողմ շփումների և համագործակցության փորձեր են արվում նաև միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների, գործարարների մակարդակներով: ՀՀ ղեկավարությունը, ողջունելով հանդերձ նման շփումները, շարունակում էր մնալ այն համոզմանը, որ երկու

339 Տե՛ս Նախագահ Ռ. Քոչարյանի ելույթը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանում (Ստրասբուրգ), 23. 06. 2004, http://2rd.am/hy/23-06-2004-Nakhagah-Robert-Kocharyani-eluyty-Evropayi-Khorhrdi-vehajokhovi-nstashrjanum-Strasburg

340 Տե՛ս Մարուքյան Ա., Եվրամիության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1, Եր., 2016, էջ 12-13:

երկրների միջև առկա կարևորագույն խնդիրները կարելի է լուծել միայն պետական բարձր մակարդակով:

Ամփոփելով այս ենթագլխում բերված փաստերն ու դրանց հիման վրա արված եզրակացությունները՝ կարելի է արձանագրել ,որ

1. ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը Թուրքիայի հետ հարաբերությունների հարցում որդեգրեց նոր մոտեցումներ՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման առաջնահերթության, երկկողմ հարաբերություններում այն որպես նախապայման չդիտարկելու և Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում դրա իրավական հետևանքների հետ հետամուտ չլինելու հետ: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հարցում նման տեսլականը այնքան էլ հստակ չէր, քանզի այդպես էլ պարզ չէր դառնում, թե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որպես առաջնահերթություն դիտարկելը և դրա հետ միասին Թուրքիայի հետ հարաբերություններում այն որպես նախապայման չառաջադրելը և,վերջապես այն պնդումը, թե Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի ունենալու իրավական հետևանքներ, բավականին անորոշ էին դարձնում այն տրամաբանական հարցի պատասխանը, թե այդ դեպքում ի՞նչ նպատակ էր հետապնդում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հետամուտ լինելը:

2. Քննարկվող ժամանակաշրջանում հասարակական կառույցների մակարդակով իրականացված հայ-թուրքական շփումները կողմերի ծայրահեղ հակադիր հայացքների պայմաններում ի սկզբանե դատապարտված էին ձախողման, և ամենևին էլ պատահական չէր,որ նման շփումներն այդպես էլ որևէ շոշափելի արդյունքի չհանգեցրին:

3. ՀՀ ղեկավարությունը, հասարակական կառույցների մակարդակով երկկողմ շփումներին նախապես տեղյակ լինելով, այնուամենայնիվ, չուներ հստակ դիրքորոշում այդ հարցում և պատշաճ վերլուծության չէր ենթարկել դրանց դրական և բացասական հնարավոր հետևանքները ինչպես Հայաստանի ,այնպես էլ Սփյուռքի համար:

4. Թուրքական նոր ղեկավարության կողմից առաջադրված «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունը, չնայած ձեռնարկած կոնկրետ քայլերին, մեծ հաշվով ի զորու չեղավ որոշակի առաջընթաց գրանցել Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերություններում:

## 2.2 Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն ու դրա շուրջ հայ-թուրքական հասարակական-քաղաքական քննարկումները 2005-2008 թթ.

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի հետագա ծավալումը անհանգստություն է առաջացնում Թուրքիայում իշխանության եկած AKP-ի մոտ, որը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարը շարունակում է դիտարկել որպես Թուրքիայի արտաքին քաղաքական առաջնահերթություն: Թուրքական իշխանությունները ստեղծված պայմաններում իրենց հետագա անելիքները հստակեցնելու նպատակով անցկացնում են խորհրդարանական քննարկումներ և խորհրդակցություններ: Այսպես 2005 թ. մարտի 8-ին ժողովրդահանրապետական կուսակցության նախագահ Դենիս Բայքալը նախկին դեսպաններ Շյուքրու Էլեքդաղի և Օնուր Օյմենի ուղեկցությամբ այցելում է վարչապետ Էրդողանին

և ներկայացնում «Ցեղասպանության պնդումների դեմ պայքարի» նախագիծը, որը մշակվել էր նույն դեսպանների գլխավորած աշխատանքային խմբի կողմից: Հանդիպման ավարտին «կողմերը գալիս են համաձայնության Հայոց ցեղասպանության պնդումները հակակշռելու հարցում որդեգրվող դիրքորոշման շուրջ»[341]:

Ավելին, փաստերը վկայում են, որ թուրքական իշխանությունների ջանքերով Թուրքիա է հրավիրվում թուրքական ժխտողականության ամենահայտնի ամերիկացի ջատագով՝ պատմաբան Ջաստին Մկքարտին: Վերջինս 2005 թ. մարտի 24-ին Մեջլիսում հանդես է գալիս «Ճշմարտությունը Հայկական հարցում» թեմայով դասախոսությամբ, որտեղ, մասնավորապես՝ նշում էր, որ «օսմանցիները չափազանց խելացի մարդիկ էին» և «եթե ցանկանային, ապա առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կբնաջնջեին բոլոր հայերին»: Այնուհետև հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ «եթե թուրքերը նույնիսկ ճանաչեն Հայոց ցեղասպանությունը, դրա համար ներողություն խնդրեն և փոխհատուցում վճարեն, միևնույն է, հայերը չեն շեղվելու իրենց նպատակից»՝ այն է «նրանք, միևնույն է, մտածելու են Էրզրումը, Վանը, Բիթլիսը և Տրապիզոնը Հայաստանին հանձնելու անհրաժեշտության մասին»[342]: Վերը նշվածից դժվար չէ կռահել, որ թուրքական կողմը գործադրում էր ամեն ջանք ապացուցելու աշխարհին, որ նախ ցեղասպանություն որպես այդպիսին տեղի չի

[341] Lütem Ö. E., Olaylar ve Yorumlar, Ermeni Araştirmalaryi Üç Aylik Tarih, Politika ve Uluslararasi ilişkiler Dergisi, Ermeni Araştirmalar enstitüsü, Avrasya bir vakfi Avrasya stratejik Araştirmalar merkezi, Ankara, Kiş 2004-Ilkbahar 2005, Sayi 16-17, s. 12.

[342] Տե՛ս Զաքրյան Հ., «Եթե թուրքերը ցեղասպանությունը ճանաչեն, միևնույն է, հայերը չեն հրաժարվի պահանջատիրությունից», // «Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն ու հայատյացության դրսևորումները», հոդվածների ժողովածու, Պրակ Ա, Եր., 2017, էջ 104:

ունեցել և երկրորդ, որ եթե Թուրքիան անգամ ընդունի Հայոց ցեղասպանության փաստը, ապա դրան ըստ թուրքական կողմի հետևելու է հայկական կողմի պատմական տարածքների վերադարձի պահանջը: Կարծում ենք այստեղ տեղին է մեկ անգամ ևս հիշատակել, որ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը ամենաբարձր մակարդակով հայտարարել էր, որ եթե Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը, ապա դա չի կարող իրավական հետևանքներ ունենալ: Ուստի պատմաբան Ջաստին Մկքարտիի «մտավախությունները» հայկական պատմական տարածքների վերադարձի հարցում միանգամայն անհիմն էին:

Ի վերջո AKP-ն որոշում է որպես Թուրքիայի կողմից «բարի կամքի դրսևորման» վերջին փորձ Հայաստանին ներկայացնել Հայոց ցեղասպանության իրողությունը ուսումնասիրող պատմաբանների համատեղ հանձնախումբ ստեղծելու առաջարկ[343]:

Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ արդեն 2005 թ. ապրիլի 13-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը պաշտոնական գրությամբ դիմում է ՀՀ նախագահին՝ առաջարկելով ստեղծել պատմաբանների խորհուրդ՝ 1915 թվականի իրադարձություններն ուսումնասիրելու նպատակով: Խորհուրդն, ըստ Էրդողանի, պետք է ուսումնասիրեր Թուրքիայի, Հայաստանի, ինչպես նաև այլ երկրների արխիվներում պահվող համապատասխան նյութերն ու

[343] Տե՛ս Մանուկյան Տ., Հայոց ցեղասպանության ժխտողականության վերաբերյալ քննարկումները Թուրքիայի խորհրդարանում 2005 թ., // «Ժամանակակից Եվրասիա», Թուրքիա. Արտաքին քաղաքականության հարցեր, Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր V(2), Եր., 2016, էջ 90:

ներկայացներ իր եզրահանգումները միջազգային հանրությանը[344]:

Գրության մեջ Էրդողանը մասնավորապես այն կարծիքն էր հայտնում, որ «...մեր ազգերի համար անցյալի ցավալի հիշողությունները հետքեր են թողել, այսօր շարունակում են խոչընդոտել երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների բարելավմանը», ավելին՝ Էրդողանը շեշտում էր, որ երկու երկրների առաջնորդների «...առաջնային պարտքն է ապագա սերունդներին թողնել խաղաղ և բարեկամական միջավայր, որտեղ կգերակայեն հանդուրժողականությունը և փոխադարձ հարգանքը»: Վերջում Թուրքիայի վարչապետը հույս էր հայտնում, որ իր «առաջարկությունը կարժանանա ՀՀ իշխանությունների դրական արձագանքին»[345]:

Արդեն 2005 թ. ապրիլի 25-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը Էրդողանին ուղղված պատասխան գրության մեջ նշում էր. «Որպես հարևաններ մենք պետք է փորձենք ուղիներ որոնել այժմ և ապագայում համերաշխ ապրելու համար», և այդ իսկ պատճառով էլ ՀՀ-ն հենց սկզբից առաջարկել է Թուրքիային երկու երկրների միջև «հաստատել դիվանագիտական հարաբերություններ, բացել սահմանները և երկխոսություն սկսել երկու երկրների և ժողովուրդների միջև»: Բացի այդ, ՀՀ նախագահը շեշտում էր այն փաստը, որ «երկկողմ հարաբերությունների զարգացման պատասխանատվությունը կրում են կառավարությունները, և մենք իրավասու չենք այն պատվիրակել պատմաբաններին»: Վերջում ՀՀ նախագահը կրկին առաջարկում էր Թուրքիային

---

[344] «Milliyet», Istanbul, 2005, 15 Nisan; նաև՝ No: 62 - 15 Nisan 2005, Başbakan Sayin Recep Tayyip Erdoğan'in Ermenistan Devlet Başkani Robert Koçaryn'a Gönderdiği Mektup hk, http://www.mfa.gov.tr/no_62---15-nisan-2005_-basbakan-sayin-recep-tayyip-erdogan_in-ermenistan-devlet-baskani-robert-kocaryan_a-gonderdigi-mektup-hk_.tr.mfa

[345] Նույն տեղում:

«առանց նախապայմանների» երկու երկրների միջև «հաստատել նորմալ հարաբերություններ» և այդ համատեքստում էլ ստեղծել «միջկառավարական հանձնաժողով՝ քննարկելու երկու երկրների միջև առկա ցանկացած խնդիր կամ բոլոր կարևոր խնդիրները՝ նպատակ ունենալով լուծել դրանք և հասնել փոխըմբռնման»[346]:

Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Էվանսը Wikileaks-ում հրապարակված ՀՀ նախագահի պատասխան նամակն ուղարկում է ԱՄՆ-ի պետքարտուղարություն՝ դրան կցելով իր մեկնաբանությունները:

Դրանցում ԱՄՆ դեսպանը շեշտում էր, որ «Էրդողանի առաջարկը ամենևին էլ նորություն չէ,և Թուրքիայի յուրաքանչյուր վարչակազմի կողմից նման կոչեր հնչել են նաև նախկինում՝ նպատակ ունենալով հակազդել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին»: Էվանսի դիտարկմամբ՝ այստեղ նորությունն այն էր, որ «նման առաջարկ արվում էր գրավոր և ամենաբարձր մակարդակով»,որն էլ ըստ Էվանսի «լուրջ մտահոգության տեղիք էր տալիս Էրդողանի նամակի լրջության և անկեղծության կապակցությամբ»: Էվանսն իր մտահոգությունն էր հայտնում նաև այն փաստի առնչությամբ, որ «մինչև Երևան հասնելը նամակը հայտնվել էր թուրքական մամուլում» և «տարածվել էր ԱՄՆ Կոնգրեսում»՝ նպատակ ունենալով ցույց տալ ԱՄՆ կոնգրեսականներին, որ «մերձեցման և հաշտեցման գործընթաց է ընթանում»,և որ «Կոնգրեսի որևէ բանաձևի անհրաժեշտություն չկա»[347]:

---

[346] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 18, գործ 175, էջ 6; տե՛ս նաև՝ Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի 2007թ., ՀՀ Ազգային ժողով, Եր., 2011, էջ 414-415:

[347] Տե՛ս WIKILEAKS-ը հրապարակել է 2005թ. Ռեջեփ Էրդողանին Ռոբերտ Քոչարյանի գրած նամակը, http://2rd.am/hy/WikiLeaksy-hraparakel-e-2005-t-Rejep-Erdoghanin-Robert-Kocharyani-grats-namaky

Էրդողանը «Միլլիյեթ» թերթի լրագրողների հետ հանդիպման ժամանակ պարզաբանումներ է ներկայացրել ՀՀ նախագահին ուղղված իր պաշտոնական գրության վերաբերյալ՝ նշելով, թե ինքը չի ասում, որ «Հայկական հարցով զբաղվեն միայն պատմաբանները», և իր կարծիքով, «պատմաբաններին պետք է միանան քաղաքագետները, իսկ վերջնական որոշումը կայացնեն քաղաքական գործիչները»: Այնուհետև Թուրքիայի վարչապետն այն համոզմունքն էր հայտնում, որ ինքը չի կարող «տեղահանություն» իբրև «ցեղասպանություն» որակելու թյուրիմացության մեջ գտնվողներին ընդունել»[348]:

Ինչ վերաբերում է Էրդողանին ուղղված Ռ. Քոչարյանի պատասխան նամակին թուրքական կողմի արձագանքներին, ապա դրանք տարաբնույթ էին, իսկ երբեմն նաև հակասական: Այսպես, եթե Թուրքիայի ԱԳՆ խոսնակ Նամըկ Թանը Քոչարյանի պատասխան նամակը դրական է համարում[349], ապա հակառակ դրան, Էրդողանը, արձագանքելով Ռ. Քոչարյանի պատասխան նամակում սահմանները բացելու առաջարկին, տարակուսանք է հայտնում, թե «դու ինձ սահման բացելու պահանջ ներկայացնելիս ինչո՞ւ ես շարունակում ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարը»[350]:

Այսպիսով, եթե Թուրքիան Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու գործում հանդես էր գալիս կոնկրետ նախապայմաններով, ապա ՀՀ նախագահը, ինչպես Էրդողանին ուղղված պատասխան նամակում, այնպես էլ դրանից առաջ

---

[348] «Milliyet», Istanbul, 2005, 29 Nisan.

[349] SC: 16-28 Nisan 2005, Dişişleri Bakanliği Sözcüsü Namik Tan'in; Ermenistan Cumhurbaşkani Robert Koçaryan'in Sayin Başbakanimiza Gönderdiği Cevabi Mektup; Hakkinda Kendisine Yöneltilen Bir Soruya Cevabi, http://www.mfa.gov.tr/sc_16---28-nisan-2005_-disisleri-bakanligi-sozcusu-namik-tan_in_-ermenistan-cumhurbaskani-robert-kocaryan_in-sayin-basbakanimiza-gonderdigi-cevabi-mektup_hakkinda-kendisine-yoneltilen-bir-soruya-cevabi.tr.mfa

[350] «Milliyet», Istanbul, 2005, 29 Nisan.

բազմիցս հայտարարել էր, որ ՀՀ-ն պատրաստ է առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ և ամենաբարձր մակարդակով քննարկել երկու երկրների միջև առկա ցանկացած խնդիր: Ավելին, ինչպես ցույց են տալիս փաստերը, ՀՀ ղեկավարությունը դեմ չէր և նույնիսկ դրական էր վերաբերվում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը:

Այսպես, 2007 թ. փետրվարի 17-ին Փարիզում գտնվող ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը «Ֆիգարո» թերթին տրված հարցազրույցում, անդրադառնալով ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցին, նշում էր, որ «Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու գործընթացը ենթադրում է թուրքական հասարակության վերափոխմանն ուղղված լուրջ բարեփոխումներ», իսկ դա վերջին հաշվով նշանակում է «առաջընթաց դեպի ավելի կանխատեսելի, ավելի բաց, փոքրամասնությունների հանդեպ ավելի հանդուրժող, սեփական պատմության վերագնահատմանն առավել հակված Թուրքիա»: Բացի այդ, ըստ Ռ. Քոչարյանի, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության դեպքում «մենք կունենանք սահման ԵՄ-ի հետ, ինչը, անշուշտ, դրական կլիներ»[351]:

Թուրքիայի նոր ղեկավարության Հայաստանի հետ հարաբերություններում որդեգրած դիրքորոշումն առավել ամբողջական պատկերացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադարձ կատարել թուրքական «Զաման» թերթի 2007 թ. ապրիլի 16-ի համարում հրապարակված «Թուրքական մամուլի մեծ մեղքը Հայկական հարցում» վերնագրով հոդվածին:

Հոդվածագիրը՝ Սելչուք Գյուլթաշլընը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության

---

351 Տե՛ս Ռոբերտ Քոչարյանի հարցազրույցը «Ֆիգարո» թերթին, 20. 02. 2007, http://2rd.am/hy/Robert-Kocharyani-harcazruycy-Figaro-Tertin

ճանաչման հարցին, նշում է, թե իբր ««ցեղասպանությունը» մեծ սուտ է», և որ «Եվրոպան, ԱՄՆ-ը քաջ գիտեն այդ մասին, սակայն քաղաքական շահարկումների համար չիմանալու տեղ են դնում»: Ըստ թուրք հեղինակի՝ «եվրոպական քաղաքական գործիչները կառչել են «ցեղասպանության ստին»»՝ նպատակ ունենալով ընտրությունների ժամանակ «ստանալ հայերի քվեները»: Այնուհետև հոդվածագիրը, անդրադառնալով «Նյու Յորք Թայմս»-ի ապրիլի 13-ի համարի խմբագրականում տպագրված «աշխարհը չհակազդելով Հայոց ցեղասպանությանը կամա թե ակամա խրախուսել է դրանց կրկնությանը» մտքին, որակում է այն որպես «խայտառակություն»[352]:

Կարծում ենք, որ ինչպես Սելչուք Գյուլթաշլընը, այնպես էլ մյուս թուրքերը լավատեղյակ էին, որ անգամ Թուրքիայի ամենամերձավոր դաշնակիցները չեն թաքցրել այն հանգամանքը, որ «եթե հայերի ցեղասպանությունը չեն բնութագրում իբրև ցեղասպանություն, ապա դա արվում է Անկարայի դաշնակցությունը չկորցնելու նկատառումով»[353]:

Ասվածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ 2007 թ. հոկտեմբերի 11-ին ամերիկյան Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից ընդունված Հայոց ցեղասպանության դատապարտման վերաբերյալ թիվ 106-րդ բանաձևը, չնայած ԱՄՆ-ի հայկական լոբբիստական կազմակերպությունների աշխատանքներին և Ներկայացուցիչների պալատի հայկական հարցերով հանձնախմբի անդամների ակտիվ ջանքերին, այնուամենայնիվ, չդրվեց

---

352 Տե՛ս Սաֆարյան Դ., Թուրքիայի հասարակական-քաղաքական կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հիմնախնդրի մասին (2001-2007 թթ.), // «21-րդ դար», թիվ 1 (59), էջ 129-130:

353 Տե՛ս նույն տեղում, էջ 130:

քվեարկության Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստում, քանի որ Ջորջ Բուշի վարչակազմը վետո է դնում այն ԱՄՆ-ի Սենատի օրակարգ ներառելու վրա՝ պատճառաբանելով, որ թուրքերը կարող են պատասխան քայլերի դիմել[354]:

Վերջին հաշվով, ըստ թուրք հոդվածագրի, ստացվում է, որ Եվրոպան և ԱՄՆ-ը առանց հավատալու Հայոց ցեղասպանության փաստին, փորձում էին ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ նպատակ ունենալով այդ կերպ ստանալ իրենց երկրներում հայերի քվեները: Այն, որ ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ եվրոպական երկրները Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջով փորձում էին լուծել նաև սեփական խնդիրները, կասկածից վեր է: Սակայն, մեր կարծիքով, հոդվածագրի իրական ցանկությունը Հայոց ցեղասպանության փաստը Թուրքիայում ժխտելն էր: Ավելին, հոդվածագիրն այն թյուր կարծիքն էր հայտնում, թե իբր ԱՄՆ-ը և եվրոպական երկրները ևս չեն հավատում Հայոց ցեղասպանության փաստին, սակայն, դրանով հանդերձ, հետապնդում են որոշակի քաղաքական նպատակներ:

2007թ. հունիսի 22-ին Թուրքիայում անցկացվում են խորհրդարանական արտահերթ ընտրություններ, որտեղ ձայների ճնշող մեծամասնությամբ կրկին հաղթում է AKP-ն: Ընդ որում՝ խորհրդարանական ընտրություններից մեկ ամիս անց անցկացված նախագահական ընտրություններում հաղթանակ է տանում AKP-ի կողմից առաջադրված թեկնածուն՝ Ա. Գյուլը, ով դառնում է Թուրքիայի 11-րդ նախագահը[355]:

Այս ժամանակաշրջանում Թուրքիայում իշխող AKP-ի նախաձեռնությամբ քննարկվում էր Թուրքիայի

---

354 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թպ. 58, ֆ. հ. 585, 586; տե՛ս նաև՝ «The New York Times», USA, 11 October 2007.

355 Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., Դումանյան Ա., Թուրքիայի հանրապետության պատմություն, Եր., 2014, էջ 320-321:

նոր սահմանադրության նախագիծը: Քննարկումները հարթ չէին ընթանում՝ հանդիպելով քեմալական ազգային ընդդիմության քննադատությանը: Նման պայմաններում «Թուրքիան կանգնած էր նաև հայ-թուրքական հարաբերություններում ընդառաջ քայլ կատարելու անհրաժեշտության առաջ»[356]:

2007 թվականի վերջերին ՀՀ Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովում անցկացվում են հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ խորհրդարանական լսումներ: Քննարկվող հարցերից մեկն էլ Թուրքիայի վարչապետ Էրդողանի առաջարկությունն էր՝ 1915 թվականի դեպքերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ:

Լսումների ընթացքում ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանն իր ելույթում կտրականապես մերժում է Էրդողանի առաջարկը՝ նշելով. «Ինչպես կարելի է Էրդողանի նամակը լուրջ ընդունել, երբ իր երկրի ներսում, իր քրեական օրենսգրքում կա 301 հոդվածը, որը քրեականորեն պատժում է բոլոր նրանց, ովքեր համարձակվում են ոչ միայն արտասանել ցեղասպանություն բառը, այլ նույնիսկ քննարկել 1915 թվականի իրադարձությունները»: Ըստ Օսկանյանի՝ Թուրքիայի նման առաջարկն իրականում նպատակ էր հետապնդում «եվրոպային ցույց տալու, որ Թուրքիան ունի բարի կամք, ունի ցանկություն մտնել երկխոսության մեջ և այդ ամենակենտրոն խնդիրը լուծել հենց հայերի հետ»: Վերջում ՀՀ արտգործնախարարը եզրակացնում է, որ «այդ նամակը չէր կարելի լուրջ ընդունել, որովհետև վերջիվերջո չկան համապատասխան նորմալ պայմաններ, չկա մթնոլորտ նման

[356] Տե՛ս Սաֆարյան Դ., Օսկանյան Վ., Մելիքյան Գ., Սաֆարյան Ա., նշվ. աշխ., էջ 88:

կարևորագույն հարց քննարկելու համար և նման պայմաններում առաջարկել, որ իր պատմաբանները, գիտնականները ներգրավվեն այս հարցի քննարկման մեջ, ուղղակի անհասկանալի է»[357]:

Քննարկումների ընթացքում ուշագրավ տեսակետ է արտահայտում Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը, ով միանալով Վ. Օսկանյանին, նշում է, որ «պատմությունը վաղուց գրվել է պատմաբանների կողմից, ոչ միայն հայ, այլև՝ թուրք պատմաբանների, այժմ ժամանակն է այն թողնել իրավաբաններին, որովհետև իրավական և քաղաքական հարթության մեջ պետք է լուծվի հայ-թուրքական հարաբերությունների հարցը»[358]:

Ծավարշ Քոչարյանն էլ իր ելույթում կոչ է անում մասնակիցներին ճիշտ հասկանալ Թուրքիայում տիրող իրավիճակը, քանզի ըստ նրա՝ «Թուրքիայում եղել են խորքային փոփոխություններ», ուստի «Թուրքիայի հետ հարաբերություններում մենք կորցրած կողմ ենք, բայց պատրաստ ենք առանց նախապայմանների հարաբերություններ սկսել»[359]:

Ամփոփելով ՀՀ Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովում անցկացված լսումները՝ ցանկանում ենք նշել, որ այստեղ կրկին անգամ ուշադրություն դարձվեց այն կարևոր հանգամանքի վրա, որ Էրդողանի նշված առաջարկը իրականում նպատակ էր հետապնդում առաջադեմ հասարակայնության հերթական անգամ

---

357 ՀՀ ԱԺ-ում հայ-թուրքական հարաբերությունների մասին լսումներին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի ելույթի վերաբերյալ 19 դեկտեմբեր 2007թ., https://www.mfa.am/hy/press-releases/2007/12/19/vo/448

358 Դեմոյան Հ., «Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ», (զեկուցում) խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի 2007թ., ՀՀ Ազգային ժողով, Եր., 2011, էջ 117-121:

359 Քոչարյան Ծ., «Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ», (զեկուցում) խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի 2007թ., ՀՀ Ազգային ժողով, Եր., 2011, էջ 102:

ցույց տալու թե Թուրքիան դրսևորում է «բարի կամք» հայերի հետ խնդրահարույց հարցերը լուծելու գործում: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ քննարկումների ընթացքում շեշտվեց այն միտքը, որ Էրդողանի նման առաջարկին լուրջ վերաբերվել չի կարելի, չնայած այդ ամենին՝ այնուամենայնիվ կրկին շեշտվեց ՀՀ պատրաստակամությունը Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում:

Քննարկվող ժամանակաշրջանում շարունակվող ՀՀ արտաքին քաղաքական ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ ունենում են որոշակի դրական արդյունքներ, որի վկայությունը մի քանի երկրների կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումն ու դատապարտումն էր: Անշուշտ, դրանում չպետք է թերագնահատել նաև սփյուռքահայության ավանդը:

Այսպես, 2005 թ. ապրիլի 19-ին Լեհաստանի խորհրդարանը (Սեյմը) պաշտոնապես ճանաչում է Օսմանյան Թուրքիայի կողմից 1915 թվականին իրականացված Հայոց ցեղասպանությունը[360]:

2005 թ. հունիսի 15-ին Գերմանիայի խորհրդարանը (Բունդեսթագը) միաձայն ընդունում է բանաձև, որով դատապարտվում էր «Օսմանյան կայսրության երիտթուրքերի կառավարության արարքները, որոնց հետևանքով բնաջնջվել է Անատոլիայի գրեթե ամբողջ հայությունը»[361]:

Նշված բանաձևի ընդունումն անկասկած կարևոր իրադարձություն էր Հայոց ցեղասպանության

---

[360] Տե՛ս ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 88, ֆ.հ. 200:

[361] Նույն տեղում, թպ. 73, 74, ֆ.հ. 172; նաև՝ Deutscher Bundestag, 15.Wahlperiode, Antrag der Fraktionen SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN und FDP, Erinnerung und Gedenken an die Vertreibungen und Massaker an den Armeniern 1915- Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen, Drucksache 15/5689, 15. 06. 2005, http://dipbt.bundestag.de/doc/btd/15/056/1505689.pdf.

միջազգային ճանաչման գործընթացում: Բանաձևում առկա էին մեզ հետաքրքրող հիմնահարցի տեսանկյունից թե՛ դրական և թե՛ բացասական կողմեր:

Բացասականն այն էր, որ նախ այստեղ չէր օգտագործվում «ցեղասպանություն» եզրույթը, մինչդեռ, ինչպես վկայում են փաստերը, բանաձևի նախնական քննարկումների ընթացքում Բունդեսթագի պատգամավորների մի զգալի մասն իրենց ելույթներում օգտագործել էին հենց «ցեղասպանություն» եզրույթը[362]: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ՀՀ դեսպանության միջոցով դիմել է Բունդեսթագի խմբակցություններին՝ խնդրելով բանաձևում օգտագործել «ցեղասպանություն» եզրույթը[363]:

Մյուս բացասական կողմն այն էր, որ Գերմանիայի Բունդեսթագը հայցում է դաշնային կառավարությանը «պաշտպանելու թուրք, հայ և միջազգային փորձագետներ ներառող պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը»: Դժվար չէ կռահել, որ Բունդեսթագի այս բանաձևը փաստորեն պաշտպանում էր Էրդողանի հայտնի կոչը ՀՀ ղեկավարությանը: Կարծում ենք նման առաջարկը ինչ-որ առումով հեղինակազրկում էր այն երկրների օրենսդիր մարմիններին, որոնք, Հայոց ցեղասպանությունը ընդունելով որպես անժխտելի փաստ, ճանաչել ու դատապարտել էին այն:

Եվ, վերջապես, առնվազն տարակուսանք էր հարուցում «Անատոլիա» աշխարհագրական տերմինի առկայությունը բանաձևում: Տերմին, որը 1923 թվականից սկսած թուրքական գրականության մեջ

[362] Տե՛ս Deutsch-Armenische Gesellschaft, 100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft: Erinnern. Gedenken. Gestalten, Hannover, 2014, s. 204.
[363] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 9-11, էջ 90:

օգտագործվում է ողջ Ասիական Թուրքիան ներառյալ Արևմտյան Հայաստանը կոչելու համար, որով և խեղաթյուրվել է այդ տերմինի բուն աշխարհագրական բովանդակությունը:

Բանաձևն ուներ նաև դրական կողմեր, որոնցից ցանկանում ենք առանձնացնել հետևյալը.

1. Այն «դատապարտում է Գերմանիայի Ռեյխի անփառունակ դերը, որը, տեղեկացված լինելով հայերի կազմակերպված տեղահանությունների և բնաջնջման մասին, այս վայրագությունների միջամտելու և դրանք դադարեցնելու ոչ մի փորձ չի ձեռնարկել»:

2. Բանաձևում ափսոսանք էր հայտնվում, որ Թուրքիայում Օսմանյան կայսրության անցյալի այդ իրադարձությունների վերաբերյալ մինչ այսօր հնարավոր չէ ամբողջական քննարկում իրականացնել, և որ **գիտնականներն ու գրողները, ովքեր ցանկանում են գործ ունենալ Թուրքիայի պատմության այս կողմերի հետ, ենթարկվում են հետապնդումների և զրպարտանքի** (ընդգծումը մերն է -Մ.Ն.): Այստեղ, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե նշենք, որ բանաձևի այս կետը յուրատեսակ հորդոր էր թուրքական իշխանություններին՝ դադարեցնել Թուրքիայի պատմության նշված շրջանով զբաղվող մասնագետների հետապնդումները:

3. Բանաձևում նշվում էր նաև «Թուրքիայի՝ Հայաստանի հետ սահմանների բացումը կարող էր օրինակ օգնել Հայաստանի մեկուսացվածությունը նվազեցնելուն և նպաստեր դիվանագիտական հարաբերությունների սկսմանը»՝ դրանով իսկ «նպաստելով Կովկասի տարածաշրջանի կայունացմանը»[364]:

[364] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 73, 74, ֆ. հ. 172:

2005 թ. հուլիսի 14-ին Վենեսուելայի Ազգային Ասամբլեան ընդունում է բանաձև, որում դատապարտելով հայ ժողովրդի դեմ «մարդկության պատմության առաջին գիտակցաբար ծրագրված, կազմակերպված և իրականացված ցեղասպանությունը»՝ որոշում է դիմել ԵՄ-ին՝ «հետաձգելու Թուրքիայի անդամակցությունը մինչև նրա կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը»[365]:

ՀՀ կառավարությունը ողջունելով, Վենեսուելայի պառլամենտի ընդունած բանաձևը, հույս է հայտնում, որ «…Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը կնպաստի 20-րդ դարի առաջին ցեղասպանության դատապարտմանը և հայ ժողովրդի պատմական արդարության վերականգնմանը»: Ավելին, հույս է փայփայում, որ «փոխհատուցման միջոցներ կձեռնարկվեն հայ ազգի նկատմամբ իրագործված անարդարության դիմաց»[366]:

2005 թ. դեկտեմբերի 15-ին Լիտվայի Հանրապետության Սեյմը՝ Հայոց ցեղասպանության 90-ամյակի հետ կապված ընդունում է բանաձև, որով դատապարտում է «1915 թվականի Օսմանյան կայսրության թուրքերի կողմից իրականացրած հայ ժողովրդի ցեղասպանությունը» և կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը՝ «ճանաչել պատմական այս փաստը»[367]:

Արգենտինան 2007 թ. հունվարի 15-ին ընդունում է թիվ 26199 ազգային օրենքը, որով յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը հայտարարվում էր որպես ««Ժողովուրդների միջև հանդուրժողականության և հարգանքի օր»՝ ի հիշատակ այն ցեղասպանության, որի զոհն է դարձել հայ ժողովուրդը, և այն ոգով, որ դրա հիշատակը մշտապես դաս կլինի ներկայիս

365 Տե՛ս Քոչարյան Վ., նշվ. աշխ., էջ 43-44:
366 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 80, ֆ.հ. 252:
367 Նույն տեղում, թպ. 78, ֆ.հ. 177:

քայլերի և ապագայի նպատակների համար»: Բացի այդ, օրենքը լիազորում էր Արգենտինայի՝ ծագումով հայ բոլոր աշխատողներին, պետական ծառայողներին, նախնական և միջնակարգ հանրակրթական հաստատություններում սովորողներին՝ «յուրաքանչյուր ապրիլի 24-ին մասնակցելու նրանց համայնքին հասցված ողբերգության հիշատակին նվիրված միջոցառումներին»[368]:

Արդեն 2007 թ. հուլիսի 7-ին Չիլիի Սենատը ընդունում է թիվ 531/SEC/07 բանաձևը, որով դատապարտում էր «1915-1923 թթ. միջև ընկած ժամանակահատվածում» ավելի քան 1.5 մլն հայերի ցեղասպանությունն «իրենց նախնիների հողերում»[369]:

Միջազգային կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում զգալի հետաքրքրություն են ներկայացնում նաև պետությունների ինտեգրացիոն միավորումների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված նախաձեռնությունները:

Այսպես, 2007 թ. նոյեմբերի 19-ին Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում կայացած ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի խորհրդարանի լիագումար նիստում Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայը, Ուրուգվայը և Վենեսուելան (Չիլին, Բոլիվիան, Կոլումբիան, Էկվադորը և Պերուն՝ կազմակերպության ասոցացված անդամներն են) ներկայացնող պատգամավորները ձայների մեծամասնությամբ հաստատում են «Մարդու իրավունքների» հանձնաժողովի նախօրեին միաձայն ընդունած որոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Որոշման մեջ մասնավորապես ասվում

368 Տե՛ս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, երկրների ցանկ, http://genocide.am/news2.html?armenian

369 ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 82, ֆ. հ. 303:

է. «ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի խորհրդարանը վճռականորեն դատապարտում է 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը, որը խլեց մեկուկես միլիոն մարդկանց կյանք եւ իր զորակցությունն է հայտնում հայ ժողովրդի արդար Դատին»: Դրա հետ միասին խորհրդարանը կոչ է անում «Հայոց ցեղասպանությունը դեռ չճանաչած եւ չդատապարտած կառավարություններին եւ խորհրդարաններին նմանատիպ որոշում կայացնել»[370]:

Ինքնին հասկանալի է, որ միջազգային տարբեր ատյաններում, խորհրդարաններում Հայոց ցեղասպանության ճանաչմանը վերաբերող քննարկումները և դրանց հաջորդած բանաձևերի և օրենքների ընդունումը պետք է ցավագին ընդունվեին Թուրքիայի կողմից և արժանանային հակաքայլերի:

2006թ. հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի՝ Ազգային ասամբլեայի կողմից առաջին անգամ ընդունվում է Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող օրինագիծը[371]: Վերջինս շրջանառության մեջ է դրվում այն ժամանակ, երբ Թուրքիան հայտարարում է, որ չի բացելու իր նավահանգիստները ԵՄ անդամ Կիպրոսի Հանրապետության համար և առևտուր չի անելու նրա հետ: Մեր կարծիքով, հենց այս օրինագծի ընդունումն էլ դառնում է Թուրքիայի վրա ճնշում գործադրելու հավելյալ միջոց, և արդեն դեկտեմբերին Ֆրանսիայի և Գերմանիայի ջանքերով դադարեցվում են ԵՄ-ին Թուրքիայի

370 ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի խորհրդարանի կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչման վերաբերյալ 20 նոյեմբերի 2007 թ. Ս.թ. նոյեմբերի 19-ին Ուրուգ, https://www.mfa.am/hy/press-releases/2007/11/20/mercosur/404

371 Տե՛ս Մարուքյան Ա., Եվրամիության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1, էջ 14:

անդամակցության բանակցությունները, որոնք Եվրոպական խորհրդի որոշմամբ վերսկսվել էին 2005 թվականին:

Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի կողմից նշված օրինագծի ընդունումը, (նման օրինագծեր ընդունվել են նաև Շվեյցարիայում, Սլովակիայում, Հունաստանում, Կիպրոսում-Մ.Ն.) անկասկած, Թուրքիայի կողմից ոդդեգրած Հայոց ցեղասպանության ժխտման դեմ պայքարի արդյունավետ միջոց էր: Դրա հետ միասին ցանկանում ենք կրկին ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ այդ և նման օրինագծերը մեծ մասամբ այս կամ այն երկրի պառլամենտում շրջանառության մեջ են դրվել այն ժամանակ, երբ որևէ երկրի շահերից բխող որևէ քաղաքական հարցի լուծման համար անհրաժեշտ է եղել ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ շահարկելով Հայոց ցեղասպանության հարցը:

Որպես այս ենթագլխի ամփոփում՝ ցանկանում ենք նշել հետևյալը.

1. Թուրքիայում իշխանության եկած AKP-ն՝ անհանգստացած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացով, տարբեր մակարդակներով անցկացված խորհրդակցությունների արդյունքում որոշում է որպես Թուրքիայի կողմից «բարի կամքի դրսևորման վերջին փորձ» Հայաստանին ներկայացնել Հայոց ցեղասպանության իրողությունը ուսումնասիրող պատմաբանների համատեղ հանձնախումբ ստեղծելու առաջարկ՝ իրականում նպատակ ունենալով այդ կերպ հնարավորինս կասեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը:

2. 2005 թ. ապրիլի 10-ի Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ ՀՀ նախագահին ուղղված պաշտոնական գրությամբ պատմաբանների հանձնաժողով

ստեղծելու առաջարկը, ամենևին էլ նորություն չլինելով հայ-թուրքական հարաբերությունների պատմության մեջ (նախկինում նման առաջարկներ ևս հնչել են, սակայն ոչ պաշտոնական ամենաբարձր մակարդակով -Մ.Ն.), իրականում ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին հնարավորինս հակազդելու հերթական քայլ:

3. Երդողանի առաջարկի հետ կապված ՀՀ Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովում անցկացված լսումների ընթացքում գերիշխող է դառնում այն տեսակետը, որ Թուրքիայի նման առաջարկին լուրջ վերաբերվել չի կարելի, և որ դրանով Թուրքիան ընդամենը նպատակ է հետապնդում ցույց տալու Եվրոպային, թե ինքը որպես բարի կամքի դրսևորում շարունակում է ջանքերը հայերի հետ «վիճահարույց» հարցերը լուծելու գործում:

## ԳԼՈՒԽ III.

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՆՈՐ ՓՈՐՁԸ 2009-2016 ԹԹ.

## 3.1 Հայոց ցեղասպանության հիմնահարցի արծարծումները 2009 թվականի ցյուրիխյան արձանագրությունների համատեքստում

2008 թ. փետրվարի 19-ին Հայաստանում անցկացված նախագահական ընտրությունների արդյունքում ՀՀ նախագահ է դառնում Սերժ Սարգսյանը: Թուրքական լրատվամիջոցները, անդրադարձ կատարելով ՀՀ նախորդ երկու նախագահների՝ Թուրքիայի նկատմամբ որդեգրած քաղաքականությանը, այն համոզմունքն են հայտնում, որ «երկու երկրների միջև հարաբերությունները, որոնց սրման պատճառ է դարձել 1915 թվականի իրադարձությունների առումով ողջ աշխարհում Թուրքիայի դեմ հայկական Սփյուռքի ծավալած քարոզարշավը, հազիվ թե բարելավվեն Քոչարյանի պես ղարաբաղյան ծագում ունեցող Սերժ Սարգսյանի օրոք»[372]:

Բացի այդ, թուրքական լրատվամիջոցներում սկսվում է լայնորեն քննարկվել այն հարցը, թե Թուրքիայի նկատմամբ ինչ դիրքորոշում կորդեգրի ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանը: Քննարկումներում սկսում է գերակշռել այն կարծիքը, թե նոր նախագահի պաշտոնավարմամբ դիրքորոշման փոփոխություն Թուրքիայի նկատմամբ չէր լինելու: Չնայած դրան՝ 2008 թ. փետրվարի 21-ին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը առաջիններից մեկը շնորհավորելով Սերժ Սարգսյանին՝ հույս է հայտնում, որ ՀՀ նախագահի

[372] Տե՛ս «Ազգ», Եր., 2008, թ. 33, 21 փետրվարի:

պաշտոնի ստանձնումը Ս. Սարգսյանի կողմից «...հնարավորություն կընձեռի հայ և թուրք ժողովուրդների միջև հարաբերությունները կարգավորելու համար»[373]:

Նույն ժամանակաշրջանում Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը, շեշտելով այն հանգամանքը, որ «Հայաստանի հետ մեր (նկատի ունի Թուրքիան-Մ.Ն.) հարաբերությունները» չեն տեղավորվում «տարածաշրջանում խաղաղություն, կայունություն, անվտանգություն և բարգավաճում» տեսնելու Թուրքիայի ցանկությանը, ընդունելով նաև, որ ՀՀ-ի և Թուրքիայի միջև կան խնդիրներ, այն կարծիքն էր հայտնում, որ «այդ խնդիրները լուծելու միակ ճանապարհը երկխոսություններն է»[374]:

Այս ամենն ամենևին էլ չէր նշանակում, թե Թուրքիան հրաժարվել էր Հայաստանի հետ հարաբերություններում իր կողմից առաջադրված նախապայմաններից և Հայոց ցեղասպանության նկատմամբ որդեգրած ժխտողականությունից:

Այսպես, 2008 թ. փետրվարի 26-ին Էրդողանն իր ելույթում հերքում էր 1915 թվականի Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայերի պնդումները՝ անվանելով դրանք «անհեթեթություն», որը հայերը «հորինում և տարածում են համաշխարհային հանրության հասարակական կարծիքի մեջ»: Ավելին, ըստ Էրդողանի՝ «...այս ազգի (նկատի ունի թուրքերին-Մ.Ն.) խառնվածքը թույլ չի տալիս նրան նման հանցանքներ գործել»[375]:

---

[373] Տե՛ս Osipova Y., Bilgin F., Revisiting the Armenian-Turkish reconciliation, // «Rethink Paper» 08/January 2013, Rethink Institute Washington, DC, p. 8.
[374] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 32, թպ. 50, ֆ.հ. 182:
[375] Տե՛ս Պատկերավոր պատմություն. «Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը», էջ 44:

Քննարկվող ժամանակաշրջանում նամակագրական կապեր են հաստատվում Հայաստանի և Թուրքիայի վարչապետների միջև:

Այսպես, 2008 թ. ապրիլի 27-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը, շնորհավորելով Տ. Սարգսյանին ՀՀ վարչապետի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ, հույս է հայտնում, որ դրանով հայ-թուրքական հարաբերությունները «նոր փուլ կթևակոխեն, որը կնպաստի տարածաշրջանի խաղաղությանը, կայունությանը և բարեկեցությանը»[376]:

Պատասխան նամակում Տ.Սարգսյանը հաստատում է «Հայաստանի կառավարության պատրաստակամությունը կառուցողական երկխոսության մեջ մտնելու և առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու հարցում»: Դրա հետ միասին ՀՀ վարչապետը սառը վերաբերմունք է ցուցաբերում 1915 թվականի իրադարձությունները ուսումնասիրող պատմաբանների հանձնաժողով հիմնելու Թուրքիայի առաջարկին[377]:

Վերլուծելով ՀՀ երրորդ նախագահ Ս.Սարգսյանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման և այդ համատեքստում հայ-թուրքական հարաբերությունների հարցում՝ ցանկանում ենք նշել, որ այն էապես չէր տարբերվում իր նախորդի մոտեցումներից, քանզի Ս.Սարգսյանը ևս նշում էր, որ «Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը Հայաստանի արտաքին քաղաքականության անքակտելի բաղադրամասն է», և որ «համայն հայության հայրենիք Հայաստանը պետք է կրկնապատկի պատմական արդարության վերականգնմանն ուղղված ջանքերը»[378]: Ավելին, ՀՀ

---

[376] Տե՛ս նույն տեղում:
[377] Տե՛ս նույն տեղում:
[378] Տե՛ս Սաֆարյան Դ., Ոսկանյան Վ., Մելիքյան Գ., Սաֆարյան Ա., նշվ. աշխ., էջ 93:

նախագահի կարծիքով, վերը նշված ամենևին էլ «Վրեժխնդրության և թշնամանքի զգացումներ չի ենթադրում», և Հայաստանը «վաղվանից պատրաստ է կարգավորել Թուրքիայի հետ հարաբերությունները»[379]:

2008 թ. հունիսի 25-ին Ս. Սարգսյանը, Մոսկվայում հանդիպելով Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս հայտարարությամբ՝ հայ-թուրքական հարաբերությունները խթանելուն ուղղված նոր քայլեր ձեռնարկելու վերաբերյալ: Ս. Սարգսյանը նշում է, որ «այդ հարցում Հայաստանի դիրքորոշումը հստակ է.հարևան պետությունների միջև 21-րդ դարում չպետք է լինեն փակ սահմաններ: Տարածաշրջանային համագործակցությունը կարող է լինել կայունության հաստատման լավագույն միջոցը»:Իսկ ինչ վերաբերում է պատմական փաստերը ուսումնասիրելու համար հանձնաժողով ստեղծելու Թուրքիայի առաջարկին, ապա ՀՀ նախագահը նշում է, որ «ինքը դեմ չէ այդպիսի հանձնաժողովի ստեղծմանը, բայց այն ժամանակ, երբ բացվի սահմանը մեր պետությունների միջև: Այլապես այն կարող է դառնալ հարցը տարիներով երկարաձգելու և շահարկելու միջոց»: Ավելի կոնկրետացնելով իր միտքը՝ ՀՀ նախագահը ցանկություն է հայտնում Թուրքիայի նախագահ Ա. Գյուլին հրավիրել Երևան՝ Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը դիտելու նպատակով[380]:

Անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ նախագահի՝ Ա. Գյուլին Երևան հրավիրելու մտադրությունը թուրքական լրատվամիջոցները խեղաթյուրելով

---

379 Նույն տեղում:

380 Տե՛ս Iskandaryan A., Minasyan S., Pragmatic Policies vs. Historical Constraints: Analyzing Armenia Turkey Relations, // «Caucasus Institute Research Papers», No. 1, January 2010, Yerevan, Caucasus Institute, 2010, p. 9-11.

փորձում են Հայաստանի հետ հարաբերություններում թուրքական ցանկությունները ներկայացնել որպես իրականություն: Դրան ի պատասխան՝ 2008 թ. հուլիսի 9-ին «Ուոլ Սթրիթ Ջորնըլ»-ում տպված հոդվածում Սարգսյանը գրում էր, որ «ժամանակն է թարմ փորձ անել» հայ-թուրքական հարաբերություններում նկատվող «փակուղին վերացնելու համար», քանզի ըստ ՀՀ նախագահի՝ այդ իրավիճակը «ոչ ոքի չի օգնում և վնասում է շատերին»: Բացի այդ, ՀՀ նախագահն այն համոզմունքն էր հայտնում, որ Հայաստանի ու Թուրքիայի միջև առկա «բոլոր խրթին հարցերը» պետք է լուծվեն քաղաքակիրթ երկխոսության ճանապարհով, առանց որի «մենք չենք կարող շոշափելի արդյունքներ արձանագրել ...»[381]:

Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, նախկին դեսպան Օմեր Էնգին Լյութեմը, անդրադառնալով ՀՀ նախագահի հրավերին, նշում էր, թե «Սերժ Սարգսյանը մեկ քարով երկու թռչուն է խփում», քանի որ «եթե հրավերը հաջողությամբ պսակվի, նա երկրի ներսում կթուլացնի լարվածությունը»: Անհաջողության դեպքում էլ անգամ «այսպիսի նախաձեռնություն ցուցաբերելու համար հեղինակություն ձեռք կբերի»: Բացի այդ, ըստ թուրք նախկին դեսպանի՝ «հրավերի ընդունման դեպքում Թուրքիան աշխարհում համակրանք ձեռք կբերի, նրան կողջունեն տարբեր երկրներ»: Իսկ ինչ վերաբերում է Սփյուռքի հետ հաշտվելու խնդրին, ապա, Օմեր Էնգին Լյութեմի կարծիքով, «Հայաստանի հետ հաշտվելը չի ենթադրում հաշտվել նաև Սփյուռքի հետ», քանի որ «Սփյուռքը դեռ երկար

381 Տե՛ս Պատկերավոր պատմություն. «Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը», էջ 45:

ժամանակ համառորեն շարունակելու է այն սև քարոզչությունը, որը Թուրքիայի դեմ է ծավալում»[382]:

Ի վերջո, 2008 թ. հուլիսի 24-ին ՀՀ նախագահը պաշտոնական հրավեր է ուղարկում Թուրքիայի նախագահ Ա. Գյուլին: Ընդունելով հրավերը՝ Թուրքիայի նախագահ Գյուլը սեպտեմբերի 6-ին ժամանում է Երևան՝ երկու երկրների ֆուտբոլի ազգային հավաքականների խաղը դիտելու նպատակով[383]: Երևանում երկու երկրների նախագահները կարծիքներ են փոխանակում տարածաշրջանային վերջին զարգացումների և երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ: Ա. Գյուլը, անդրադառնալով Երևան կատարած իր այցին, նշում է, որ «իրեն Հայաստան հրավիրելով նախագահ Սարգսյանը կատարել է առաջին քայլը, հրավերն իր կողմից ընդունվել է՝ այն վերածելով համատեղ նախաձեռնության, որը օրինակելի կարող է լինել ողջ տարածաշրջանի համար»[384]: Բացի այդ, արդեն 2008 թ. սեպտեմբերի 7-ին Երևանից Անկարա վերադարձած Գյուլը նշում էր. «Գնդակը մեր դաշտում էր և չպետք է այնտեղ մնար: Այդ այցով դրական նկարագիր ստեղծեցինք, դրական վարկանիշ ձեռք բերեցինք աշխարհում: Իմ այս այցը դրվատանքի է արժանանալու և դիտվելու է իբրև հանդգնության դրսևորում: Թուրքիայի համար անարդար է բացասական վարկանիշ ունենալը, իսկ ես մեծ

[382] Տե՛ս Սաֆարյան Դ., Ոսկանյան Վ., Մելիքյան Գ., Սաֆարյան Ա., նշվ. աշխ., էջ 96-97:
[383] Տե՛ս Գեղամյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունների 2008-2010 թթ. հետհայաց ամփոփում, 01. 02. 2011, http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=5338
[384] Տե՛ս Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլլահ Գյուլի այցը Հայաստանի Հանրապետություն, 06. 09. 2008, http://www.president.am/hy/foreign-visits/item/2008/09/06/news-21/

կարևորություն եմ տալիս Թուրքիայի վարկանիշին»[385]:

2008 թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահի այցը Հայաստան հայ պատմագիտության մեջ դիտարկվում է որպես երկխոսության նոր փուլ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման բնագավառում՝ ստանալով «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը: Ֆուտբոլային դիվանագիտության արդյունքի վերլուծությունը բերում է այն հետաքրքիր եզրահանգմանը, որ ՀՀ-ի նախաձեռնությամբ իրագործած նման քայլը ՀՀ-ի համար ավարտվեց անարդյունք, մինչդեռ Թուրքիան հերթական անգամ հնարավորություն ստացավ աշխարհին ցույց տալ իր «մարդասիրությունը» և ՀՀ-ի հետհարաբերությունները կարգավորելու «բուռն ձգտումը»:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն փաստին, որ Գյուլի այցը Հայաստան ոչ միանշանակ արձագանք է գտնում Թուրքիայի տարբեր հասարակական-քաղաքական շրջանակներում: Այսպես, Թուրքիայի ժողովրդահանրապետական կուսակցության առաջնորդ Դենիզ Բայքալը Թուրքիայի նախագահ Գյուլի այցելությունը Երևան անվանում է «դավաճանություն», ընդ որում՝ ոչ միայն Թուրքիայի, այլև «ադրբեջանցի եղբայրների շահերին, որի առիթով Բայքալը ներողություն է խնդրում իր «ադրբեջանցի եղբայրներից»՝ հույս հայտնելով, որ «թուրք ժողովուրդն իր միանշանակ գնահատականը պետք է տա Էրդողանի ու Գյուլի գործողություններին»[386]:

---

385 Տե՛ս Արշակյան Գ., Թուրք-հայկական հարաբերությունները Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակի պայմաններում, // «Հայագիտության հարցեր», թիվ 2(8), Եր., 2016, էջ 7:
386 Տե՛ս “Последствия “футбольной дипломатии’’ могут оказаться неожиданными’’, 03. 09. 08, www.echo-az.info.

Գյուլի՝ Երևան այցի հետ կապված Թուրքիայում տեղ են գտել նաև դրական գնահատականներ: Օրինակ, թուրք հայտնի քաղաքական մեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդը «Հուրիյեթ» թերթի 2008 թ. սեպտեմբերի 5-ի համարում Գյուլի՝ Երևան «ֆուտբոլային հանդիպմանը» գնալը որակում է որպես «ճիշտ քայլ»՝ նշելով, որ «ոչ միայն Սփյուռքում ապրողները, այլև Հայաստանում բնակվող հայերի զգալի մի մասը հավատում են ցեղասպանությանը, և անհնար է փոխել նրանց համոզմունքն այդ հարցում»: Այդուհանդերձ, ըստ հեղինակի՝ «Հայաստանում իշխանության եկած նոր ղեկավարությունն էլ ցանկանում է այս կամ այն ձևով կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ՝ առանց ցեղասպանության գաղափարից հրաժարվելու, և Թուրքիայի միջոցով ավելի ազատորեն ինտեգրվել Եվրոպային ու կարգավորել տնտեսությունը»[387]:

Ա. Գյուլի՝ Երևան կատարած այցի և ընդհանրապես հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ զգալի հետաքրքրություն են ներկայացնում նաև Թուրքիայում հայտնի դիվանագետ Վոլքան Վուրալի տեսակետները: Այսպես, ըստ Վուրալի՝ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը կարող է դրական անդրադառնալ Թուրքիայի վարկանիշի վրա՝ էականորեն բարելավելով տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը: Ընդ որում՝ դիվանագետի կարծիքով, դա անհրաժեշտ էր անել դեռևս 1991 թվականին՝ ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի օրոք, մի բան, որն ըստ Վուրալի՝ զգալիորեն «կնպաստեր փոխադարձ անվստահության և թշնամանքի մեղմացմանը, կփոխվեր Հայաստանի կեցվածքը Թուրքիայի հանդեպ, կմեծանար

387 Տե՛ս Արշակյան Գ., Թուրք-հայկական հարաբերությունները Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակի պայմաններում, // «Հայագիտության հարցեր», թիվ 2 (8), էջ 6-7:

Թուրքիայի ազդեցությունը Հայաստանի վրա, էականորեն կբարելավվեին հայ-թուրքական հարաբերությունները, և դրա արդյունքում չէր լինի 1998 թվականին սկիզբ առած Քոչարյանի իշխանության ազգայնական «ծայրահեղականությունը»»[388]:

Նույն Վուրալի կարծիքով՝ «թուրքերը պետք է հաշտվեն այն իրողության հետ, որ հայերը չեն հրաժարվելու ցեղասպանության մասին պնդումներից»: Հետևաբար, ըստ թուրք դիվանագետի՝ «ցեղասպանության միջազգային դատապարտման ալիքը կասեցնելու նպատակով անհրաժեշտ է քննարկել անցյալի «ցավալի» իրադարձությունների համար հայերից ներողություն խնդրելու և նույնիսկ փոխհատուցելու հնարավորությունները»[389]:

Չնայած թուրք դեսպանի նման պնդումներին՝ թուրքական իշխանությունները շարունակում էին հանդես գալ Հայաստանի հետ հարաբերություններում նախապայմանների դիրքերից: Պարզապես քննարկվող ժամանակաշրջանում վրաց-ռուսական «հնգօրյա պատերազմի» արդյունքում Թուրքիան ակամա հայտնվել էր տարածաշրջանային հակամարտությունների կիզակետում: Ուստի Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը տարածաշրջանային առաջատարի դերին հավակնող Թուրքիային թելադրում էր գոնե ժամանակավորապես հետ կանգնել

388 Տե՛ս Düzel N., Volkan Vural: Ermeni ve Rumlar tekrar vatandaş olsun', 08. 09. 2008, https://team-aow.discuforum.info/t1604-Volkan-Vural-Ermeni-ve-Rumlar-tekrar-vatandas-olsun.htm

389 Տե՛ս նույն տեղում:

նախապայմաններից[390]: Վերը նշվածի օգտին է խոսում այն ժամանակվա Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանի այն հայտարարությունը, որ «պատերազմը (նկատի ունի ռուս-վրացական պատերազմը-Մ.Ն.) ցույց տվեց, որ մենք պետք է նոր մոտեցում ցուցաբերենք Կովկասում հակամարտությունների կարգավորմանը, ներառյալ Հայաստանի պարագայում»[391]:

Անշուշտ, նման մոտեցումը պետք է ենթադրեր նաև Թուրքիայի կողմից Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելուն ուղղված կոնկրետ քայլեր: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ Հայաստանն Արցախյան հակամարտության շահագրգիռ կողմ էր, ամենևին էլ պատահական չպետք է համարել այն փաստը, որ «Թուրքիան ներքաշվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման դաշտ»[392]:

Ասվածն ամենևին էլ չի նշանակում, թե Թուրքիան ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորման հարցում դադարում էր ժխտողական վերաբերմունք ցուցաբերել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության փաստին: Դրա ամենավառ ապացույցը թերևս այն էր, որ Թուրքիայի վարչապետ Էրդողանը 2008 թ. դեկտեմբերին հանդես է գալիս Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության համար համացանցում ներողություն խնդրող թուրքական մտավորականության ներկայացուցիչների հասցեին լուրջ քննադատությամբ՝ նշելով. «Մենք չենք կատարել այդ հանցագործությունը և խնդիր

[390] Տե՛ս Թորոսյան Տ., Թուրքիայի արտաքին քաղաքականության «Նոր ակտիվիզմի» երկրորդ փուլը, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1-2, Եր., 2010, էջ 6-7:

[391] «Hürriyet», Istanbul, 2008, 6 Eylül.

[392] Տե՛ս Եղիազարյան Ա., Արշակյան Գ., Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Եր., 2014, էջ 166:

չունենք ներողություն խնդրելու: Ով մեղավոր է, նա կարող է ներողություն հայցել: Բայց Թուրքիայի Հանրապետությունն ու թուրք ժողովուրդը նման խնդիր չունեն»[393]:

Քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի ղեկավարությունը, ինչպես և նախկինում, շարունակում էր մեղադրել տարբեր երկրների խորհրդարաններին այն բանի համար, որ վերջիններս, ճանաչելով Հայոց ցեղասպանության փաստը, խոչընդոտում են Հայաստանի և Թուրքիայի միջև ընթացող մերձեցման գործընթացին: Նման պարագայում թուրքական կողմը շարունակում էր մեղադրել հայկական Սփյուռքին՝ նշված երկրների խորհրդարաններում լոբբիստական գործունեություն ծավալելու համար:

Նշվածի օգտին էր խոսում հենց թեկուզ այն փաստը, որ Թուրքմենստանում Թուրքիայի դեսպան Հուսեյն Ավնի Բիչակլին Հայաստանի դեսպան Վ. Բադալյանի հետ 2008թ. հուլիսի 8-ին և հոկտեմբերի 22-ին կայացած հանդիպումների ընթացքում, պատասխանելով ՀՀ դեսպանի՝ երկու պետությունների միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և փոխշահավետ առևտրատնտեսական գործակցությունը ավելի զարգացնելու առաջարկին, անդրադարձ է կատարում թուրքական կողմին հուզող թերևս ամենակարևոր հարցին՝ հայկական Սփյուռքի լոբբիստական աշխատանքի արդյունքում և Հայաստանի իշխանությունների ջանքերով տարբեր երկրների խորհրդարանների կողմից ցեղասպանության ճանաչման գործընթացին, և նշում, որ հայկական Սփյուռքի անզիջողականությունը ծնում է

---

393 Տե՛ս «Известия», Москва, 2008, No. 237, 18 декабря; տե՛ս նաև՝ Görgülü A., Senyücel Gündoğar S., Iskandaryan A., Minasyan S., Turkey-Armenia Dialogue Series: Breaking the Vicious Circle, // «TESAV-Caucasus Institut joint report», Istanbul, TESAV Publications, April 2009, p. 14.

հակահայկական նոր տրամադրություններ և խանգարում երկու պետությունների մերձեցմանը: Բացի այդ, Բիչակլին այն կարծիքն է հայտնում, որ իրենք «վստահ չեն, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո էլ այդ գործընթացը չի շարունակվի, և Հայաստանը կկարողանա օգտագործել իր ազդեցությունը Սփյուռքում այդ ճնշումը թուլացնելու համար»[394]:

Կասկածից վեր է, որ այս և նման այլ հայտարարությունների նպատակը ՀՀ-ն և Սփյուռքը պառակտելն էր: Թուրքերը շատ լավ հասկանալով, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնական նախաձեռնողը հենց Սփյուռքն է, փաստորեն կոչ էին անում ՀՀ իշխանություններին ձերբազատվել թուրք-հայկական «վերածնվող» հարաբերությունների վրա Սփյուռքի ազդեցությունից:

Ի պատասխան թուրքերի նման հայտարարություններին՝ ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը նշում է, որ «քաղաքական այդ հայտարարությունները հիշեցնում են 1915 թվականի պատմությունն ու փաստերը և չեն նպաստում երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների խթանմանը»: Ավելին, ըստ Սարգսյանի՝ թուրքերի «նման կոպիտ կեցվածքը խանգարում է Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցության գործընթացի արագացմանը»: Վերջում, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, ՀՀ վարչապետը շեշտում է, որ «դրանց կարգավորման

---

[394] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 14, գործ 151, էջ 84-85, 97-98:

միակ ելքը հայ-թուրքական սահմանների բացումն է»[395]:

2009 թվականին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, իր հայտարարության մեջ անդրադառնալով Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի՝ իրեն Թուրքիա պատասխան այցով հրավիրելու հանգամանքին[396], նշում է, թե «հոկտեմբերի 14-ին կայանալիք ֆուտբոլային խաղը դիտելու համար Թուրքիա կմեկնի, եթե հայ-թուրքական սահմանը բաց լինի, կամ կողմերը մոտ լինեն դրան»[397]:

Անդրադառնալով Ս. Սարգսյանի այս հայտարարությանը՝ ցանկանում ենք նշել, որ նրա համար շատ դժվար էր լինելու Թուրքիա չմեկնելը, անգամ եթե սահմանը բացված չլիներ, քանզի ֆուտբոլային դիվանագիտության նախաձեռնողը հենց ինքն էր, և դժվար թե հենց ինքն էլ հանդես գար այդ նախաձեռնությունը տապալողի դերում: Ուստի կարծում ենք սխալված չենք լինի, եթե նշենք, որ Ս. Սարգսյանի այս հայտարարությունը, մեղմ ասած, իրատեսական չէր, քանզի ոչ մի երաշխիք չկար, որ նախքան ՀՀ նախագահի Թուրքիա մեկնելը Թուրքիան կբացեր Հայաստանի հետ սահմանը կամ գոնե մոտ կլիներ դրան: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ սահմանները այդպես էլ չբացվեցին և անգամ մոտ չէին դրան, սակայն Ս. Սարգսյանը, այնուամենայնիվ, հոկտեմբերի 14-ին մեկնում է Թուրքիա[398]:

Փաստերը վկայում են, որ դեռևս 2007 թ. սեպտեմբերին շվեյցարական կողմի միջնորդությամբ գաղտնի բանակցություններ են

---

[395] Նույն տեղում, ցուցակ 16, գործ 288, էջ 14:

[396] Տե՛ս նույն տեղում, ցուցակ 14, գործ 151, էջ 93; ցուցակ 18, գործ 175, էջ 10:

[397] Տե՛ս Սերժ Սարգսյանը ժամանեց Թուրքիա, 14. 10. 2009, https://www.azatutyun.am/amp/1851503.html

[398] Տե՛ս Նախագահ Սարգսյանը Թուրքիայի իր գործընկերոջ հրավերով ժամանել է Բուրսա՝ դիտելու Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային խաղը, 14. 10. 2009, http://www.president.am/hy/press-release/item/2009/10/14/news-759/

սկսվում Հայաստանի և Թուրքիայի միջև: Բանակցություններում զգալի ավանդ ուներ շվեյցարացի դիվանագետ, 2005-2010 թթ. Շվեյցարիայի արտաքին գործերի պետքարտուղար Մայքլ Ամբյուլը: Հենց նրա անմիջական ջանքերով էլ 2008 թվականին կայացել են երեք հանդիպումներ ՀՀ և Թուրքիայի արտաքին գործերի փոխնախարարներ Արման Կիրակոսյանի և Էրթուղրուլ Ապականի մասնակցությամբ: Ավելորդ չենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ Մ. Ամբյուլն ի սկզբանե ընդգրկված է եղել նաև հայ-թուրքական արձանագրությունների մշակման գործընթացում և ներկա է գտնվել արդեն 2009 թ. հոկտեմբերին Ցյուրիխում դրանց ստորագրման պաշտոնական արարողությանը[399]:

ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դենիել Ֆրիդը շատ բարձր է գնահատել Ամբյուլի ավանդը բանակցային գործընթացում և խոստովանել, որ «նա հսկայական աշխատանք է կատարել և առանց նրա մենք ոչինչ չէինք անի»[400]:

Բանակցությունների արդյունքում 2009 թ. ապրիլի 22-ին Շվեյցարիայի արտաքին գործերի դեպարտամենտի միջնորդությամբ ՀՀ և Թուրքիայի արտգործնախարարությունները համաձայնեցնում են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզ», որում արդեն խոսք կար պատմաբանների հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ[401]: Ըստ որում՝ այդ հանձնաժողովը պետք է զբաղվեր «Թուրքիայի և

---

399 Տե՛ս Մայքլ Ամբյուլ՝ հայ-թուրքական գործընթացի շվեյցարացի «կապավորը», «Հատուկ թղթապանակ», 20. 01. 2014, https://mediamax.am/am/news/special-file/8778

400 Տե՛ս նույն տեղում:

401 Տե՛ս Torosyan T., The Return of Turkey: Ankara in the South Caucasus after the Russian-Georgian War, // «Russia in Global Affairs», Vol. 7, No. 3, July-September 2009, p. 127; տե՛ս նաև՝ Shiriyev Z. and Davies C., The Turkey-Armenia-Azerbaijan Triangle: The Unexpected Outcomes of the Zurich Protocols, // «Perceptions: Journal of International Affairs, Spring 2013, Volume XVIII, Number 1, p. 192.

Հայաստանի ընդհանուր պատմության գիտական հետազոտմամբ»[402]:

Արդեն 2009 թ. օգոստոսի 31-ին ՀՀ և Թուրքիան նախաստորագրում են «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները[403]:

Նշենք, որ արձանագրությունների բովանդակությունը լայն քննարկման առարկա է դառնում ինչպես բուն Հայաստանում և Սփյուռքում, այնպես էլ Թուրքիայում և Ադրբեջանում: Ընդ որում՝ եթե Հայաստանը շարունակում էր հանդես գալ երկու երկրների միջև առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորման պահանջով, ապա Թուրքիան, դրան հակառակ, սկսում է հանդես գալ երկիմաստ անորոշ ձևակերպումներով:

Ի վերջո, 2009 թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում ՀՀ և Թուրքիայի ԱԳ նախարարների կողմից ստորագրվում են «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները: Նշված արարողությանը ներկա էին նաև ԱՄՆ, ԵՄ, ՌԴ և Շվեյցարիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարները[404]:

Ստորագրված արձանագրությունների համաձայն՝ երկու երկրների միջև հաստատվելու

---

402 Տե՛ս Phillips D., Diplomatic History: The Turkey-Armenia Protocols, New York: Columbia University, Institute for the Study of Human Rights, March 2012, p. 55.

403 Տե՛ս նույն տեղում:

404 Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, https://www.mfa.am/filemanager/bilateral/Turkey/20091013_protocol.pdf, Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև հարաբերությունների զարգացման մասին, https://www.mfa.am/filemanager/bilateral/Turkey/20091013_protocol1.pdf

էին դիվանագիտական հարաբերություններ՝ 1961 թվականի Վիեննայի կոնվենցիայի հիման վրա: Բացի այդ, նախատեսվում էր երկու ամսվա ընթացքում բացել սահմանները, ստեղծել միջկառավարական երկկողմ հանձնաժողով, որը բաղկացած կլիներ առանձին ենթահանձնաժողովներից, ընդ որում՝ ինչպես նշվում էր արձանագրության մեջ, «անհրաժեշտության դեպքում ենթահանձնաժողովի աշխատանքներին կարող էին մասնակցել նաև միջազգային փորձագետներ»[405]:

Արձանագրությունների բովանդակությանը ծանոթանալիս, առաջին հայացքից կարող է թվալ, թե ստորագրված արձանագրությունները կարող էին լրջորեն նպաստել երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գործին: Սակայն, առավել ուշադիր գտնվելու դեպքում, չենք կարող չնկատել այն հանգամանքը, որ արձանագրություններում տեղ գտած առանձին ենթահանձնաժողովներից բաղկացած միջկառավարական երկկողմ հանձնաժողովի ստեղծման գաղափարը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու թուրքական առաջարկի մի փոքր այլ դրսևորում, հանգամանք, որը ինչպես արդեն նշել ենք, միանգամայն անընդունելի էր ՀՀ համար: Բացի այդ, հայկական կողմի համար միանգամայն անընդունելի պետք է լիներ նաև արձանագրություններում առկա սահմանները փոխադարձ ճանաչելու դրույթը, որի հետ համաձայնելը, փաստորեն, նշանակելու էր, որ ՀՀ ընդունում է միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտմամբ ստորագրված քեմալա-բոլշևիկյան 1921 թվականի հայտնի պայմանագրերը: Եվ վերջապես

[405] Նույն տեղում:

չէր կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ արձանագրությունների տեքստից հստակ չէր հասկացվում, որ հենց ինքը Թուրքիան էր 1993 թվականին միակողմանիորեն փակել ՀՀ հետ սահմանը:

Իսկ ինչ վերաբերում է Թուրքիային, ապա արձանագրություններում տեղ գտած վերը նշված դրույթների շնորհիվ Թուրքիան հերթական անգամ կասկածի տակ էր դնում Ցեղասպանության եղելության փաստը և ստանում էր այն, ինչը պետք էր տարբեր երկրներում ընթացող Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ որպես փաստարկ օգտագործելու համար: Ուստի միանգամայն իրավացի էր Թուրքիայում միակ հայկական ՍԾՏՀ-ում Ներկայացուցչության ներկայացուցիչ Կարեն Միրզոյանը, երբ Թուրքիայում գտնվող Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմբնեբիի հետ հանդիպման ժամանակ այն կարծիքն էր հայտնում, որ Թուրքիայի այդ քայլը «ամրապնդում է այն համոզվածությունը, որ դա դիվանագիտական մանևր կատարելու փորձ է»[406]: Այդ հանգամանքն, անշուշտ, գիտակցում էին նաև Սփյուռքում, որի լավագույն ապացույցը, թերևս Սփյուռքի աննախադեպ կոշտ ռեակցիան էր Թուրքիայի նշված քայլին:

Կարծում ենք դժվար չէ նկատել, որ ինչպես նախկինում, այնպես էլ քննարկվող ժամանակաշրջանում Թուրքիայի և ժամանակի ազդեցիկ պետությունների կողմից Հայկական հարցը շարունակում էր քաղաքական շահարկումների առարկա հանդիսանալ, որի մասին է խոսում հենց թեկուզ այն փաստը, որ ԱՄՆ-ը, որը չնայած տարածաշրջանում իր ռազմավարական

[406] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 14, գործ 151, էջ 25-27:

հետաքրքրություններից դրդված միջնորդական ջանքերով հանդես էր գալիս հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ, խոստացել էր ապրիլյան ուղերձում 1915 թվականի իրադարձությունները որակել որպես ցեղասպանություն, այդուհանդերձ Թուրքիա կատարած այցից հետո, Բարաք Օբաման, նախագահ Գյուլի հետ տված ասուլիսում հղում կատարելով օրեր առաջ Ալի Բաբաջանի կողմից արված հայտարարությանը, որտեղ ասվում էր, թե իբր «այդ հարցով պետք է զբաղվեն պատմաբանների հանձնաժողովը, և Թուրքիան պատրաստ է ընդունել վերջինիս ցանկացած անկողմնակալ եզրահանգում, և ցանկացած անզգույշ քայլ կարող է վնասել գործընթացին»[407], նշում է, որ ինքը չի փոխում Հայոց ցեղասպանության գնահատման հարցում նախընտրական շրջանում իր արտահայտած տեսակետը, սակայն շատ ուրախ է Թուրքիայի և Հայաստանի միջև ընթացող բանակցությունների համար և հղում կատարելով պատմաբանների հանձնաժողով ստեղծելու դրույթին՝ երաշխավորում է իրեն հաջորդ օրն իր ապրիլքսանչորսյան ուղերձում «ցեղասպանություն» բառն ասելու ամենամյա խնդրից: Ավելին, կոչ է անում կողմերին առողջ և սթափ մոտեցում ցուցաբերել պատմության խրթին հարցերի վերաբերյալ[408]: Ակնհայտ էր, որ ԱՄՆ-ը, շեշտելով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը, իրականում լուծում էր սեփական խնդիրները:

Նշենք նաև, որ ցյուրիխյան գործընթացի արդյունքը ձեռնտու էր նաև ԵՄ-ին, որովհետև եթե վավերացվեին այդ արձանագրությունները,

---

407 Տե՛ս Հովհաննիսյան Ա., Թուրքիա. ազնիվ միջնորդություն թե՞ քաղաքական սակարկություն, // «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հատ. VI, Եր., 2009, էջ 354:
408 Տե՛ս «Ազդակ», Բեյրութ, 2009, թ. 28, 7 ապրիլի:

Թուրքիայի անդամակցության հարցը կդառնար շատ ավելի առարկայական: Կարծում ենք, որ նման պարագայում «ստորագրված, բայց չվավերացված» սցենարը ԵՄ համար լավագույնն էր:

Ուստի, առանց երկմտելու կարող ենք նշել, որ «թեև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում միջազգային հանրության դիրքորոշումը համահունչ էր ՀՀ որդեգրած սկզբունքային դիրքորոշմանը և դրանով պայմանավորված մի շարք պետություններ, այդ թվում ՌԴ-ն, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Շվեյցարիան հայտարարում էին, որ գնդակը գտնվում է Թուրքիայի դաշտում, և ժամանակն է, որ թուրքական կողմը գործնական քայլ կատարի արձանագրությունների վավերացման և իրականացման ուղղությամբ[409], այդուհանդերձ, մեր կարծիքով, միջազգային հանրությունը «մեղքի» իր բաժինը ունի այդ հարցում: Իրենց սեփական ռազմավարական շահերից դրդված՝ նշված երկրները, բավարար ճնշում չգործադրելով Թուրքիայի վրա և կարգավորման գործընթացը թողնելով խառնաշփոթի մեջ, ավարտին չհասցրին իրենց միջնորդական առաքելությունը և գործընթացից հեռացան բավականին վաղ շրջանում:

Ինքնին հասկանալի է, որ ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումից հետո ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանում տեղի էին ունենալու արձանագրությունների վերաբերյալ խորհրդարանական լսումներ: Այսպես, ԹԱՄԺ-ում հատկապես բուռն քննարկումների տեղիք է տալիս Հայոց ցեղասպանության հարցը: Նման պայմաններում Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն ստիպված է լինում

---

409 Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 18, գործ 176, էջ 94:

լսումների մասնակիցներին տեղեկացնել, որ Հայոց ցեղասպանության խնդիրը դառնալու է ձևավորվելիք ենթահանձնաժողովների քննարկման առարկա:

Մեզ հուզող հարցի տեսանկյունից զգալի հետաքրքրություն է ներկայացնում ընդդիմադիր քրդական «Ժողովրդավարական հասարակություն» կուսակցության պատգամավոր Սելահեթթին Դեմիրթաշի ելույթը, որում վերջինս անդրադառնում է Հայոց ցեղասպանության խնդրին և նշում, որ «...1915-1916 թթ. այդ ժամանակվա երիտթուրք վարչախմբի կողմից Անատոլիան թուրքացնելու, իսլամացնելու նպատակով պարբերաբար կիրառվել է ոչ մուսուլմանների ոչնչացման քաղաքականություն...», ընդ որում՝ ըստ Դեմիրթաշի՝ «այդ ժամանակ հայ ժողովրդի հանդեպ կիրառվածներն ընդհանրապես տեղ չեն գտել պատմության գրքերում, կրթության նախարարության հրատարակած դասագրքերում, ասես դրանք տեղի չեն ունեցել»[410]: Բացի այդ, ընդդիմադիր պատգամավորն իր ելույթում փաստում է, որ «Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ ստեղծվել է քաղաքական և գաղափարախոսական կարծրացած ընկալում», և ընդգծում, որ «իրենց պարտականությունն է այդ ամբիոնից հայտարարել իրենց իմացած իրողությունների մասին»[411]:

Դժվար չէ կռահել, որ այդ և նմանատիպ ելույթները պետք է արժանանային ինչպես իշխող AKP, այնպես էլ ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» (CHP), «Ազգայնական շարժում» (MHP) կուսակցությունների քննադատությանը:

---

410 Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում (2007-2014), // «Ժամանակակից Եվրասիա», հատոր III (2), Եր., 2014, էջ 78-79:

411 Տե՛ս նույն տեղում:

Ցյուրիխյան արձանագրությունների բովանդակությունն ու ստորագրման գործընթացը մեծ աղմուկ և անհանգստություն է բարձրացնում Ադրբեջանում: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Թուրքիան սեփական արտաքին քաղաքականության հարցում փորձում էր հնարավորինս չառաջնորդվել երրորդ պետության՝ տվյալ դեպքում Ադրբեջանի ցանկությամբ:Ուստի,մեր կարծիքով,ճիշտ կլինի,որ Թուրքիայի կողմից Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացում նախապայմանների առաջադրումը դիտարկվի զուտ թուրքական պետության շահերի տեսանկյունից:

Բացի այդ, ցանկանում ենք ընդգծել նաև, որ ինչպես ցյուրիխյան արձանագրություններին նախորդող, այնպես էլ հաջորդող ժամանակահատվածում Թուրքիայի իշխանական վերնախավի ելույթներն ու գործողությունները զգալիորեն հակասում էին բանակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններին: Ուստի, սխալված չենք լինի,եթե պնդենք,որ Թուրքիան հենց սկզբից մտադիր էր չհարգել ձեռք բերված պայմանավորվածություններն ու միջազգային պարտավորությունները: Արդյունքում ակնհայտ է դառնում, որ Թուրքիան քննարկվող ժամանակաշրջանում ՀՀ-ի հետ հարաբերություններում վարում էր երկակի քաղաքականություն, որի նպատակը մի կողմից քաղաքակիրթ աշխարհին ցուցադրելն էր, թե իբր Թուրքիան զգալի ջանքեր է գործադրում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ,մյուս կողմից հավատարիմ մնալ ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում նախապայմանների առաջադրմանը: Որպես

ասվածի ապացույց, ցանկանում ենք բերել այն փաստը, որ արձանագրությունների կնքման հաջորդ օրն արդեն Թուրքիայի վարչապետ Էրդողանը հանդես է գալիս նախապայման պարունակող հայտարարությամբ՝ նշելով, որ «ՀՀ-ի հետ Թուրքիայի սահմանի բացումը կապված է Ղարաբաղյան հիմնահարցում առաջընթացի հետ», և որ իրենք ցանկանում են, «որ բոլոր սահմանները բացվեն միաժամանակ»[412]:

ՀՀ-ում ևս, նախքան արձանագրությունների ստորագրումը, 2009 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովում «Նախաստորագրված արձանագրությունները և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը» թեմայով անցկացվում են խորհրդարանական լսումներ: Լսումներին մասնակցում էին ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանը, հանձնաժողովի նախագահ Ա. Ռուստամյանը, հանձնաժողովի անդամներ, փորձագետներ և ուրիշներ[413]:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ռուստամյանն իր ելույթում նշում է, որ «նախաստորագրված արձանագրությունները թուրքական նախապայմանների համար հող են ստեղծում», և «ընդհանուր սահմանների ճանաչման մասին արձանագրություններում տեղ գտած ձևակերպումները Թուրքիային և Ադրբեջանին հնարավորություն են տալիս խուսափել Կարսի պայմանագրի իրավական վիճարկման հետևանքներից և հասնել Խորհրդային Միության և Թուրքիայի միջև հաստատված սահմանների՝ Անկախ Հայաստանի

---

[412] Տե՛ս Գեղամյան Վ., նշվ. աշխ., http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=5338

[413] Հայ-թուրքական հարաբերությունների և նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ խորհրդարանական լսումներ Ազգային ժողովում, 01.10.2009, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3533&year=2009&month=10&day=01

կողմից ճանաչմանը»: Բացի այդ, Ռուստամյանի կարծիքով, արձանագրություններում տեղ գտած պատմական փաստերն ու սումնասիրելու հետկապված ենթահանձնաժողովի ստեղծման գաղափարը «մեծ նվեր է մատուցում Թուրքիային՝ Հայոց ցեղասպանության դատապարտման հարցը միջազգային մակարդակից իջեցնելով երկկողմ հարաբերությունների հարթություն»[414]:

Անկախ պատգամավոր Տ. Թորոսյանի կարծիքով, արձանագրություններով «կողմերը որոշում են բացել ընդհանուր սահմանը, այսինքն՝ համաձայնության նշան է դրվում Հայաստանի և Թուրքիայի սահմանի նկատմամբ վերաբերմունքի միջև», որով էլ փաստորեն Հայաստանը «շատ մեծ զիջում է անում Թուրքիային՝ նրա վրայից ջնջելով միջազգային իրավունքը ոտնահարողի խարանը»[415]:

Լսումների ընթացքում ուշագրավ հարցադրումներ էր պարունակում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանի ելույթը: Վերջինս, իր տարակուսանքն է հայտնում այն փաստի առթիվ, որ «փաստաթղթերը պատրաստած անձինք պնդում են, որ դրանցում նախապայմաններ չկան»: Դրան Մելքոնյանը հակադրում է այն փաստը, որ, ըստ արձանագրությունների, «կողմերը ճանաչում են միմյանց միջև գոյություն ունեցող սահմանը»: Բերելով նաև այլ փաստարկներ արձանագրություններում նախապայմանների առկայության վերաբերյալ՝ Ա. Մելքոնյանն ուշադրություն է հրավիրում նաև արձանագրություններում տեղ գտած այն ձևակերպման վրա, ըստ որի՝ «Կողմերը ձեռնպահ են մնում բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն

---

[414] Նույն տեղում:
[415] Նույն տեղում:

վարելուց»,և փաստում, որ այդ միտքը վերցված է 1918թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրից, որը, ըստ հեղինակի, «Թուրքիայի և Հայաստանի միջև կնքված պայմանագրերից մեզ համար ամենածանրն ու վատթարագույնն էր»[416]: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ Ա. Մելքոնյանը դեմ է արտահայտվում արձանագրությունների ստորագրմանը:

Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից բավական ուշագրավ է նաև լսումների ընթացքում Կանադայում ՀՀ նախկին դեսպան Ա. Պապյանի ելույթը, որում նա հանդես է գալիս արձանագրությունների բովանդակության հետ կապված կոնկրետ գնահատականներով: Այսպես, ըստ Պապյանի՝ արձանագրությունները նախ «խախտում են ՀՀ տարածքային ամբողջականությունը, ոտնահարում են միջազգային իրավունքի մի շարք հիմնադրույթներ, հակասում են ՀՀ Սահմանադրությանը և գործող օրենսդրությանը», բացի այդ, դրանք «սակարկության առարկա են դարձնում ՀՀ և հայ ժողովրդի շահերը, իրավունքներն ու ազգային մեծագույն ողբերգությունը, խիստ կասկածելի, միայն ենթադրյալ տնտեսական շահի համար մեզ զրկում են ապագայում մեր զարգացման հնարավոր միջոցներից և վտանգի են ենթարկում ՀՀ բուն իսկ գոյությունը», և վերջապես «չեն ապահովում բանակցությունների նպատակ հայտարարված լիարժեք դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու սահմանի երաշխավորված բացումն ու բաց մնալը»[417]: Ելնելով նշված գնահատականներից՝ Պապյանը ևս դեմ է

[416] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 274, 277:

[417] Պապյան Ա., Հայ-թուրքական արձանագրությունների վերլուծություն (ելույթ ՀՀ Ազգային ժողովի լսումների ժամանակ), // «Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր», հոդվածների ժողովածու, Եր., 2012, Մաս 2, էջ 199:

արտահայտվում արձանագրությունները ստորագրելու:

Վերը նշված ելույթներում առկա փաստարկներն այնքան խորն են ու բազմակողմանի, որ կասկած անգամ չեն հարուցում դրանց ճշմարտացիության մեջ, սակայն խնդիրն այն էր, որ անգամ նման բազմակողմանի փաստարկներն ի զորու չեղան համոզելու ՀՀ ղեկավարությանը հետ կանգնելու ցյուրիխյան արձանագրությունները ստորագրելու գաղափարից:

Արդեն 2010 թ. հունվարի 12-ին ՀՀ Սահմանադրական դատարանում (այսուհետև ՍԴ) քննության է առնվում ցյուրիխյան արձանագրությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Արդյունքում, ՀՀ ՍԴ-ն որոշում է, որ ցյուրիխյան արձանագրությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ միևնույն ժամանակ որոշման նախաբանում հայտարարելով, որ «արձանագրությունները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ հակասի Հայաստանի անկախության հռչակագրի 11-րդ հոդվածին, որտեղ նշվում է, որ Հայաստանը աջակցում է Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում 1915 թվականին տեղի ունեցած ցեղասպանության միջազգային ճանաչմանը»[418]:

ՍԴ որոշման հետ կապված, մենք լիովին կիսում ենք Տ.Թորոսյանի այն կարծիքը, որ այդ «որոշումը հիմնված էր երկակի մոտեցման վրա. մի կողմից՝

---

[418] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թ. հունվարի 12-ի ՍԴՈ-850 որոշում: ՀՀՊՏ 2010.01.20/3 (737) Հոդ. 9, 12.01.2010, էջ 1-8, http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-850.pdf

հաստատում էր արձանագրությունների սահմանադրականությունը, մյուս կողմից՝ սահմանափակում դրանց կիրառումը ցեղասպանության և գործող հայ-թուրքական սահմանի ճանաչման վերաբերյալ»[419]:

Թուրքական իշխանությունները, անդրադառնալով ՀՀ ՍԴ-ի նշված որոշմանը, արտգործնախարարության մակարդակով տարածում են հաղորդագրություն, որում մասնավորապես նշվում էր. «Հայաստանի ՍԴ-ի որոշումը վտանգում է այդ արձանագրությունների շուրջ ընթացող բանակցությունների բուն իմաստը, ինչպես նաև դրանց հիմնարար նպատակը: Այդ մոտեցումը չի կարող ընդունելի լինել թուրքական կողմի համար»[420]:

Բացի այդ, Թուրքիայի տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամի տնօրեն Ա. Գորգուլուն ևս, անդրադառնալով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմանը, կարծիք է հայտնում, որ «դրանք ձախողում են պատմաբանների ենթահանձնաժողովի ստեղծման հիմքը, որն էլ իբր պետք է ուսումնասիրեր 1915 թվականի իրադարձությունները»[421]:

Այսպիսով, Թուրքիան փորձում էր ցյուրիխյան արձանագրությունների վավերացման պատասխանատվությունը դնել ՀՀ իշխանությունների վրա և պահանջել վերջիններից վերանայել ՍԴ որոշումը: Մինչդեռ, ըստ ՀՀ Սահմանադրության, այդ որոշումները վերջնական են և վերանայման ենթակա չեն:

---

[419] Տե՛ս «Նոր Հառաջ», Փարիզ, 2010, թ. 28, 29 հունվարի, թ. 29, 2 փետրվարի:
[420] Տե՛ս Ավետիսյան Տ., Թուրքիան նախապայմաններ է տեսնում Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշման մեջ, 19. 01. 2010, http://www.azatutyun.am/content/article/1933694.html
[421] Горгулу А., Турция и Южный Кавказ в 2010 г., // «КАВКАЗ-2010», Ежегодник Института Кавказа, Редактор Александр Искандарян, Ер., Институт Кавказа, 2012, с. 148-149.

ՀՀ ՍԴ որոշումից մեկ ամիս անց՝ փետրվարի 12-ին, ցյուրիխյան արձանագրությունները ուղարկվում են Ազգային ժողով՝ վավերացման: ՀՀ Ազգային ժողովում ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հետ կապված կարծիքները երկփեղկվում են: Այսպես, ՀՀ խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերից ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և ՕԵԿ-ը արտահայտվում են արձանագրությունների վավերացման օգտին՝ այն վերապահումով, եթե Թուրքիայի խորհրդարանն առանց նախապայմանի վավերացնի դրանք:

Հակառակ դրան՝ ՀՅԴ խմբակցությունը կոչ է անում «ձախողել արձանագրությունների վավերացումը սահմանադրական բոլոր միջոցներով»՝ այն պատճառաբանությամբ, որ 21-րդ դարում «փակ սահմանը աննորմալ երևույթ է»[422]:

Օգտվելով այդ հանգամանքից՝ թուրքական կողմը, իրեն բնորոշ խորամանկությամբ, առաջ է քաշում այն տեսակետը, թե արձանագրությունների վավերացման և երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը սառեցնելու նախաձեռնողը ոչ թե Թուրքիան է, այլ Հայաստանը:

Ստեղծված իրավիճակում ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ ԵՄ-ը փորձեր են ձեռնարկում ճնշում գործադրել կողմերի՝ հատկապես Թուրքիայի վրա՝ Հայաստան-Թուրքիա կարգավորումը հնարավորինս արագացնելու նպատակով: Դրա վառ դրսևորումը կարելի է համարել Հայոց ցեղասպանությունը դատապարտող երկու բանաձևերի ընդունումը մարտի սկզբին՝ մեկ շաբաթվա տարբերությամբ: Նախ, 2010 թ. մարտի 4-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների

---

422 Հայ Յեղափոխական Դաշնակցութեան առաջարկած փոփոխությունները ՀՀ և Թուրքիայի Հանրապետության միջև 2009 թ. օգոստոսի 31-ին նախաստորագրված արձանագրություններում, Եր., 2009, էջ 2:

պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քվեարկության էր դրվում հայերի դեմ իրականացված ցեղասպանությունը դատապարտող թիվ 252-րդ բանաձևը, որով կոչ էր արվում ԱՄՆ նախագահին «պատշաճ ըմբռնում» ցուցաբերել հայերի դեմ իրագործված ցեղասպանությանը: Բանաձևը 23 կողմ և 22 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվում է մտցնել Կոնգրեսի ընդհանուր օրակարգ[423]: Իսկ 2010 թ. մարտի 11-ին Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև է ընդունում նաև Շվեդիայի խորհրդարանը[424]: Ճիշտ է դրանում որևէ նորություն չկար, սակայն հիշենք, որ այդ բանաձևերը, ի վերջո, միտված էին ազդելու Թուրքիայի վրա՝ արձանագրությունների վավերացումը հնարավորինս արագացնելու նպատակով:

Ինքնին հասկանալի է, որ թուրքական իշխանությունները փորձում են ջանքեր գործադրել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: 2010 թ. ապրիլի 7-ին Երևան է ժամանում Թուրքիայի փոխարտգործնախարար Ֆ. Սինիրլիօղլուն, ով նախագահ Սարգսյանին է փոխանցում Թուրքիայի վարչապետի առաջարկը՝ կազմակերպել երկկողմ հանդիպում Վաշինգտոնում կայանալիք Միջուկային անվտանգության գագաթնաժողովի շրջանակներում[425]:

Հանդիպումը կայանում է 2010 թ. ապրիլի 12-ին Վաշինգտոնում: Հանդիպման ընթացքում ՀՀ նախագահն ու Թուրքիայի վարչապետը քննարկում են

---

423 Տե՛ս Հովհաննիսյան Ա., ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովը հավանություն տվեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծին, 05. 03. 2010, http://www.armenialiberty.org/content/article/1974951.html

424 Տե՛ս Zeldin W., Sweden: Parliament Approves Resolution on Armenian Genocide, 16. 03. 2010, http://www.loc.gov/law/foreign-news/article/sweden-parliament-approves-resolution-on-armenian-genocide/

425 Նախագահ Սերժ Սարգսյանը ընդունել է Թուրքիայի վարչապետի հատուկ բանագնացին, 07. 04. 2010, http://www.president.am/hy/press-release/item/2010/04/07/news-962/

տարածաշրջանային զարգացումների ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման հնարավոր ուղիները[426]: Ինչպես այդ, այնպես էլ արդեն ապրիլի 20-ին կայացած ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի և ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի հանդիպումները մեծ հաշվով չեն կարողանում հաղթահարել Հայաստան-Թուրքիա միջպետական բանակցություններում առկա խոչընդոտները[427], քանզի Թուրքիան նախկինի նման շարունակում էր ՀՀ-ի հետ հարաբերություններում առաջ քաշել նախապայմաններ՝ դրանով իսկ հակասելով ցյուրիխյան արձանագրություններում առկա առանց նախապայմանների ձևաչափին:

Կարծում ենք՝ հենց դա էր հիմնական պատճառը, որ 2010 թ. ապրիլի 22-ին՝ Հայոց ցեղասպանության 95-րդ ամյակի նախաշեմին, Հայաստանում իշխող քաղաքական կոալիցիան հանդես է գալիս հայտարարությամբ, որում նշվում էր, որ, չնայած ՀՀ նախագահի և ՀՀ Ազգային ժողովի գործադրած հետևողական քայլերին՝ ուղղված Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, Թուրքիան շարունակում էր «նախապայմանների առաջադրման քաղաքականությունը», որն էլ, հենց, համաձայն հայտարարության, «փակուղի մտցրեց հայ-թուրքական արձանագրությունների խելամիտ ժամկետներում վավերացման գործընթացը»: Ուստի ՀՀ-ում իշխող կոալիցիոն մեծամասնությունը, «իմաստազրկված համարելով այդ փուլում վավերացման գործընթացի հետագա շարունակումը

[426] Վաշինգտոնում կայացել է Հայաստանի նախագահի և Թուրքիայի վարչապետի հանդիպումը, 12. 04. 2010, http://www.president.am/hy/press-release/item/2010/04/12/news-973/; նաև՝ Վաշինգտոնում կայացել է Հայաստանի և ԱՄՆ նախագահների հանդիպումը, 12. 04. 2010, http://www.president.am/hy/press-release/item/2010/04/12/news-974/,

[427] Տե՛ս Մոսկվայում կայացել է Հայաստանի և Ռուսաստանի նախագահների հանդիպումը, 20. 04. 2010, http://www.president.am/hy/press-release/item/2010/04/20/news-980/

ՀՀ խորհրդարանում, անհրաժեշտ է համարում առկախել այդ գործընթացը՝ հանելով դրանք քառօրյա նիստերի օրակարգից մինչև թուրքական կողմը պատրաստ լինի առանց նախապայմանների գործընթացը շարունակելու»[428]: Դրանով էլ փաստորեն ցյուրիխյան արձանագրությունների վավերացման գործընթացը ՀՀ Ազգային ժողովում սառեցվում է[429]:

Նույն օրը, Ս. Սարգսյանը հանդես գալով հեռուստաուղերձով, շեշտում է, որ «...ցյուրիխյան արձանագրությունների վավերացման ողջամիտ ժամկետները մեր կարծիքով արդեն ավարտվել են», և «ամեն գնով ապրիլի 24-ն անցկացնելու թուրքական գործելաոճը պարզապես անընդունելի է», քանզի «Թուրքիայի իշխանությունները պետք է լավ իմանան», որ «ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող օր է, բայց այն որևէ կերպ չի սահմանափակում դրա միջազգային ճանաչման ժամանակացույցը»: Վերջում ՀՀ նախագահը հայտարարում էր, որ «այս պահից սկսած հարաբերությունների կարգավորման ներկա փուլը համարում ենք սպառված»[430]:

Ճշմարտության դեմ մեղանչած չլինելու համար ցանկանում ենք ընդգծել, որ ՀՀ նախագահի այս ուղերձն ընդամենը պատասխան էր դրանից վեց ամիս առաջ Էրդողանի կողմից Թուրքիայի խորհրդարանում ցյուրիխյան արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցմանը: Անշուշտ, ՀՀ նախագահի նման

---

428 Տե՛ս Կոալիցիայի հայտարարությունը արձանագրությունների վերաբերյալ, 22. 04. 2010, https://www.aysor.am/am/news/2010/04/22/NA-protocols/140490

429 Տե՛ս Սա$արյան Դ., Հայ-թուրքական կարգավորման գործընթացի սառեցման հայկական փաստարկների շուրջ, // «Մերձավոր Արևելք: Պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հոդվածների ժողովածու, VIII, Եր., 2012, էջ 315:

430 Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերձը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22. 04. 2010, http://www.president.am/hy/press-release/item/2010/04/22/news-983/

դիրքորոշման վրա զգալի ազդեցություն է ունեցել նաև Սփյուռքը, որը կտրականապես դեմ լինելով ցյուրիխյան արձանագրությունների ստորագրմանը լուրջ ճնշում էր գործադրում ՀՀ ղեկավարության վրա, հանգամանք, որին անդրադարձել է ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը Մյունխենի անվտանգության համաժողովում ունեցած ելույթում՝ նշելով, որ «հայկական Սփյուռքի շատ ու շատ ներկայացուցիչներ այնքան էլ երջանիկ չէին մեր այդ որոշմամբ»[431]:

Բացի այդ, չմոռանանք շեշտել այն հանգամանքը, որ 2010թ. հոկտեմբերի 27-ին հաստատվում է Թուրքիայի «Ազգային անվտանգության քաղաքականության նոր փաստաթուղթը», որում, ըստ թուրքական մամուլի, Հայաստանը հանվել էր վտանգ ներկայացնող երկրների շարքից[432]:

Վերլուծելով նշված փաստը՝ ցանկանում ենք նշել, որ այդ քայլով թուրքական կողմը նախ ցանկանում էր ցույց տալ համաշխարհային հանրությանը, թե նշված փաստաթուղթը լիովին համապատասխանում է թուրքական նոր իշխանությունների կողմից առաջ քաշված «զրո խնդիր հարևանների հետ» կարգախոսին, քանզի, ինչպես երևում է փաստաթղթից, Հայաստանը ներառված չէր Թուրքիայի համար վտանգ ներկայացնող երկրների ցանկում: Բացի այդ, չի կարելի բացառել նաև այն հանգամանքը, որ նման քայլով Թուրքիան այնուամենայնիվ ցանկանում էր հայկական Սփյուռքը անջատել Հայաստանից, քանի որ թուրքերը հենց Սփյուռքն էին դիտում որպես սպառնալիք:

---

431 Նախագահը մասնակցել է Մյունխենի անվտանգության համաժողովին, 17. 02. 2018, https://www.president.am/hy/press-release/item/2018/02/17/President-Serzh-Sargsyan-attended-Munich-security-conference/

432 Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Եր., 2014, էջ 59:

2011 թվականին, ինչպես Հայաստանի, այնպես էլ Թուրքիայի խորհրդարանների օրակարգերից ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հարցը հանելուց հետո Հայաստան-Թուրքիա հարաբերություններն անորոշ ժամանակով սառեցվում են՝ չնայած այն հանգամանքին, որ նշված հարցն ընդհանրապես չէր հանվել երկու երկրների քաղաքական օրակարգերից[433]: Ուստի չի կարելի միանշանակ պնդել, թե հարցը վերջնականապես փակված էր կամ ձախողված:

Եթե Թուրքիան շարունակում էր նախապայմաններ առաջ քաշել, ապա ՀՀ ղեկավարությունն անգամ ցյուրիխյան արձանագրությունների վավերացման հարցը օրակարգից հանելուց հետո էլ շարունակում էր երկու երկրների հարաբերություններում իր կառուցողական դիրքորոշումը: Դրա մասին է խոսում հենց թեկուզ այն փաստը, որ գործընթացը կասեցնելու հրամանագրից հետո էլ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը մի քանի անգամ հանդես է եկել պարզաբանումներով, որ Հայաստանը պատրաստ է վերսկսել վավերացման գործընթացը, եթե թուրքական կողմը, քաղաքական կամք դրսևորելով, հարգի ձեռք բերված պայմանավորվածությունները և առանց նախապայմանների վավերացնի արձանագրությունները:

Այսպես, 2011 թ. հունիսի 22-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ունեցած ելույթում ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը, մեկ անգամ ևս վերահաստատելով Հայաստանի կառուցողական դիրքորոշումը, նշում էր, որ անգամ այն պարագայում, «երբ Օսմանյան կայսրությունում 1915

433 Տե՛ս Սաֆարյան Դ., «Ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման արդյունքում հայ-թուրքական հարաբերությունների վիճակի գնահատման հարցի շուրջ, // «Արևելագիտության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, VIII, Եր., 2014, էջ 122-123:

թվականին հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանությունը Թուրքիան առ այսօր ոչ միայն չի ճանաչել, այլև իրականացնում է բացահայտ ժխտման քաղաքականություն», «…մենք պատրաստ ենք խնդիրները հաջորդ սերունդներին չթողնել»[434]: Դրանով հանդերձ, Հայաստանն ամենևին էլ չէր պատրաստվում հրաժարվել Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար մղվող պայքարից: Ավելին, գործընթացը խթանելու նպատակով դեռևս 2011 թվականին ՀՀ նախագահի հրամանագրով Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ ստեղծվում է միջոցառումները համակարգող պետական հանձնաժողով, որը կոչված էր իրականացնել կարևոր և պատմական առաքելություն՝ Հայոց ցեղասպանության տարելիցի առթիվ նախատեսված հիշատակի ու ոգեկոչման միջոցառումների պատշաճ կազմակերպում, ազգային միասնականության ու համախմբման և ցեղասպանության հետևանքների վերացման հարցում ընդհանուր մոտեցումների ապահովում[435]:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա, ինչպես իրավացիորեն նկատել է թուրքագետ Ռ. Մելքոնյանը, «արձանագրությունների տապալումից հետո ևս Թուրքիան չէր դադարում գործընթացի շարունակության իմիտացիոն քաղաքականությունը»[436]: Այդ համատեքստում որոշակի աշխուժացում է նկատվում ինչպես հայ-թուրքական հասարակական շփումների,

---

434 Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում, 22.06.2011, http://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/06/22/news-91/

435 Տե՛ս Դեմոյան Հ., Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման հայեցակարգային մոտեցումների շուրջ, // «Ցեղասպանագիտական հանդես», թիվ 2 (1), Եր., 2014, էջ 15:

436 Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայաստան-Թուրքիա. Թուրքական քաղաքականության որոշ միտումներ, 25.11.2010, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5153

քննարկումների, փոխայցելությունների ոլորտում, այնպես էլ Հայոց ցեղասպանության հիշատակության հետ կապված տարբեր միջոցառումներում: Վերջին առումով հիշատակության է արժանի «2011 թ. ապրիլի 24-ին Ստամբուլի Թաքսիմ հրապարակում բազմաթիվ թուրքերի և հայերի բողոքի ցույցը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նպատակով»[437]: Իրադարձությունը, որը թուրքական լրատվամիջոցներում բավականին զուսպ լուսաբանում գտավ: Իդեպ «սա առաջին դեպքն էր Թուրքիայում, երբ ապրիլի 24-ին ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հրապարակային միջոցառում էր տեղի ունենում»[438]: Այստեղ ցանկանում ենք շեշտել այն հանգամանքը, որ նշված փաստերն ամենևին էլ չէին փոխում թուրքական իշխանությունների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, մի բան, որը տրամագծորեն տարբերվում էր թուրք հասարակության առաջադեմ հատվածի պահանջներից: Ավելին, ծանոթանալով քննարկվող ժամանակաշրջանի թուրքական մամուլում լույս տեսած առանձին հոդվածներին, այն տպավորությունն է ստեղծվում, թե դրանք գրված են ոչ թե Հայոց ցեղասպանությունը իսկապես ճանաչելու համար, այլև փորձում են ուղղակի «թմրեցնել հայերի զգոնությունը» և ստիպել նրանց հավատալ, որ ժամանակակից Թուրքիայում գործերը այնպես են ընթանում, ինչպես ներկայացնում են ԶԼՄ-ները[439]:

---

[437] Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 16, գործ 288, էջ 79-80:
[438] Տե՛ս նույն տեղում:
[439] Տե՛ս Ինչի՞ վրա է հույսը դրել Թուրքիան՝ շարունակելով հերքել Հայոց ցեղասպանությունը, 23. 04. 2012, www.panarmenian.net/arm/details/104121/

Դրան զուգահեռ, Թուրքիան պաշտոնական մակարդակով շարունակում էր ակտիվ գործունեություն ծավալել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը տապալելու ուղղությամբ: Այդ գործունեությունը հատկապես վառ է դրսևորվում Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի քննարկումների ողջ ընթացքում: Այսպես, Թուրքիան պահանջում է Ֆրանսիայի կառավարությունից՝ թույլ չտալ այդ օրինագծի նախագծի շրջանառումը Ֆրանսիայի խորհրդարանի երկու պալատներում: 2012 թվականին Ֆրանսիայի նախագահական ընտրություններից ընդամենը մի քանի ամիս առաջ երկրորդ անգամ խորհրդարանական քննարկման է դրվում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը: Ֆրանսիայի հայ համայնքի վստահությունն ու ձայները շահելու համար Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին 2011 թ. նոյեմբերին՝ Հայաստան կատարած այցի ժամանակ, կոչ է անում Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ միաժամանակ շեշտելով, որ ԵՄ-ն Թուրքիայի համար չէ[440]: Արդեն 2011թ. դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը կրկին ընդունում է Հայոց ցեղասպանության ժխտման համար քրեական պատիժ սահմանող օրինագիծը[441], իսկ 2012 թ. հունվարի 23-ին Սենատը, չնայած թուրքական սպառնալիքներին, հաստատում է Վալերի Բուայեի այդ որոշումը, որը նախատեսում էր մեկ տարվա ազատազրկում կամ 45.000 եվրո տուգանք Ֆրանսիայի

[440] Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, էջ 181:

[441] Տե՛ս Նույնի՝ Եվրամիության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1, էջ 14:

տարածքում ցեղասպանությունների ժխտման համար: Դրանով, փաստորեն, իրական Հոլոքոստի ժխտման համար «Գեյսոյի օրենքով» նախատեսված պատժամիջոցները տարածվելու էին նաև Հայոց ցեղասպանության ժխտման վրա՝ հավասարության նշան դնելով երկու նույնական հանցագործությունների միջև[442]:

Արձագանքելով Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի ընդունմանը՝ Էրդողանը հայտարարում է, որ «այդ փաստաթուղթը հիմնված է ռասիզմի,խտրականության և այլատյացության վրա»[443]: Դրանով Անկարան հերթական անգամ փորձում էր շանտաժի միջոցով կանխել այդ օրինագծի ընդունումը՝ լարվածություն մտցնելով երկկողմ հարաբերություններում:

Ցավոք, վերը նշված օրինագիծը դարձյալ ուժի մեջ չի մտնում, քանի որ 2012 թ. փետրվարի 28-ին Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը (ՍԽ) որոշում է ընդունում, որով Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թվականի ցեղասպանության ժխտումը պատժող օրենքը համարվում է հակասող երկրի Սահմանադրությանը՝ այն պատճառաբանությամբ,որ այն խոչընդոտում էր խոսքի, խղճի և համոզմունքի ազատության սկզբունքները[444]: Ճշմարտության դեմ մեղանչած չլինելու համար հարկ է նշել, որ ՍԽ-ի այս որոշումից անմիջապես հետո Սարկոզին

---

[442] Տե՛ս նույն տեղում:

[443] Տե՛ս Анкара наказывает Париж, http://expert.ru/2012/01/24/ankara-nakazyivaet-parizh/

[444] Տե՛ս 2012 թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության գործունեության հաշվետվությունը, Եր., 2013, էջ 6, https://www.mfa.am/hy/mfa-annual-report/

կարգադրում է երկրի կառավարությանը համանման նորօրինագիծ մշակել[445]:

Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի՝ Հայոց ցեղասպանության հարցում որդեգրած քաղաքականությունն իր շարունակությունն է գտնում նաև Ֆրանսիայի հաջորդ նախագահ Ֆ.Օլանդի քաղաքականության մեջ:

Այսպես, 2014 թ. հունվարի 26-ին Թուրքիա կատարած իր երկօրյա պետական այցի շրջանակներում Ֆ. Օլանդը, հավատարիմ իր նախընտրական հանձնառություններին, իր տեսակետներն է արտահայտում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության և Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ նշելով, որ ինքը՝ որպես Ֆրանսիայի նախագահ, ամեն ինչ անելու է «Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի ընդունման համար» և կոչ է անում Անկարային «ճանաչել Հայոց ցեղասպանությունը և դադարել ժխտել այդ պատմական փաստը»: Հենց այդ հանգամանքներն էլ, ըստ Ֆրանսիայի նախագահի, հանդիսանում են նախապայման «ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ճանապարհին»[446]: Բացի այդ, Ֆրանսիայի նախագահը հույս է հայտնում, որ Թուրքիան կվերացնի առևտրային արգելքները, որոնք կիրառվել են այն ժամանակ, երբ Ֆրանսիայում ընդունվեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը[447]:

Հատկանշական է այն հանգամանքը, որ եվրոպական պետություններից Գերմանիան ևս, կանցլեր Ա. Մերկելի շուրթերով, 2014 թ. փետրվարի 7-ին Էրդողանի

---

[445] Տե՛ս Մարուքյան Ա., Եվրամիության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1, էջ 17:

[446] Տե՛ս Ходжаян К. Г., Вопрос криминализации отрицания геноцида армян во французско-турецких отношениях, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1, Եր., 2015, էջ 73-74:

[447] Տե՛ս Мамедов М., Турецкий гамбит французского президента, 02. 03. 2014, http://www.politcom.ru/17266.html

հետ հանդիպման ժամանակ այն տեսակետն է հայտնում, որ «Թուրքիան պետք է առերեսվի սեփական պատմության հետ Հայոց ցեղասպանության հարցում, ինչպես նաև բացի Հայաստանի հետ սահմանը»[448]:

Նկատենք, որ եթե Ֆրանսիայի նախագահը խոսում էր ոչ միայն ցեղասպանության ճանաչման, այլև դրա ժխտումը քրեականացնող օրենքի ընդունման մասին, ապա Գերմանիայի կանցլերը հանդես էր գալիս Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և Հայաստանի հետ սահմանը բացելու Թուրքիային ուղղված կոչով: Փաստորեն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Եվրոպայի առանցքային երկու երկրների հայտարարությունները ծանր դրության մեջ էին դրել Թուրքիային:

Ֆրանսիայից և Գերմանիայից բացի, Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում որոշակի քայլեր են ձեռնարկում նաև ԱՄՆ-ն, Հունաստանը և Բոլիվիան:

Այսպես, 2014թ. ապրիլի 10-ին ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 12 կողմ, 5 դեմ ձայներով ընդունում է Հայոց ցեղասպանությունը դատապարտող 410 բանաձևը, որով կոչ էր արվում ԱՄՆ նախագահին պայքարել «արդար ու կառուցողական հայ-թուրքական հարաբերությունների համար, որը ներառում է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ամբողջական ճանաչումը»[449]:

Ի տարբերություն ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից

---

[448] Տե՛ս Իսկանդարյան Ա., Մերկելի՝ Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ հայտարարությունն արտացոլում է Եվրոպայի դժգոհությունը Թուրքիայից, 11. 02. 2014, http://www.yerkramas.org/am/article/80579/

[449] Տե՛ս Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդի փուլի առանձնահատկությունները. Դատապարտում և հատուցում, // «Հայոց ցեղասպանություն-100 ճանաչումից՝ հատուցում», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2016, էջ 42:

ընդունված 410 բանաձևի՝ 2014 թ. սեպտեմբերի 9-ին Հունաստանի խորհրդարանն ընդունում է «Այլատյացության դեմ պայքարի մասին» օրինագիծը, որով ոչ միայն դատապարտվում էր Հայոց ցեղասպանության փաստը, այլև քրեական պատիժ սահմանվում այն ժխտողների նկատմամբ[450]: 2014 թ. նոյեմբերի 27-ին Բոլիվիայի Սենատի և Պատգամավորների պալատի կողմից ընդունվում է Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծ[451]:

Ինքնին հասկանալի է, որ նման պայմաններում Թուրքիան ձեռնարկելու էր պատասխան քայլեր հիշյալ երկրների նկատմամբ, քանզի, ինչպես արդեն նշել ենք, Թուրքիան Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ վաղօրոք էր ծրագրել պատասխան միջոցներ այն հնարավոր երկրների նկատմամբ, որոնք պաշտոնապես կճանաչեին և կդատապարտեին Հայոց ցեղասպանությունը:

Քննարկվող ժամանակաշրջանում հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով հարկ ենք համարում անդրադառնալ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության արտգործնախարարների խորհրդի նիստի շրջանակներում 2013 թ. դեկտեմբերի 12-ին ԹՀ արտգործնախարար Դավութօղլուի ՀՀ կատարած այցին: Ի դեպ, այդ այցը Հայաստան ողջունել է ԱՄՆ պետքարտուղարության կողմից խոսնակ Ջեն Փսակին՝ հույս հայտնելով, որ Դավութօղլուի այցը «տարածաշրջանի առաջնորդների միջև երկխոսության հնարավորություն կստեղծի», և կոչ է արել

450 Տե՛ս 2014 թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության գործունեության հաշվետվությունը, Եր., 2015, էջ 8, https://www.mfa.am/hy/mfa-annual-report/

451 Նույն տեղում:

«վավերացնել հարաբերությունների կարգավորման արձանագրությունները»[452]:

Հակառակ դրան, փաստերը վկայում են, որ Հայաստանի քաղաքական ուժերը Թուրքիայի արտգործնախարարի Հայաստան կատարած այցից Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հարցում որևէ լուրջ ակնկալիք չունեին:

Այսպես, Ազգային ժողովում ճեպազրույցի ժամանակ ՀՅԴ խմբակցության պատգամավոր Ա. Մինասյանը նշել է, որ «Անկարայի հայտարարություններում նախապայմանների լեզվով խոսել ու քաղաքականությունից նահանջ չի արձանագրվել», և Դավութօղլուի մասնակցությունը նիստին «ունի այն քաղաքական ենթատեքստը, թե իբր Թուրքիան միշտ պատրաստ է երկխոսել իր հարևանների հետ»: Բայց մենք տեսնում ենք, որ պաշտոնական Թուրքիան պատրաստ չէ իր հայտարարած «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունը իրական հարթությունում իրագործել»[453]: Իսկ ՀՀԿ խմբակցության ղեկավար Գ. Սահակյանը նշում է, որ «Թուրքիայի խոստումները կեղծ են: Թուրքիան, կորցնելով իր իմիջը քաղաքական առումով՝ կապված տարածաշրջանում և հատկապես Սիրիայում իր խնդիրների հետ, փորձում է ժողովրդավար ձևանալ և վերաբերմունք դրսևորել նաև մեր նկատմամբ»[454]:

Իսկ ինչ վերաբերում է Դավութօղլուի՝ Հայաստան կատարած այցի պատմական վերլուծություններին, ապա, մեր կարծիքով,

---

452 Տե՛ս Դավութօղլուի այցը Հայաստան երկխոսության հնարավորություն կընձեռի. ԱՄՆ Պետքարտուղարություն, 12. 12. 2013, https://www.civilnet.am/news/2013/12/12/դավութօղլուի-այցը-հայաստան-երկխոսու/200286

453 Տե՛ս ՀՀԿ-ն ու ՀՅԴ-ն լուրջ ակնկալիքներ չունեն Հայաստան Դավութօղլուի այցից, 06. 12. 2013, http://times.am/?p=36031&l=am

454 Տե՛ս նույն տեղում:

միանգամայն իրավացի է հայտնի թուրքագետ Հ. Չաքրյանը՝ նշելով, որ Թուրքիայի ԱԳ նախարարի այցով «Թուրքիան փորձում էր մանևրել՝ նախապատրաստվելով Հայոց ցեղասպանության 100-ամյակին»[455]:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ թուրքական իշխանությունները տարբեր մակարդակներով նախապատրաստական աշխատանքներ են իրականացնում Հայոց ցեղասպանությունը ժխտելու և դրա միջազգային ճանաչումը հնարավորինս կասեցնելու ուղղությամբ: Նշենք նաև, որ ի տարբերություն նախորդ շրջանների՝ նման նախապատրաստական աշխատանքները իրականացվում են համեմատաբար նոր և ժամանակակից մեթոդներով և հնարավորինս տարբեր ուղղություններով՝ դիվանագիտական, քաղաքական, քարոզչական, գիտական և հասարակական:

Ամփոփելով այս ենթագլխում բարձրացված հարցադրումները՝ կարելի է եզրակացնել, որ

1. ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում էապես չէր տարբերվում Ռ. Քոչարյանի մոտեցումներից այն առումով, որ Ս. Սարգսյանը ևս հայտարարում էր, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ՀՀ արտաքին քաղաքականության անբաժան մասն է և համայն հայության խնդիրը:

2. Հայ-թուրքական հարաբերությունները փակուղուց հանելու նպատակով ՀՀ նախագահի նախաձեռնությամբ իրականացված «ֆուտբոլային դիվանագիտության» վերլուծությունը բերում է այն եզրահանգմանը, որ ՀՀ-ի համար այն ոչ միայն ցանկալի արդյունքի չհանգեցրեց (նկատի ունենք

[455] Տե՛ս «Դավութօղլուի Երևան կայանալիք այցը քննարկումների առարկա Հայաստանում», 09. 12. 2013, https://www.amerikayidzayn.com/a/davutoglu-armenia-visit/1806600.html

Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը-Մ.Ն.), այլև դրանով Թուրքիան կրկին հնարավորություն ստացավ աշխարհին ցույց տալու ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու իր «ձգտումը»:

3. Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների հետագա ճակատագրի հարցում ՀՀ երրորդ նախագահի հայտարարությունները մեծ մասամբ իրատեսական չէին և չէին բխում քաղաքական զարգացումների հետևանքով ստեղծված իրավիճակի օբյեկտիվ վերլուծությունից:

4. Անգամ միջազգային հանրության գործադրած ջանքերի արդյունքում 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված արձանագրությունները ի զորու չեղան ստիպելու Թուրքիային կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները, քանզի Թուրքիան շարունակում էր նախկինի նման տարբեր ճանապարհներով հակազդել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին և որ ամենակարևորն է շարունակում էր Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում նախապայմաններ առաջադրել:

5. Ինչ վերաբերում է ցյուրիխյան արձանագրությունների բովանդակությանը, ապա այն իր ամբողջության մեջ չէր բխում համայն հայության կենսական շահերից, քանզի արձանագրություններում առկա առանձին դրույթների և հատկապես սահմանների փոխադարձ ճանաչելու դրույթի ընդունումը մեծ հաշվով անիմաստ էր դարձնում ինչպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին հետամուտ լինելը, այնպես էլ

հետագայում դրա հետևանքների հաղթահարմանը ուղղվել իք քայլերը:

### 3.2 Հայոց ցեղասպանության 100-ամյակն ու ճանաչման հետագա ընթացքը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում

Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին պաշտոնական Թուրքիան, պահպանելով հանդերձ Հայոց ցեղասպանության ճանաչման և ընդհանրապես Հայաստանի հետ հարաբերություններում ապակառուցողական դիրքորոշումը, այնուամենայնիվ որոշակի փոփոխությունների է ենթարկում իր ժխտողական քաղաքականության ռազմավարությունը:

Մեծ հաշվով, նման փոփոխությունների իմաստը հանգում էր Էրդողանի և Դավութօղլուի կողմից առաջ քաշված «համատեղ վշտի»[456] և «արդար հիշողության»[457] թեզերին: Այն, որ համատեղ վշտի գաղափարը ոչ թե արմատական շրջադարձ էր Հայոց ցեղասպանությունից հրաժարվելու հարցում, այլ զուտ արտահայտման ոճի փոփոխություն, վկայում է հենց թեկուզ այն փաստը, որ «Գյոքչեադա» լաստանավում թուրք հասարակական գործիչ Սեդաթ Լաչիների հետ զրույցում Ա. Գյուլը,

[456] Տե՛ս Չաքրյան Հ., «Խղճի տեր ոչ մի հայ չի կարող ժխտել թուրքերի կրած տառապանքը», // «Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն ու հայատյացության դրսևորումները», հոդվածների ժողովածու, Պրակ Բ, Եր., 2017, էջ 224:

[457] Տե՛ս Davutoğlu A., Turkish-Armenian Relations: Is a “Just Memory” Possible ?, // «Turkish Policy Quarterly», Volume 13, Number 1, Spring 2014/ Historical Legacies in the Region: “What’s Past is Prologue” ?, p. 28-30.

անդրադառնալով «համատեղ վշտին», նշում է, որ «գլխավոր խնդիրը» «արտահայտման ոճի փոփոխությունն է», և «իհարկե, կարևոր է, թե ով է արդարը, ով՝ ոչ, սակայն ավելի կարևոր է արտահայտման **ոճի փոխադարձ փոփոխությունն ու փոխըմբռնումը**»[458] (ընդգծումը մերն է -Մ.Ն.):

Նշվածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ Թուրքիայի արտգործնախարարության պաշտոնական կայքէջի «1915 թվականի իրադարձությունները և պատմության վերաբերյալ թուրք-հայկական հակասությունը» բաժնում, Թուրքիան, ի տարբերություն նախորդ տասնամյակների, հիմնովին «չի ժխտում հայերի տառապանքները»՝ ներառյալ «բազում կյանքերի խլումը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»՝ դրա հետ միասին շեշտելով, որ «մեծ թվով թուրքեր էլ են մահացել կամ սպանվել» այդ տարիներին: Դրանով հանդերձ՝ «Թուրքիան առարկում է այս ողբերգության միակողմանի ներկայացումը որպես մեկ խմբի կողմից մյուսի նկատմամբ իրագործած ցեղասպանություն»[459]:

Պետք է նկատել, որ թուրքական ժխտողականության նման նոր դրսևորումը պակաս վտանգավոր չէ, քան պատմական փաստերի կեղծարարությունը, քանի որ դրանով փորձ էր արվում հավասարության նշան դնել դահճի և զոհի միջև:

Հայոց ցեղասպանության ժխտման հարցում թուրքական իշխանությունների որդեգրած նշված մոտեցումների վառ վկայությունն է նաև այն

---

458 Տե՛ս Չաքրյան Հ., «Խղճի տեր ոչ մի հայ չի կարող ժխտել թուրքերի կրած տառապանքը», // «Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն ու հայատյացության դրսևորումները», հոդվածների ժողովածու, Պրակ Բ, էջ 224:

459 The Events of 1915 and the Turkish-Armenian Controversy over History: An Overview, http://www.mfa.gov.tr/the-events-of-1915-and-the-turkish-armenian-controversy-over-history_-an-overview.en.mfa

փաստը, որ դեռևս 2014 թ. օգոստոսին ՀՀ նախագահի՝ Էրդողանին 2015 թ. ապրիլի 24-ին Երևան հրավիրելու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը միասին հարգելու առաջարկին Էրդողանը պատասխանում է նույն օրը՝ ապրիլի 24-ին, ՀՀ նախագահին Թուրքիա հրավիրելու և Գալիպոլիի ճակատամարտի 100-ամյակին նվիրված միջոցառումներին ներկա գտնվելու առաջարկով՝ այն պատճառաբանությամբ, թե «Գալիպոլիում կռվող հայ զինվորներ էլ կային...»[460]:

Կարծում ենք դժվար չէ կռահել, որ ՀՀ նախագահին ուղղված Էրդողանի պատասխան հրավերն ընդամենը նպատակ է հետապնդում հնարավորինս նվազեցնել Հայոց ցեղասպանության 100-ամյակի նշանակությունը՝ ստորադասելով այն Գալիպոլիի հայտնի ճակատամարտին: Խորապես գիտակցելով այդ հանգամանքը 2015 թ. փետրվարի 16-ին նախագահ Սարգսյանը, Էրդողանի հրավերը որակելով որպես «անհեռատես և ցինիկ որոշում», Ազգային ժողովից հետ է կանչում 2009 թվականին ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները, ինչը Թուրքիայի արտգործնախարարության կողմից որակվում է որպես սխալ և անհաջող քայլ[461]:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված իրադարձությունների համատեքստում ցանկանում ենք շեշտել նաև այն փաստը, որ նշված ճանապարհով Հայոց ցեղասպանությունը ժխտելու ու միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու թուրքական իշխանությունների հետևողական ջանքերն այնուամենայնիվ ի զորու չեղան կասեցնելու Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հետագա ընթացքը:

---

[460] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Եր., 2015, թ. 16, 3 փետրվարի:
[461] Տե՛ս Բաբուխանյան Զ. Հ., Հայ-թուրքական հարաբերությունները և ժամանակակից թուրքական ԶԼՄ-ները, //«Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 2, Եր., 2015, էջ 225:

Հայկական դիվանագիտությունը, օգտագործելով պատեհ առիթը, շարունակում է քայլեր ձեռնարկել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, այդ հարցում համաշխարհային հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացման, ինչպես նաև մարդկության դեմ ուղղված նման հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ:

Ասվածի ամենավառ վկայությունը մարտի 27-ին Ժնևում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում, Հայաստանի նախաձեռնությամբ կոնսենսուսով ընդունված Ցեղասպանությունների կանխարգելման վերաբերյալ բանաձևն է, որի համահեղինակները 71 երկրների ներկայացուցիչներ էին: Բանաձևում ամրագրված են ցեղասպանությունների կանխարգելման նպատակով առաջնային կարևորություն ունեցող քայլերը, որոնք արտացոլված էին նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում ՀՀ նախաձեռնած ցեղասպանության կանխարգելման նախորդ բանաձևերում[462]:

ՀՀ արտգործնախարարությունը զգալի ավանդ է ունեցել նաև 2015 թ. ապրիլի 22-23-ը Երևանում կայացած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» առաջին գլոբալ հասարակական-քաղաքական ֆորումի կազմակերպման և անցկացման հարցում: Ընդ որում, Ֆորումը ընդունում է հռչակագիր, որտեղ շեշտվում էր այն միտքը, որ «ցեղասպանությունը անդառնալի հետևանք ունեցող ծանրագույն հանցագործություն է, և բոլոր պետություններին կոչ էր արվում աջակցել ցեղասպանության կանխարգելման մեխանիզմների ամրապնդմանը»[463]:

---

462 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Եր., 2016, թ. 17, 3 փետրվարի:
463 Տե՛ս Հիշում եմ և պահանջում, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից 1915-2015, // «Տեղեկագիրք» թողարկում 3, Եր., 2015, էջ 5:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ճանապարհին կարևոր հանգրվան կարելի է համարել 2015 թ. հոկտեմբերի 10-11-ը Երևանում կայացած 80 պետություն ներկայացնող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության եվրոպական երկրների արտգործնախարարների 31-րդ համաժողովը: Համաժողովն ընդունում է հինգ բանաձև, որոնցից երեքը նախաձեռնել էր Հայաստանը: Խնդրո առարկա հիմնահարցի տեսանկյունից ցանկանում ենք առանձնացնել «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձևը, որում հույս էր հայտնվում, որ ցեղասպանությունների կանխարգելման միակ երաշխիքը ցեղասպանությունների ժամանակին ճանաչումն ու դատապարտումն է: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ համաժողովի ընթացքում ՀՀ արտգործնախարարը շուրջ 25 հանդիպումներ է ունեցել տարբեր երկրներ ներկայացնող իր գործընկերների հետ[464]:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված հայ-թուրքական հարաբերությունների հարցում ՀՀ ղեկավարության մոտեցումները առավել ընդհանրական կերպով տեղ են գտել 2015 թ. հունվարի 29-ին Ծիծեռնակաբերդում հրապարակված «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում»: Այս փաստաթուղթը բացառիկ էր նրանով, որ փաստաթղթի կազմմանը մասնակցություն են ունեցել հայ ժողովրդին ներկայացնող բոլոր կառույցները[465]:

Հռչակագրում դատապարտվում էր «1894-1923 թթ. Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր

---

464 Տե՛ս Էդվարդ Նալբանդյանի խոսքը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Գլխավոր քարտուղար Միկայել Ժանի հետ համատեղ ճեպազրույցին, 12. 10. 2015, https://www.mfa.am/hy/speeches/2015/10/12/min-jean/5600

465 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 57, թպ. 37, ֆ.հ. 886:

վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված ցեղասպանական քայլերը, էթնիկ զտումները, հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը, ինչպես նաև կատարված հանցագործությունների ու դրանց հետևանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպես հանցագործության շարունակություն և նոր ցեղասպանություններ իրականացնելու քաջալերանք»: Բացի այդ, հռչակագրում վերահաստատվում էր «Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար»: Ինչ վերաբերում է նման պայմաններում ՀՀ հետագա գործողություններին, ապա ՀՀ-ն, դատապարտելով «Թուրքիայի Հանրապետության կողմից ՀՀ ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերվող հակահայկական կեցվածքը և միջպետական հարաբերությունների կարգավորման համար նախապայմանների առաջադրումը» և գնահատելով դրանք «որպես Հայոց ցեղասպանության, Մեծ Եղեռնից մինչ օրս անպատիժ մնալու հետևանք» հռչակագրում հստակորեն նշվում էր, որ ՀՀ հետագա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն «Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելուն և ցեղասպանության հետևանքների» հաղթահարմանը:

Բացի այդ հռչակագրում հստակորեն ընդգծվում էր, որ մշակվելու էր «իրավական պահանջների թղթածրար» Թուրքիայի նկատմամբ, այլ կերպ ասած՝ հարցը տեղափոխվելու էր իրավական դաշտ՝ որպես հայ ժողովրդի «համազգային իրավունքների և

օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ»[466]:

Արդեն 2015 թ. ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում տեղի է ունենում միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին: Միջոցառմանը մասնակցում էին ավելի քան 60 երկրների և միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պատվիրակություններ, այդ թվում՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը[467]:

Ուստի, կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե նշենք, որ թուրքական կառավարության կողմից ապրիլի 24-ին Գալիպոլիի ճակատամարտի 100-ամյակը տոնելը և այդ առիթով 102 երկրների ղեկավարների Թուրքիա հրավիրելը Թուրքիայի ղեկավարության և, մասնավորապես, Էրդողանի կողմից իրեն սպառած անբարո քայլ էր և աշխարհասփյուռ հայության համար այդ սգո օրը ձախողելու անհաջող փորձ:

Ինչպես Ծիծեռնակաբերդում անցկացված ապրիլքսանչորսյան միջոցառումը, այնպես էլ նախորդ միջոցառումները, անշուշտ, մեծապես նպաստում են Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի նոր թափով ծավալմանը ինչպես ապրիլի 24-ին նախորդած, այնպես էլ հաջորդած ժամանակաշրջանում, ընդ որում՝ ինչպես պետությունների, միջազգային կառույցների, այնպես էլ տարբեր երկրների վարչատարածքային միավորների մակարդակով:

Այդ առումով ցանկանում ենք առանձնացնել Հռոմի պապ Ֆրանցիսկոս I-ի՝ ապրիլի 12-ին Սուրբ

---

466 Նույն տեղում:

467 Տե՛ս Հայաստանի, Սերբիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախագահները ելույթ ունեցան Ծիծեռնակաբերդում, http://www.azatutyun.am/content/article/26976030.html

Պետրոսի տաճարում անցկացրած հատուկ պատարագը, որտեղ Հռոմի պապը մոտ մեկ միլիարդանոց կաթոլիկ հանրության առջև հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը՝ գործածելով «ցեղասպանություն» եզրույթը, կոչ անելով աշխարհին, առավել ևս՝ Թուրքիային՝ հրաժարվել լռությունից, չեզոքությունից և ժխտողականությունից, քանզի «չարիքի քողարկումը կամ դրա մերժումը նման է նրան, որ թույլ տանք վերքն առանց վիրակապելու շարունակի արյունահոսել»[468]:

Հռոմի պապի նման դիրքորոշումը, առավել ևս՝ «ցեղասպանություն» եզրույթի օգտագործումը լուրջ դժգոհությունների տեղիք է տալիս պաշտոնական Անկարայում: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ Թուրքիայի նախագահ Էրդողանը Հռոմի պապի կողմից Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանություն համարելը «զառանցանք» է անվանում և հորդորում «այլևս չկրկնել այդ սխալը»[469]: Արդեն ապրիլի 13-ին Անկարան հետ է կանչում Վատիկանում և Իտալիայում հավատարմագրված Թուրքիայի դեսպաններին, իսկ Անկարայում Վատիկանի դեսպանը հրավիրվում է Թուրքիայի ԱԳՆ, որտեղ դեսպանին հայտնում են, որ «Հռոմի պապի նման հայտարարությունը վստահության կորստի պատճառ է դարձել Թուրքիայում», և որի համար Վատիկանը պատասխան է տալու[470]:

---

[468] Հռոմի պապ Ֆրանցիսկոսի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի ելույթները՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում մատուցված պատարագի ժամանակ, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1 (643), հունվար-ապրիլ, Եր., 2015, էջ 13:
[469] Տե՛ս Էրդողանը «զառանցանք» է անվանել Հռոմի պապի խոսքերը Ցեղասպանության մասին, 15. 04. 2015, http://panarmenian.net/m/arm/news/190692
[470] Տե՛ս նույն տեղում:

Կարծում ենք՝ միանգամայն իրավացի է Ա. Մելքոնյանը, ով, մեկնաբանելով վերը նշված իրադարձությունները, նշում է, որ դա «հերթական թուրքական հիստերիան էր», քանի որ Թուրքիան նման կերպ էր վարվում Հայոց ցեղասպանությունը դատապարտած և ցեղասպանությունը քրեականացնող օրինագծեր ընդունած բոլոր երկրների դեսպանների հետ: Սակայն, ըստ նույն Մելքոնյանի, տվյալ դեպքում Թուրքիայի դեմ կանգնած էր «մեկ միլիարդ հետևորդներ ունեցող Վատիկանը», ուստի Թուրքիայի բարձրացրած աղմուկը «որևէ հետևանք ունենալ չէր կարող»[471]:

Պաշտոնական Անկարայի նման վերաբերմունքը Հռոմի պապի նկատմամբ առաջացնում է ամբողջ կաթոլիկ աշխարհի, այդ թվում՝ Եվրոպայի արդարացի վրդովմունքը՝ հանգեցնելով նորանոր երկրների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերի ընդունմանը:

Այսպես, 2015 թ. ապրիլի 15-ին 28 պետություն ներկայացնող Եվրոպական խորհրդարանը հարգանքի տուրք մատուցելով ցեղասպանության 1.5 մլն հայ նահատակների հիշատակին, միանում է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի» ոգեկոչմանը և կոչ անում «Եվրոպական հանձնաժողովին ու Եվրոպական խորհրդին միանալ հիշատակի արարողություններին»: Իսկ արդեն 2015 թ. ապրիլի 23-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունում է «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի հիշատակման» հայտարարությունը, որով ԵՄ օրենսդիր մարմինը «ցեղասպանությունների կանխարգելումը համարում է միջազգային հանրության առաջնահերթություն» և ուղերձ հղում

---

[471] Տե՛ս Բարսեղյան Լ., Մեծ իրադարձություն՝ Վատիկանում, 14. 04. 2015, http://armtimes.com/hy/article/62584

Թուրքիային՝ «առերեսվել սեփական պատմության հետ, առանց նախապայմանների կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ՝ սահմանները բացելու և դիվանագիտական հարաբերություններ ստեղծելու միջոցով»[472]:

Դեռևս 2015թ. մարտի 3-ին Եվրոպական ժողովրդական կուսակցության Քաղաքական համաժողովը հանդես էր եկել «Հայկական ցեղասպանությունը և եվրոպական արժեքները» խորագիրը կրող բանաձևով, որում դատապարտում էր ինչպես երիտթուրքերի, այնպես էլ թուրքական հաջորդ վարչակարգերի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը՝ դրանով իսկ, փաստորեն, ի ցույց դնելով թուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը: Բացի այդ, նշված բանաձևում թուրքական իշխանությունների կողմից ցեղասպանության ժխտումը համարվում է պատասխանատվությունից խուսափելու և ոճրագործությունները մոռացության մատնելու փորձ: Նշված բանաձևը մյուսներից շահեկանորեն տարբերվում էր նրանով, որ այստեղ խոսվում է նաև նյութական հատուցման, պատմական հողերի վերադարձի և Արևմտյան Հայաստանում առկա պատմամշակութային արժեքների վերականգնման անհրաժեշտության մասին[473]:

Նմանատիպ բանաձև ընդունվել է նաև Եվրանեստ խորհրդարանական վեհաժողովում 2015թ. մարտի 18-ին: Այստեղ ևս կոչ էր արվում Թուրքիային՝ «ճանաչել ցեղասպանությունը և հաշտվել իր անցյալի հետ»:

---

[472] Զաքարյան Ա., Եվրոպական խորհրդարանը միաձայն ընդունեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին» նվիրված բանաձևը, 15. 04. 2015, http://blognews.am/arm/news/258965/evropakan-khorhrdarany-miadzayn-yndunec-hayoc-cexaspanutyan-100-rd-tarelicin-nvirvats-banadzevy.html

[473] Տե՛ս Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդի փուլի առանձնահատկությունները. Դատապարտում և հատուցում, // «Հայոց ցեղասպանություն-100 ճանաչումից՝ հատուցում», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, էջ 39:

Բացի այդ, ընդունված բանաձևում շեշտվում էր նաև «ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված անձանց միջազգային իրավունքների և պատմական արդարության վերականգնման գործում միջազգային հանրության ջանքերը»[474]:

Նշված կազմակերպություններից բացի, Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը նոր ուժով շարունակվում է նաև աշխարհի շատ երկրներում՝ պետական մակարդակով: Ընդ որում՝ ոչ միայն առանձին երկրները վերահաստատում են իրենց դիրքորոշումը ցեղասպանության ճանաչման հարցում, այլև նորանոր երկրներ են միանում այս գործընթացին:

Այսպես, 2015 թ. ապրիլի 14-ին Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի Արտաքին հարաբերությունների կոմիտեն ընդունում է բանաձև, որում «ելնելով ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայից, հաշվի առնելով հասանելի փաստերը Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ», իր «ցավակցությունն ու համերաշխությունն աշխարհի հայությանը» հայտնելով, ոգեկոչում է «նաև հույների, ասորիների և եզդիների կոտորածները»: Բացի այդ, բանաձևում դատապարտվում էին ինչպես նմանատիպ գործողությունները, այնպես էլ

474 Տե՛ս Մարուքյան Ա., Եվրամիության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, // «Լրաբեր Հասարակական Գիտությունների», թիվ 1, էջ 19:

«ցեղասպանությունների ծանրության նվազեցումը կամ ժխտումը»[475]:

Ժամանակագրական առումով հաջորդն Ավստրիայի խորհրդարանն էր, որը 2015 թ. ապրիլ 22-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ հանդես է գալիս հայտարարությամբ, որում, մասնավորապես, նշվում էր, որ Ավստրիան իր պարտքն է համարում «այս սարսափելի իրադարձությունները որպես ցեղասպանություն ճանաչել և դատապարտել»: Բացի այդ, հայտարարությամբ կոչ էր արվում Թուրքիային՝ «անկեղծորեն առերեսվելու իր անցյալի մութ ու ցավալի դրվագի հետ և Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրագործված հանցագործությունը որպես ցեղասպանություն ճանաչել»[476]: Մեր կողմից ցանկանում ենք ավելացնել միայն, որ Ավստրո-Հունգարիան առաջին աշխարհամարտում դաշնակցում էր Օսմանյան կայսրության հետ և նման հայտարարությամբ փաստորեն ճանաչում էր իր պատմական պատասխանատվությունն այդ հարցում: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանը ողջունել և բարձր է գնահատել Ավստրիայի խորհրդարանի կողմից նշված հայտարարության ընդունումը[477]:

Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության օրենսդրական մարմինը 2015 թ. մայիսի 6-ին ընդունում է «1915 թվականի Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ իրականացված ողբերգական գործողությունները ցեղասպանություն» որակող բանաձև, որտեղ, վկայակոչելով Եվրոպական

---

475 Տե՛ս Չեխիայում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բանաձև է ընդունվել, 14.04.2015, https://www.azatutyun.am/a/26955763.html

476 Տե՛ս Ավստրիան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը. խորհրդարանի խմբակցությունները համատեղ հայտարարություն են ընդունել, 22. 04. 2015, http://www.panarmenian.net/arm/news/191014/

477 Տե՛ս նույն տեղում:

խորհրդարանի կողմից 2015 թ. ապրիլի 15-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ընդունված բանաձևը, կոչ է անում Թուրքիայի իշխանություններին առերեսվել անցյալին[478]:

Եվրոպական մեկ այլ երկրի՝ Բելգիայի Ներկայացուցիչների պալատը հուլիսի 24-ին ձայների մեծամասնությամբ ընդունում է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև, որտեղ շեշտվում էր Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը: Բացի այդ, բանաձևում կոչ էր արվում Հայաստանին և Թուրքիային Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ քայլեր ձեռնարկել դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու, ինչպես նաև տնտեսական փոխշահավետ համագործակցության նպատակով սահմանները բացելու ուղղությամբ[479]:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված զգալի հետաքրքրություն է ներկայացնում եվրոպական մեկ այլ պետության՝ Գերմանիայի դիրքորոշումը, քանզի Գերմանիան առաջին աշխարհամարտի տարիներին փաստորեն Թուրքիայի դաշնակիցն էր: 2015 թ. ապրիլի 23-ին Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկը Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված Բեռլինի մայր տաճարում անցկացված միջոցառման ժամանակ ոչ միայն հարգանքի տուրք է մատուցում անմեղ զոհերի հիշատակին, այլև կրկնելով Հռոմի պապի ձևակերպումը՝ Հայոց ցեղասպանությունը անվանում է «20-րդ դարի առաջին ցեղասպանություն» և խոսում այդ ոճրագործության մեջ իր երկրի

---

478 Լյուքսեմբուրգի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, 06. 05. 2015, https://www.mfa.am/hy/press-releases/2015/05/06/luxembourg-genocide/5189

479 Տե՛ս Բելգիայի Ներկայացուցիչների պալատը Ցեղասպանությունը ճանաչող բանաձև է ընդունել, 24. 07. 2015, http://www.panarmenian.net/arm/news/195193/

ունեցած մեղսակցության բաժնի մասին[480]: Գերմանիայի նախագահի նշված ելույթին արդեն 2015 թ. ապրիլի 24-ին հաջորդում է Գերմանիայի Բունդեսթագի նախագահ պրոֆ. Նորբերտ Լամերտինի այն հայտարարությունը, ըստ որի «անցյալի հետ առերեսումը մեզ համար (նկատի ունի Գերմանիան- Մ.Ն.) կարող է ցավոտ լինել, սակայն միևնույն ժամանակ կարող է լինել ազնիվ և ինքնաքննադատական մոտեցում սեփական անցյալի նկատմամբ»: Հանգամանք, որն, ըստ Լամերտինի, «կարևոր է այլ պետությունների հետ հարաբերությունների կառուցման տեսանկյունից, որի համար պետք է խիզախություն՝ փոխըմբռնման և հաշտեցման հասնելու համար[481]:

Մեր կողմից ցանկանում ենք ավելացնել միայն, որ Գերմանիայի նախագահ Գաուկի և Բունդեսթագի նախագահ Լամերտինի հայտարարությունները խիստ կարևոր են ոչ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման տեսանկյունից, այլև արժեքավոր ներդրում են ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման միջազգային հանրության միասնական ջանքերում:

Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ արդեն 2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագի կողմից ընդունված «1915 թվականի հայերի և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության հիշատակի և ոգեկոչման մասին» բանաձևում Գերմանիայի խորհրդարանը դատապարտում էր «...օսմանյան կառավարության կողմից հայերին գրեթե ամբողջությամբ ոչնչացնելու գործողությունները և **ընդունում է**

[480] Տե՛ս Հիշում եմ և պահանջում, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից 1915-2015, էջ 41:
[481] Տե՛ս Գերմանիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, 02.06.2016, https://www.civilnet.am/news/2016/06/02/bundestag-genocide-resolution-discussion/294283

**իր պատմական պատասխանատվությունը ողբերգության համար** (ընդգծումը մերն է-Մ.Ն.)[482]: Ինչպես հստակ երևում է բանաձևից, Գերմանիան, ի տարբերություն 2005 թ. հունիսի 15-ի բանաձևի, փաստորեն, ընդունում է իր մեղսակցությունը Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասով՝ հանդիսանալով Թուրքիայի դաշնակիցը:

Ինչ վերաբերում է Գերմանիայի խորհրդարանի կողմից ընդունված բանաձևին Թուրքիայի արձագանքներին (դեսպանի հետկանչը, Գերմանիայի հետ առևտրատնտեսական հարաբերությունները սահմանափակելը և այլն), ապա դրանք ընդամենը հուսահատ քայլեր էին, քանզի, ինչպես իրավացիորեն նշել է Ռ. Սաֆրաստյանը, «Թուրքիան գրեթե միջոց չունի Գերմանիայի վրա ազդելու, հակառակը, Թուրքիան է տնտեսական առումով կախվածության մեջ գտնվում Գերմանիայից»: Ուստի, ըստ հեղինակի, Գերմանիայի հասցեին «Թուրքիայի սպառնալիքները լուրջ չեն»[483]: Անդրադառնալով արդեն Գերմանիայի Բունդեսթագի կողմից ընդունված բանաձևի նշանակությանը՝ Ռ. Սաֆրաստյանը միանգամայն իրավացիորեն այն կարծիքն է հայտնում, որ «Բունդեսթագի որոշումը շատ կարևոր նշանակություն ունի: Քանզի Եվրոպայում ձևավորվում էր մի նոր մթնոլորտ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման առումով»: Որպես ասվածի ապացույց՝ հեղինակը բերում է Չեխիայի նախագահի այն հայտարարությունը, որով նա խոստանում էր ամեն

---

[482] ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 109, ֆ.հ. 264:

[483] Սաֆրաստյան Ռ., Թուրքիան սպառնում է, Գերմանիան մանևրում, 07. 06. 2016, http://www.armradio.am/hy/2016/06/07/թուրքիան-սպառնում-է-գերմանիան-մանեւր/

ինչ անել, «որպեսզի նույնպես ճանաչի և դատապարտի Հայոց ցեղասպանությունը»[484]:

Հղում կատարելով Չեխիայի նախագահ Միլոշ Զեմանի 2016 թ. հունիսի 7-ից մինչև 9-ը Հայաստան կատարած պետական այցից հետո ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հետ համատեղ մամուլի ասուլիսին՝ մեր կողմից ցանկանում ենք ավելացնել, որ բացի վերը նշված հայտարարությունը, Միլոշ Զեմանը շեշտել էր նաև, որ ինքը «մտադիր է առաջարկել իր երկրի խորհրդարանին՝ քննարկել Օսմանյան կայսրությունում 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը»[485]: Հավատարիմ իր խոստմանը՝ Հայաստան կատարած այցից հետո Չեխիայի նախագահը հունիսի 22-ին Չեխիայի պատգամավորների պալատի նախագահ Յան Համաչեկին «խորհուրդ էր տվել քննարկել Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև»[486]: Արդյունքում արդեն 2017 թ. ապրիլի 25-ին Չեխիայի Հանրապետության խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը ճանաչում և դատապարտում է Հայոց ցեղասպանությունը[487]:

2016 թ. հուլիսի 1-ին Ֆրանսիայի կառավարությունը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող հերթական օրինագիծը, ընդ որում՝ ներկայացված օրինագծի տեքստի վրա Ֆրանսիայի կառավարության անդամներից բացի, աշխատել են նաև ֆրանսահայ կազմակերպությունների իրավաբանները: Բացի այդ, տեքստը մշակվել է

484 Նույն տեղում:
485 Տե՛ս Չեխիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, ինչպես խոստացել էր Միլոշ Զեմանը, 26. 04. 2017, https://www.civilnet.am/news/2017/04/26/Չեխիան-ճանաչեց-Հայոց-ցեղասպանությունը/313385
486 Տե՛ս նույն տեղում:
487 Տե՛ս նույն տեղում:

Ֆրանսիայի Սահմանադրությանը համապատասխան և հայ համայնքի համար ընդունել ի տարբերակով[488]:

Եթե 2014 թ. հոկտեմբերի 14-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում ընդունված «20-րդ դարի Ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների ժխտումը կանխելու վերաբերյալ» օրինագծի համաձայն «20-րդ դարի ցեղասպանությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների պարբերական վիճարկումը, սկզբունքային ժխտումը, հասարակացումը, ստորացումը և արդարացման փորձը դատապարտվում են հինգ տարվա ազատազրկմամբ և 45.000 եվրո տուգանքով»[489], ապա արդեն 2016 թ. հուլիսի 1-ին նույն օրինագծի փոփոխված տարբերակի համաձայն՝ «Հայոց ցեղասպանության փաստը ժխտելու համար» նախատեսվում էր «մեկ տարվա ազատազրկում կամ 45.000 եվրո չափով տուգանք»[490]:

Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի նախագահ Մուրադ Փափազյանի վկայությամբ Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավորները կողմ են քվեարկել կառավարության ներկայացրած «Հավասարություն և քաղաքացիություն» կոչվող օրինագծի փոփոխություններին, որով պատիժ էր սահմանվում մարդկության դեմ գործած բոլոր հանցագործությունների, այդ թվում Հայոց ցեղասպանությունը ժխտելու և հերքելու համար:

---

488 Տե՛ս Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը, 01. 07. 2016, https://armenpress.am/arm/news/853091/fransiayi-azgayin-zhoxovy-miadzayn-yndunel-e-hayoc-cexaspanutyan.html#.V3bA-Q-b07c.facebook

489 Loi N° 2276 visant à réprimer la négation des genocides et des crimes contre l'humanité du XXéme siècle, ASSEMBLÈE NATIONALE CONSTITUTION DU 4 OCTOBRE 1958 QUATORZIÈME LÈGISLATURE Enregistré à la Présidence de l'Assemblée nationale le 14 octobre 2014, http://www.assemblee-nationale.fr/14/propositions/pion2276.asp

490 Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը, 01. 07. 2016, https://armenpress.am/arm/news/853091/fransiayi-azgayin-zhoxovy-miadzayn-yndunel-e-hayoc-cexaspanutyan.html#.V3bA-Q-b07c.facebook

և չնայած որոշ պատգամավորների կողմից ընդհանուր օրենքից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու մասին դրույթը հանելու ուղղությամբ գործադրած ջանքերին՝ հենց Ազգային ժողովի կողմից ընդունված տարբերակն է ներկայացվում Սենատի հաստատմանը[491]:

Զարմանալի չէ, որ նման պարագայում Թուրքիան փորձում էր ամեն կերպ կանխել հիշյալ նախագծի հաստատումը Սենատում՝ ճնշում գործադրելով ինչպես ֆրանսիական կառավարության, այնպես էլ անձամբ նախագահ Օլանդի վրա: Չնայած դրան՝ 2016 թ. հոկտեմբերի 14-ին Ֆրանսիայի Սենատը քննարկումների արդյունքում 156 կողմ և 146 դեմ ձայներով ընդունում է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը՝ ընդգծելով, որ օրինագիծն այլևս չի ներկայացվելու Ազգային ժողովի քննարկմանը[492]:

Այն, որ օրինագծի ընդունումը մեծ հաղթանակ և ձեռքբերում էր արդեն 10 տարի նման օրինագծի ընդունման համար պայքարող հայ համայնքի համար, անվիճելի է, սակայն ինչ վերաբերում է օրինագծի հետագա ճակատագրին, ապա 2016 թ. հունվարին Ֆրանսիայի Սահմանադրական դատարանը կրկին՝ արդեն երրորդ անգամ, չեղարկում է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը[493]:

Անդրադառնալով վերը նշված փաստին՝ հարկ է ընդգծել, որ հայ պատմագիտության մեջ գնալով ավելի ու ավելի լայն տարածում է գտնում այն

---

491 Տե՛ս Ֆրանսիայի Սենատն ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը, 14.10.2016, http://www.panarmenian.net/arm/news/223203/

492 Տե՛ս նույն տեղում; տե՛ս նաև՝ Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը, 01. 07. 2016, https://armenpress.am/arm/news/853091/fransiayi-azgayin-zhoxovy-miadzayn-yndunel-e-hayoc-cexaspanutyan.html#.V3bA-Q-b07c.facebook

493 Տե՛ս Մուրադյան Ա., Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացում. արդյունավետ պայքա՞ր, թե՞ շեղում նպատակից, 03.06.2017, https://acoya.org/post/4058/amp

տեսակետը, ըստ որի՝ ֆրանսիական կառավարությանը, նախագահին և օրենսդիրներին վաղօրոք հայտնի էր նշված օրինագծի վախճանը, ուստի «ֆրանսիական կառավարության նպատակը իրականում Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացումը չէ», այլ դրանով «Ֆրանսիան կարողանում է գոնե կարճաժամկետ հեռանկարում հասնել իր նպատակին, այն է՝ թուլացնել Թուրքիայի քաղաքական ներուժը՝ խափանելով նրա անդամակցության փորձերը ԵՄ-ին, զսպելով Անկարայի՝ ԵՄ երկրների թուրքական համայնքների միջոցով քաղաքական կյանքում եղանակ ստեղծելու նկրտումները և այլն»[494]:

Քաջ գիտակցելով այն հանգամանքը, որ քաղաքականության մեջ հնարավոր չէ միանշանակ պնդել ,թե որն է այս կամ այն երկրի իրական նպատակը այս կամ այն հարցում, այնուամենայնիվ ցանկանում ենք նշել, որ Ֆրանսիայի կառավարությունն ու նախագահը դժվար թե տեղյակ չլինեին,թե ինչ ճակատագիր էր սպասվում հիշյալ օրինագծին Սահմանադրական դատարանում: Սակայն, եթե դա անգամ այդպես էլ չէ, ապա նույնիսկ այդ դեպքում Ֆրանսիան ամենայն հավանականությամբ նման օրինագծով ցանկանում էր խափանել Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին:

Քանի որ խոսք գնաց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքների մասին,ուստի հարկ ենք համարում անդրադառնալ այն փաստին,որ եվրոպական երկրներից Շվեյցարիան ևս ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենք: Սակայն նման օրենքի առկայությունն անգամ բավարար չեղավ թուրք ազգայնական գործիչ Դողան Փերինչեքին Հայոց ցեղասպանության հանրային ժխտման համար պատժի ենթարկելու

494 Տե՛ս նույն տեղում:

գործում: Այսպես, 2015 թ. հոկտեմբերի 15-ին Եվրոպական դատարանը արդարացրեց վերջինիս «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» դատական գործի շրջանակներում այն պատճառաբանությամբ, որ «նույնիսկ ժխտելու իրավունքը» «սահմանափակում» է «խոսքի իրավունքը»[495]: Անշուշտ, այստեղ բացասական առումով դերակատարություն ունեցավ այն հանգամանքը, որ շվեյցարական օրենսդրության մեջ առկա են որոշակի բացեր, քանզի ինչպես ցույց տվեց այս դատավարությունը, շվեյցարական դատարանի վճիռը, փաստորեն, չէր շաղկապվում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հայտնի դրույթների հետ:

Ելնելով վերը նշվածից՝ ցավով ուզում ենք արձանագրել այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ-ի) հիշյալ որոշումը գալիս է ապացուցելու, որ այսօր, փաստորեն, չկա Հայոց ցեղասպանության հերքման համար պատասխանատվության ենթարկելու հրատապ անհրաժեշտություն, որով էլ իմաստազրկվում են եվրոպական պետություններում ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքները: Այստեղից էլ դժվար չէ եզրակացնել, որ Թուրքիայի որդեգրած Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարում, ամենևին էլ չթերագնահատելով տարբեր երկրներում Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերի և ցեղասպանությունների ժխտման քրեականացման օրինագծերի առկայությունը, այնուամենայնիվ, ցանկանում ենք ընդգծել, որ դրանք Հայոց ցեղասպանության վերջնական ճանաչման և, ինչու չէ, նաև դրա հետևանքների վերացման հարցում այդքան որոշիչ չեն: Նախ դրանք աչքի են ընկնում ժամանակագրական, փաստագրական և, ինչու չէ, նաև իրավական

[495] Տե՛ս Քոչարյան Վ., նշվ. աշխ., էջ 94-95:

զանազանությամբ և բացթողումներով: Բացի այդ, արդեն բազմիցս համոզվել ենք, որ Հայոց ցեղասպանությունը հիմնականում ճանաչվել և դատապարտվել է տարբեր պետությունների օրենսդիր մարմինների կողմից, որոնք լիազորված չեն իրականացնելու գործադիր իշխանության բնորոշ գործառույթներ[496]: Հիշենք, որ օրինակ ԱՄՆ-ում Ջորջ Բուշ Կրտսերի պաշտոնավարման տարիներին ԱՄՆ օրենսդիր մարմնում քննարկվող հայանպաստ բանաձևերի մեծ մասում հատուկ ընդգծվում էր, որ ընդունվելիք բանաձևը որևէ պարտադիր ուժ չի կրելու իշխանության համար:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը, եվրոպական երկրներից բացի, զգալի տեմպերով առաջ է ընթանում նաև Հարավային Ամերիկայի երկրներում:

Այսպես, Բրազիլիայի Դաշնային Սենատը 2015 թ. հունիսի 2-ին միաձայն ընդունում է Սենատի Արտաքին հարաբերությունների և ազգային պաշտպանության հանձնաժողովի նախագահ, դաշնային սենատոր Ալոիզիո Նունես Ֆերեյրա Ֆիլյոյի և դաշնային սենատոր Ժոզե Սերայի հեղինակած No 550/2015 բանաձևը, որով պաշտոնապես ճանաչում է Հայոց ցեղասպանությունը: Բանաձևում շեշտվում էր, որ «Դաշնային Սենատը ճանաչում է հայ ժողովրդի ցեղասպանությունը, որի 100-րդ տարելիցը նշվեց 2015 թ. ապրիլի 24-ին»: Այնուհետև, հարգանքի տուրք մատուցելով ցեղասպանության զոհերի հիշատակին և գնահատանքի խոսքեր հղելով Բրազիլիայում բնակվող հայ փախստականների ժառանգներին՝ երկրի տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում ունեցած զգալի ներդրման համար, ընդգծվում էր, որ «ոչ մի

[496] Տե՛ս Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 19-20:

ցեղասպանություն չպետք է մոռացվի, որպեսզի չկրկնվի»[497]:

Ի պատասխան Բրազիլիայի Դաշնային Սենատի կողմից ընդունված բանաձևի՝ Թուրքիան, հերթական անգամ գործի դնելով իր դիվանագիտական քայլը, հետ է կանչում Բրազիլիայից Թուրքիայի դեսպանին և հրապարակում հայտարարություն, որտեղ, դատապարտելով բանաձևը, համարում է այն «անպատասխանատվության օրինակ» և «պատմական ճշմարտությունը աղավաղող և արհամարհող օրենք»՝ այն հիմնավորմամբ, թե իբր «նման բնույթի քաղաքական որոշումները, որոնք ընդունվում են հայկական լոբբիի ազդեցությամբ չեն կարող փոխել ո՛չ պատմական փաստերը, ո՛չ էլ իրավական նորմերը»[498]:

Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև ընդունվել է նաև Պարագվայի Սենատում 2015թ. հոկտեմբերի 29-ին[499]:

2015 թ. հուլիսի 31-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև է ընդունել նաև Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների 23 օրենսդիր մարմիններ միավորող Լատինաամերիկյան խորհրդարանը[500]:

2015 թվականի՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակի հռչակագրի ընդունումից հետո, հայ իրականության մեջ խնդրո առարկա հիմնահարցի հետ կապված որպես ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններ առաջ է քաշվում «Ցեղասպանությունը զուտ ճանաչման խնդրից զատ իրավական դաշտ փոխադրելու» և «միջազգային իրավունքը նոր

---

497 Տե՛ս Բրազիլիայի Սենատը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև, 29.05.2015, https://armenpress.am/arm/news/807290/brazilian-senate-unanimously-passes-resolution-onarmeniangenocide-recognition.html

498 Տե՛ս Թուրքիան Բրազիլիայից հետ է կանչել իր դեսպանին, 09.06.2015, https://www.civilnet.am/news/2015/06/09/turkey-recalls-ambassador-from-brazil/271801

499 Տե՛ս Պարագվայի Սենատը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, 03.11.2015, http://www.genocide-museum.am/arm/03.11.2015paraguay.php

500 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Եր., 2016, թ. 17, 3 փետրվարի:

հայրենազրկում «պատրիոցիդ» իրավական ձևակերպումով բարելավելու և դրանով իսկ ՄԱԿ-ի օրենսդրությունը հարստացնելու տեսլականը»[501]: Հետաքրքիր է նկատել, որ պատմաբաններից ու իրավագետներից բացի, նման տեսակետի կողմնակիցներից է նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ինը, ով անդրադառնալով վերը նշվածին, գրում էր. «...«չենք մոռանում, որ մեր դատը քաղաքական է, սակայն պետք չէ անտեսել նրա իրավական մասը»: Ավելին, ըստ կաթողիկոսի՝ «հայկական կողմի պահանջատիրությունը կմնա ռոմանտիկ ու հռետորական մոտեցումների շրջանակում, եթե չունենա իրավական կոնկրետ հիմք»»[502]:

Այն, որ ցեղասպանության հարցը, ի սկզբանե քաղաքական լինելով հանդերձ, դրա հետևանքների վերացումը անպայմանորեն ենթադրելու էր որոշակի իրավական կարգավորում կասկածից վեր է: Սակայն դրա հետ միասին, դժվար է չհամաձայնվել հայտնի իրավաբան, ակադեմիկոս Գ. Ղազինյանի այն պնդմանը, որ «հատուցումն այդքան հեշտ չէ պահանջել: Դրա համար պետք են որոշակի միջոցառումներ, որոշակի ուղղություններով աշխատանքներ», որոնք էլ ի վերջո «պետք է թույլ տան պատրաստելու այն հիմքերը, որոնք հնարավորություն կտան արդեն հատուցման խնդիրը բարձրացնել»: Ի դեպ, նույն հեղինակի պնդմամբ «ներկա պահին հատուցման համար միջազգային ատյաններ դիմելու քայլը դատապարտված է մերժման», քանի որ նախ այդ աշխատանքները «պետք է համակարգել, ունենալ այն, ինչի հիման վրա պահանջները կարող ենք ներկայացնել», և հետո

501 Տե՛ս Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 193:
502 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Եր., 2016, թ. 18, 4 փետրվարի:

միայն «կարող ենք դիմել, հասնել, պահանջել»[503]: Մինչդեռ միջազգային իրավունքի հայտնի փորձագետ Վլադիմիր Վարդանյանի պնդմամբ՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական պահանջներ ամրագրող ամբողջական թղթածրար առայժմ գոյություն չունի»: Ինչ վերաբերում է ցեղասպանության 100-ամյակի համահայկական հռչակագրին, ապա այն համայն հայության մտահոգությունների ու ակնկալիքները ներկայացնող փաստաթուղթ է, որը ևս անդրադառնում է ժամանակի հրամայական դարձած վերը նշված թղթածրարի ստեղծման անհրաժեշտությանը[504]:

Այն, որ նման առաջարկությունները խիստ գրավիչ են, երկու կարծիք լինել չի կարող, սակայն մի բան է առաջարկի գրավչությունը, մեկ այլ բան դրա իրագործման հնարավորությունը: Գաղտնիք չէ, որ նման գործընթացը պահանջում է համակարգված աշխատանք, ճշգրիտ մոտեցում, հսկայական գումարներ ու ռեսուրսներ: Ուստի, ցանկանում ենք ավելացնել, որ կողմ լինելով հարցը պատմականից իրավական հարթություն տեղափոխելուն՝ այնուամենայնիվ ցանկանում ենք մեկ անգամ ևս շեշտել, որ դրա կենսագործման հնարավորությունները շատ ավելի մեծ կլինեն, եթե Հայաստանը դառնա տարածաշրջանի տնտեսապես հզոր երկրներից մեկը: Հանգամանք, որն արդեն մեր օրերում ՀՀ նոր իշխանությունների կողմից դիտվում է որպես առաջնահերթություն:

Կրկին անդրադառնալով քննարկվող ժամանակահատվածում հայ-թուրքական տարբեր մակարդակով շփումներին՝ ցանկանում ենք նշել, որ դրանք իսպառ բացակայում էին: Անշուշտ,

---

503 Նույն տեղում, 2015, թ. 65, 11 ապրիլի:
504 Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 11:

դրանում լուրջ դեր էր կատարել այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված Թուրքիան ընդգծված հակահայկական քայլեր էր ձեռնարկել: Բավական է նշել հենց միայն այն փաստը, որ 2015 թվականի ընթացքում Թուրքիան աշխարհի տարբեր երկրներից իր դեսպանների հետկանչի յուրատեսակ ռեկորդ է սահմանել:

Բացի այդ, Թուրքիան շարունակում էր սպառնալիքներ հնչեցնել ոչ միայն ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած ու դատապարտած, այլև բոլոր այն երկրների հասցեին, որտեղ ընթացքի մեջ էր Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող օրինագծերի քննարկումները՝ մոռանալով այն հանգամանքը, որ այդ երկրներից շատերը ապրել և հետագայում էլ կարող էին ապրել առանց Թուրքիայի:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 2015 թվականից սկսած Թուրքիայում բավականին լարվել էր ներքաղաքական իրավիճակը՝ կապված երկրում առկա տնտեսական դժվարությունների, ազգային արժույթի արժեզրկման, գնաճի, ինչպես նաև երկրի կառավարման համակարգի փոփոխության (խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետությունը Էրդողանի ջանքերի շնորհիվ 2017 թվականին անցկացված սահմանադրական հանրաքվեի արդյունքներով վերածվել էր նախագահական հանրապետության -Մ.Ն.) հետ:

Նշվածից բացի, կային նաև այլ բնույթի դժվարություններ, մասնավորապես 2015 թվականից վերսկսված թուրք-քրդական բախումները, Իրաքի՝ Քրդստանում անցկացված անկախության հանրաքվեն, 2016 թ. հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման փորձը և այլն: Այս ամենին զուգահեռ՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ սկսել էին գերակայել նեոօսմանիզմի, իսլամական աշխարհի առաջնորդի,

տարածաշրջանային գերտերության վերածվելու միտումները, ինչն էլ հանգեցնում է նրան, որ մեծանում է Թուրքիայի նկատմամբ անբարյացակամ պետությունների թիվը:Նման պարագայում կարծում ենք միանգամայն իրավացի է Ա. Մարուքյանը, երբ նշում է, որ «արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող վերջին զարգացումները պարզորոշ ցույց տվեցին,որ Ռուսաստանի,ԱՄՆ-ի և Եվրամիության հետ Թուրքիայի երկկողմ հարաբերություններում առկա են որոշակի խնդիրներ, իսկ աշխարհաքաղաքական կարևոր հարցերում նկատվում է նրանց շահերի հակադրություն և ինչն է՛լ ավելի է սրում Թուրքիա-Ռուսաստան, Թուրքիա-ԱՄՆ և Թուրքիա-Եվրամիություն առանց այդ էլ լարված հարաբերությունները[505]:

Այս ամենն անկասկած լուրջ ազդեցություն պետք է ունենային քննարկվող ժամանակաշրջանում Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների՝ առանց այդ էլ սառեցված գործընթացների վերջնական արդյունքի վրա՝ ի դեմս հայ-թուրքական արձանագրությունների չեղարկման:

ՀՀ-ի կողմից ցյուրիխյան արձանագրությունների չեղարկման ճանապարհին առաջին քայլը 2017 թ. սեպտեմբերի 20-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանի ամբիոնից ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի հնչեցրած այն միտքն էր, որ «Թուրքիայի կողմից արձանագրությունների վավերացման գործընթացը ըստ պատշաճի չիրականացնելու» պարագայում «մենք գարուն ենք մտնելու այդ արձանագրություններն առ ոչինչ

---

505 Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցի արծարծման հնարավորությունները Թուրքիա-համաշխարհային ուժային կենտրոններ հակասությունների համատեքստում, // «Հայոց ցեղասպանություն-100 ճանաչումից՝ հատուցում», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու,Եր.,2016,էջ 297:

հայտարարած, այսինքն՝ առանց այդ արձանագրությունների»[506]:

Դատելով փաստերից՝ ցյուրիխյան արձանագրությունների չեղարկման ճանապարհին ՀՀ իշխանությունների հաջորդ քայլը 2017 թ. փետրվարի 17-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթն էր Մյունխենի անվտանգության համաժողովում: Այստեղ ՀՀ նախագահը, ի թիվս այլ հարցերի՝ անդրադառնալով Հայաստանի և Թուրքիայի միջև 2009 թ. հոկտեմբերի 10-ին ստորագրված ցյուրիխյան արձանագրությունների ճակատագրին, նշում է. «Թուրքիան ոչ միայն չվավերացրեց դրանք, այլև առաջադրեց արձանագրությունների հետ որևէ կապ չունեցող նախապայմաններ»: Թուրքիայի նման դիրքորոշումը ՀՀ նախագահն անվանում է «պատմական հնարավորության տապալում»: Այնուհետև անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք Ադրբեջանն է խոչընդոտում Թուրքիային Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում, ՀՀ նախագահը շեշտում է, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում «...հիմնական խոչընդոտը Թուրքիայի առաջնորդների քաղաքական կամքի բացակայությունն է», հակառակ Հայաստանի ղեկավարության դրսևորած քաղաքական կամքի, արձանագրությունների ստորագրման փաստից «ոչ այնքան երջանիկ» Սփյուռքի հետ տարվող աշխատանքների հետ կապված: Վերջում, ՀՀ նախագահն այն հաստատ համոզմունքն է հայտնում, որ «Հայաստանը նախապայմանների լեզվով չի խոսում,

506 Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում, 20. 09. 2017, http://www.president.am/hy/statements-and-messages/item/2017/09/20/President-Serzh-Sargsyan-speech-UN-General-Assembly/

բայց չի էլ ընդունի որևէ մեկի կողմից նախապայմանների առաջադրումը», ուստի Հայաստանը չի կարող «առհավետ սպասել Թուրքիայի պատասխան քայլերին»[507]:

Արդեն 2018թ. մարտի 1-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը հանդես է գալիս հայտարարությամբ, որում նշվում էր, որ «ՀՀ-ն արել է հնարավորը մեր Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության հարաբերությունները կարգավորելու բեռը գալիք սերունդներին չթողնելու համար»: Սակայն, չնայած դրան, «արձանագրությունների ստորագրումից անցած ինը տարիների ընթացքում Անկարան, վերադառնալով իր անհիմն նախապայմաններին, ոչ միայն որևէ քայլ չարեց արձանագրությունները վավերացնելու և ուժի մեջ մտցնելու համար, այլև որևէ կասկած չթողեց, որ նա չի պատրաստվում այդ գործընթացը իրականացնել»: Նման պարագայում, ըստ ՀՀ նախագահի «եկել էր որոշումը կայացնելու ժամանակը»[508]:

Այս ամենից հետո առնվազն զարմանալի է ՀՀ նախագահի այն լավատեսությունը, թե «մենք պատրաստ կլինենք Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատել, **եթե այս գիտակցումը լինի նաև թուրքական կողմի մոտ**» (ընդգծումը մերն է-Մ.Ն.): Ավելին, ըստ ՀՀ նախագահի՝ «եթե վաղը, մյուս օրը կլինեն առաջարկություններ, մենք պատրաստ կլինենք այդ առաջարկությունները քննարկել»[509]:

Կարծում ենք այստեղ միանգամայն տեղին է հիշատակել հայ-թուրքական հարաբերությունների

---

507 Նախագահը մասնակցել է Մյունխենի անվտանգության համաժողովին, 17. 02. 2018, http://www.president.am/hy/press-release/item/2018/02/17/President-Serzh-Sargsyan-attended-Munich-security-conference/

508 Տե՛ս Որևէ մեկի նախապայմաններ առաջադրելու պրակտիկան ուղղակի մեզ մոտ չի անցնելու. Սերժ Սարգսյան, 01. 03. 2018, https://news.am/arm/news/438997.html

509 Տե՛ս Գանտահարյան Ծ., Գնդակը Թուրքիայի կիսադաշտում է, 03. 03. 2018, http://www.arfd.info/hy/?p=41450

պագայի վերաբերյալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ.Սաֆրաստյանի այն կարծիքը, ըստ որի՝ «չկա որևէ նախադրյալ, որ սկիզբ կառնի նոր գործընթաց, որի նպատակը կլինի երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորումը»[510]:

Նույն օրը ՀՀ նախագահը ստորագրում է հրամանագիր «Հայ-թուրքական հարաբերությունների կնքման ընթացակարգը դադարեցնելու» վերաբերյալ: Հրամանագրում, մասնավորապես, նշվում էր.

1. Դադարեցնել 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների կնքման ընթացակարգը:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ արձանագրությունների կնքման ընթացակարգը դադարեցնելու մասին ծանուցել Թուրքիայի Հանրապետությանը[511]:

Թուրքական մամուլը շատ արագ արձագանքելով հայ-թուրքական արձանագրությունների կնքման ընթացակարգը դադարեցնելու Ս. Սարգսյանի հրամանագրին, այն անվանում է «շոկային» կամ «անսպասելի քայլ»: Այսպես «Yeni Akit» պարբերականը, անդրադառնալով ՀՀ նախագահի այդ քայլին, նշում էր, որ «Հայաստանը Թուրքիայի հետ կապված շոկային որոշում է կայացրել»: Իսկ թուրքական «Milliyet» թերթը

510 Սաֆրաստյան Ռ., Աշխարհը հասկացավ, որ Թուրքիան մտավ գործընթացի մեջ, և ինքն էլ վիժեցրեց արձանագրությունները՝ մեծացնելով անվստահությունն իր նկատմամբ, 02. 03. 2018, http://www.tert.am/am/news/2018/03/02/safrastyan/2628790

511 Տե՛ս Հայ-թուրքական արձանագրությունների կնքման ընթացակարգը դադարեցվեց. Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել, 01. 03. 2018, https://news.am/arm/news/438979.html

գրել է. «Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ընտրություններին առաջ չեղարկեց դեռևս 2009 թվականին ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները»[512]:

Բացի այդ Թուրքիայի փոխարտգործնախարար Ահմեթ Յըլդըզը, անդրադառնալով ՀՀ-ի կողմից ցյուրիխյան արձանագրությունների չեղարկման փաստին, նշում է, թե իբր «ցյուրիխյան արձանագրություններն ավելի ձեռնտու էին Հայաստանին,քան Թուրքիային»[513]:

Հայ իրականության մեջ ևս առկա են տարբեր կարծիքներ՝ հայ-թուրքական արձանագրությունների և դրանց չեղարկման վերաբերյալ ՀՀ նախագահի նշված հրամանագրի հետ կապված: Այսպես, թուրքագետ Ա. Իսպիրյանի կարծիքով, «Ս. Սարգսյանը, ընտրվելով նախագահի պաշտոնում, սկսեց այդ գործընթացը և նախագահի պաշտոնը թողնելուց առաջ պատասխանատվություն գտավ ավարտին հասցնելու այդ գործընթացը»: Թուրքագետի կարծիքով, 2009 թ. հոկտեմբերի 10-ին ցյուրիխյան արձանագրությունները ստորագրելով «Հայաստանն աշխարհին ցույց տվեց, որ պատրաստ է առանց նախապայմանների երկխոսություն սկսել իր հարևանի հետ», իսկ ինչ վերաբերում է Թուրքիային, ապա, ըստ Ա.Իսպիրյանի, «հայ-թուրքական կարգավորման արձանագրությունները ստորագրելով՝ Թուրքիան միտումնավոր Հայոց ցեղասպանության արշավների դեմն էր փորձել առնել», այսինքն՝ «Թուրքիայի նպատակն էր աշխարհին ցույց տալ, որ

---

512 Տե՛ս Հայաստանը շոկային քայլ արեց. թուրքական մամուլի արձագանքը արձանագրությունների չեղարկմանը, 02. 03. 2018, https://news.am/arm/news/439106.html

513 Տե՛ս «Նրանց գործն է» Թուրքիայի փոխարտգործնախարարը մեկնաբանել է հայ-թուրքական արձանագրություններից հայկական կողմի հրաժարվելը, 16. 03. 2018, http://www.tert.am/am/news/2018/03/16/turkey/2639291

ցեղասպանությունը ճանաչելով՝ վնասում են հայ-թուրքական կարգավորման գործընթացին»: Բավական ուշագրավ է նաև Ա. Իսպիրյանի տեսակետը՝ հայ-թուրքական արձանագրությունների չեղարկման հետ կապված: Այսպես, ըստ թուրքագետի՝ «Թուրքիան կփորձի ցույց տալ, որ ահա, տեսեք, մենք փորձում էինք կարգավորել, իսկ Հայաստանը տապալեց դա»[514]:

Անդրադառնալով հայ-թուրքական արձանագրությունների չեղարկմանը՝ թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը մասնավորապես նշում էր, որ «արձանագրությունների չեղարկումը Հայաստանի կողմից միանգամայն սպասելի և տրամաբանական էր՝ թուրքական կողմի ոչ պատշաճ գործողությունների պատճառով: Բացի այդ, Սաֆրաստյանի կարծիքով, Թուրքիան, վիժեցնելով հայ-թուրքական արձանագրությունների հետ կապված գործընթացը, «ավելացրեց աշխարհում իր դիվանագիտության, արտաքին քաղաքականության նկատմամբ անվստահությունը»[515]:

Իր հերթին ՀՅԴ գերագույն մարմինը 2018թ. մարտի 2-ին հանդես է եկել հայտարարությամբ՝ կապված ՀՀ նախագահի կողմից հայ-թուրքական արձանագրությունների չեղարկման փաստի հետ: Դրանում նշվում էր, որ հայ-թուրքական արձանագրությունների չեղարկումը «մեր համահայկական պայքարի, այդ պայքարին միացած քաղաքական և հասարակական կազմակերպությունների, մեր ողջ ժողովրդի ձեռքբերումն է»: Բացի այդ, հայտարարության վերջում այն կարծիքն էր հայտնվում, որ «հայ-

---

514 Իսպիրյան Ա., Հայ-թուրքական արձանագրությունները ստորագրման պահից դատապարտված էին տապալման, 02. 03. 2018, https://news.am/arm/news/439016.html

515 Սաֆրաստյան Ռ., Աշխարհը հասկացավ, որ Թուրքիան մտավ գործընթացի մեջ, և ինքն էլ վիժեցրեց արձանագրությունները՝ մեծացնելով անվստահությունն իր նկատմամբ, 02. 03. 2018, http://www.tert.am/am/news/2018/03/02/safrastyan/2628790

թուրքական հարաբերությունների կարգավորումը անհրաժեշտություն է, սակայն այն պետք է տեղի ունենա քաղաքակիրթ աշխարհի արժեհամակարգին համապատասխան»[516]:

Խնդրո առարկա հիմնահարցի տեսանկյունից բավականին ուշագրավ է նաև հայ-թուրքական արձանագրությունների հետ կապված թուրքագետ Հ. Չաքրյանի տեսակետը, ըստ որի՝ «հայ-թուրքական արձանագրություններն առ ոչինչ հայտարարելով՝ երկկողմ հարաբերություններն ավելի վատ չեն լինի, քան ներկայումս, որովհետև հարաբերություններ՝ որպես այդպիսին,չկան»[517]:

Նույն կարծիքն է արտահայտել նաև ՀՀ Սփյուռքի նախկին նախարար Հրանուշ Հակոբյանը «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրները» գիտաժողովի բացման խոսքում, որտեղ նա, անդրադառնալով 2015 թվականի դրությամբ հայ-թուրքական հարաբերությունների առկա վիճակին, գրում էր, որ «այսօր Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները կամ ավելի ստույգ **հարաբերությունների բացակայությունը** (ընդգծումը մերն է-Մ.Ն.) բնութագրվում է հետևյալ հատկանիշներով. դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների բացակայություն, փակ սահմաններ Թուրքիայի կողմից, տնտեսական, սոցիալ-մշակութային հարաբերությունների բացակայություն, տեղեկատվական պատերազմ, հակահայկական քարոզչություն թուրք-ադրբեջանական տանդեմի

516 ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի հայտարարությունը, 02.03. 2018, http://www.arfd.info/hy/?p=41392

517 Չաքրյան Հ., Հայաստանի նկատմամբ Թուրքիայի դիրքորոշումը հակասում է ԱՄՆ ու ԵՄ քաղաքականությանը Հարավային Կովկասում, 18. 03. 2018, http://www.tert.am/am/news/2018/03/18/Hakob-chaqryan/2640874

կողմից, Հայոց ցեղասպանության մերժողականության քաղաքականություն, ԼՂՀ հարցի խաղաղ կարգավորման տապալում և սահմանային ահաբեկչություններ, իսկ ամացած և ծպտյալ հայերի հիմնախնդիրներ[518]:

Այստեղ ակամա հարց է առաջանում՝ եթե ՀՀ պաշտոնական շրջանակները՝ հանձին ՀՀ Սփյուռքի նախարար Հ.Հակոբյանի, պաշտոնապես հայտարարում են, որ 2015 թվականի դրությամբ հայ-թուրքական հարաբերություններ փաստացի գոյություն չունեն, ապա ինչ նպատակ էին հետապնդում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի կողմից ձեռնարկված քայլերը՝ ուղղված ոչ ավել, ոչ պակաս հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը, երբ դրանք փաստորեն բացակայում էին: Բացի այդ, մի՞թե ՀՀ ղեկավարության համար վերջապես ակնհայտ չէր դառնում այն հանգամանքը, որ սկսած 1991 թվականից Հայաստանի ձեռնարկած բոլոր ջանքերը՝ ուղղված հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, մնալու էին անարդյունք՝ այն պարզ տրամաբանությամբ, որ Թուրքիան ամենևին էլ շահագրգռված չէր ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում:

Այսպիսով, ՀՀ անկախության հռչակման առաջին իսկ օրվանից սկիզբ առած հայ-թուրքական միջպետական հարաբերությունները կարգավորելուն և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն ուղղված գործընթացները իրենց տրամաբանական ավարտին են հասնում 2018 թ. մարտի 1-

---

518 Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրները, գիտաժողովի նյութեր, Եր., 22-23 ապրիլի 2015, էջ 38:

ին՝ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի «Հայ-թուրքական հարաբերությունների կնքման ընթացակարգը դադարեցնելու» հրամանագրով:

Վերջում, որպես ամփոփում, ցանկանում ենք նշել հետևյալը.

1. Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին պաշտոնական Անկարայի՝ փաստերի խեղաթյուրման ճանապարհով առաջադրված «համատեղ վշտի» և «արդար հիշողության» թեզերը ոչ այլ ինչ էին եթե ոչ մոտեցում, որով փաստորեն կշեռքի նույն նժարին էին դրվում «դահիճն» ու «զոհը»:

2. 2015 թ. ապրիլի 24-ին Գալիպոլիի ճակատամարտին նվիրված միջոցառումներ կազմակերպելով և դրանց ՀՀ նախագահին մասնակցության հրավեր ուղարկելով թուրքական իշխանությունները նպատակ էին հետապնդում շեղել համաշխարհային առաջադեմ հանրության ուշադրությունը Հայոց ցեղասպանության փաստից և դրանով իսկ հնարավորինս կասեցնել հարցի հետ կապված Թուրքիային ոչ ձեռնտու զարգացումները:

3. Ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում Հայոց ցեղասպանության 100-ամյակի բարձր մակարդակով նշումը և տարբեր երկրների կողմից դրա ճանաչումն ու դատապարտումը վկայում է այն մասին, որ թուրքական իշխանությունների գործողությունները ուղղված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցմանը ցանկալի արդյունք չտվեցին:

4. Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Հռոմի պապ Ֆրանցիսկոս I-ի ձեռնարկած քայլերը Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակը հարգելու ուղղությամբ նոր խթան հանդիսացան ինչպես կաթոլիկ, այնպես էլ ողջ աշխարհում Հայոց

ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցը առաջ մղելու գործում:

5. Հայոց ցեղասպանության 100-ամյակը կարևորվում է նաև նրանով, որ դրա հետ կապված հայտնի հռչակագրի տեքստում առաջ է քաշվում ոչ միայն Հայոց ցեղասպանության համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև որ առավել կարևոր է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում իրավական պահանջների թղթածրար մշակելու դրույթը, այլ կերպասած խիստ կարևորվում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը քաղաքական ոլորտից իրավական դաշտ տեղափոխելու պահանջը:

6. Հայոց ցեղասպանության 100-ամյակի համատեքստում թուրքական իշխանությունների ձեռնարկած քայլերը և, հատկապես Հայոց ցեղասպանության փաստը ճանաչած ու դատապարտած երկրներից թուրքական դեսպանների հետկանչը իր ազդեցությունն էր թողնում, ոչ միայն Թուրքիայի և նշված երկրների հարաբերությունների, այլև հայ-թուրքական շփումների վրա, որոնք փաստորեն սառեցված էին:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ատենախոսության բովանդակությունը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Խորհրդային իրականության պայմաններում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար մղվող պայքարն իրականացվում էր գերազանցապես սփյուռքահայության կողմից, քանզի ԽՍՀՄ-ը պաշտոնապես չճանաչելով Հայոց ցեղասպանությունը, Պոտսդամի հայտնի կոնֆերանսից հետո նպատակ էր հետապնդում այդ կերպ հնարավորինս չսրել Թուրքիայի հետ հարաբերությունները՝ վերջինիս ՆԱՏՕ-ի կազմից դուրս բերելու և իր ազդեցության ոլորտը ներքաշելու նպատակով:

2. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը նմանատիպ հանցագործությունները կանխարգելելու և մարդասիրական նպատակներից բացի, պետք է դիտարկել նաև ժամանակի քաղաքական զարգացումների համատեքստում Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած և դատապարտած պետությունների արտաքին քաղաքական շահերի տեսանկյունից:

3. Անկախության հռչակումից հետո ՀՀ ղեկավարությունը՝ ի դեմս ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, պատրաստ էր բազմաթիվ զիջումների՝ (հրաժարում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը հետամուտ լինելուց, որոշակի նահանջ ազգային գաղափարախոսության հիմնադրույթներից և նույնիսկ գաղտնի հանդիպումներ պանթուրքիստական ուղղվածության գաղտնի կազմակերպությունների

ղեկավարների հետ) հանուն Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման:

4. Անկախության առաջին տարիներին ՀՀ ղեկավարությունը Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում առաջնորդվում էր այն թյուր պատկերացմամբ, թե իբր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պահանջից հրաժարումը երաշխիքներ էր ստեղծելու ՀՀ անվտանգության համար:

5. ՀՀ անկախության հռչակումից հետո մեր տարածաշրջանում քաղաքական զարգացումների համատեքստում Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերությունները հարկ է դիտարկել, ոչ միայն որպես երկու երկրների միջև հարաբերություններ, այլև մեր տարածաշրջանում իրենց սեփական շահերը հետապնդող ԱՄՆ-ի, Ռուսաստանի և եվրոպական երկրների հետաքրքրությունների ոլորտում, հանգամանք, որը չէր կարող ազդեցություն չունենալ ինչպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, այնպես էլ հայ-թուրքական տարբեր մակարդակներով շփումների վրա:

6. ՀՀ ղեկավարությունը բավարար ուշադրություն չէր դարձնում այն հարցին, թե, օրինակ, ինչով պետք է շահագրգռված լիներ Թուրքիան ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում, այն դեպքում, երբ Թուրքիայի վարչապետ Դեմիրելը հասկացնել էր տալիս, որ Հայաստանն իր տնտեսական զարգացվածության մակարդակով Թուրքիայի համար մեր տարածաշրջանում լուրջ հետաքրքրություն չի ներկայացնում:

7. Երկու երկրների համար զգալի կարևորություն ներկայացնող տնտեսական

ոլորտում հայ-թուրքական շփումները իրականացվում էին գերազանցապես երկու երկրները ներկայացնող հասարակական կառույցների և, մասնավորապես, ԹՀԳՁԿ-ի մակարդակով և չնայած, որ այդ կառույցը որոշակի ձեռքբերումներ է արձանագրել, այնուամենայնիվ, այդ հանգամանքն ի զորու չէր լուրջ բեկում մտցնել երկու պետությունների հարաբերությունների կարգավորման հարցում:

8. Թուրքիան տարածաշրջանում իր քաղաքական ակտիվությունը պահպանելու նպատակով հայ-թուրքական տնտեսական աննշան համագործակցության հեռանկարով փորձում էր գայթակղել և երկխոսության հույսեր ներշնչել ՀՀ-ին՝ դիտարկելով դա ոչ միայն առկա տնտեսական ճգնաժամի պայմաններում սեփական տնտեսությունը փոքր ինչ շտկելու, այլև համաշխարհային հանրության մոտ հայ-թուրքական երկխոսության շարունակության պատրանք ստեղծելու և մարդասեր երևալու միջոց:

9. Տնտեսական գործոնից բացի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վրա մեծ ազդեցություն էր թողնում նաև ղարաբաղյան հիմնախնդիրը, քանի որ Թուրքիան որպես ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման նախապայման հանդես է գալիս Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հարգելու պահանջով և ամենևին էլ պատահական չէր, որ ԼՂ-ում հայկական զինված ուժերի հաջողություններին զուգընթաց Թուրքիան ավելի էր կոշտացնում իր դիրքորոշումը ՀՀ-ի հետ հարաբերությունները կարգավորելու հարցում:

10. ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնավարման տարիներին Թուրքիայի նկատմամբ ՀՀ արտաքին քաղաքականությունը որոշակի

փոփոխություններ է կրում՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման առաջնահերթության և, դրա հետ միասին, այդ հանգամանքը Հայաստան-Թուրքիա հարաբերություններում որպես նախապայման չդիտարկելու փաստի հետ:

11. Ռ. Քոչարյանի տեսլականը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հարցում այնքան էլ հստակ չէր, քանզի այդպես էլ պարզ չէր դառնում, որ եթե Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը վերջինիս համար չի ունենալու որևէ իրավական հետևանք, ավելին՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի դիտարկվելու որպես նախապայման հայ-թուրքական հարաբերություններում, ապա այդ դեպքում ինչ նպատակ է հետապնդում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը պետականորեն հետամուտ լինելը:

12. Քննադատության չի դիմանում այն տեսակետը, թե ՀՀ նախագահի կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին պետականորեն հետամուտ լինելու առաջնահերթությունը նպատակ էր հետապնդում այդ կերպ ոգևորել Սփյուռքին և վերջինիս կողմից ՀՀ-ում ներդրումները բազմապատկելու ճանապարհով հաղթահարել երկրի տնտեսական դժվարությունները, քանզի դա բավարար չէր կարող լինել շահագրգռելու Սփյուռքին ՀՀ-ում ներդրումներ կատարելու գործում այն պարզ պատճառով, որ դրա համար, առաջին հերթին անհրաժեշտ էր բարելավել ՀՀ ներդրումային դաշտը և զարգացնել տնտեսությունը:

13. Հասարակական կազմակերպությունների մակարդակով իրականացվող հայ-թուրքական շփումների վերաբերյալ ՀՀ ղեկավարությունը փաստորեն չուներ հստակ դիրքորոշում և պատշաճ

վերլուծության չէր ենթարկել Հայաստանի համար դրանց հնարավոր դրական և բացասական հետևանքները, ինչն էլ Թուրքիային հնարավորություն էր տալիս վիճարկելու Հայոց ցեղասպանության փաստը՝ հարցը տեղափոխելով հասարակական քննարկումների ոլորտ և հարաբերությունների կարգավորման պատրվակով առժամանակ կասեցնել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

14. 2005 թ. ապրիլի 13-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ 1915 թվականի իրադարձությունները ուսումնասիրելու նպատակով պատմաբանների խորհուրդ ստեղծելու ՀՀ նախագահին արված առաջարկը բովանդակության առումով ամենևին էլ նորություն չլինելով,առնվազն լուրջ չէր,քանզի ընդամենը նպատակ էր հետապնդում ցույց տալ աշխարհին,թե Թուրքիան «բարի կամք» է դրսևորում ՀՀ-ի հետ վիճահարույց խնդիրները լուծելու գործում, այդ կերպ փորձելով հարցը քաղաքական հարթությունից տեղափոխել գիտական հարթակ:

15. ՀՀ երրորդ նախագահ Ս.Սարգսյանն իր նախորդի նման ևս կողմնակից լինելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման առաջնահերթությանը և դիտարկելով այն որպես ոչ միայն ՀՀ արտաքին քաղաքականության, այլև աշխարհասփյուռ հայության գերխնդիր,քննարկվող ժամանակաշրջանում հայ-թուրքական հարաբերությունները փակուղուց դուրս բերելու նպատակով հանդես է գալիս կոնկրետ նախաձեռնությամբ, որը հայտնի է «ֆուտբոլային դիվանագիտություն» անունով: ՀՀ երրորդ նախագահի ինչպես այս նախաձեռնությունը,այնպես էլ Թուրքիայի կողմից ՀՀ-ի հետ սահմանը բացելու հետ կապված հայտարարությունները իրատեսական

չէին, քանզի չէին բխում ստեղծված իրավիճակի ճիշտ վերլուծությունից:

16. Անգամ միջազգային հանրության գործադրած ջանքերի արդյունքում 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված արձանագրությունները ի զորու չեղան ստիպելու Թուրքիային կատարել իր իսկ կողմից ստանձնած պարտավորությունները, քանզի Թուրքիան շարունակում էր նախկինի նման տարբեր ճանապարհներով հակազդել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին և, որ ամենակարևորն է, շարունակում էր Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում նախապայմանների առաջադրումը:

17. Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված պաշտոնական Անկարայի ժխտողական քաղաքականության ռազմավարության մեջ նկատված որոշակի փոփոխությունները մեծ հաշվով հանգում էին թուրքական իշխանությունների կողմից առաջադրված «համատեղ վշտի» և «արդար հիշողության» թեզերին, որոնք, հիմնված լինելով պատմական փաստերի կեղծարարության վրա, պակաս վտանգավոր չէին, քանզի դրանով կշեռքի նույն նժարին էին դրվում «դահիճն»ու «զոհը»:

18. Ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում Հայոց ցեղասպանության 100-ամյակի բարձր մակարդակով նշելու հանգամանքը և տարբեր երկրների կողմից դրա ճանաչումն ու դատապարտումը վկայում է այն մասին, որ թուրքական իշխանությունների գործողությունները ուղղված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցմանը, ցանկալի արդյունք չտվեցին:

19. Հայոց ցեղասպանության 100-ամյակի համատեքստում թուրքական իշխանությունների ձեռնարկած քայլերը և, հատկապես Հայոց ցեղասպանության փաստը ճանաչած ու դատապարտած երկրներից թուրքական դեսպանների հետկանչելու հանգամանքը իր ազդեցությունն էր թողնում ոչ միայն Թուրքիայի և նշված երկրների հարաբերությունների, այլև հայ-թուրքական շփումների վրա:

20. Քանի որ ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայում հստակ չի նշվում, որ ցեղասպանության ճանաչումը անպայմանորեն ենթադրում է նաև պատմական տարածքների վերադարձ, ուստի նման պարագայում հայրենազրկման հետևանքների վերացման համար մղվելիք պայքարի ամբողջ ծանրությունն, որպես միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, ընկնում է պետության ուսերին:

21. Ներկայումս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին հետամուտ լինելուց զատ, ՀՀ-ի արտաքին քաղաքական առաջնահերթություն է նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրը, թե՛ քաղաքական և թե՛ իրավական առումով, հանգամանք, որն առաջին անգամ պետական մակարդակով ամրագրվել է Հայոց ցեղասպանության 100-ամյակի համահայկական հռչակագրում:

22. Չնայած այն հանգամանքին, որ աշխարհի տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանության փաստը ճանաչող և դատապարտող բանաձևերը աչքի են ընկնում ժամանակագրական, ցեղասպանություն իրագործած սուբյեկտների, աշխարհագրական տերմինների և ցեղասպանության ընթացքում հայ նահատակների թվերի խայտաբղետությամբ, այնուամենայնիվ, դրանով հանդերձ անհրաժեշտ է

լուրջ քայլեր ձեռնարկել միջազգային ատյաններում դրանք օրենքների վերափոխելու ուղղությամբ:

**23.** Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում պետք է կարևորել նաև տարբեր երկրների գործադիր իշխանությունների հետ տարվելիք աշխատանքները, քանզի ինչպես վկայում են Շվեդիայի և ԱՄՆ-ի և այլ երկրների օրինակները, միշտ չէ, որ խորհրդարանականների կողմից ընդունված բանաձևերը դառնում են ուղենիշ գործադիրների համար:

**24.** Ճիշտ է, ներկայումս երկու տասնյակից ավելի երկրների օրենսդիր մարմինները պաշտոնապես ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, սակայն մինչև վերջ հետամուտ չեն եղել դրանց իրագործմանը գործադիր իշխանությունների մակարդակով, էլ չենք խոսում միջազգային հարթակների մասին:

**25.** ՀՀ իշխանություններին մեծամասամբ չէր հաջողվում ժամանակին արձագանքել Թուրքիայի ներքին կյանքում հաճախակի տեղի ունեցող փոփոխություններին (խորհրդարանական արտահերթ ընտրություններ) և այլն, որի հետևանքով ՀՀ արտաքին քաղաքականությունը որպես կանոն հանդես էր գալիս հետապնդողի դերում:

**26.** ՀՀ յուրաքանչյուր հաջորդ նախագահ որոշակի պահի այս կամ այն չափով սկսում էր գիտակցել, որ իր նախորդի օրոք Թուրքիայի նկատմամբ մշակված արտաքին քաղաքական ռազմավարությունը սպառել է իրեն, դրա հետ միասին այդպես էլ չէր մշակվում զարգացման տարբեր սցենարներ ենթադրող երկարաժամկետ արտաքին քաղաքական ռազմավարություն Թուրքիայի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցում:

27. Լիովին համաձայնվելով վերջին ժամանակներս Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված մեզանում առկա առաջարկների հետ, այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել, որ քանի դեռ Հայաստանն իր տնտեսական զարգացման մակարդակով չի գտնվում առաջատար դիրքերում, ցանկացած քայլ, ուղղված Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը կամ առավել ևս Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը, մեծ հավանականությամբ դատապարտված է ձախողման: Խոսքը վերաբերում է նաև հարցը իրավական դաշտ տեղափոխելուն, քանի որ պատմության մեջ բազմաթիվ են այն օրինակները, երբ եվրոպական ամենաժողովրդավար երկրներն անգամ, ելնելով իրենց սեփական շահերից՝ միշտ չէ, որ հետևողական են եղել մեզ հետաքրքրող հարցում: Ուստի ցանկանում ենք նշել, որ աշխարհիս հզորների կենսական շահերի բախման վայր հանդիսացող մեր տարածաշրջանում, փոխանակ հարմարվելու Թուրքիայի կողմից առաջադրվող խաղի կանոններին կամ մեղադրելու մեզ այդ հարցում այս կամ այն սխալի կամ բացթողման համար, ճիշտ կլինի քայլեր ձեռնարկել մեր երկիրը հզորացնելու ուղղությամբ, քանզի միայն այդ դեպքում Թուրքիան ինքը ուղիներ կորոնի Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար: Իսկ դրա համար ներկայումս մեր երկրում ընթացող ժողովրդավարական բարեփոխումների հենքի վրա ստեղծվել են բարենպաստ պայմաններ:

28. Թեև մեկը մյուսին հաջորդած ՀՀ իշխանությունները տարբեր, երբեմն նոր մոտեցումներով փորձել են հասնել Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների

հաստատմանը, այնուամենայնիվ, նրանց ջանքերը այդպես էլ չհանգեցրին դրական արդյունքի, հանգամանք, որը մեծապես պայմանավորված էր նաև Թուրքիայի կողմից ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում հայ ժողովրդի կենսական շահերին անհարիր նախապայմանների առաջադրմամբ:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1. Արխիվային նյութեր

1.1 ՀԱԱ, ֆ. 1 (Հայաստանի կոմունիստական կուսակցության), ց. 44, գ. 54; ց. 45, գ. 1, գ. 2, գ. 4, գ. 6, գ. 18, գ. 20; ց. 55, գ. 32; ց. 77, գ. 89; ց. 84, գ. 40; ց. 127, գ. 418:

1.2 ՀԱԱ, ֆ. 113 (ՀԽՍՀ նախարարների խորհուրդ), ց. 96, գ. 88:

1.3 ՀԱԱ, ֆ. 170 (Հայաստանի Գրողների միության), ց. 1, գ. 165:

1.4 ՀԱԱ, ֆ. 326 (ՀՀ Արտաքին գործերի նախարարության), ց. 7, գ. 89; ց. 9, գ. 44, գ. 70, գ. 192:

1.5 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 22 (Ֆրանսիան, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանությունը), թպ. 9, ֆ. հ. 65; թպ. 17(1), ֆ. հ. 81, 83; թպ. 25, ֆ. հ. 64:

1.6 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 24 (Արաբական աշխարհը, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանությունը), թպ. 3, ֆ. հ. 3:

1.7 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25 (ԱՄՆ-ն, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանությունը), թպ. 41, ֆ.հ. 1; թպ. 58, ֆ.հ. 585, 586:

1.8 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 32 (Թուրքիայի Հանրապետությունը, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանությունը (1823-1922)), թպ. 26, ֆ.հ. 88, 90; թպ. 50, ֆ.հ. 182:

1.9 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 35 (Լատինաամերիկյան երկրները, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանությունը), թպ. 1, ֆ.հ. 1; թպ. 8, ֆ.հ. 15:

1.10 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 41 (Միջազգային պայմանագրեր, համաձայնագրեր, դաշնագրեր, պետությունների և խորհրդարանների հասարակական և քաղաքական կազմակերպությունների որոշումներ ու բանաձևեր Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին), թպ. 3, ֆ.հ. 12; թպ. 6, ֆ.հ. 15; թպ. 12, ֆ.հ. 31; թպ. 15, ֆ.հ. 38, 39, 40, 44, 45, 51, 55; թպ. 54, ֆ.հ. 132; թպ. 65, ֆ.հ. 162, 163; թպ. 69, ֆ.հ. 168; թպ. 71, ֆ.հ. 170; թպ. 73, 74, ֆ.հ. 172; թպ. 78, ֆ.հ. 177; թպ. 80, ֆ.հ. 252; թպ. 82, ֆ.հ. 303; թպ. 87, ֆ.հ. 199; թպ. 88, ֆ.հ. 200; թպ. 102, ֆ.հ. 224; թպ. 109, ֆ.հ. 264:

1.11 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 57 (Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված գիտաժողովների նյութեր), թպ. 37, ֆ.հ. 886:

1.12 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ 243, գործ 291, գործ 320:

1.13 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 2, գործ 173:

1.14 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 3, գործ 159:

1.15 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 6, գործ 63, գործ 64:

1.16 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 8, գործ 100:

1.17 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 9, գործ 273, գործ 274:

1.18 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 14, գործ 151:

1.19 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 16, գործ 288:

1.20 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 18, գործ 175, գործ 176, գործ 203:

1.21 ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, գործ 9-11:

## 2. Տպագիր վավերագրեր

***ա) հայերեն***

2.1 Ավագյան Ա., «Ժխտողականության «խելացի» քաղաքականությունը», // Ելույթ «Հայոց ցեղասպանության ճանաչում և հատուցում. պատմական արդարության վերականգնման ուղին» համաժողովում, 08.12.2014, https://mediamax.am/am/news/armeniaturkey/12517/?fbclid=IwAR2NMmNgtDPUDQL_cU9uw0tE5Ne9hrhuapbrn-_W5VH1Q48RlYifyy5M4a8

